ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Գրիգոր Հայրապետյան

ՀԱՄԱՀԽՍՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 339.9(075.8)
ԳՄԴ 65.5g73
Հ 300

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Գիտական խմբագիր՝
տ.գ.թ., դոցենտ Կ. Գ. Խաչատրյան

Գրախոսներ՝
տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյան
տ.գ.թ., դոցենտ Հ. Գալստյան

Հայրապետյան Գրիգոր
Հ 300 Համաշխարհային տնտեսություն: Ուսումնական ձեռնարկ / Գ. Հայրապետյան. –Եր., ԵՊՀ հրատ., 2025, 364 էջ:

Ուսումնական ձեռնարկը կազմվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասավանդվող «Համաշխարհային տնտեսություն» դասընթացի ծրագրին համապատասխան:

Ուսումնական ձեռնարկում դիտարկվում են համաշխարհային տնտեսության ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, ներկայացվում են համաշխարհային տնտեսության սուբյեկտները, ցույց են տրվում առանձին երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ:

Ուսումնական ձեռնարկը կարող է օգտակար լինել տնտեսագետներին ու հարակից այլ մասնագետներին, ինչպես նաև տնտեսագետության տարբեր մասնագիտացմամբ սովորողներին:

ՀՏԴ 339.9(075.8)
ԳՄԴ 65.5g73

ISBN 978-5-8084-2699-3
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426993

© ԵՊՀ հրատ., 2025
© Հայրապետյան Գ., 2025

Բովանդակություն

Ներածություն 5
ԲԱԺԻՆ Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
Գլուխ 1. Համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ 7
1.1 . «Համաշխարհային տնտեսություն» հասկացությունը, օբյեկտն ու առարկան 7
1.2. Համաշխարհային տնտեսության բնորոշ գծերը 10
1.3. Համաշխարհային տնտեսության սուբյեկտները 14
1.4. Համաշխարհային տնտեսության ենթահամակարգերի առանձնացման չափանիշները 20
Գլուխ 2. Համաշխարհային տնտեսության ձևավորումն ու զարգացումը 27
2.1. Համաշխարհային տնտեսության ձևավորումը 27
2.2. Համաշխարհային տնտեսության զարգացման փուլերը 29
Գլուխ 3. Համաշխարհային տնտեսության տեսությունները 35
3.1. Զարգացման փուլերի տեսություններ 35
3.2. Մեկ միասնական քաղաքակրթության և քաղաքակրթության բախումների տեսություններ 40
Գլուխ 4. Երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ 44
4.1. Զարգացած երկրների ընդհանուր բնութագիրը 44
4.2. Զարգացող երկրների ընդհանուր բնութագիրը 50
4.3. Անցումային երկրների ընդհանուր բնութագիրը 55
4.4. Արդյունաբերական նոր երկրների ընդհանուր բնութագիրը . 58
Գլուխ 5. Վերազգային կազմակերպություններ և միջազգային տնտեսական կազմակերպություններ 62
5.1. Վերազգային կազմակերպություններ 62
5.2. Միջազգային տնտեսական կազմակերպություններ/ ինստիտուտներ 72

Գլուխ 6. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրում և գլոբալացում 82
6.1. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման էությունը և ձևերը 82
6.2. Գլոբալիզացիա 97
6.3. Տարածաշրջանացման տնտեսական և քաղաքական ասպեկտները 103
ԲԱԺԻՆ Բ. ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ 113
Գլուխ 7. Հյուսիսային Ամերիկայի երկրներ 113
7.1. ԱՄՆ տնտեսությունը 113
7.2. Կանադայի տնտեսությունը 144
Գլուխ 8. Արևմտյան Եվրոպայի երկրներ 166
8.1. Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների տնտեսության ընդհանուր բնութագիրը և զարգացման առանձնահատկությունները 166
8.2. Գերմանիայի տնտեսությունը 175
8.3. Ֆրանսիայի տնտեսությունը 198
8.4. Մեծ Բրիտանիայի տնտեսությունը 219
8.5. Իտալիայի տնտեսությունը 238
Գլուխ 9. Արևելյան Ասիայի երկրներ 257
9.1. Ճապոնիայի տնտեսությունը 257
9.2. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսությունը 287
Գլուխ 10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ 310
10.1. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսության ընդհանուր բնութագիրը 310
10.2. Թուրքիայի տնտեսությունը 317
10.3. Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսությունը 338
РЕЗЮМЕ 359
Summary 360
Օգտագործված գրականության ցանկ 361

Ներածություն

Ներկայիս փոխկապակցված աշխարհում համաշխարհային տնտեսությունը մի բարդ համակարգ է, որը երկրներին, բիզնեսին և անհատներին կապում է իրար: Համաշխարհային տնտեսության ուսումնասիրությունը զուտ ֆինանսական շուկաների, առևտրային հոսքերի ու տնտեսական քաղաքականության ուսումնասիրություն չէ: Համաշխարհային տնտեսության ուսումնասիրմամբ պետք է կարողանանք ավելացնել մեր հավաքական բարգավաճումն ու բարեկեցությունը: Նյու Յորքի ֆոնդային բորսայից մինչև Շենչզենի գործարաններ, Մերձավոր Արևելքի նավթահանքերից մինչև Լատինական Ամերիկայի սուրճի ֆերմաներ կամ երկրագնդի յուրաքանչյուր անկյուն դեր է խաղում առաջարկի, պահանջարկի ձևավորման ու տնտեսական աճի համար: Մյուս կողմից էլ մի որոշակի երկրում կամ տարածաշրջանում ֆինանսական ճգնաժամը կարող է տարածվել մյուս երկրներ կամ տարածաշրջաններ: Նման դեպքերում համաշխարհային տնտեսության շրջանակում պետք է լինեն մեխանիզմներ՝ այդ ճգնաժամերը մեղմելու կամ դրանց տարածումը զսպելու համար:

Ուսումնական ձեռնարկը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացվում են համաշխարհային տնտեսության ձևավորումը, տեսությունները, զարգացման օրինաչափություններն ու միտումները, զարգացման փուլերը, ենթահամակարգերի առանձնացման չափանիշները, ինչպես նաև համաշխարհային տնտեսության սուբյեկտները: Առանձին-առանձին վերլուծվում և ներկայացվում են համաշխարհային տնտեսության սուբյեկտները (պետություններ, վերազգային կազմակերպություններ, միջազգային տնտեսական կազմակերպություններ և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներ): Ուսումնական ձեռնարկի երկրորդ մասում, հիմք ընդունելով մակրոտնտեսական մի շարք ցուցանիշներ, վերլուծվում և ներկայացվում են

երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Յուրաքանչյուր երկրի համար ներկայացվում են դրա տնտեսաաշխարհագրական ընդհանուր բնութագիրը, մակրոտնտեսական զարգացման մոդելը, տնտեսություն ճյուղային կառուցվածքն ու արտաքին տնտեսական հարաբերությունները:

Ուսումնական ձեռնարկում նաև անդրադարձ է կատարվում 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամին և COVID-19 համավարակի ազդեցությանը համաշխարհային տնտեսության ու առանձին երկրների վրա:

ԲԱԺԻՆ Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլուխ 1. Համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ

1.1. «Համաշխարհային տնտեսություն» հասկացությունը, օբյեկտն ու առարկան

Համաշխարհային տնտեսություն առարկան ուսումնասիրելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում «համաշխարհային տնտեսություն» հասկացությունը, ինչու աշխարհի բոլոր երկրներն ունեն արտաքին տնտեսական կապեր մեկը մյուսի հետ, ինչ բնույթ ունեն այդ կապերը, և, ի վերջո, ինչպես են այդ արտաքին տնտեսական կապերն ազդում ազգային տնտեսությունների վրա:

Փորձենք սահմանել համաշխարհային տնտեսության օբյեկտն ու առարկան[1]: Այսպես, համաշխարհային տնտեսություն առարկայի օբյեկտ է համաշխարհային տնտեսությունը: Համաշխարհային տնտեսությունը ազգային տնտեսությունների ամբողջություն է, որոնք միմյանց փոխկապված են աշխատանքի միջազգային բաժանման համակարգով և տնտեսական ու քաղաքական հարաբերություններով:

---

[1] Հետազոտության օբյեկտ ասելով՝ սովորաբար հասկանում ենք մեզ շրջապատող նյութական կամ ոչ նյութական աշխարհի որոշակի մաս, իրականություն, ինչը գոյություն ունի՝ անկախ դրա մասին մեր գիտելիքի մակարդակից: Հետազոտության առարկան կախված է մեր գիտելիքի մակարդակից: Որոշակիացնելով հետազոտության առարկան՝ մենք առանձնացնում ենք օբյեկտի մեկ կամ մի քանի կողմեր՝ փորձելով ուսումնասիրել դրանք: Հետազոտության յուրաքանչյուր օբյեկտի կարող է համապատասխանել ուսումնասիրության մի քանի առարկա:

Համաշխարհային տնտեսություն առարկայի ուսումնասիրման առարկա են միջազգային տնտեսական հարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս համաշխարհային տնտեսության սուբյեկտների միջև առևտրային, արտադրական, ներդրումային, արժութաֆինանսական և այլ գործունեության արդյունքում: Որպես համաշխարհային տնտեսության սուբյեկտներ հանդես են գալիս պետությունները, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումները, վերազգային կազմակերպությունները ու միջազգային տնտեսական կազմակերպությունները:

Տնտեսական գրականության մեջ գոյություն չունի «համաշխարհային տնտեսություն» հասկացության մեկ միասնական սահմանում, քանի որ այս հասկացությունն ունի շատ լայն կիրառում: Այդ պատճառով մասնագետները առանձնացնում են համաշխարհային տնտեսության ամենակարևոր ասպեկտները: Ելնելով վերը նշվածից՝ ներկայացնենք «համաշխարհային տնտեսություն» հասկացության մի քանի մոտեցումներ: Այսպես, «համաշխարհային տնտեսություն» հասկացության լայն բացատրություն է տվել ֆրանսիացի տնտեսագետ Միշել Բոն, որը համաշխարհային տնտեսության հասկացության մեջ ընդգրկել է հետևյալ բաղկացուցիչները[2].

1. որպես արտադրական գործունեության ամբողջություն, որը կարելի է արտահայտել մակրոտնտեսական ցուցանիշներով, օրինակ՝ համաշխարհային ՀՆԱ-ի ծավալը (2022 թ. տվյալներով համաշխարհային անվանական ՀՆԱ-ն կազմել է 101.3 տրիլիոն ԱՄՆ դոլար)[3],
2. որպես աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրը զբա-

---

[2] Погорлецкий А. И., Экономика зарубежных стран. Учебник. Санкт-Петербург: Изд-во Михайлова В. А., 2001, էջ 12:

[3] Համեմատության համար նշենք, որ 2020 ու 2021 թթ. համաշխարհային ՀՆԱ-ն կազմել է 85.2 և 97.5 տրիլիոն ԱՄՆ դոլար: Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, World Development Indicators 2023:

ղեցնում է իր տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ,

3. որպես միջազգային տնտեսական հարաբերությունների ամբողջություն,
4. որպես վերազգային կազմակերպությունների և վերազգային բանկերի գլոբալ գործունեության արդյունք,
5. որպես երկրների տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումների և միջազգային տնտեսական կազմակերպությունների ամբողջություն,
6. որպես համայն մարդկության տնտեսական գործունեության արդյունք՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վիճակն ու ռեսուրսների հասանելիությունը:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ համաշխարհային տնտեսությունը կարելի է սահմանել լայն ու նեղ իմաստներով: Ըստ լայն սահմանման՝ համաշխարհային տնտեսությունը աշխարհի բոլոր ազգային տնտեսությունների հանրագումարն է, իսկ ըստ նեղ սահմանման՝ ազգային տնտեսությունների այն ոլորտների հանրագումարն է, որոնք առնչվում են արտաքին աշխարհին: Սակայն, ինչպես նկատում ենք, այս երկու սահմանումների միջև տարբերությունը աստիճանաբար փոքրանում է, քանի որ ցանկացած երկրում ավելի քիչ ոլորտներ կարելի է նշել, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն առնչվում արտաքին աշխարհին[4]:

Եթե փորձենք ընդհանրացնել ու համախմբել գրականության մեջ առկա մոտեցումներն ու ըմբռնումները, ապա դրանք կարելի է ներկայացնել հետևյալ երկու խմբով.

1. «համաշխարհային տնտեսություն» հասկացության ամենատարածված մոտեցման համաձայն՝ այն ազգային տնտեսությունների ամբողջություն է, որոնք միմյանց փոխկապակցված են տնտեսական ու քաղաքական հա-

[4] Булатова А. С., Экономика зарубежных стран. Учебник, Москва: Изд-во «Юристъ», 2002, էջ 30:

բաբերություններով: Ըստ այս սահմանման՝ որպես համաշխարհային տնտեսության տարրեր հանդես են գալիս ազգային տնտեսությունները՝ անկախ նրանից, թե դրանց կողմից արտադրված արտադրանքը նախատեսված է ներքին, արտաքին, թե միաժամանակ երկու շուկաների համար,

2. համաձայն մյուս մոտեցման՝ համաշխարհային տնտեսությունը դիտարկվում է որպես միջազգային տնտեսական հարաբերությունների ամբողջություն: Այս մոտեցմանը կողմ են արևմտյան բազմաթիվ մասնագետներ՝ մասնավորապես կարծելով, որ միջազգային տնտեսական հարաբերությունները ներառում են երկրների միջև և՛ առևտուրը, և՛ ֆինանսական հարաբերությունները, ինչպես նաև կապիտալի ու աշխատուժի ոչ հավասարաչափ բաշխումը: Ինչպես նկատում ենք, այս դեպքում տեսադաշտից դուրս է մնում արտադրությունը, որը, որպես կանոն, հիմք է միջազգային տնտեսական հարաբերությունների համար:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսությունը մի բարդ համակարգ է, որում երկրների միջև տեղի է ունենում ապրանքների, ծառայությունների, արտադրության գործոնների ու տեխնոլոգիաների շարժ: Այս հիմքի վրա երկրների միջև առաջանում են միջազգային տնտեսական հարաբերությունների հետևյալ ձևերը՝ ապրանքների ու ծառայությունների միջազգային առևտուր, կապիտալի միջազգային շարժ, աշխատուժի միջազգային միգրացիա, տեխնոլոգիաների միջազգային փոխանցում և միջազգային արժութաֆինանսական հարաբերություններ:

1.2. Համաշխարհային տնտեսության բնորոշ գծերը

Բոլոր մասնագետներն այն կարծիքին են, որ համաշխարհային տնտեսությունն մի որոշակի համակարգ է: Ինչպես ցան-

կացած համակարգ, համաշխարհային տնտեսությունը նույնպես ունի որոշակի բնորոշ գծեր: Այսպես.

- որպես համակարգ համաշխարհային տնտեսության առաջացման և գոյատևման համար հիմք է դրա ամբողջականությունը, ինչը ենթադրում է համակարգի բոլոր տարրերի միջև կայուն տնտեսական փոխազդեցություն: Միայն այս դեպքում է հնարավոր արտադրվող արտադրանքի կանոնավոր շրջանառությունը գլոբալ մակարդակում, ինչը միևնույն ժամանակ ապահովում է համաշխարհային տնտեսության ինքնակարգավորումն ու զարգացումը: Համաշխարհային տնտեսության ամբողջականությունը ցույց տալու համար կարող ենք դիտարկել ֆինանսատնտեսական վերջին գլոբալ ճգնաժամը և դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը սկսվեց 2007 թ. ԱՄՆ-ում և վերածվեց ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամի 2008-2009 թթ., ինչը համաշխարհային տնտեսությունը հաղթահարեց արդեն 2010 թ.: Հաղթահարել ասելով՝ նկատի ունենք, որ երկրների մեծ մասն արդեն 2010 թ. վերականգնեցին իրենց ՀՆԱ-ի մինչճգնաժամային մակարդակները: 2007 թ. համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 4.4 %, 2008 թ.՝2.0 %, 2009 թ. -1.4 %, 2010 թ.՝ 4.5 %, 2011 թ.՝ 3.3 %, 2012 թ.՝ 2.7 %, 2013 թ.՝ 2.8 %, 2014 թ.՝ 3.1 %, 2015 թ.՝ 3.1 %, 2016 թ.՝ 2.8 %, 2017 թ.՝ 3.4 %, 2018 թ.՝ 3.3 %, 2019 թ.՝ 2.6 %, 2020 թ.՝ -3.1 %, 2021 թ.՝ 6.2, 2022 թ.՝ 3.1 %: 2011-2012 թթ. համաշխարհային ՀՆԱ-ի աճի տեմպի նվազումը հիմնականում պայմանավորված էր եվրոպական երկրների պարտքային ճգնաժամով, իսկ 2020 թ. համաշխարհային ՀՆԱ-ի աճի բացասական տեմպը՝ COVID-19 համավարակով: Արդեն 2021 թ. համաշխարհային տնտեսությունը կարողացավ հաղթա-

հարել համավարակի բացասական հետևանքները՝ գրանցելով անհամեմատ մեծ տնտեսական աճ (6.2 %): Ինչպես նկատում ենք, COVID-19 համավարակը գրեթե երկու անգամ ավելի մեծ բացասական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա, քան 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը:

- Համաշխարհային տնտեսությունը դասվում է այն բարդ համակարգերի թվին, որոնք բնութագրվում են իրենց տարրերի բազմաթիվ բաղկացուցիչներով: Այդ բաղկացուցիչների թվին կարելի է դասել հիերարխիկությունը, բազմամակարդակությունը, կառուցվածքայնությունը, անհավասարաչափ տնտեսական զարգացումը և այլն:
  - ✓ Հիերարխիկ ասելով՝ նկատի ունենք, որ համաշխարհային տնտեսության համակարգն առաջին հերթին կոչված է բավարարելու համակարգի «ամենաբարձր» տարրերի պահանջարկը: Տնտեսական ներուժն աշխարհում բաշխված է եղել և շարունակվում է բաշխվել ոչ հավասարաչափ: Այսպես, 2022 թ. տվյալներով համաշխարհային ՀՆԱ-ն կազմել է 101.3 տրիլիոն դոլար այն դեպքում, երբ միայն «Մեծ յոթնյակի» երկրներից (զարգացած երկրներ) ԱՄՆ-ին, Ճապոնիային, Գերմանիային, Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Կանադային ու Իտալիային բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 43.2 %[5]-ը: Այս ենթատեքստում տարածվող թեզիսը, համաձայն որի՝ բաց տնտեսության պայմաններում յուրաքանչյուր երկիր, հետևելով իր շահերին, գործում է հօգուտ համաշխարհային համընդհանուր զարգացման, միայն քողարկում է մի շարք երկրների շահերի բավարարումը: Մյուս կողմից՝ վեր-

[5] Վերը նշված երկրներին 2022 թ. տվյալներով բաժին է ընկել համաշխարհային բնակչության մոտ 9.7 %-ը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, World Development Indicators 2023:

ջին երկու տասնամյակի ընթացքում «Մեծ յոթնյակի» երկրների տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում նվազման միտում է ունեցել: Այսպես, 2010 թ. տվյալներով «Մեծ յոթնյակի» երկրներին բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 49.61 %-ը:

- Որպես համակարգ համաշխարհային տնտեսության հիմքը կազմում են միջազգային ու առանձին ազգային տնտեսությունների նյութական և հոգևոր արժեքների արտադրությունը, բաշխումը, փոխանակումն ու սպառումը:
- Որպես համակարգ համաշխարհային տնտեսությունը միանշանակ չի ընկալվում:
  - ✓ Համաձայն մի մոտեցման՝ համաշխարհային տնտեսությունը պետք է ունենա մեկ նպատակ, ինչն էլ պետք է հանդիսանա համակարգի զարգացման «շարժիչ ուժ»: Համակարգի ներսում կարող են գոյություն ունենալ առանձին ենթահամակարգեր, որոնց բնորոշ են առանձնահատուկ բնութագրիչներ, սակայն դրանք, այնուամենայնիվ, պետք է հետևեն համակարգի գլխավոր նպատակին:
  - ✓ Համաձայն մյուս մոտեցման՝ համաշխարհային տնտեսությունը՝ որպես համակարգ, բաղկացած է ենթահամակարգերից, որոնք ունեն տարբեր և նույնիսկ մեկը մյուսին հակասող նպատակներ: Սակայն համակարգի մեջ մտնող ենթահամակարգերը պետք է փոխկապված լինեն մեկը մյուսի հետ: Համակարգի նման կառուցվածքը կարող է ունենալ ժամանակավոր, անցումային բնույթ, քանի որ ժամանակի ընթացքում առավել առողջ ենթահամակարգերը կձևափոխեն կամ իրենց նպատակին կենթարկեն մյուս ենթահամակարգերը: Հակառակ դեպքում համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ «կփլուզվի»:

1.3. Համաշխարհային տնտեսության սուբյեկտները

Համաշխարհային տնտեսության մեջ նպատակաուղղված տնտեսական գործունեությունն իրականացվում է դրա սուբյեկտների կողմից, որոնք որոշում են արտադրության գործոնների վիճակն ու զարգացումը:

Համաշխարհային տնտեսության սուբյեկտներ են այն տնտեսվարող միավորները, որոնք տիրապետում են անհրաժեշտ կապիտալի, ընդունակ են կազմակերպելու արտադրական գործընթաց միջազգային մակարդակում, նաև ունեն որոշակի միջազգային իրավունքներ ու պարտականություններ: Այդպիսի տնտեսվարող սուբյեկտների թվին են դասվում պետությունները, վերազգային կազմակերպությունները, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներն ու միջազգային տնտեսական կազմակերպությունները:

Պետությունը՝ որպես համաշխարհային տնտեսության հիմնական սուբյեկտ: Պետությունը հասարակության կազմակերպման քաղաքական և տնտեսական ձև է: Պետության զարգացումը սերտորեն կապված է ազգային տնտեսությանը: Պետության դերը տնտեսության մեջ առաջին հերթին դրսևորվում է ձեռնարկությունների համար երկրի ներսում և արտասահմանում շուկաների ստեղծմամբ, կապիտալի կուտակման գործընթացում նրա մասնակցությամբ, ելնելով ազգային շահերից՝ ներքին ու արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորմամբ, ՀՆԱ-ում նրա մասնակցությամբ և այլն: Սովորաբար պետությունը պատասխանատվություն է կրում իր բնակչության սոցիալական ապահովվածության համար: Այսպես, զարգացած երկրներում բնակչության սոցիալական պաշտպանության ուղղված պետության ծախսերը կազմում են ՀՆԱ-ի միջինում 20 %, իսկ զարգացող երկրներում՝ 5 %[6]:

[6] 2022 թ. պետական բյուջեով ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 7.7 %-ը, բյուջեի ընդհանուր ծախսերի 21.1 %-ը: Իր հերթին,

Պետությունը տնտեսական գործունեության ակտիվ մասնակից է: Ձեռք բերելով ապրանքներ ու ծառայություններ՝ այն ստեղծում է պահանջարկ, կատարում է ներդրումներ և տրամադրում է սուբսիդիաներ: Պետությունը հանդես է գալիս նաև որպես խոշոր գործատու: Պետական ոլորտում զբաղվածների թիվը իրականում կախված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելից: Այսպես, Սկանդինավյան երկրներում (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա և այլն) բավականին բարձր է պետական ոլորտում զբաղվածների հարաբերակցությունը ընդհանուր զբաղվածների թվին: Այս երկրներում 2022 թ. տվյալներով պետական ոլորտին բաժին է ընկել ամբողջ զբաղվածների համապատասխանաբար 28, 29.3 և 30.9 %-ը: Ասիայի երկրներում՝ հատկապես Ճապոնիայում ու Հարավային Կորեայում, բավականին ցածր է պետական ոլորտում զբաղվածների հարաբերակցությունը ընդհանուր զբաղվածների թվին: Այս երկրներում պետական ոլորտին բաժին է ընկնում ամբողջ զբաղվածների համապատասխանաբար 4.6 և 8.8 %-ը: Այսպիսով, եթե փորձենք ամփոփել, ապա պետությունը միջինում ապահովում է զբաղվածների ավելի քան 18.6 %[7]-ը: Հայաստանի Հանրապետությունում 2022 թ. պետական ոլորտին բաժին է ընկել ամբողջ զբաղվածների 23.4 %-ը[8]: ՀՀ-ում այս ցուցանիշի գծով նկատվում է նվազում, սակայն դա իրականում ոչ թե արդյունք է պետական ոլորտում զբաղվածների թվի կրճատման, այլ զբաղվածության ավելացման:

սոցիալական պաշտպանության ծախսերի գերակշիռ մասը՝ 74.6 %-ը, բաժին է ընկել ծերության նպաստներին: Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ պետական բյուջե, https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits_ (դիտումը՝ 03.01.2024 թ.):

[7] Աղբյուր՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Cooperation and Development, OECD), https://www.oecd.org/publication/government-at-a-glance/2023/dashboard (դիտումը՝ 03.01.2024 թ.):

[8] Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023 թ., Աշխատանքի շուկա, https://armstat.am/en/?nid=586&year=2023 (դիտումը՝ 03.01.2024 թ.):

Այսպիսով՝ պետությունը, օգտագործելով իր «իշխանական մենաշնորհը», որոշում է ազգային տնտեսության զարգացման ռազմավարությունը, մշակում է հասարակության զարգացման իրավական հիմքերը, կարգավորում է դրամավարկային հարաբերությունները, ինչպես նաև համակարգում է ենթակառուցվածքների ու սոցիալական ոլորտների զարգացումը:

Վերազգային կազմակերպություններ: Վերազգային կազմակերպությունները հատուկ տեղ են գրավում համաշխարհային տնտեսության մեջ՝ բազմակողմանի ազդեցություն ունենալով վերջինիս զարգացման և գործունեության վրա:

Գրականության մեջ մենք կարող ենք հանդիպել վերազգային կազմակերպությունների մի քանի սահմանումների: Այսպես, վերազգային կազմակերպություններ են այն ընկերությունները, որոնք իրենց գործունեությունը ծավալում են երկուսից ավել երկրներում: Մի այլ սահմանման համաձայն՝ վերազգային կազմակերպություններ են այն ընկերությունները, որոնց գլխավոր գրասենյակը գտնվում է մեկ որոշակի երկրում, իսկ ընկերությունն իր գործունեությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականացնում է իրեն պատկանող մասնաճյուղերի միջոցով, որոնք տեղակայված են երկուսից ավել երկրներում: Վերջինս անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է: Ընկերության՝ վերազգային կազմակերպություն համարվելու համար երկուսից ավել երկրներում նրա ծավալած գործունեության ընթացքում ստեղծած արդյունքի նվազագույնը 25-30 % պետք է ապահովի օտարերկրյա ակտիվների հաշվին:

Վերազգային կազմակերպությունները սկսեցին հիմնականում զարգանալ 1960-ական թթ., երբ արևմտյան երկրների առաջատար ընկերությունները սկսեցին կապիտալի զանգվածային արտահանումը[9]: Աշխատանքի միջազգային բաժանման խորա-

[9] Վերազգային կազմակերպությունների առաջացման ժամանակաշրջանի վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Մասնագետների մի մասի կարծիքով վե-

ցումն ու նոր տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն ստեղծեցին առանձին տեխնոլոգիական գործընթացների տարածական բաժանման համար:

Նախկինում վերազգային գրեթե բոլոր խոշոր կազմակերպությունները կենտրոնացած էին հիմնականում ԱՄՆ-ում, ԵՄ-ում ու Ճապոնիայում: XX դարավերջին և XXI դարասկզբին մի շարք զարգացող երկրներում (հատկապես Չինաստան ու Ռուսաստան) ձևավորվեցին և զարգացան վերազգային այնպիսի խոշոր կազմակերպություններ, որոնք հաջողությամբ մրցակցում են զարգացած երկրների նմանատիպ վերազգային կազմակերպությունների հետ: Ի տարբերություն զարգացած երկրների վերազգային կազմակերպությունների՝ զարգացող երկրների վերազգային կազմակերպությունների գործունեության ոլորտը հիմնականում արդյունահանող արդյունաբերությունն է: Վերազգային խոշոր կազմակերպությունների տարեկան եկամտի ծավալը կարող է գերազանցել մի շարք զարգացող ու զարգացած փոքր երկրների ՀՆԱ-ն:

Վերազգային կազմակերպությունների գործունեության միջազգային ուղղվածությունը և դրանց՝ առավելագույն շահույթ ստանալու ձգտումը հաճախ հակասության մեջ են մտնում ընդունող երկրի շահերի հետ: Վերազգային կազմակերպությունները փորձում են դիտարկել օտարերկրյա պետություններին որպես սովորական տնտեսվարող սուբյեկտներ:

Վերազգային կազմակերպությունների գործունեությունը կարգավորելու փորձեր արվել են դեռ 1970-ական թթ.: ՄԱԿ-ի շրջանակում բանակցություններ էին ընթանում, որպեսզի ձեռք բերվի բազմակողմանի համաձայնագիր՝ վերազգային կազմակերպությունների գործունեությունը կարգավորելու համար: Այս փորձերը լուրջ դիմադրություններ ունեցան արևմտյան առաջատար երկրների կողմից: 1974 թ. ՄԱԿ-ի գլխավոր մարմիններից

ազգային կազմակերպություններն առաջացել են դեռ XVI դարում, իսկ մյուս մասը՝ XVIII-XIX դարերում:

մեկում՝ Տնտեսական և սոցիալական խորհրդում (ՏՍԽ), հիմնադրվեց Վերազգային կազմակերպությունների հանձնաժողովը, որի հիմնական նպատակն է օժանդակել ՏՍԽ-ին վերազգային կազմակերպությունների գործունեության կարգավորման գործում[10]:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներ: Համաշխարհային տնտեսության մասնակիցներ են նաև տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումները: Ներկայումս հաշվում են ավելի քան երկու հարյուր այդպիսի խմբավորումներ, և դրանք աճի միտում ունեն: Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները միջպետական տնտեսական համագործակցություն, որի հիմնական նպատակն է աստիճանաբար միավորել մասնակից երկրների տնտեսությունները՝ առաջին հերթին մերձեցնելով դրանց տնտեսական կարգավորման մեխանիզմներն արտաքին տնտեսական հարաբերությունների ոլորտում:

Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները ներառում են աշխարհագրորեն մոտ երկրներ, որոնք ունեն տնտեսական զարգացման գրեթե նույն մակարդակը (Օրինակ՝ Եվրոպական միություն (European Union, EU) և Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիր (North American Free Trade Agreement, NAFTA)[11], Եվրասիական տնտեսական միություն (Eurasian Economic Union, EEU)) և այլն:

Միջազգային տնտեսական կազմակերպություններ: Միջազգային տնտեսական կազմակերպությունները համաշխարհային տնտեսության կարևոր սուբյեկտներից են: Միջազգային տնտե-

---

[10] ՄԱԿ-ի գլխավոր մարմիններն են Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Միջազգային դատարանը և Քարտուղարությունը:

[11] 2018 թ. սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ն, Կանադան ու Մեքսիկան համաձայնության եկան՝ փոխարինելու NAFTA-ն USMCA-ով (United States–Mexico–Canada Agreement, USMCA, ԱՄՆ-Մեքսիկա-Կանադա համաձայնագիր), ինչը վավերացվեց բոլոր անդամ երկրների կողմից 2020 թ. մարտի 13-ին:

սական հարաբերությունների կարգավորման գործում առավել մեծ նշանակություն ունեն Արժույթի միջազգային հիմնադրամը (International Monetary Fund, IMF)[12], Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (World Trade Organization, WTO)[13] և Համաշխարհային բանկի խումբը (World Bank Group, WBG)[14], մասնավորապես Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (International Bank for reconstruction and Development, IBRD):

Արժույթի միջազգային հիմնադրամն ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը ստեղծվել են 1944 թ.: Արժույթի միջազգային հիմնադրամի հիմնական նպատակն է արժութային համակարգում միջազգային համագործակցության կազմակերպումը և միջազգային առևտրի խթանումը: Արժույթի միջազգային հիմնադրամի անդամակցությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի անդամակցության նախապայման է: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հիմնական նպատակն է մասնակից երկրներին վերակառուցման և զարգացման համար աջակցության տրամադրումը:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը սկսել է գործել 1995 թ. հունվարի 1-ից որպես 1986-1993 թթ. GATT[15]-ի բա-

---

[12] Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայքէջը՝ www.imf.org: 1992 թ., բացի Տաջիկստանից, ԱՄՀ-ին անդամակցեցին Խորհրդային Միության բոլոր նախկին երկրները: Հայաստանի Հանրապետությունը կազմակերպությանն անդամակցել է 1992 թ. մայիսի 28-ին:

[13] Առևտրի համաշխարհային կազմակերպության պաշտոնական համացանցային կայքէջը՝ www.wto.org: 2003 թ. փետրվարի 5-ից ՀՀ-ն ԱՀԿ լիիրավ անդամ է:

[14] Համաշխարհային բանկի խմբի պաշտոնական կայքէջը՝ www.worldbank.org: Հայաստանի Հանրապետությունը կազմակերպությանն անդամակցել է 1992 թ. դեկտեմբերի 7-ին: Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնում են Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը, Զարգացման միջազգային ասոցիացիան, Միջազգային ֆինանսական կազմակերպությունը, Ներդրումային երաշխիքների բազմակողմանի գործակալությունը և Ներդրումային վեճերի միջազգային կենտրոնը:

[15] Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագիրը (General Agreements on Tariffs and Trade, GATT) բազմակողմանի առևտրային համաձայնագիր է, որը պարունակում է սկզբունքներ, իրավական նորմեր ու կանոններ, որոնցով առաջ-

նակցությունների արդյունք, որը հայտնի է որպես «Ուրուգվայի ռաունդ»: Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնական նպատակն է խթանել միջազգային առևտուրը մասնակից երկրների միջև:

1.4. Համաշխարհային տնտեսության ենթահամակարգերի առանձնացման չափանիշները

Համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական, ամբողջական համակարգ կազմված է ենթահամակարգերից, տարածաշրջաններից ու խմբերից, որոնք ունեն որոշակի ընդհանրություններ ու տարբերություններ: Իրենց զարգացման ընթացքում ենթահամակարգերը հետևում են ոչ միայն գլոբալ համակարգի ընդհանուր նպատակներին, այլև փորձում են հասնել իրենց սեփական նպատակներին:

Գոյություն ունեն մի շարք մեթոդներ, ըստ որի՝ երկրները բաժանվում են խմբերի: Առաջին հերթին կարելի է դիտարկել տարածաշրջանային մոտեցումը, որի հիմքում ընկած է աշխարհի բաժանումն ըստ պատմամշակութային տարածքների: Պատմամշակութային տարածքները այն տարածքներն են, որոնք պատմական, քաղաքական, մշակութային ու տնտեսական հարաբերություններում ունեն որոշակի ընդհանրություններ: Ըստ այս մոտեցման, օրինակ՝ Եվրոպան, բաժանվում է Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Ասիան՝ Մերձավոր Արևելքի, Միջին Արևելքի, Հարավարևելյան Ասիայի, իսկ Աֆրիկան՝ Հյուսիսային, Կենտրոնական և Սահարա անապատից հարավ ընկած (Հարավային Աֆրիկա) Աֆրիկայի:

նորդվում են մասնակից երկրները միմյանց հետ առևտրում: Համաձայնագիրը ստորագրվել է Ժնևում 1947 թ. հոկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 1948 թ. հունվարի 1-ին:

Երկրների դասակարգման երկրորդ հաճախ կիրառվող մոտեցումը տիպաբանական տարբերակումն է: Տիպաբանական տարբերակման չափանիշներն են.

1. երկրի աշխարհագրական դիրքը,
2. տվյալ պետության առաջացման ժամանակաշրջանը,
3. բնակչության էթնիկական և կրոնական կազմը,
4. բնակչության թվաքանակը,
5. պետական լեզուն և զարգացման մշակութային առանձնահատկությունները:

Ժամանակին մարքսյան քաղաքատնտեսությունը նույնպես մասնակիորեն բաժանում էր երկրները տիպաբանական մոտեցման հիման վրա, որի հիմքում ընկած էին հասարակության արտադրական հնարավորությունները: Ըստ այս մոտեցման՝ երկրները բաժանվում էին երկու՝ կապիտալիստական ու սոցիալիստական, ինչպես նաև երրորդ աշխարհի երկրների՝ համապատասխանաբար սոցիալիստական կամ կապիտալիստական ուղղվածությամբ:

Մյուս կողմից՝ տնտեսական վերլուծության համար համաշխարհային տնտեսության ենթահամակարգերի առանձնացման համար կիրառվում են հետևյալ չափանիշները՝

- տնտեսության սոցիալական կառուցվածքի բնութագիրը,
- տնտեսության տնտեսական զարգացման մակարդակը,
- տնտեսության տնտեսականի աճի ձևը (էքստենսիվ, ինտենսիվ),
- արտաքին տնտեսական հարաբերությունների մակարդակն ու բնութագիրը:

Այսպես, համաձայն ՄԱԿ-ի մեթոդիկայի՝ ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական կարևոր ցուցանիշներն են.

1. ՀՆԱ/ՀԱԱ-ն, ինչպես նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ/ՀԱԱ-ն,

2. վերամշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտի բաժինը ՀՆԱ/ՀԱԱ-ում,
3. կյանքի միջին տևողությունը և բնակչության կրթվածության աստիճանը:

Այստեղ հարկ է նշել, որ բնակչության կյանքի միջին տևողության ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Կյանքի միջին տևողության ինդեքս} = \frac{\text{սպասվող կյանքի միջին տևողություն} - \text{կյանքի նվազագույն տևողություն աշխարհում}}{\text{կյանքի առավելագույն տևողություն աշխարհում} - \text{կյանքի նվազագույն տևողություն աշխարհում}}$$

Ժամանակակից պայմաններում նույնիսկ առավել ոչ բարենպաստ երկրներում կյանքի նվազագույն տևողությունը չի իջնում 25 տ., իսկ առավել բարենպաստ երկրներում այն չի գերազանցում միջինում 85 տ.:

Հիմնվելով սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա՝ տնտեսական վերլուծության համար ՄԱԿ-ը երկրներին բաժանում է.

1. զարգացած երկրներ,
2. անցումային երկրներ,
3. զարգացող երկրներ:

Համաշխարհային բանկի կողմից գործառական ու վերլուծական նպատակով երկրների դասակարգման հիմնական չափանիշը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն է: Այս չափանիշով երկրները բաժանվում են.

1. ցածր եկամտի մակարդակով երկրներ (մինչև 1,035 դոլար),
2. միջին եկամտի մակարդակով երկրներ (ենթախմբեր՝ միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ (1,036 մինչև 4,085 դոլար) և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ (4,086 մինչև 12,615 դոլար)),

3. բարձր եկամտի մակարդակով երկրներ (12,616 դոլարից բարձր)[16]:

Ցածր ու միջին եկամտի մակարդակով երկրները վերագրվում են հիմնականում զարգացող երկրների շարքին: Հարկ է նշել, որ երկրների դասակարգումը եկամտի մակարդակով ոչ միշտ է արտացոլում երկրի տնտեսական ներուժը: Այսպես, բնակչության թվաքանակը զարգացած երկրներում համեմատաբար փոքր է, իսկ զարգացող երկրներում՝ մեծ: Այս համատեքստում Չինաստանի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 2022 թ. կազմել է 12,720 դոլար, սակայն Չինաստանը բավականին մեծ տնտեսական ներուժ ունի: Ավելին՝ զարգացող երկրները հիմնականում հարուստ են օգտակար հանածոներով, որոնց արդյունահանման ու արտահանման շնորհիվ դրանց հաջողվում է բարձր եկամտի մակարդակ գրանցել: Օրինակ՝ ԱՄԷ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն 2022 թ. կազմել է 53,707 դոլար, իսկ Քաթարինը՝ 87,661 դոլար:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ըստ Համաշխարհային բանկի նոր դասակարգման՝ Հայաստանը 2018 թվականից ի վեր զարգացող, միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող երկիր է: 2022 թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող անվանական ՀՆԱ-ն Հայաստանում կազմել է 7,018 դոլար[17]: Այստեղ հարկ է նշել, որ մինչև 2003 թվականը, ըստ Համաշխարհային բանկի նախկին դասակարգման, Հայաստանը համարվել է զարգացող, ցածր եկամտի մակարդակ ունեցող երկիր, քանի որ անկախացու-

---

[16] Այդ դասակարգումը գործում է 2013 թվականից սկսած, իսկ մինչև 2013 թվականը երկրները, ըստ եկամտի մակարդակի մեծության, դասակարգվում էին հետևյալ կերպ՝ ցածր եկամտի մակարդակով երկրներ (մինչև 785 դոլար), միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ (786 մինչև 3,125 դոլար), միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ (3,126 մինչև 9,655 դոլար) և բարձր եկամտի մակարդակով երկրներ (9,656 դոլարից բարձր):

[17] 2022 թ. տվյալներով Հայաստանի անվանական ՀՆԱ-ն կազմել է 19.5 մլրդ դոլար, իսկ իրական ՀՆԱ-ն (2015 թ. գներով արտահայտված)՝ 14.2 մլրդ դոլար: Մյուս կողմից՝ Հայաստանի ՀՆԱ-ն հաշվարկված, ըստ գնողունակության պարիտետի (PPP), 2022 թ. կազմել է 52.7 մլրդ դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 18.9 հազար դոլար:

միից հետո՝ մինչև 2003 թվականը, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն Հայաստանում չի գերազանցել 785 դոլարը[18]: Այնուհետև՝ 2003-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում, Հայաստանը համարվել է զարգացող, միջինից ցածր եկամտի մակարդակ ունեցող երկիր, իսկ 2007-2013 թթ. ընկած ժամանակաշրջանում՝ միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող երկիր: 2013 թ. Համաշխարհային բանկի կողմից ըստ եկամտի մակարդակի երկրների դասակարգման մեթոդաբանության փոփոխությամբ 2013-2017 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ-ն կրկին դասվեց միջինից ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների շարքին: Ինչպես արդեն նշել ենք, 2018 թվականից ի վեր ՀՀ-ն համարվում է միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող երկիր:

Համաձայն Համաշխարհային բանկի մեկ այլ դասակարգման, ըստ երկրի արտաքին պետական պարտքի մեծության, երկրները բաժանվում են բարձր, միջին ու ցածր արտաքին պետական պարտքի մակարդակով երկրների: Բարձր արտաքին պետական պարտքի մակարդակը նշանակում է, որ երկիրը գերազանցել է հետևյալ կրիտիկական ցուցանիշները.

1. արտաքին պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին գերազանցում է 80 %-ը,
2. արտաքին պետական պարտքի հարաբերությունը արտահանմանը գերազանցում է 220 %-ը:

Միջին արտաքին պետական պարտքի մակարդակը բնորոշ է այն երկրներին, որոնց մոտ մեկ կամ երկու ցուցանիշներն էլ գերազանցում են 60 %-ը, սակայն չեն հասնում կրիտիկական մակարդակին:

Ըստ արտաքին պետական պարտքի մեծության՝ Հայաստանը միշտ համարվել է ցածր արտաքին պետական պարտքի մակարդակ ունեցող երկիր: Այսպես, 2022 թ. տվյալներով ՀՀ արտա-

[18] 2002 թ. մեկ շնչին բաժին ընկնող անվանական ՀՆԱ-ն Հայաստանում կազմել է 780 դոլար:

քին պետական պարտքը կազմել է 5.9 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 30.2 %[19]: Համեմատության համար նշենք, որ 2000 թ. տվյալներով ՀՀ արտաքին պետական պարտքի մեծության հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է 45.2 %: Այստեղ հարկ է նշել, որ չնայած 2000-2008 թթ. ընկած ժամանակաշրջանում արտաքին պետական պարտքը բացարձակ մեծությամբ գրեթե անընդհատ աճել է (863.7 մլն դոլարից հասնելով 1.6 մլրդ դոլար), սակայն դրա հարաբերակցությունը ՀՆԱ-ին անընդհատ նվազել է՝ 2008 թ. կազմելով ՀՆԱ-ի 13.5 %-ը: 2009 թվականից սկսած՝ արտաքին պետական պարտքի զգալի ավելացումը հիմնականում պայմանավորված էր ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով, իսկ 2014 թվականից սկսած՝ Ռուսաստանի դեմ կիրառվող տնտեսական պատժամիջոցներով, ինչը զգալի բացասական ազդեցություն ունեցավ նաև ՀՀ տնտեսության վրա: 2009-2021 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքի հարաբերակցությունը ՀՆԱ-ին անընդհատ աճել է՝ 2021 թ. կազմելով 44.6 %:

Բացի ենթահամակարգերից՝ համաշխարհային տնտեսությունն ունի նաև կարգավորող որոշակի տարրեր: Միջազգային տնտեսական համակարգը կարգավորվում է միջազգային իրավունքով: Այսինքն՝ իրավական նորմերի ամբողջությամբ, որոնք համատեղ ստեղծվում են տարբեր պետությունների կողմից, որպեսզի կարգավորեն միմյանց միջև փոխադարձ հարաբերությունները: Միջազգային իրավունքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն իրավական ոլորտներում, որտեղ տվյալ երկիրն ունի միջազգային համաձայնագրեր, միջազգային նորմերին տրվում է առաջնայնություն: Մասնավորապես, 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի համաձայն՝ կողմը (երկիրը) չի կարող հիմնվել իր

[19] ՀՀ պետական պարտքը 2022 թ. կազմել է 10.6 մլրդ դոլար, որից 10.1 մլրդ դոլարը կազմել է կառավարության պարտքը, 550 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը: Իր հերթին, 10.1 մլրդ դոլար կառավարության պարտքից 5.9 մլրդ դոլարը կազմել է արտաքին պետական պարտքը, իսկ 4.2 մլրդ դոլարը՝ ներքին պետական պարտքը:

ներքին իրավական համակարգի վրա՝ հիմնավորելու համար միջազգային համաձայնագրի պայմանները չկատարելը:

Համաշխարհային տնտեսության կարգավորման գործընթացին կարելի է դասել նաև միջազգային այն կազմակերպությունները, որոնց նպատակն է տարբեր բնագավառներում համակարգել պետությունների փոխհարաբերությունները: Այստեղ առաջնային դեր է խաղում ՄԱԿ-ը:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ի՞նչ է համաշխարհային տնտեսությունը: Փորձե՛ք ներկայացնել համաշխարհային տնտեսության սահմանման ամենատարածված մոտեցումը:
2. Որո՞նք են համաշխարհային տնտեսության բնորոշ գծերը:
3. Թվարկե՛ք համաշխարհային տնտեսության սուբյեկտները: Ներկայացրե՛ք, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպիսի դերակատարում ունի համաշխարհային տնտեսության մեջ:
4. Ի՞նչ եք հասկանում՝ համաշխարհային տնտեսության ենթահամակարգեր ասելով: Համաշխարհային տնտեսության ենթահամակարգերի բաժանման ինչպիսի՞ մոտեցումներ գիտեք:
5. Ներկայացրե՛ք համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս հիմնախնդիրները:

Գլուխ 2. Համաշխարհային տնտեսության ձևավորումն ու զարգացումը

2.1. Համաշխարհային տնտեսության ձևավորումը

XIX դարի երկրորդ կեսին արտադրական ուժերի և ազգային տնտեսությունների զարգացումը էական փոփոխություններ առաջ բերեց վերջիններիս փոխհարաբերություններում: Համաշխարհային տնտեսության համակարգի ձևավորման համար հիմք է հանդիսացել համաշխարհային/միջազգային շուկան և միջազգային արտադրությունը[20]: Այդ ժամանակաշրջանում միջազգային արտադրության զարգացումը պայմանավորված էր գաղութատիրական համակարգի ընդլայնմամբ: Այսինքն՝ գաղութատիրական համակարգը այն պայմաններից մեկն էր, որը խթանել է աշխարհի տնտեսական միավորմանը բռնությամբ: Այսպիսով՝ համաշխարհային տնտեսությունը կազմավորվեց XIX դարավերջին և XX դարասկզբին: Համաշխարհային շուկայի առաջացմանը խթանեց արտադրության կապիտալիստական ձևը: XIX դարի երկրորդ կեսին խոշոր արդյունաբերության առաջացումն ու զարգացումը բացահայտեցին ներքին շուկայի «սահմանափակվածությունը»: Արտադրված ապրանքներն իրացնելու համար անհրաժեշտ դարձավ դուրս գալ արտաքին շուկաներ: Հենց այս ժամանակաշրջանում սկսվեց կապիտալի արտահանման և օտարերկրյա ներդրումների գործընթացը:

Գաղութատիրական համակարգ: Գաղութատիրական համակարգը վիթխարի չափերի հասավ XIX դարի երկրորդ կեսին: Գաղութատիրական խոշոր համակարգ ունեցողների թվին (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Նիդեռլանդներ) ավելացան նաև Գերմանիան, ԱՄՆ, Բելգիան ու Ճապոնիան:

[20] Համաշխարհային/միջազգային շուկայի ձևավորման սկիզբ/պատճառ է համարվում «արդյունաբերական հեղաշրջումը»:

Գրեթե ամբողջ աշխարհը տարածաշրջանային և քաղաքական առումով բաժանված էր մի շարք երկրների միջև: Գաղութների հետ քաղաքական ու իրավական հարաբերությունները տարբեր էին՝ մասնակի քաղաքական կախվածությունից մինչև քաղաքական լրիվ կախվածություն:

XVI-XVIII դարերն ընկած ժամանակաշրջանում՝ մինչև «արդյունաբերական հեղաշրջումը», գաղութատիրական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր տեղական հարստության թալանմանը, իսկ գաղութների հետ առևտուրը կրում էր պարզ, սպառողական բնույթ: Սակայն «արդյունաբերական հեղաշրջումից» հետո գաղութատիրական համակարգը վերածվեց գաղութատերերի կողմից արտադրված ապրանքների իրացման շուկայի: Օրինակ՝ XIX դարի կեսին Մեծ Բրիտանիայից արտահանվող գործվածքների 25 %-ը բաժին էր ընկնում Հնդկաստանին: Արևմտյան երկրների արդյունաբերական ապրանքները, որոնք բավականին էժան էին, քան գաղութատիրական համակարգում արտադրված նմանատիպ ապրանքները, քայքայեցին գաղութատիրական համակարգի տեղական արտադրությունը: Այսպես, Հնդկաստանը, որը նախկինում բամբակյա գործվածքների և ապակե ու մետաղյա իրեր արտահանող երկիր էր, վերածվեց այդ ապրանքների զուտ ներմուծողի:

Կապիտալի արտահանում: XIX դարի կեսերին մեծ ծավալներով սկսեց կապիտալի արտահոսքը եվրոպական երկրներից: Ամբողջ արտահանվող կապիտալի մոտ կեսը բաժին էր ընկնում Հյուսիսային Ամերիկային, իսկ մնացած մասը՝ Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի երկրներին: Արտահանվող կապիտալի հիմնական մասը կազմում էին փոխառությունները, որոնք ուղղվում էին ենթակառուցվածքների զարգացմանը (առաջին հերթին՝ երկաթգծերի): Այդ ժամանակաշրջանի կապիտալի շուկայի հիմնական առանձնահատկությունը պայմանավորված էր պետական փոխառությունների գերակշռմամբ: Կապիտալի շուկայի

մյուս առանձնահատկությունն այն էր, որ սկսեց զարգանալ ձեռնարկատիրական կապիտալի միջազգային շարժը: Այդ ժամանակաշրջանում (XX դարասկիզբ) օտարերկրյա ներդրումներում գերակշռում էին պորտֆելային/անուղղակի ներդրումները, իսկ ուղղակի ներդրումներին բաժին էր ընկնում արտասահմանյան ներդրումների 33 %-ը: Հետագայում հենց ձեռնարկատիրական կապիտալի արտահանումն էլ հիմք հանդիսացավ միջազգային արտադրության զարգացման համար:

Միջազգային առևտրի զարգացում: Ձեռնարկատիրական կապիտալի արտահանման ընդլայնումն իր հերթին հիմք հանդիսացավ միջազգային առևտրի զարգացման համար: 1870-1913 թթ. ընկած ժամանակաշրջանում համաշխարհային արտահանման ծավալն աճեց գրեթե չորս անգամ: Այստեղ հարկ է նշել, որ XIX դարավերջին և XX դարասկզբին արտահանման հիմնական շուկաները զարգացած երկրներն էին (65 %), զարգացող երկրներին բաժին էր ընկնում ամբողջ արտահանման 20 %-ը, իսկ գաղութատիրական համակարգին՝ 15 %-ը:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ XIX դարավերջին և XX դարասկզբին ձևավորվեց համաշխարհային տնտեսությունը: Ձևավորված համաշխարհային տնտեսության համակարգը կառուցված էր մի շարք զարգացած կապիտալիստական երկրներից և ագրարահումքային բազմաթիվ կախյալ երկրներից:

2.2. Համաշխարհային տնտեսության զարգացման փուլերը

Մասնագետներն առանձնացնում են համաշխարհային տնտեսության զարգացման չորս փուլ: Այսպես, առաջին փուլը սկիզբ է առել մինչև արտադրության արդյունաբերական ժամանակաշրջանը: Սկզբնական շրջանում որպես համաշխարհային տնտեսության առաջին օբյեկտներ հանդես էին գալիս ավելցուկային հացահատիկային կուլտուրաները, մսամթերքն ու այլ բա-

րիքներ, որոնք գոյանում էին տարբեր համայնքների/ցեղերի մոտ: Ժամանակի ընթացքում, ապրանքային արտադրության զարգացմամբ պայմանավորված, դրանք սկսեցին փոխանակվել տարբեր պետությունների միջև, իսկ առևտրականների առաջացմամբ սկսեց զարգանալ միջազգային առևտուրը:

Երկրորդ փուլը սկիզբ առավ արտադրության արդյունաբերական ժամանակաշրջանում: Մեքենայական խոշոր արտադրության և ձեռնարկատերերի կողմից շահույթի անընդհատ ավելացման ձգտմամբ արտաքին առևտուրը դարձավ ցանկացած ազգային տնտեսության կարևոր բաղկացուցիչ: Որպես հետևանք XVIII-XIX դարերում առաջացավ համաշխարհային շուկան, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ համաշխարհային տնտեսության զարգացման համար:

Համաշխարհային տնտեսության զարգացման երրորդ փուլը սկիզբ առավ XIX-XX դարերում, երբ ձևավորվեց համաշխարհային տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ, որին բնորոշ էին մի շարք առանձնահատկություններ (տե՛ս Գծապատկեր 2.2.1):

Գծապատկեր 2.2.1. Համաշխարհային տնտեսության առանձնահատկությունները XX դարասկզբին



Արևմտյան երկրներում բաժնետիրական կապիտալի զարգացումը և ավելի բարձր շահույթ ստանալու ձգտումը հանգեցրեց նրան, որ կապիտալը սկսեց մեծ ծավալներով տեղափոխվել այլ երկրներ: Կապիտալի արտահոսքի և միջազգային առևտրի ծավալների ավելացմամբ առաջացան միջազգային մոնոպոլիաներ: Վերջիններս միմյանց միջև բաժանեցին իրացման միջազգային շուկաները, հանքահումքային աղբյուրներն ու կապիտալի ներդրման ոլորտները: Առաջատար երկրների ֆինանսական կապիտալը ձգտում էր քաղաքական/վարչական վերահսկում հաստատել իր գործունեությունը ծավալած երկրներում: XIX դարավերջին և XX դարասկզբին զգալի ընդլայնվեց գաղութատիրական համակարգը:

Եվ, ի վերջո, համաշխարհային տնտեսության զարգացման չորրորդ փուլը սկիզբ առավ XX դարում: Սակայն XX դարասկզբին ձևավորված համաշխարհային տնտեսական համակարգը պարունակում էր սոցիալ-տնտեսական հակասություններ:

Հիմք ընդունելով համաշխարհային տնտեսական համակարգի մեջ ազգային տնտեսությունների ներգրավվածության մակարդակը՝ XX դարում համաշխարհային տնտեսության զարգացումը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

1. XX դարի 20-30-ական թթ., որը բնութագրվում է համաշխարհային տնտեսության մեջ ճգնաժամային երևույթներով: Այս ժամանակաշրջանը նաև բնութագրվում է ոչ կայուն տնտեսական հարաբերություններով, քանի որ այն սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ ֆիզիկապես ոչնչացվել էին արտադրական ու մարդկային վիթխարի ռեսուրսներ: Մյուս կողմից՝ տնտեսական մեծ ճգնաժամը բերեց արտահանման ծավալների զգալի կրճատման (միջազգային առևտրի կրճատում) և ուժեղացրեց ազգային արտադրության դերը: Այսպես, 1938 թ. արտահանման բաժինը զարգացած երկրնե-

ռում կազմում էր միջինում ՀՆԱ-ի 3.8 %-ը: Ազգային արտադրությունը պաշտպանելու համար երկրները կիրառում էին խիստ հովանավորչական քաղաքականություն:

2. Երկրորդ փուլը (1940-1980-ական թթ.) բնութագրվում էր նրանով, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից ավարտից հետո իր տնտեսական ներուժով ԱՄՆ-ն անցավ մյուս բոլոր երկրներից: Այս ժամանակաշրջանում գրեթե բոլոր կապիտալիստական երկրներից ակտիվորեն արտահանվում էր ձեռնարկատիրական կապիտալը: Միջազգային արտադրության ծավալների ավելացումը զգալի ազդեցություն ունեցավ համաշխարհային տնտեսության վրա: Արտադրական փոխհարաբերություններում գլխավոր ուժ հանդիսացան վերազգային կազմակերպությունները, որոնք աշխատանքի միջազգային բաժանման կրողներ էին: Վերազգային կազմակերպությունները ձևավորեցին միջազգային արտադրական համակարգեր, որոնք ներառում էին արտադրանքի թողարկումը, իրացումն ու վարկավորումը: 1960-ական թթ. կեսերին գաղութատիրական համակարգի վերացմամբ երևան եկավ զարգացող երկրների խոշոր խումբ, որոնք միանգամից հատուկ տեղ զբաղեցրին համաշխարհային տնտեսության մեջ: Եվ, ի վերջո, այս ժամանակաշրջանում առաջ եկան և բուռն կերպով սկսեցին զարգանալ տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները:

3. 1990-ական թթ. մինչև օրս ընկած ժամանակաշրջանը կարելի է համարել համաշխարհային տնտեսության զարգացման նոր ժամանակաշրջանի սկիզբ: Այս փուլը բնութագրվում է նրանով, որ ի տարբերություն նախորդ երկու փուլերի՝ զգալի ուժեղացան տնտեսական փոխազդեցությունն ու փոխկապակցվածությունը: Փոխվեց Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության սոցիալ-

տնտեսական զարգացման կառուցվածքը (անցում դեպի շուկայական տնտեսություն): Զարգացած երկրները թևակոխեցին հետարդյունաբերական դարաշրջան: Մի շարք երկրներ իրենց տնտեսական զարգացման գործընթացում զգալի հաջողություններ գրանցեցին (Արևելյան Եվրոպայի ու Հարավարևելյան Ասիայի երկրներ, Չինաստան, Հնդկաստան և այլն): Ընդհանուր առմամբ այս ժամանակաշրջանը բնութագրվում է նրանով, որ լայնորեն ընթանում է ներքին ու արտաքին տնտեսական կյանքի ազատականացում ու գլոբալացում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ եթե XX դարասկզբին համաշխարհային տնտեսության ամբողջությունը հիմնականում ապահովվում էր ոչ տնտեսական/քաղաքական ուժով, ապա ներկայումս համաշխարհային տնտեսական համակարգը հիմնականում կառուցված է տնտեսական ուժի հիմքերի վրա: Ներկայիս համաշխարհային տնտեսությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները (տե՛ս Գծապատկեր 2.2.2):

Գծապատկեր 2.2.2. Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս միտումները



Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ի՞նչ գործոններ են նպաստել համաշխարհային տնտեսության ձևավորմանը, և երբ ձևավորվեց համաշխարհային տնտեսությունը:
2. Որո՞նք են համաշխարհային տնտեսության զարգացման փուլերը:
3. Ինչպիսի՞ն էին համաշխարհային տնտեսության զարգացման միտումները XX դարասկզբին:
4. Ինչպիսի՞ն են համաշխարհային տնտեսության զարգացման միտումները ներկայումս:
5. Ինչպիսի՞ դերակատարում ունի Հայաստանի Հանրապետությունը համաշխարհային տնտեսության մեջ: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:

Գլուխ 3. Համաշխարհային տնտեսության տեսությունները

Ներկայումս գոյություն չունեն լայն տարածում գտած տնտեսագիտական տեսություններ, որոնք ամբողջովին նվիրված են համաշխարհային տնտեսությանը, սակայն կան տնտեսագիտական, սոցիոլոգիական և սոցիալ-մշակութային տեսություններ, որոնցում անդրադարձ է կատարվում համաշխարհային տնտեսությանը: Առաջին հերթին դրանք սոցիոլոգիական ու տնտեսագիտական տեսություններն են, որոնք վերաբերում են զարգացման փուլերին, ինչպես նաև սոցիալ-մշակութային տեսություններ, որոնք վերաբերում են մեկ միասնական քաղաքակրթություններին ու քաղաքակրթությունների բախումներին:

3.1. Զարգացման փուլերի տեսություններ

Զարգացման փուլերի տեսություններն առաջին հերթին ներկայացվում են տնտեսական աճի տեսություններով, մեկ միասնական արդյունաբերական ու նոր արդյունաբերական, ինչպես նաև հետարդյունաբերական հասարակարգի տեսություններով:

Տնտեսական աճի փուլերի տեսություններ: Ամերիկացի տնտեսագետ Վոլտ Ռոստոն 1960 թ. «Տնտեսական աճի փուլերը» գրքում առաջ քաշեց տնտեսական աճի իր տեսությունը[21]: Ռոստոն տարբերում է աճի հինգ հիմնական փուլ՝

1. ավանդական հասարակարգ,
2. աճի համար նախադրյալների ստեղծման ժամանակահատված,
3. տնտեսական աճ,

[21] Rostow W.W., The Stages of Economic Growth: A Non-Communist Manifesto (Cambridge: Cambridge University Press, 1960), Chapter 2, "The Five Stages of Growth-A Summary", pp. 4-16.

4. շարժ դեպի հասունացում (արդյունաբերական հասարակարգ),
5. զանգվածային սպառման դարաշրջան:

Զարգացման փուլերը որոշելու համար գործածվող չափանիշները առավելապես տեխնիկաշտնտեսական են: Դրանք են տեխնիկայի զարգացման աստիճանը, տնտեսության ճյուղային կառուցվածքը, ազգային եկամտում կուտակման մակարդակը, սպառման կառուցվածքը և այլն:

Ավանդական հասարակարգում (մինչև ֆեոդալիզմի ավարտը) աշխատունակ բնակչության ավելի քան 75 %-ը զբաղված է պարենամթերքի արտադրությամբ, ազգային եկամուտը հիմնականում օգտագործվում է ոչ արդյունավետ, իշխանությունը պատկանում է հողի սեփականատերերին կամ կենտրոնական ղեկավարին: Երկրորդ փուլում տեղի են ունենում նկատելի փոփոխություններ երեք ոչ արդյունաբերական ոլորտներում՝ գյուղատնտեսություն, տրանսպորտ և արտաքին առևտուր: Երրորդ փուլը ընդգրկում է հարաբերականորեն ոչ մեծ ժամանակահատված՝ երկուերեք տարուց մինչև մի քանի տասնամյակ (արդյունաբերական հեղաշրջում): Այս ժամանակահատվածում աճում են կապիտալ ներդրումները, թողարկվող արտադրանքի ծավալները մեկ շնչի հաշվով, արտադրության մեջ ինտենսիվորեն կիրառվում են նոր տեխնոլոգիաներ: Զարգացման սկզբնական շրջանում ներառում է արդյունաբերության մի քանի ոլորտներ, իսկ հետագայում տարածվում է ամբողջ տնտեսության վրա: Այս պարագայում, որպեսզի տնտեսական աճը տեղի ունենա ինքնաբերաբար, նախ անհրաժեշտ է ներդրումների բաժնի զգալի ավելացում ազգային եկամտի մեջ (օրինակ՝ 5 %-ից մինչև առնվազն 10 %):

Հասունացման ժամանակաշրջանը (արդյունաբերական հասարակարգ) բնութագրվում է որպես գիտատեխնիկական առաջընթացի երկարատև գործընթաց, որում աճում են ուրբանիզացման մակարդակը, որակյալ աշխատուժի մասնաբաժինը, և տեղի

են ունենում տնտեսության կառուցվածքային զգալի փոփոխություններ:

Եվ, ի վերջո, վերջին փուլում տեղի է ունենում տեղաշարժ «առաջարկից» դեպի «պահանջարկ» (ապրանքների ու ծառայությունների արտադրությունից դեպի դրանց մասսայական սպառում): Հետագայում Վոլտ Ռոստոն իր «Քաղաքականություն և աճի փուլեր» աշխատանքում ավելացնում է նաև վեցերորդ՝ կյանքի որակի փնտրման փուլը, որտեղ առաջին պլան է մղվում մարդու հոգևոր զարգացումը[22]:

Տնտեսական աճի փուլերի տևողությունը բավականին տարբեր է եղել: Ամենաերկարը տևել է առաջին փուլը, ավելին՝ աշխարհում դեռևս որոշ երկրներ գտնվում են զարգացման առաջին փուլում: Երկրորդ փուլը Արևմտյան Եվրոպայում տեղ է գտել XVII դարավերջին և XVIII դարասկզբին: Երրորդ փուլը Մեծ Բրիտանիայի համար տևեց երկու տասնամյակ. 1783 թ. հետո՝ որպես տեքստիլ արդյունաբերության աճի արդյունք, Գերմանայի դեպքում այն տեղ գտավ XIX դարի երրորդ քառորդում որպես երկաթուղու շինարարության արդյունք, իսկ Չինաստանի ու Հնդկաստանի դեպքում՝ 1950-ական թվականներից հետո: Չորրորդ փուլը Մեծ Բրիտանիայում տեղ է գտել 1850-ական թթ., ԱՄՆ-ում՝ 1900-ական թթ., Գերմանիայում ու Ֆրանսիայում՝ 1910-ական թթ., Ճապոնիայում՝ 1940-ական թթ.: Եվ վերջապես հինգերորդ փուլը, ըստ Ռոստոյի, 1970-ական թթ. հասանելի էր միայն ԱՄՆ-ին: Այս փուլի առանձնահատկություններից էր ավտոմոբիլաշինության, ենթակառուցվածքների և ծառայությունների ոլորտի աննախադեպ զարգացումը:

Մեկ միասնական արդյունաբերական և նոր արդյունաբերական հասարակարգի տեսություններ: Մեկ միասնական արդյունաբերական հասարակարգի տեսությունների առաջացումը

[22] Rostow W.W., Politics and the Stages of Growth, Cambridge University Press, 1971.

նախնառաջ կապված է ֆրանսիացի սոցիոլոգ Ռայմոնդ Արոնի անվան հետ: Վերջինս պնդում էր, որ տարբեր երկրների արդյունաբերացման ժամանակաշրջանում ձևավորվում է արդյունաբերական հասարակարգ, իսկ խորհրդային և արևմտյան համակարգերը վերջինիս տարբեր դրսևորումներն են[23]: Ֆրանսիացի մի այլ տնտեսագետի՝ Էլյուլի կարծիքով տեխնոլոգիական առաջընթացը ձևափոխում է ոչ միայն տնտեսական կանոնների կիրառումը, այլև հենց այդ կանոնների էությունը[24]: Չեզոքացվում է սեփականության առաջատար դերը, տնտեսական իշխանությունը անցնում է խոշոր վերազգային կազմակերպություններին, իսկ պետության օգնությամբ չեզոքացվում են աղքատության ու հարստության բևեռները:

Այսպիսով՝ կապիտալիստական սեփականատերերի կողմից վերարտադրության գործընթացի նկատմամբ իշխանության կորստի գաղափարը, որը նախկինում զարգացել էր «կառավարիչների հեղաշրջում[25]» տեսության մեջ, բնութագրական է նաև նոր արդյունաբերական հասարակարգի տեսաբանների համար, որոնց կարծիքով արդյունաբերական քաղաքակրթության խնդիրների լուծումը անցել է կառավարիչներին: Նոր արդյունաբերական հասարակարգի տեսությունը ներկայացրել է ամերիկացի տնտեսագետ Ջոն Հելբրեյթն իր «Նոր արդյունաբերական հասարակարգ» գրքում[26]: Ավելին, ըստ Արոնի և նոր արդյունաբերական հասարակարգի մյուս կողմնակիցների, ժամանակակից վերազգային կազմակերպությունների կառուցվածքը չի կրում մենաշնորհային բնույթ, քանի որ դրանք կողմնորոշված են ոչ միայն շահույթի ստացմանը, այլ նաև կատարում են սոցիալական մի

---

[23] Raymond A., Eighteen Lectures on Industrial Society, London: Weidenfeld & Nicolson, 1967.
[24] Ellul J., The Technological Society, N-Y, 1964.
[25] Burnham J., The Managerial Revolution. Harmondsworth: Penguin Books, 1945.
[26] John Galbraith, The New Industrial State (Firs published in 1967). Princeton University Press, 2007.

շարք գործառույթներ: Որպես ապացույց բերվում է այն հանգամանքը, որ աճող կորպորատիվ եկամուտը ուղղվում է սպառողների պահանջմունքների բավարարման բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, գիտատեխնիկական առաջընթացի զարգացմանը և այլն:

Հետարդյունաբերական հասարակարգի տեսություններ: Այստեղ առաջին հերթին կարելի է նշել ամերիկացի սոցիոլոգ ԴԱՆԱԵԼ Բելլի հետարդյունաբերական հասարակարգի հայեցակարգը, որտեղ հարց է առաջադրվում հասարակության տնտեսական առանձնահատկությունների մասին արդյունաբերացման ավարտից հետո[27]: Բելլի կարծիքով հետարդյունաբերական հասարակարգին բնութագրական է.

1. ապրանքների արտադրությունից անցումը դեպի ծառայությունների մատուցում (ծառայությունների ոլորտի բաժնի գերակշռում),
2. որակյալ աշխատուժի ավելացումը,
3. տեսական գիտելիքների առաջատար դերը,
4. տեխնոլոգիաների վերահսկումը,
5. որոշումների ընդունման գործընթացում «նոր տեխնոլոգիաների» կիրառումը:

Հետարդյունաբերական հասարակարգի գաղափարի մյուս տարբերակը գերարդյունաբերացման տեսությունն է, որը առաջ է քաշվել ամերիկացի սոցիոլոգ Ալվին Թոֆլերի կողմից իր «Երրորդ ալիք» գրքում[28]: Հեղինակը փորձում է ներկայացնել տարասեռ բոլոր գործընթացների փոփոխությունները, որոնք կրում են ժամանակակից հասարակությունը, արդյունաբերացման փլուզումն ու «նոր քաղաքակրթության» առաջացումը:

---

[27] Bell, Daniel, The Coming of Post-Industrial Society, New York: Harper Colophon Books, 1974.
[28] Alvin Toffler, The Third Wave, Bantam Books, 1980.

3.2. Մեկ միասնական քաղաքակրթության և քաղաքակրթության բախումների տեսություններ

«Սառը պատերազմի» ավարտից և Խորհրդային Միության փլուզումից հետո ավարտվեց աշխարհի քաղաքական բաժանումը երեք խմբավորումների՝ կոմունիստական (սոցիալիստական), հակակոմունիստական (արևմտյան) և չեզոք երկրներ: Աշխարհի քաղաքական այդպիսի բաժանումը հիմնականում պայմանավորեց երկրների սոցիալ-տնտեսական առումով բաժանումը հետևյալ կերպ՝ սոցիալիստական տնտեսությամբ (կոմունիստական երկրներ), զարգացած շուկայական տնտեսությամբ (կապիտալիստական երկրներ) և զարգացող շուկայական տնտեսությամբ երկրներ (երրորդ աշխարհի երկրներ):

Մեկ միասնական քաղաքակրթության տեսություն: Մեկ միասնական քաղաքակրթության տեսության հիմքում ընկած է այն ազատական գաղափարը, համաձայն որի՝ աշխարհի բոլոր երկրները աստիճանաբար շարժվում են քաղաքական, սոցիալական ու տնտեսական մեկ միասնական կարգի (ազատական ժողովրդավարություն): Այս տեսության ժամանակակից կողմնակիցների կարծիքով այդպիսի կարգ արդեն գոյություն ունի Արևմուտքում, իսկ երբ դրան հասնեն նաև աշխարհի մյուս երկրները, ապա առաջ կգա մեկ հասարակություն, որն էլ հիմք կդառնա «պատմության ավարտի» համար[29]:

Մեկ միասնական քաղաքակրթության տեսությունը ուշադրություն է դարձնում այնպիսի ուժերի վրա, որոնք աշխարհի երկրներին կազմակերպություն են մեկ հասարակության մեջ, ավելացնում են դրանց փոխադարձ կախվածությունը՝ վերացնելով սահմանները դրանց միջև: Այդպիսի ուժ են տնտեսությունների միջազգայնացումն ու գլոբալացումը: Ներկայիս արդյունաբերական

[29] Фукуяма Ф., Конец истории и последний человек / Фрэнсис Фукуяма; пер. с англ. М. Б. Левина, М.: АСТ, 2007, 588 с.

ու հետարդյունաբերական հասարակության բնութագրիչները, որոնք առաջին անգամ երևան են եկել Արևմուտքում, դառնում են տիպային նաև աշխարհի մյուս երկրների համար:

Այսպիսով՝ մեկ միասնական քաղաքակրթության տեսությունը ենթադրում է, որ տնտեսության արդիականացումը ենթադրում է Արևմտյան արժեհամակարգի յուրացում: Ճապոնիայի ու Հարավարևելյան Ասիայի երկրների փորձը ցույց տվեց, որ այդ արդիականացումը կարող է ընթանալ ոչ ըստ «Արևմտյան արժեհամակարգի», և երկրները կարող են պահպանել իրենց սեփական արժեհամակարգը: Առաջին հերթին այդ արժեհամակարգը վերաբերում է մշակույթին, մյուս կողմից՝ դա կարող է առնչվել նաև տնտեսությանը (օրինակ՝ Ճապոնիա): Չնայած մեկ միասնական քաղաքակրթության տեսությունը ընդունում է տնտեսական ու քաղաքական կյանքում կրոնի և ազգային պատկանելության կարևորությունը, որոնք և առաջ են բերում սոցիալ-մշակութային տարբերություններ երկրների միջև, սակայն ենթադրում է, որ ազատականացման ուժեղացմանը զուգահեռ այդ գործոնները խոչընդոտ չեն հանդիսանա:

Քաղաքակրթության բախումների տեսություն: Ամերիկացի պրոֆեսոր Սամուել Հանթինգտոնը իր «Քաղաքակրթության բախումներ» գրքում նշում է, որ «Սառը պատերազմի» ավարտից հետո քաղաքական ու մշակութային աշխարհը դարձավ շատ ավելի բազմաբևեռ, և ներառում է ութ հիմնական քաղաքակրթություն՝ արևմտյան, իսլամական, հնդկական, չինական, ճապոնական, ուղղափառ, աֆրիկյան և լատինամերիկյան[30]: Վերջին շրջանում աշխարհում նվազում է Արևմուտքի դերը, և աճում է ասիական քաղաքակրթությունների դերը: Ըստ Հանթինգտոնի՝ ապագա աշխարհը ոչ թե մեկ միասնական քաղաքակրթություն է բովանդակելու, այլ մի շարք տարբեր քաղաքակրթություններ, որոնց միջև առկա են շատ նմանություններ, սակայն միևնույն ժամանակ դրանց

[30] Хантингтон С., Столкновение цивилизаций, М.: АСТ, 2003.

միջև կան նաև ոչ քիչ տարբերություններ, որոնք միշտ կշարունակեն գոյություն ունենալ:

Լինելով սոցիալ-մշակութային՝ քաղաքակրթության բախումների տեսությունը առաջին հերթին դիտարկում է մշակութային ու քաղաքական ասպեկտներ: Մյուս կողմից՝ այս տեսությունից բխում են տնտեսական բավականին կարևոր եզրահանգումներ: Այսպես, համաշխարհային տնտեսության մեջ աստիճանաբար նվազում է արևմտյան երկրների դերը, և միաժամանակ աճում է ասիական երկրների դերը: Քաղաքակրթության բախումների տեսությունը նաև բերում է այն կարևոր եզրահանգմանը, որ բազմաբևեռ աշխարհը շատ ավելի է ամրապնդում իր դիրքերը ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական առումով: Մյուս հետևությունն այն էր, որ երկրների կամ ինտեգրացիոն խմբավորման մեջ գտնվող երկրների միջև տնտեսական կապերի զարգացումը շատ դեպքերում կախված է նրանից, թե դրանք պատկանում են նույն, թե տարբեր քաղաքակրթությունների, իսկ եթե տարբեր, ապա որքանո՞վ են համատեղելի այդ քաղաքակրթությունները: Այսպես, ըստ Հանթինգտոնի՝ ուղղափառ քաղաքակրթությունը շատ ավելի մոտ է արևմտյան, հնդկական և չինական, քան իսլամական ու ճապոնական քաղաքակրթություններին:

Այսպիսով՝ ըստ քաղաքակրթության բախումների տեսության՝ բազմաբևեռ աշխարհը զգալի կամրապնդի իր դիրքերը ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական առումով:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Որո՞նք են համաշխարհային տնտեսության զարգացման փուլերի տեսությունները:
2. Ներկայացրե՛ք, թե ինչպիսի փոփոխություններ են տեղի ունենում երկրի տնտեսությունում տնտեսական աճի փուլերի տեսությունների համաձայն:

3. Մեկ միասնական արդյունաբերական ու նոր արդյունաբերական հասարակարգի տեսություններում ինչպե՞ս են մեկնաբանվում սեփականության իրավունքի դերը, շահույթի ստացման գործընթացն ու պետության դերը:
4. Ինչո՞վ են տարբերվում հետարդյունաբերական հասարակարգի տեսությունները մեկ միասնական արդյունաբերական և նոր արդյունաբերական հասարակարգի տեսություններից:
5. Ներկայացրե՛ք մեկ միասնական քաղաքակրթության ու քաղաքակրթության բախումների տեսությունների հիմնական առանձնահատկությունները: Ո՞ր մոտեցման կողմնակից եք: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:

Գլուխ 4. Երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ

Համաշխարհային տնտեսության մեջ սովորաբար առանձնացնում են երկրների չորս խոշոր խումբ՝ զարգացած, զարգացող, անցումային և նոր արդյունաբերական: Այստեղ հարկ է նշել, որ բոլոր անցումային երկրները միևնույն ժամանակ նաև զարգացող երկրներ են: Զարգացող երկրներ են նաև արդյունաբերական նոր երկրները, որոնք վերջին մի քանի տասնամյակում զգալի մեծ առաջընթաց են գրանցել իրենց տնտեսական զարգացման գործընթացում:

Երկրներին այս կամ այն խմբում ներառելը պայմանավորված է դրանց տնտեսությունների կառուցվածքով ու սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Համաշխարհային տնտեսության մեջ մեծ կշիռ ունեն զարգացած երկրները, որոնց ներկայումս բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 58.4 %-ը: Համաշխարհային տնտեսության մեջ երկրների խմբերից յուրաքանչյուրում առանձնացնում են նաև որոշակի ենթախմբեր:

4.1. Զարգացած երկրների ընդհանուր բնութագիրը

Զարգացած երկրները բավականին մեծ դեր ունեն համաշխարհային տնտեսության մեջ: Զարգացած երկրների խմբում են շուկայական տնտեսությամբ և սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները: Գոյություն ունեն զարգացած երկրների տարբեր դասակարգումներ, որոնք առաջ են քաշվել միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից և ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխվել են և շարունակում են փոփոխվել:

Այսպես, Արժույթի միջազգային հիմնադրամը (International Monetary Fund, IMF) զարգացած երկրների և տարածքների (որոշ երկրների տարածքներ, որոնք ունեն հատուկ կարգավիճակ, օրինակ՝ Հոնկոնգն ու Գրենլանդիան) շարքին է դասում Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրները, ԱՄՆ-ն, Կանադան, Ճապոնիան, Ավստրալիան և Նոր Զելանդիան, իսկ 1997 թվականից՝ նաև Հարավային Կորեան, Սինգապուրը, Հոնկոնգը, Թայվանն ու Իսրայելը[31]:

Ըստ այլ դասակարգման՝ Միավորված ազգերի կազմակերպությունը (United Nations, UN) դրանց շարքին ավելացնում է նաև Հարավաֆրիկյան Հանրապետությանը: Այստեղ հարկ է նշել, որ Հարավաֆրիկյան Հանրապետությանը Աֆրիկա մայրցամաքի միակ զարգացած երկիրն է:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (Organization for Economic Cooperation and Development, OECD) զարգացած երկրների շարքին է դասում նաև Թուրքիան ու Մեքսիկան, սակայն, ինչպես նկատում ենք, Հարավաֆրիկյան Հանրապետությունն այստեղ ունի դիտորդի կարգավիճակ[32]: Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան ու Մեքսի-

---

[31] Lynge Nielsen "Classifications of Countries Based on Their Level of Development: How it is Done and How it Could be Done", IMF Working Paper WP/11/31.

[32] 1960 թ. տասնութ եվրոպական երկրներ, ԱՄՆ-ն ու Կանադան որոշեցին ստեղծել կազմակերպություն, որի հիմնական նպատակը պետք է լինի մասնակից երկրների և համաշխարհային տնտեսության զարգացումը: 2007 թ. մայիսին OECD անդամ երկրները համաձայնեցին հրավիրել Չիլիին, Էստոնիային, Իսրայելին, Ռուսաստանին և Սլովենիային՝ հետագա հնարավոր անդամակցությունը քննարկելու համար, իսկ Բրազիլիային, Չինաստանին, Հնդկաստանին, Ինդոնեզիային և Հարավային Աֆրիկային առաջարկվեց դիտորդի կարգավիճակ, ինչը հետագայում կարող է հիմք հանդիսանալ կազմակերպությանն անդամակցելու համար: 2010 թ. Չիլին, Էստոնիան, Իսրայելն ու Սլովենիան անդամակցեցին կազմակերպությանը, իսկ Ռուսաստանի անդամակցության գործընթացը կասեցվեց 2014 թ. մարտին: 2016 թ. կազմակերպությանը անդամակցեց Լատվիան, 2018 թ.՝ Լիտվան, 2020 թ.՝ Կոլումբիան, իսկ 2021 թ.՝ Կոստա Ռիկան: Ներկայումս կազմակերպությանն անդամակցում է 38 երկիր: Կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ www.oecd.org:

կան կազմակերպության անդամներ են, ավելի շուտ զարգացող երկրներ են, քան զարգացած, իսկ դրանց անդամակցության համար հիմնականում հիմք են հանդիսացել տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական դրդապատճառները: Այսպես, Թուրքիան Եվրոպայի մի մաս է, իսկ Մեքսիկան մտնում է Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի (North American Free Trade Agreement, NAFTA) մեջ[33]:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կարող ենք նշել, որ զարգացած երկրների թվին են դասվում ավելի քան 38 երկիր, որոնք հիմնականում OECD անդամ են: Զարգացած երկրների մեծ մասը, բացի ԱՄՆ-ից, Կանադայից, Մեքսիկայից, Հարավաֆրիկյան Հանրապետությունից, Ճապոնիայից, Ավստրալիայից, Հարավային Կորեայից, Նոր Զելանդիայից, եվրոպական երկրներ են: Համաշխարհային տնտեսության այս ենթահամակարգի երկրներին բաժին է ընկնում համաշխարհային բնակչության մոտ 18 %-ը, սակայն այստեղ է կենտրոնացած համաշխարհային տնտեսության տնտեսական և գիտատեխնիկական ներուժի վիթխարի բաժինը:

Զարգացած երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի նմանությունները: Զարգացած երկրներն իրենց պատմական զարգացման գործընթացում ունեն մի շարք նմանություններ:

- Նրանց զարգացման գործընթացը հիմնվել է արտադրության կապիտալիստական ձևի վրա (շուկայական տնտեսություն): Շուկայական տնտեսություն ասելով՝ հասկանում ենք այնպիսի տնտեսական համակարգ, որտեղ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ներդնելու գումար, աշխատելու մրցունակ գործարար միջավայրում, գնելու ու

[33] 2018 թ. սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ն, Կանադան և Մեքսիկան համաձայնության եկան փոխարինելու NAFTA-ն USMCA-ով (United States–Mexico–Canada Agreement, USMCA, ԱՄՆ-Մեքսիկա-Կանադա համաձայնագիր), ինչը վավերացվեց բոլոր անդամ երկրների կողմից 2020 թ. մարտի 13-ին:

վաճառելու առանց պետության կողմից որևէ «սահմանափակման»:

- Զարգացած երկրները համաշխարհային տնտեսության բոլոր ենթահամակարգերից առանձնանում են իրենց տնտեսական զարգացման բարձր մակարդակով: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջին մակարդակով դրանք ավելի քան 5 անգամ գերազանցում են զարգացող երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջին մակարդակը, իսկ ըստ գնողունակության պարիտետի (PPP)՝ հաշվարկված 3 անգամ[34]: Վերջին տարիներին այս տարբերությունն էլ ավելի է խորացել:

2022 թ. տվյալներով զարգացած երկրներին բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 58.4 %-ը: Զարգացած երկրների խմբում ՀՆԱ-ի ծավալով առանձնանում են «Մեծ յոթնյակի» երկրները (ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Կանադա և Իտալիա): «Մեծ յոթնյակի» երկրներին բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 43.2 %-ը, այդ թվում՝ ԱՄՆ-ին՝ 25.0 %-ը, Ճապոնիային՝ 4.2 %-ը, Գերմանիային՝ 4.0 %-ը, Մեծ Բրիտանիային՝ 3.0 %-ը, Ֆրանսիային 2.7 %-ը, Կանադային՝ 2.1 %-ը և Իտալիային՝ 2.0 %-ը: Այստեղ հարկ է նշել, որ «Մեծ յոթնյակի» երկրների, ինչպես նաև զարգացած երկրների բաժինը համաշխարհային ՀՆԱ-ում վերջին տարիներին նվազման միտում ունի: Այսպես, 2007 թ. տվյալներով «Մեծ յոթնյակի» երկրներին բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 55.1 %-ը (2010 թ. տվյալներով՝ 50.0 %-ը), իսկ զարգացած երկրներին՝

[34] Գնողունակության պարիտետը (Purchasing Power Parity, PPP) մակրոտնտեսական վերլուծության արժեքի չափ է, որը թույլ է տալիս համեմատել տնտեսական արտադրողականությունը և կյանքի որակը երկրների միջև: Գնողունակության պարիտետը թույլ է տալիս ներկայացնել նույն կամ նմանատիպ ապրանքների գները տարբեր երկրներում՝ միևնույն արժույթով արտահայտված: Գնողունակության պարիտետը հիմնվում է «մեկ գնի» օրենքի վրա, որի համաձայն՝ եթե առկա չեն գործառական ծախսեր և առևտրային սահմանափակումներ, ապա որոշակի ապրանքի գինը տարբեր երկրներում պետք է լինի նույնը:

74.4 %-ը (2010 թ. տվյալներով՝ 67.6 %-ը): Այս նվազումը հիմնականում պայմանավորված է համաշխարհային տնտեսության մեջ մի շարք զարգացող երկրների տեղի ու դերի զգալի մեծացմամբ: Զարգացած երկրներից մեծ մասը մտնում են տարածաշրջանային ինտեգրացիոն կազմակերպությունների մեջ, որոնցից առավել զարգացածներն են ԵՄ-ն, որին 2022 թ. տվյալներով բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի 16.5 %-ը (2010 թ. տվյալներով՝ ԵՄ անդամ երկրներին բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի 21.7 %-ը) և NAFTA-ն, որին 2022 թ. տվյալներով բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի 28.6 (2010 թ. տվյալներով NAFTA-ի անդամ երկրներին բաժին է ընկել համաշխարհային ՀՆԱ-ի 26.5 %-ը):

Զարգացած երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի տարբերությունները: Արևմտյան երկրների տնտեսական զարգացման հիմքում ընկած է եղել աշխատուժը: Կապիտալիզմի զարգացման առաջին փուլն աչքի է ընկել աշխատուժի էքստենսիվ օգտագործմամբ: Այսպես XIX դարավերջին Մեծ Բրիտանիայի տնտեսության որոշ ոլորտներում առավելագույն աշխատաժամանակը կազմում էր 14-16 ժամ: Այսպիսով՝ կարող ենք նշել, որ տնտեսական զարգացման մակարդակը/տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր աշխատուժի էքստենսիվ օգտագործման մակարդակով: Աշխատուժի էքստենսիվ օգտագործմամբ պայմանավորված՝ արտադրության զարգացումը/աճը բնականաբար ապահովեց արտաքին առևտրի զարգացում/ավելացում: Այսպես, եթե 1720-1820 թթ. ընկած ժամանակահատվածում զարգացած երկրների արտահանումն աճել է մոտ 2.5 անգամ, ապա 1820-1913 թթ. ընկած ժամանակահատվածում այն աճել է ավելի քան 30 անգամ: Մյուս կողմից՝ XIX դարում արևմտյան երկրների տնտեսական զարգացումը ձեռք բերեց ցիկլիկ բնույթ, ինչը պարբերաբար արտահայտվում էր գերարտադրության տեսքով: Արտադրական գործընթացի ցիկլիկ բնույթն առա-

ջին անգամ ի հայտ եկավ Մեծ Բրիտանիայում 1825թ[35].: Հետագայում՝ 1857 թ. սկսած, ճգնաժամերը սկսեցին ներառել գրեթե բոլոր զարգացած երկրները: Ներկայիս զարգացած երկրների տնտեսական աճի տեմպերը հատկապես զգալի կրճատվեցին 1930-1932 թթ., 1945-1946 թթ., 1970-1980 թթ. ընկած ժամանակահատվածներում, ինչպես նաև 2007-2009 թթ. ԱՄՆ-ում սկիզբ առած գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին:

Այսպիսով՝ զարգացած երկրների ենթախմբում երկրների տնտեսական զարգացման գործընթացը մինչև XX դարի երկրորդ կեսը ընթանում էր անհավասարաչափ: Այդ անհավասարաչափ զարգացման հիմքում առաջին հերթին ընկած էր աշխատուժի արտադրողականությունը: Մյուս կողմից՝ անցյալ դարում ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ առաջատար էր (լիդեր), և հիմնականում նրանից էին կախված համաշխարհային գիտատեխնիկական զարգացման մակարդակն ու համաշխարհային արտադրության շարժընթացը: Սակայն արդեն XX դարի երկրորդ կեսից սկսած՝ զարգացած երկրներում նկատվեց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հավասարեցման միտում: Այդ ժամանակահատվածում այլ զարգացած երկրներում աշխատուժի արտադրողականության մակարդակը սկսեց մոտենալ ԱՄՆ մակարդակին: Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ԱՄՆ դիրքերը հարաբերականորեն թուլացան համաշխարհային տնտեսության մեջ, ինչը պայմանավորված էր Եվրոպայի, Ճապոնիայի և մի շարք զարգացող երկրների տնտեսական զարգացման հաջողություններով:

---

[35] «1825 թ. խուճապը» վերաբերում էր արժեթղթերի շուկայի ձախողմանը, ինչը սկսվեց Անգլիայի բանկում, (Bank of England), իսկ պատճառը սպեկուլյատիվ բնույթի ներդրումների աճն էր Լատինական Ամերիկայում: Լոնդոնում փակվեց 6, իսկ Անգլիայում՝ 60 բանկ: Ֆրանսիայի բանկից (Banque de France) ոսկու ռեզերվների օգտագործման շնորհիվ Անգլիայի բանկը փրկվեց սնանկացումից:

4.2. Զարգացող երկրների ընդհանուր բնութագիրը

Զարգացող երկրների ենթահամակարգը ներառում է աշխարհի բոլոր երկրների 85 %-ը, որտեղ ապրում է աշխարհի բնակչության ավելի քան 82 %-ը: Ինչպես նկատում ենք, չնայած այն հանգամանքին, որ զարգացող երկրները զգալի մեծ թիվ են կազմում համաշխարհային տնտեսության մեջ, և դրանցից շատերն ունեն մեծաթիվ բնակչություն ու վիթխարի տարածք, դրանց բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի միայն 41.6 %-ը: Թերևս այդ պատճառով նախկինում երբեմն տնտեսական գրականության մեջ զարգացող երկրներն անվանում էին «երրորդ աշխարհ»՝ ելնելով համաշխարհային տնտեսության մեջ դրանց զբաղեցրած տեղից, դերից ու ազդեցության մակարդակից: Այստեղ հարկ է նշել, որ զարգացող երկրների տեղն ու դերը վերջին տարիներին կտրուկ ավելանում են համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, եթե 2007 թ. տվյալներով զարգացող երկրներին բաժին էր ընկնում ամբողջ համաշխարհային ՀՆԱ-ի 26.0 %-ը, ապա՝ արդեն 2022 թ.՝ 41.6 %-ը:

Զարգացող երկրների խմբի մեջ մտնում են շուկայական տնտեսությամբ և տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրները: Զարգացող երկրների ենթահամակարգի մեջ մտնում են.

- Ասիայի բոլոր երկրները՝ բացի Ճապոնիայից, Հարավային Կորեայից, Թայվանից, Սինգապուրից, Հոնկոնգից, Իսրայելից ու Թուրքիայից,
- Աֆրիկայի բոլոր երկրները՝ բացի Հարավաֆրիկյան Հանրապետությունից,
- Լատինական Ամերիկայի բոլոր երկրները՝ բացի Մեքսիկայից:

Զարգացող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի նմանությունները: Զարգացող երկրներին բնորոշ են

սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ ու պայմաններ: Միևնույն ժամանակ գոյություն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք կազմակերպություն են զարգացող երկրներին: Զարգացող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական առանձնահատկություններն են.

- զարգացող երկրներին կազմակերպություն է դրանց պատմական զարգացումը, որը կապված է գաղութատիրական համակարգի հետ,
- զարգացող երկրների ենթահամակարգում մինչև օրս գոյություն ունեն բազմասեռ արտադրական ուժեր (ագրարային ու արդյունաբերական),
- զարգացող երկրները, պայմանավորված իրենց տնտեսական զարգացման ցածր մակարդակով, զգալի կախվածություն ունեն զարգացած երկրներից:

Զարգացող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի տարբերությունները: Զարգացող երկրների խումբն իր հերթին կարել է դասել ենթահամակարգերի՝ ելնելով դրանց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից: Զարգացող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման տարբերակվածության մակարդակը հատկապես խորացավ 1980-1890-ական թթ.: Զարգացող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման տարբերակվածության համար առաջին հերթին հիմք են հանդիսացել դրանց պատմական առանձնահատկությունները: Այսպես, 1938 թ. 12 գաղութներին (Արգենտինա, Բրազիլիա, Հոնկոնգ, Եգիպտոս, Հնդկաստան, Կոլումբիա, Մալազիա, Մեքսիկա, Սինգապուր, Թաիլանդ, Ֆիլիպիններ և Կորեա) բաժին էր ընկնում ամբողջ գաղութատիրական համակարգի վերամշակող արդյունաբերության 73.3 %-ը: Մյուս կողմից էլ այդ տարբերակվածության հիմքում ընկած է տնտեսական զարգացման տարբեր մոդելների կիրառումը: Եվ, ի վերջո, մի շարք երկրների համար շատ կարևոր դեր խաղաց դրանց աշխարհաքաղաքական դիրքը: Մասնավորա-

պես, 1950-1970-ական թթ. Մալազիան, Թաիլանդը, Թայվանն ու Հարավային Կորեան սոցիալիզմի դեմ պայքարի հիմնական կենտրոններ էին: Այս երկրները գտնվում էին առաջին հերթին ԱՄՆ-ի և Ճապոնիայի տնտեսական հետաքրքրության կենտրոնում, և դրանց բաժին էր ընկնում արևմտյան երկրներից զարգացող երկրներին ուղղվող վարկային կապիտալի գրեթե կեսը:

Հարաբերականորեն ժամանակակից տնտեսության կառուցվածք ունեցող երկրներից առանձնանում է արդյունաբերական նոր երկրների ենթախումբը: Այստեղ ներառվում են երկրներ, որոնք վերջին երկու-երեք տասնամյակում ցուցաբերել են տնտեսական աճի շատ բարձր ցուրցանիշներ և այդ հիմքի վրա կարողացել են զգալի կրճատել տնտեսական զարգացման մակարդակի տարբերությունը զարգացած երկրների հետ: Ներկայիս արդյունաբերական նոր երկրների շարքին կարելի է դասել.

- Հարավարևելյան Ասիայում՝ Ինդոնեզիան, Թաիլանդը, Մալազիան, Ֆիլիպինները,
- Լատինական Ամերիկայում՝ Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան ու Չիլին,
- Մերձավոր ու Միջին Արևելքում՝ Իրանը, Թուրքիան:

Հատուկ ենթախմբով առանձնացնում են նավթ արտահանող երկրներին (մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հարաբերականորեն մեծ ծավալ): Այս ենթախմբի հիմքը կազմում են Նավթ արտահանող երկրների կազմակերպության (Organization for Petroleum Exporting Countries, OPEC) 13 անդամ երկրները[36]: Չնայած նրան,

[36] OPEC-ը հիմնադրվել է 1960 թ.: Հիմնադիր հինգ երկրներն են Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան ու Վենեսուելան: Հետագայում անդամակցեցին Քաթարը (1961 թ.), Ինդոնեզիան (1962-2009 թթ., 2016 թ. հունվար-2016 թ. նոյեմբեր), Լիբիան (1962 թ.), Արաբական Միացյալ Էմիրությունները (1967 թ.), Ալժիրը (1969 թ.), Նիգերիան (1971 թ.), Էկվադորը (1973 թ.), Գաբոնը (1975-1995 թթ., 2016 թ.), Անգոլան (2007 թ.), Գվինիան (2017 թ.) և Կոնգոն (2018 թ.): Ինչպես նկատում ենք, 1960 թվականից ի վեր կազմակերպության անդամների թիվը փոփոխվել է: Ավելին՝ OPEC-ի անդամ երկրների ավելացմանը զուգահեռ մի շարք երկրներ ժամանակավորապես կասեցրել են իրենց անդամակցությունը կազմա-

որ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն շատ տարբերակված է (2022 թ. տվյալներով՝ մոտ 2,162 դոլար Նիգերիայում, Քուվեյթում՝ 41,079 դոլար, իսկ Քաթարում՝ 87,661 դոլար) նավթը մեծ դեր է ունեցել և շարունակում է ունենալ այս երկրների տնտեսական զարգացման գործընթացում: Այսինքն՝ այս երկրների տնտեսությունների զարգացումը հիմնականում պայմանավորված է արդյունահանվող ու արտահանվող նավթի ծավալներով ու նավթի միջազգային գնով[37]:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք նշել, որ զարգացող երկրների վերին դասը կազմում են հարաբերականորեն ժամանակակից տնտեսության կառուցվածք ունեցող երկրները (մասնավորապես՝ Հարավարևելյան Ասիայի և Լատինական Ամերիկայի արդյունաբերական նոր երկրները) և մեկ շնչին բաժին ընկնող հարաբերականորեն մեծ ՀՆԱ-ի ծավալ ունեցող երկրները (Պարսից ծոցի երկրների մեծ մասը):

Պետության դերը զարգացող երկրներում: Զարգացող երկրների տնտեսական կարգավորման գործընթացում պետության յուրահատուկ դերն արտահայտվում է վերջինիս կողմից կիրառվող սոցիալ-տնտեսական զարգացման մոդելով: Պետությու-

---

կերպությանը (Ինդոնեզիան 2016 թ. նոյեմբերին որոշեց կրկին ժամանակավորապես կասեցնել իր անդամակցությունը, Էկվադորը կասեցրել էր իր անդամակցությունը 1992 թ., սակայն 2007 թ. ակտիվացրեց անդամակցությունը) կամ դուրս են եկել կազմակերպությունից (Գաբոնը դադարեցրեց իր անդամակցությունը 1995 թ., սակայն կրկին անդամակցեց 2016 թ., Քաթարը դադարեցրեց իր անդամակցությունը 2019 թ. հունվարի 1-ին, Էկվադորը դադարեցրեց իր անդամակցությունը 2020 թ. հունվարի 1-ին): Ներկայումս կազմակերպությանն անդամակցում է 13 երկիր: Կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ www.opec.org:

[37] 2011-2014 թթ. նավթի միջազգային միջին գինը կազմել է մոտ 100 ԱՄՆ դոլար մեկ նավթային բարելի (մեկ նավթային բարելը = 159 լիտր) դիմաց: 2014 թ. երկրորդ կեսից սկսած՝ նավթի միջազգային գինը կտրուկ նվազել է՝ 2016 թ. հունվարին կազմելով մոտ 36.5 ԱՄՆ դոլար մեկ նավթային բարելի դիմաց: 2016-2020 թթ. ընկած ժամանակաշրջանում նավթի միջազգային գնի որոշակի աճ է նկատվել՝ 2020 թ. դեկտեմբերին կազմելով 48 ԱՄՆ դոլար մեկ նավթային բարելի դիմաց: 2020 թվականից ի վեր նավթի միջազգային գինը աճի միտում է ունեցել՝ 2023 թ. դեկտեմբերին կազմելով 73.5 դոլար:

նը կարող է նախադրյալներ ստեղծել ինչպես արտադրական ուժերի առանձին տարրերի, այնպես էլ վերարտադրությունն ապահովելու համար: Այսպիսով՝ պետությունն իր կողմից կիրառվող սոցիալ-տնտեսական մեխանիզմի շնորհիվ փորձում է նվազագույնի հասցնել տնտեսության մեջ առկա կառուցվածքային անհամաչափություններն ու այն հիմնախնդիրները, որոնք սովորաբար բնորոշ են զարգացող երկրներին:

Սկսած XX դարի կեսերից զարգացող երկրներում լայն թափով սկսեց զարգանալ պետական ոլորտը (ազգային տնտեսության այն հատվածը, որը պետության սեփականությունն է): Զարգացող երկրներում պետական ոլորտի առաջացումն ու հետագա զարգացումը պայմանավորված էին այն հանգամանքով, որ տնտեսական զարգացման ճանապարհին առաջ էին գալիս տեխնոլոգիական և ներդրումային խոչընդոտներ ու սահմանափակումներ: Պետությունն ի վիճակի է մոբիլիզացնել վիթխարի ռեսուրսներ՝ ուղղորդելով դրանք դեպի տնտեսության այն ոլորտներ, որտեղ դրանց կարիքն առավել զգացվում է:

Արդեն 1980-ական թթ. կեսերին պետական ոլորտն ամուր դիրքեր գրավեց զարգացող երկրների մեծամասնությունում: Պետական ոլորտի վերահսկողության տակ էին գտնվում ենթակառուցվածքների կառուցումն ու հետագա զարգացումը: Պետական ոլորտի շնորհիվ ստեղծվեցին և զարգացան արդյունաբերության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մետաղագործությունը, նավթարդյունաբերությունը, մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը: Ընդհանուր առմամբ, այդ ժամանակաշրջանում բոլոր զարգացող երկրների պետական ոլորտի միջին բաժինը չէր գերազանցում զարգացած երկրների պետական ոլորտի միջին բաժինը, սակայն զարգացող երկրների համար դրա դերը շատ ավելի կարևոր էր, քանի որ այն կենտրոնացված էր տնտեսության «ժամանակակից» ոլորտների վրա (մասնավորապես վերամշակող արդյունաբերություն):

Պետության կողմից մոբիլիզացված միջոցներն օգտագործվում են ոչ միայն տնտեսության «ժամանակակից» ոլորտների զարգացման համար, այլև մի շարք սոցիալական խնդիրներ լուծելու համար (առողջապահություն, կրթություն և այլն): Մյուս կողմից՝ զարգացող երկրներում պետությունը ոչ միայն խթանել է սոցիալ-տնտեսական զարգացումը, այլև կատարել է յուրահատուկ կարգավորիչ գործառույթ:

Արդեն 1990-ական թթ. վերջին զարգացող երկրներից մեծամասնությունում, պայմանավորված շուկայական հարաբերությունների զարգացմամբ, պետական ոլորտն արդեն կորցրեց իր «կարևոր» դերն ու արդյունավետությունը: Զարգացող երկրներում պետական ոլորտի մասնաբաժինը զգալիորեն նվազեց:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ պետությունը կարող է ինչպես խթանել, այնպես էլ խոչընդոտել տնտեսության մեջ առանձին ոլորտների զարգացումը: Սա իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում որոշելու քանական ու որակական չափորոշիչներ պետական ոլորտի օպտիմալ զարգացման համար: Այսպիսով՝ ցանկացած երկրի համար պետության միջամտության աստիճանը սահմանափակվում է տնտեսության մեջ արդեն գոյություն ունեցող/առկա սոցիալ-տնտեսական զարգացման մոդելով, պետության առջև դրված խնդրի բնութագրով ու երկրի համաշխարհային տնտեսությանը մասնակցության աստիճանով:

4.3. Անցումային երկրների ընդհանուր բնութագիրը

Այս խմբում ընդգրկվում են այն երկրները, որոնք, սկսած 1980-1990-ական թվականներից, անցում են կատարում պլանային (սոցիալիստական) տնտեսությունից դեպի շուկայական տնտեսություն: Այդ պատճառով էլ դրանց հաճախ անվանում են հետսոցիալիստական երկրներ: Դրանք նախկին Խորհրդային Միության 15 երկրներն են/էին (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Հա-

յաստան, Վրաստան, Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Ադրբեջան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենիա), Մոնղոլիան, Չինաստանն ու Վիետնամը, չնայած ֆորմալ կերպով վերջին երկու երկրները շարունակում են զարգացնել սոցիալիզմը: Անցումային երկրների խմբի մեջ մտնում էին նաև Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրները: Այստեղ հարկ է նշել, որ Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը, ինչպես նաև Մերձբալթյան երկրները (Լատվիա, Լիտվա և Էստոնիա) ներկայումս արդեն համարվում են զարգացած երկրներ և անդամակցել են Եվրոպական միությանը (European Union, EU)[38]: Ներկայումս Հարավարևելյան Եվրոպայի երկրներից անցումային են համարվում Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան, Մոնտենեգրոն, Սերբիան ու Մակեդոնիան[39]: Պլանային (սոցիալիստական) ու շուկայական տնտեսության համակարգերի բնութագրիչներն են՝

Սոցիալիստական տնտեսություն	Շուկայական տնտեսություն
Կենտրոնացված վերահսկում	Սպառողների ինքնիշխանություն
Սոցիալական էթիկա	Սեփական շահի գերակայություն
Պլանավորման մեխանիզմ	Գնային մեխանիզմ
Պետական սեփականություն	Մասնավոր սեփականություն
Պետական մոնոպոլիա	Մրցակցության առկայություն

Աղբյուր՝ Tony Cleaver, «Understanding the World Economy», 2ed., London 2002, p. 36:

Հարկ է նշել, որ անցումային տնտեսությամբ երկրներում շուկայական տնտեսությանն անցման տնտեսական և սոցիալական ծախսերը (երկարատև տնտեսական անկում, գործազրկության բարձր մակարդակ, սոցիալական ապահովածության համակար-

[38] 2004 թ. մայիսի 1-ին ԵՄ անդամակցեցին Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Կիպրոսը, Մալթան, Լեհաստանը, Չեխիան, Սլովակիան, Սլովենիան Հունգարիան: 2007թ, հունվարի 1-ին ԵՄ-ին անդամակցեցին Ռումինիան և Բուլղարիան, իսկ 2013թ. հուլիսի 1-ին՝ Խորվաթիան:
[39] UN World Economic Situation and Prospects (WESP) Report 2019, p. 169.

գի անկում, եկամուտների տարբերակվածության խորացում և այլն) բավականին մեծ էին, քան սպասվում էր: Անցումային տնտեսությամբ երկրներում բարեփոխումների առաջին ծրագրերը ներառում էին տնտեսությունը կայունացնող միջոցառումներ, ինստիտուցիոնալ ու կառուցվածքային փոփոխություններ, ինչպես նաև սեփականաշնորհման լայնածավալ գործընթացներ: Այսպես, դրամավարկային ու հարկաբյուջետային սահմանափակումները պետք է նվազեցնեին գնաճի մակարդակը, վերականգնեին ֆինանսական հավասարակշռությունը և նախապայմաններ/հիմքեր ստեղծեին մակրոտնտեսական կայուն իրավիճակի հաստատման համար: Մյուս կողմից էլ արտաքին առևտրի ազատականացումը պետք է օգներ ձեռք բերել գների օպտիմալ մակարդակ և ապահովեր համապատասխան մրցակցություն ներքին շուկայում:

Անցումային տնտեսությամբ երկրներին 2022 թ. տվյալներով բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 20.4 %-ը (2010 թ. տվյալներով՝ 12.5 %-ը): Այսպես, նախկին Խորհրդային Միության կամ ներկայիս ԱՊՀ անդամ երկրներին բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 2.8 %-ը (այդ թվում՝ միայն Ռուսաստանին բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 2.2 %-ը), իսկ Չինաստանին՝ մոտ 17.6 %-ը:

Անցումային երկրները նույնպես կարելի է խմբավորել, օրինակ՝ նախկին Խորհրդային Միության երկրները, որոնք ներկայումս միավորված են ԱՊՀ-ի մեջ, կարելի է դասել մեկ խմբում: Այս խմբում երկրների զարգացման մակարդակները համեմատաբար շատ չեն տարբերվում, ներառված են մեկ տարածաշրջանային ինտեգրացիոն խմբում, սակայն, չնայած այս ամենին, նրանք իրենց տնտեսական քաղաքականությամբ բավականին տարբերվում են: Այսպես, Բելառուսը, Ուզբեկստանն ու Թուրքմենստանն իրականացրել են ոչ այնպիսի արմատական բարեփոխումներ, ինչպես մյուս երկրները, իսկ Տաջիկստանը նույնիսկ

Խորհրդային Միության ժամանակ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով զգալի զիջում էր միութենական մյուս երկրներին:

Մյուս ենթախմբում ժամանակին կարելի էր ներառել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ներառյալ Մերձբալթյան երկրները: Այս երկրներին բնորոշ էին արմատական բարեփոխումները, ձգտումն անդամակցելու ԵՄ-ին, զարգացման հարաբերական բարձր մակարդակը: Ժամանակին որոշ տնտեսագետներ կարծում էին, որ այս տարածաշրջանի ոչ այնքան արմատական բարեփոխումներ իրականացնող երկրները՝ Ալբանիան, Բուլղարիանն, Ռումինիա, ավելի նպատակահարմար էր ներառել առաջին ենթախմբում:

Որպես առանձին ենթախումբ կարելի է առանձնացնել Չինաստանն ու Վիետնամը, որոնք իրենց բարեփոխումների իրականացման սկզբնական փուլում ապահովում էին սոցիալ-տնտեսական զարգացման բավականին ցածր մակարդակ, սակայն ներկայումս այս երկրները դրական զգալի արդյունքներ են գրանցում իրենց տնտեսական զարգացման գործընթացում:

4.4. Արդյունաբերական նոր երկրների ընդհանուր բնութագիրը

Նոր արդյունաբերական (ինդուստրիալ) երկրները (ՆԱԵ) զարգացող երկրների այնպիսի ենթախումբ են, որոնք զգալի հաջողությունների են հասել արդյունաբերացման գործընթացում, ստեղծել են գիտատար արտադրությունների առանձին տեսակներ, ակտիվորեն ներառվել են աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում ու միջազգային առևտրում, զարգացրել են արտահանման ուղղվածություն ունեցող ապրանքների և ծառայությունների արտադրությունը: ՆԱԵ-ի համար բնութագրական է տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակ, որը գերազանցում է մյուս զարգացող երկրների համանման տնտեսա-

կան ցուցանիշները: Ներկայումս գրեթե բոլոր ՆԱԵ-ում որպես տնտեսության առաջատար ոլորտ դիտարկվում է վերամշակող արդյունաբերությունը: Այս երկրներում նաև զգալի բարձր է աշխատուժի արտադրողականությունը վերամշակող արդյունաբերության ոլորտում: Արդյունաբերական արտադրանքի արտադրության առանձին տեսակներով, ներառյալ գիտատար արդյունաբերական արտադրանքը, արդյունաբերական նոր երկրները կարողացան գրավել առաջատար տեղեր համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, օրինակ, արդեն 1990-ական թթ. կեսերին Հարավային Կորեան նավաշինության ոլորտում աշխարհում գրավում էր երկրորդ տեղը Ճապոնիայից հետո, իսկ էլեկտրոնիկայի, նավթաքիմիայի և տեքստիլի արտադրության ոլորտներում՝ հինգերորդ տեղը[40]: Ներկայումս ՆԱԵ-ում տեղի է ունենում արտադրության ու կապիտալի կուտակման գործընթաց, բանկային և արդյունաբերական կապիտալի միաձուլում, ձևավորվում է ազգային ֆինանսական կապիտալը: Այս երկրներում ձևավորվող վերազգային կազմակերպություններն իրենց գործունեության ծավալով հաճախ չեն զիջում առաջատար երկրների վերազգային կազմակերպություններին: ՆԱԵ-ին բաժանում են «ալիքների»՝ ելնելով համաշխարհային տնտեսության մեջ դրանց զարգացման առանձնահատկություններից:

«Ի ալիքի» ՆԱԵ: Մինչև 1997 թվականը Հարավարևելյան Ասիայի ՆԱԵ շարքին էին դասվում Սինգապուրը, Հոնկոնգը, Թայվանը ու Հարավային Կորեան: Սակայն այս երկրներն իրենց տնտեսական զարգացման գործընթացում արդեն հասել են զարգացած երկրների հիմնական չափանիշներին և արդեն զարգացած երկրների շարքում են: Երբեմն «Ի ալիքի» ՆԱԵ-ին արտասահմանյան գրականության մեջ անվանում են «վագր» կամ «վի-

[40] 30 տարվա մրցակցությունից հետո՝ 2005 թ., Հարավային Կորեային հաջողվեց առաջ անցնել Ճապոնիայից նավաշինության ոլորտում և ներկայումս աշխարհում առաջատար է այդ ոլորտում:

շապ» երկրներ, քանի որ դրանք կարողացան շատ կարճ ժամանակահատվածում հասնել («թռիչք կատարել») զարգացած երկրների տնտեսական զարգացման մակարդակին:

Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ն են Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան և Չիլին: Իրենց տնտեսական զարգացման մակարդակով ու առանձնահատկություններով Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ն զգալիորեն զիջում են Հարավարևելյան Ասիայի ՆԱԵ-ին: Միևնույն ժամանակ Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ն տնտեսական անհամեմատ մեծ ներուժ ունեն, քան Հարավարևելյան Ասիայի ՆԱԵ-ն:

«II ալիքի» ՆԱԵ: Ներկայումս Հարավարևելյան Ասիայի ՆԱԵ-ն են Մալազիան, Ինդոնեզիան, Թաիլանդն ու Ֆիլիպինները: Ինչպես նշվեց, այս երկրները իրենց տնտեսական զարգացման մակարդակով շատ ավելի մոտ են Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ին:

«III ալիքի» ՆԱԵ: Վերջապես ՆԱԵ շարքին են դասվում նաև մեր տարածաշրջանից Իրանն ու Թուրքիան, որոնք «III ալիքի» ՆԱԵ են:

Արդյունաբերական նոր երկրների տնտեսության զարգացման հիմնական առանձնահատկություններն են.

- տնտեսական աճի բավականին մեծ ցուցանիշը,
- տնտեսության մեջ առաջատար ոլորտը՝ վերամշակող արդյունաբերությունը,
- արտահանման կողմնորոշում ունեցող տնտեսական զարգացման մոդելը (Հարավարևելյան Ասիայի ՆԱԵ),
- ներքին շուկայի կողմնորոշում ունեցող տնտեսական զարգացման մոդելը (Լատինական Ամերիկայի ՆԱԵ):

ՆԱԵ տնտեսական զարգացմանը մեծ հարված հասցրեց 1990-ական թթ. արժութաֆինանսական ճգնաժամը: Ճգնաժամի առաջին ալիքից (1994-1995 թթ.) զգալի կորուստներ կրեցին Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ն, իսկ երկրորդ ալիքը (1997-1998

թթ.) իրենց վրա վերցրին Հարավարևելյան Ասիայի արդյունաբերական նոր երկրները: Այսպիսով՝ արժութաֆինանսական ճգնաժամերը զգալի փոփոխեցին ՆԱԵ-ի տնտեսական զարգացման մոդելները:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Որո՞նք են զարգացած երկրների սոցիալ-տնտեսական զարգացման նմանություններն ու տարբերությունները:
2. Թվարկե՛ք զարգացող երկրների սոցիալ-տնտեսական նմանություններն ու տարբերությունները:
3. Ինչպիսի՞ դերակատարում ունի կամ պետք է ունենա պետությունը զարգացած ու զարգացող երկրներում:
4. Ներկայացրե՛ք անցումային երկրների սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:
5. Որո՞նք են արդյունաբերական նոր երկրների սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:
6. Արդյունաբերական նոր երկրների քանի՞ «ալիք» ունենք համաշխարհային տնտեսության մեջ, և յուրաքանչյուր «ալիքի» մեջ ո՞ր երկրներն են ներառված:
7. Համաշխարհային տնտեսության մեջ երկրների ո՞ր խմբի տեսակարար կշիռն է անընդհատ նվազում վերջին երկու տասնամյակի ընթացքում և հօգուտ ո՞ր երկրների: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
8. Հայաստանի Հանրապետությունը զարգացո՞ղ, զարգացա՞ծ, թե՞ անցումային երկիր է: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
9. Ձեր կարծիքով ինչպիսի՞ դերակատարում ունի պետությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործընթացում:

Գլուխ 5. Վերազգային կազմակերպություններ և միջազգային տնտեսական կազմակերպություններ

5.1. Վերազգային կազմակերպություններ

Վերազգային կազմակերպությունների էությունը: Ներկայիս համաշխարհային տնտեսությանը բնորոշ է վերազգայնացման գործընթացը: Այս գործընթացում խթանող ուժ են հանդիսանում վերազգային կազմակերպությունները: Մենք արդեն ներկայացրել ենք, որ վերազգային կազմակերպությունները տնտեսական կազմակերպություններ են, որոնք բաղկացած են մայր ձեռնարկությունից և արտասահմանյան մասնաճյուղերից: Ավելին՝ մայր ձեռնարկությունը մասնաճյուղերի կապիտալում մասնակցության ճանապարհով վերահսկում և կառավարում է միավորման մեջ մտնող ձեռնարկություններին:

Վերազգային կազմակերպությունները կապիտալի միջազգային շարժի և տեխնոլոգիաների փոխանցման միջոց են, որոշում են համաշխարհային շուկայի զարգացման դինամիկան, կառուցվածքը և մրցունակության աստիճանը:

Մենք նաև արդեն ներկայացրել ենք, որ գրեթե բոլոր խոշոր վերազգային կազմակերպությունները մինչև XXI դարի սկիզբը պատկանում էին «Եռյակին»՝ ԱՄՆ, ԵՄ և Ճապոնիա, իսկ XXI դարում մի շարք զարգացող երկրներում (Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Բրազիլիա և այլն) ձևավորվեցին և զարգացան այնպիսի խոշոր վերազգային կազմակերպություններ, որոնք ներկայումս հաջողությամբ մրցակցում են զարգացած երկրների նմանատիպ վերազգային կազմակերպությունների հետ:

Այսպիսով՝ ժամանակի ընթացքում վերազգային կազմակերպություններն ավելի են ամրապնդել իրենց դիրքերը համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, եթե 1960-ական թթ. գրանցված էին մոտավորապես 7000 վերազգային ընկերություններ, իսկ

1990-ական թթ. դրանց թիվը կազմում էր 37000, որոնց բաժին էին ընկնում առնվազն 170000 մասնաճյուղեր[41], ապա արդեն 2005 թ. վերազգային կազմակերպությունների թիվը գրեթե կրկնապատկվեց՝ կազմելով 70000, իսկ մասնաճյուղերի թիվը քառապատկվեց՝ կազմելով 680000[42]: Ներկայումս համաշխարհային տնտեսության մեջ հաշվում են մոտավորապես 79000 վերազգային կազմակերպություններ, որոնց մասնաճյուղերի թիվը կազմում է 790000

Վերազգային կազմակերպությունների գործունեության ճյուղային կառուցվածքը տարբերակված է: Վերազգային կազմակերպությունների 60 %-ը ներգրավված են էլեկտրոնիկայի, մեքենաշինության, քիմիական և դեղագործական արդյունաբերության ոլորտներում, 37%-ը՝ ծառայությունների ոլորտում, և 3 %-ը՝ արդյունահանող արդյունաբերության ու գյուղատնտեսության ոլորտներում:

Վերազգային կազմակերպությունների մասնաճյուղերը լինում են.

1. վերազգային կազմակերպության համակարգի մեջ մտնող դուստր ընկերություն: Այստեղ մայր ձեռնարկությանն է պատկանում դուստր ընկերության բաժնետոմսերի կեսից ավելին, ինչը մայր ձեռնարկությանը հնարավորություն է տալիս նշանակելու դուստր ընկերության գործադիր տնօրենին և վերահսկելու դուստր ընկերության գործունեությունը,
2. վերազգային կազմակերպության համակարգի մեջ մտնող միավորված ընկերություն: Այստեղ մայր ձեռնարկությունը կարող է տիրապետել ընկերության բաժնետոմսերի 10 %-ից ոչ պակաս և 50 %-ից ոչ ավելի: Ինչպես նկատում ենք, այս դեպքում մայր ձեռնարկությունն անմիջապես չի

[41] Աղբյուր՝ van Tulder R. and van der Zwart A. (2006). International Business–Society Management: Linking Corporate Responsibility and Globalization. London: Routledge:

[42] Աղբյուր՝ United Nations World Investment Report, 2005:

վերահսկում, սակայն մասնակցում է ընկերության վերահսկման գործընթացին,

3. վերազգային կազմակերպության համակարգի մեջ մտնող բաժանմունքային ընկերություն: Սա արտասահմանյան մասնաճյուղի այնպիսի ձև, է որը ամբողջությամբ պատկանում է մայր ձեռնարկությանը:

Վերազգային կազմակերպությունների կառավարման կառուցվածքը սովորաբար որոշվում է՝ ելնելով արտադրվող ապրանքների ու մատուցվող ծառայությունների տեսակներից: Այն կազմակերպությունները, որոնք մասնագիտանում են միատեսակ (ստանդարտացված) ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման մեջ սովորաբար կառավարվում են աշխարհագրական սկզբունքով (Գծապատկեր 5.1.1):

Գծապատկեր 5.1.1. Վերազգային կազմակերպության կառավարման աշխարհագրական մոտեցում



Բազմատեսակ (ոչ ստանդարտացված) ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող վերազգային կազմակերպությունները սովորաբար օգտագործում են կառավարման ապրանքային սկզբունքը:

Գծապատկեր 5.1.2. Վերազգային կազմակերպության կառավարման ապրանքային մոտեցում



Վերազգային կազմակերպությունների դերը համաշխարհային տնտեսության մեջ: Վերազգային կազմակերպություններն ունեն զարգացման երկար պատմություն և գրեթե իրենց առաջացման պահից ի վեր ազդեցություն են ունեցել այն տնտեսությունների վրա, որտեղ դրանք գործել են: Վերազգային կազմակերպությունների ազդեցությունը տարածվում է.

- դրանց ծագման երկրի վրա,
- դրանց կողմից գործունեություն ծավալած երկրների վրա,

- երրորդ երկրների վրա, որոնք անուղղակիորեն կապված են վերազգային կազմակերպությունների գործունեության իրականացմանը:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ վերազգային կազմակերպությունները զգալի ազդեցություն են ունեցել համաշխարհային տնտեսության զարգացման վրա և մինչև օրս շարունակում են ունենալ: Ավելին՝ այդ ազդեցությունը ժամանակի ընթացքում էլ ավելի է ուժեղացել, քանի որ աճել է վերազգային կազմակերպությունների թիվը, և զգալիորեն ընդլայնվել է դրանց գործունեության շրջանակը: Ներկայիս պայմաններում վերազգային կազմակերպությունները շատ կարևոր են տնտեսության զարգացման համար (թե՛ զարգացած, և թե՛ զարգացող երկրներում): Այս պատճառով պատահական չէ, որ այսօր ՄԱԿ-ը դրանց համարում է, որպես տնտեսական աճի «շարժիչ ուժ»:

Վերազգային կազմակերպությունների գործունեությամբ դեպի դրանց կողմից գործունեության ծավալած երկրներ են տեղափոխվում կապիտալը (օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ՕՈՒՆ), մարքեթինգի մեթոդները, փորձը, տեխնոլոգիաներն ու կառավարման համակարգը:

Ներկայումս աշխարհի խոշորագույն 100 վերազգային կազմակերպություններին բաժին է ընկնում կատարվող ամբողջ գիտահետազոտական աշխատանքների 1/3-ը: Դրանց շարքում բարձր տեխնոլոգիաների, դեղագործության և մեքենաշինական ոլորտներում ընդգրկված վերազգային կազմակերպություններն առաջատար են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերազգային կազմակերպությունները համարվում են ՕՈՒՆ-ի ներհոսքի/արտահոսքի հիմնական աղբյուր, ժամանակի ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ դրանց դերի ամրապնդմամբ զգալի ավելացել է նաև ՕՈՒՆ-ի ծավալը: Այսպես, 1982-2006թթ. ընկած ժամանակաշրջանում ՕՈՒՆ-ը 28 մլրդ դոլարից աճել են մինչև 1.21 տրի-

լիոն դոլար, իսկ դրանց մասնաճյուղերի կողմից ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալը նույն ժամանակաշրջանում 688 մլրդ դոլարից աճել է մինչև 4.7 տրիլիոն դոլար[43]: 2000-ական թթ. վերջից մինչև օրս ՕՈՒՆ-երի ծավալը համաշխարհային տնտեսության մեջ խիստ տատանվել է: Այսպես, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ 2009 թ. մոտ 38 %-ով կրճատվել է ՕՈՒՆ-ի ծավալը՝ կազմելով 1.1 տրիլիոն դոլար: 2010-2011 թթ. համաշխարհային տնտեսություն մեջ վերականգնվել է ՕՈՒՆ-ի մինչճգնաժամային ծավալը: 2011-2014 թթ. ընկած ժամանակաշրջանում զգալիորեն նվազել է ՕՈՒՆ-ի համաշխարհային ծավալը/ներհոսքը համաշխարհային տնտեսության մեջ՝ 2014 թ. կազմելով 1.3 տրիլիոն դոլար: 2015 թ. համաշխարհային տնտեսության մեջ նկատվել է ՕՈՒՆ-ի համաշխարհային ծավալի զգալի աճ՝ կազմելով 1.8 տրիլիոն դոլար, ինչը 38.4 %-ով գերազանցում է 2014 թ. ցուցանիշը: 2017 թվականից սկսած՝ համաշխարհային տնտեսության մեջ կրկին նկատվել է ՕՈՒՆ-ի համաշխարհային ծավալի նվազման միտում՝ 2019 թ. կազմելով մոտ 1.5 տրիլիոն դոլար: 2020 թ. ՕՈՒՆ համաշխարհային ծավալը կազմել է մոտ 1 տրիլիոն դոլար: Այստեղ հարկ է նշել, որ 2020 թ. ՕՈՒՆ-ի համաշխարհային ծավալը, ինչը, 2019 թվականի հետ համեմատած, նվազել է 37.5 %-ով հիմնականում պայմանավորված էր COVID-19 համավարակով: 2021 թ. համաշխարհային ՕՈՒՆ-ի ծավալը աճել է՝ կազմելով 1.5 տրիլիոն դոլար, իսկ 2022 թ.՝ կրկին նվազել՝ կազմելով 1.3 տրիլիոն դոլար:

Ինչպես նկատում ենք Հավելված, Աղյուսակ 5.1.1-ից, վերջին տարիներին զգալի նվազել են դեպի զարգացած երկրներ ՕՈՒՆ-ի հոսքերը, իսկ դեպի զարգացող երկրներ ՕՈՒՆ-ի հոսքերը աճել են: 2022 թ. դեպի զարգացող երկրներ ՕՈՒՆ-ի ծավալը կազմել է համաշխարհային ՕՈՒՆ-ի 70.7 %-ը (916 մլրդ դոլար), և սա գրանցված ամենաբարձր ցուցանիշն է համարվում նշված ժամա-

[43] Աղբյուր՝ United Nations World Investment Report, 2007.

նակահատվածի համար[44]: Զարգացող երկրների միջև իրականացվող ՕՈՒՆ-երի զգալի մասը բաժին է ընկնում այդ երկրներում գործունեություն ծավալած զարգացած երկրների վերազգային կազմակերպություններին: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ զարգացող երկրների վերազգային կազմակերպությունները վերջին շրջանում զգալի ակտիվություն են ցուցաբերում Աֆրիկայում: Այսպես, մինչև COVID-19 համավարակը 2018 թ. դրությամբ զարգացող երկրներից Չինաստանն ավելի քան 43 մլրդ դոլարի ՕՈՒՆ է կատարել Աֆրիկայում, իսկ Հնդկաստանը՝ 14 մլրդ դոլարի: Նշված երկրների վերազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ՕՈՒՆ-երը ներառում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները և ունեն բավականին տարբերակված աշխարհագրություն Աֆրիկայում:

Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս արդեն հաշվում են 77000-ից ավելի վերազգային կազմակերպություններ, դրանց շարքում գլոբալ դերակատարումը/ազդեցությունը պատկանում է մի շարք առավել խոշոր վերազգային կազմակերպություններին: Այսպես, վերազգային կազմակերպությունները կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով, օրինակ, տարեկան եկամտի մակարդակը, շուկայական կապիտալիզացիայի կամ օտարերկրյա ակտիվների ծավալը:

«Fortune Global 500»-ը դասակարգում է վերազգային կազմակերպություններին ըստ եկամտի մակարդակի: Աշխարհի խոշորագույն 500 վերազգային կազմակերպություններին 2022 թ. բաժին է ընկել մոտ 41 տրիլիոն եկամուտ: Միևնույն ժամանակ այդ վերազգային կազմակերպություններում աշխատում են մոտ 67 մլն մարդ, և այդ ընկերությունների գործունեության աշխարհագրությունը կազմում է մոտավորապես 34 երկիր: «Fortune Global 500» դասակարգման համաձայն, ըստ եկամտի մակարդակի՝ առաջատար 10 վերազգային կազմակերպությունները ներկա-

[44] Աղբյուր՝ United Nations World Investment Report, 2023:

յացված են Աղյուսակ 5.1.1-ում: «Walmart» ընկերությունն արդեն մեկ տասնամյակ անընդմեջ առաջատար է, իսկ «Saudi Aramco» ընկերությունը, որի եկամուտները 2022 թ. աճել են 51 %-ով, 6-րդ տեղից բարելավել է իր դիրքը՝ զբաղեցնելով 2-րդ տեղը: Զգալիորեն բարելավել է իր դիրքերը նաև «Amazon» ընկերությունը՝ 2022 թ. զբաղեցնելով 4-րդ տեղը: Ավելին՝ «Amazon» ընկերությունը մի քանի տարվա մեջ գրեթե կրկնապատկել է իր աշխատատեղի թվաքանակը (2022 թ. տվյալներով՝ մոտ 1.5 մլն մարդ): 2020 թվականի հետ համեմատած՝ 2022 թ., ըստ եկամտի մակարդակի առաջատար 10 ընկերությունների, շարքից դուրս են մնացել «Volkswagen», «BP» ու «Toyota Motor» ընկերությունները:

Աղյուսակ 5.1.1. Առաջատար 10 վերազգային կազմակերպություններն ըստ տարեկան եկամտի մակարդակի 2022 թ.

Ընկերության անուն	Ծագման երկիր	Հիմնադրման տարեթիվ	Գործունեության ոլորտ	Աշխատողների թվաքանակ (հազ. մարդ)	Տարեկան եկամուտ (մլրդ)
Walmart	ԱՄՆ	1945	Մանրածախ առևտուր	2,100	611
Saudi Aramco	Սաուդյան Արաբիա	1933	Նավթի արդյունաբերություն	70.5	603
State Grid	Չինաստան	2002	Էներգետիկա	870	530
Amazon	ԱՄՆ	1994	Էլ. առևտուր	1,541	513
China National Petroleum	Չինաստան	1999	Նավթի վերամշակում	1,087	483
Sinopec Group	Չինաստան	1988	Նավթի վերամշակում	527	471
Exxon Mobil	ԱՄՆ	1999	Նավթի վերամշակում	62	409
Apple	ԱՄՆ	1976	Համակարգիչներ և մասեր	164.0	394
Shell	Նիդեռլանդներ և Մեծ Բրիտանիա	1907	Նավթի վերամշակում	93	386

UnitedHealth group	ԱՄՆ	1977	Առողջապահություն և ապահովագրություն	400	324

Աղբյուր՝ Fortune Global 500:

Առավել խոշոր կազմակերպությունների դերը համաշխարհային տնտեսության մեջ էլ ավելի է ընդգծվում, երբ դրան ավելանում է աշխարհագրական կենտրոնացումը՝ ելնելով մայր ձեռնարկության գտնվելու վայրից: Այսպես, աշխարհի խոշորագույն 500 վերազգային կազմակերպություններից 425-ը կամ դրանց 85 % բաժին է ընկնում հետևյալ 10 երկրներին. ԱՄՆ-ին՝ 132, Չինաստանին՝ 109, Ճապոնիային՝ 51, Գերմանիային՝ 29, Ֆրանսիային՝ 29, Մեծ Բրիտանիային՝ 21, Հարավային Կորեային՝ 15, Նիդեռլանդներին՝ 15, Շվեյցարիային՝ 13 ու Կանադային՝ 11:

«World Economic Forum»-ը վերազգային կազմակերպություններին ներկայացնում է ըստ դրանց շուկայական կապիտալիզացիայի ծավալի: Այսպես, աշխարհի 100 խոշորագույն վերազգային կազմակերպությունների շուկայական կապիտալիզացիան կազմում է 31.7 տրիլիոն դոլար: Ըստ շուկայական կապիտալիզացիայի խոշորագույն 100 վերազգային կազմակերպությունների՝ 65 %-ը ամերիկյան վերազգային կազմակերպություններ են, որոնց շուկայական կապիտալիզացիան կազմում է 20.5 տրիլիոն դոլար (13 %-ը՝ չինական, 11 %-ը՝ եվրոպական): 2022 թ. տվյալներով, շուկայական կապիտալիզացիայի ծավալով տասը ամենախոշոր վերազգային կազմակերպությունները ներկայացված են Աղյուսակ 5.1.2-ում:

Աղյուսակ 5.1.2. Առաջատար 10 վերազգային կազմակերպությունները 2022 թ.՝ ըստ շուկայական կապիտալիզացիայի ծավալի

Ընկերության անուն	Ծագման երկիր	Հիմնադրման տարեթիվ	Գործունեության ոլորտ	Աշխատողների թվաքանակ (հազ. մարդ)	Շուկ. կապիտ. (մլրդ)
Apple	ԱՄՆ	1976	Համակարգիչներ և մասեր	164.0	2,051
Saudi Aramco	Սաուդյան Արաբիա	1933	Նավթի արդյունաբերություն	70.5	1,920
Microsoft	ԱՄՆ	1975	Համակարգչային ծրագրեր	114	1,778
Amazon	ԱՄՆ	1994	Էլ. առևտուր	1,541	1,572
Alphabet	ԱՄՆ	2015	Համացանցային ծառայություններ	72	1,394
Facebook	ԱՄՆ	2004	Համացանցային ծառայություններ	17.0	839
Tencent	Չինաստան	1998	Համացանցային ծառայություններ	54.3	753
Tesla	ԱՄՆ	2003	Էլեկտրամոբիլներ	70.7	641
Alibaba Group	Չինաստան	1999	Էլ. առևտուր	101.9	615
Berkshire Hathaway	ԱՄՆ	1889	Ապահով., անշարժ գույք և այլն	367.7	588

Աղբյուր՝ World Economic Forum:

Այսպիսով, եթե երկու տասնամյակ առաջ շուկայական կապիտալիզացիայի ծավալով խոշոր 10 վերազգային կազմակերպությունների ցանկում գերակշռում էին էներգակիրների և բանկային համակարգի ոլորտում գործունեություն ծավալած ընկերությունները, ապա ներկայումս՝ մեծ թիվ են կազմում բարձր տեխնոլոգիաների և հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն

ծավալած ընկերությունները[45]: Ավելին՝ 2020 թ., 2018 թվականի հետ համեմատած, «Apple», «Microsoft» և «Amazon» վերազգային կազմակերպությունների շուկայական կապիտալիզացիայի ծավալը գրեթե կրկնապատկվել է և մինչև 2022 թվականը նվազման միտում ձեռք չի բերել:

5.2. Միջազգային տնտեսական կազմակերպություններ/ ինստիտուտներ

Միջազգային տնտեսական կազմակերպությունների էությունը: Շատերը, լսելով «ինստիտուտ» բառը, հասկանում են ֆորմալ կազմակերպություն: Տնտեսագետները հակված են ավելի լայն առումով դիտարկելու ինստիտուտները: Օրինակ՝ «Նոր ինստիտուցիոնալիստները» Դուգլաս Նորֆի գլխավորությամբ կարծում են՝ կազմակերպություններն իրենք իրենց ինստիտուտներ չեն: Այս տեսակետից ելնելով՝ ինստիտուտը կանոնների համախմբություն է, որը, նշելով թույլատրելին և ոչ թույլատրելին, կառավարում է վարքագիծը:

Այսպիսով՝ ինստիտուտները տրամադրում/ապահովում են վարքագծի կանոններ, որոնք կարգավորում/սահմանափակում են սոցիալական, քաղաքական և տնտեսական փոխազդեցությունը: Եվ վերջապես ինստիտուտները լինում են ֆորմալ ու ոչ ֆորմալ: Ազգային տնտեսության մակարդակում ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար շատ կարևոր է ինստիտուցիոնալ, այդ թվում՝ տնտեսական ինստիտուտների համակարգի ստեղծումը: Այս տեսանկյունից շուկան տնտեսական կարևորագույն ինստիտուտներից է, որի գործառույթներից է տնտեսվարող սուբյեկտների գործունեության համակարգման ուղիները որոշելը:

---

[45] 2006 թ. տվյալներով շուկայական կապիտալիզացիայի ծավալով առաջատար 10 վերազգային կազմակերպություններն էին «Exxon Mobil»-ը, «General Electric»-ը, «Gazprom»-ը, «Microsoft»-ը, «City group»-ը, «Bank of America»-ն, «Royal Dutch Shell»-ը, «BP»-ն, «Petro China»-ն ու «HSBC»-ն:

Միջազգային մակարդակում միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման համար առաջ է գալիս միջազգային ինստիտուցիոնալ համակարգի անհրաժեշտությունը: Միջազգային տնտեսական հարաբերություններում գլխավոր դեր խաղում է երեք միջազգային տնտեսական կազմակերպություն՝ Արժույթի միջազգային հիմնադրամը (International Monetary Fund, IMF), Համաշխարհային բանկի խումբը (World Bank Group, WBG) և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (World Trade Organization, WTO): Այս կազմակերպությունների կողմնակիցները պնդում են, որ դրանք շատ կարևոր դեր են խաղում միջազգային տնտեսական հարաբերություններում, քանի որ.

1. դրանք ներփակված են, այսինքն՝ դրանց կողմից ստեղծված և գործող կանոնների ամբողջությունը վերաբերում է միայն այդ կազմակերպություններին անդամակցող երկրներին,
2. դրանք ստեղծել են մի շարք կանոններ, որոնք կառավարում են միջազգային տնտեսական հարաբերությունները,
3. դրանք հնարավորություն են տալիս քննարկելու ու բարելավելու այդ կանոնները ժամանակի ընթացքում:

Միջազգային տնտեսական ինստիտուտների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Հասարակությունը իրականում վստահում է միջազգային տնտեսական ինստիտուտներին, քանի որ դրանք նախատեսված են կարգ ու կանոն ստեղծելու և անորոշությունը կրճատելու համար: Ինստիտուտները՝ սահմանելով տնտեսական, քաղաքական ու սոցիալական փոխհարաբերությունների սահմանափակումները, նպաստում են կայունության հաստատմանը: Տնտեսությունների զարգացման գործում անորոշության նվազեցումը շատ կարևոր գործոն է:

Յուրաքանչյուր երկրի ներսում վարքագծի ֆորմալ կանոնները սահմանվում են կառավարության տարբեր մակարդակների կողմից: Հակառակ դրան՝ միջազգային ոլորտում բացակայում է

կառավարությունը: Այդ պատճառով միջազգային առևտրի ու միջազգային մակրոտնտեսական հարաբերությունների կանոնները հաստատվում են՝ ելնելով միջազգային տնտեսական կազմակերպություններին երկրների կամավոր մասնակցությունից:

Միջազգային տնտեսական կազմակերպությունների և առանձին երկրի կառավարության միջև հիմնական տարբերությունն այն է, որ առաջինն ունի ազդեցության սահմանափակ ուժ: Այսինքն՝ երկրի կառավարությունն ունի քաղաքական ուժ, որը նա կարող է ցանկացած ժամանակ օգտագործել՝ իր կանոնները հաստատելու համար: Միջազգային կազմակերպությունները չունեն քաղաքական ուժ, սակայն ունեն, այսպես կոչված, «թափանցիկ ուժ», որը խթանում է երկրների միջև համագործակցության զարգացմանը: Միջազգային տնտեսական ինստիտուտները համաշխարհային տնտեսության մեջ կատարում են հետևյալ գործառույթները.

- տրամադրում են հանրային բարիքներ/ապրանքներ,
- հաստատում են կարգ ու կանոն և նվազեցնում են անորոշությունը:

Հանրային ապրանքներ/բարիքներ: Հանրային բարիքները դիտարկելիս մենք պետք է հաշվի առնենք դրանց հետևյալ երկու առանձնահատկությունները.

1. դրանք ոչ բացառելի են, այսինքն՝ ոչ ոք չի կարող բացառվել հանրային բարիքների սպառման գործընթացից,
2. դրանց սպառման ավելացումից մյուսների օգտակարությունը չի նվազում:

Շուկաները հաճախ չեն կարողանում բավարար մակարդակով մատակարարել հանրային բարիքներ, քանի որ տեղի ունի «Free Riding»-ի հիմնախնդիրը: «Free Riding»-ը նշանակում է, որ հանրային բարիքների համար վճարելու դրդապատճառ չկա, քանի որ մարդիկ չեն կարող բացառվել դրանց սպառումից: Այսպիսով՝ շուկաների կողմից հանրային ապրանքները/բարիքները եր-

բեք չեն կարող արդյունավետորեն արտադրվել/մատուցվել, քանի դեռ ինստիտուցիոնալ կարգավորմամբ չի լուծվել «Free Riding»-ի հիմնախնդիրը: «Free Riding»-ը տեղի ունի, երբ անհատը թույլ է տալիս մյուսներին վճարել ապրանքի կամ ծառայության համար կամ կատարել աշխատանք այն դեպքում, երբ նա գիտի, որ չի կարող բացառվել ապրանքի/ծառայության սպառման գործընթացից կամ աշխատանքից ստացվող օգուտներից:

Կարգ ու կանոնի հաստատում և անորոշության նվազեցում: Միջազգային տնտեսական ինստիտուտները համաշխարհային տնտեսության մեջ հաստատում են կարգ ու կանոն և նվազեցնում են անորոշությունը: Միասին վերցրած՝ այս երկու գործառույթները հաճախ էական դեր են խաղում միջազգային տնտեսական ճգնաժամերից խուսափելու համար: Ամեն դեպքում, եթե երկրի (լոկալ) ճգնաժամը սպառնում է դառնալ միջազգային, ապա միջազգային ինստիտուտները մեծ դեր են կատարում, որպեսզի ազգային տնտեսական խնդիրները հնարավորինս քիչ ազդեցություն ունենան այլ երկրների տնտեսությունների վրա:

Տնտեսագետ Չարլս Կինդելբերգերն առաջ է քաշել մի քանի ոլորտներ, որտեղ ինստիտուտներն անհրաժեշտ են, որպեսզի ընդլայնեն համագործակցությունը՝ կանխելով «Free Riding»-ի հիմնախնդիրը միջազգային հանրային ապրանքների ապահովման գործընթացում[46]: Այս առումով Կինդելբերգերը միջազգային մակարդակով դիտարկել է չորս հանրային ապրանք՝

1. բաց շուկա ճգնաժամային իրավիճակում,
2. կապիտալի հոսք դեպի զարգացող երկրներ,
3. միջազգային փող,
4. փոխառությունների համակարգում:

[46] Kindlerberger, Charles (1998), The international Economic Order: Essays on Financial Crisis and International Public Goods, Hertford shire, England: Harvester-Wheat sheaf.

Ըստ Կինդելբերգերի՝ այս հանրային ապրանքներն ապահովող կանոնների բացակայությունը սովորաբար ճգնաժամերի հիմնական պատճառն է: Օրինակ՝ դիտարկենք առաջին միջազգային հանրային ապրանքը: Ճգնաժամային տարիներին տեղական զբաղվածության մակարդակը պահպանելու համար քաղաքական գործիչների վրա մեծ ճնշումներ են գործադրվում՝ տեղական շուկան «փակելու» համար: 1930-ական թթ. բազմաթիվ երկրներ ներմուծման վրա կիրառեցին բարձր տարիֆներ ու սահմանափակումներ: Դա շղթայական ռեակցիայով անդրադարձավ միջազգային առևտրում ներգրավված մասնակիցների վրա, որը, ի վերջո, հանգեցրեց միջազգային առևտրի զգալի կրճատման:

Կինդելբերգերը նշում է նաև, որ 1930-ական թթ. կապիտալի հոսքի զգալի կրճատումը դեպի զարգացող երկրներ նույնպես խորացրեց ճգնաժամը: Ժամանակավոր ֆինանսական խնդիրներ ունեցող երկրների համար փոխառություններ վերցնելու հնարավորության բացակայությունը շատ վատ կարող է անդրադառնալ տնտեսության վրա՝ ի վերջո հանգեցնելով ֆինանսական ճգնաժամի:

Միջազգային տնտեսական ինստիտուտները և ազգային սուվերենությունը/ինքնիշխանությունը: Ազգային սուվերենությունը վերագրվում է յուրաքանչյուր երկրի իրավունքին՝ լինելու ազատ արտաքին միջամտությունից: Միջազգային ինստիտուտներն անդամակցության համար նախապայմաններ կիրառելով՝ սահմանափակում են առանձին երկրների կառավարությունների թույլատրելի գործունեությունները՝ դրանով իսկ բարդացնելով սուվերենության/ ինքնիշխանության հիմնախնդիրը: Օրինակ՝ զարգացող երկրները, որոնք փոխառություններ են վերցնում IMF-ից, երբեմն իրենց դժգոհությունն են հայտնում այն փոփոխությունների համար, որոնք նրանք պետք է իրականացնեն իրենց ներքին քաղաքականության մեջ: Մյուս կողմից՝ շատ զարգացած երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, որոշ քաղաքական գործիչների կարծի-

քով միջազգային տնտեսական ինստիտուտները, օրինակ՝ WTO-ն, նվազեցնում են ԱՄՆ սուվերենությունը՝ հնարավորություն տալով մյուսներին ընդունել կանոններ, որոնք սահմանափակում են ԱՄՆ առևտրային քաղաքականությունը:

Միջազգային տնտեսական ինստիտուտներն ու սառը պատերազմի ավարտը: Երբ 1989 թ. քանդվեց «Բեռլինի պատը», Գերմանիայի Ֆեդերատիվ հանրապետությունը շարժվեց դեպի ամբողջական ինտեգրում իր արևելյան մասի հետ: 1991 թ. դեկտեմբերի 24-ին փլուզվեց Խորհրդային Միությունը, և առաջացան 15 նորանկախ հանրապետություններ: Ճապոնիայի ու Եվրոպայի ծաղկումը, Հարավարևելյան Ասիայի, Լատինական Ամերիկայի որոշ երկրների արագ տնտեսական աճն ու Չինաստանի «հզոր» տնտեսության հայտնվելն առաջացրին տնտեսական ու քաղաքական ուժի մի քանի աշխարհագրական կենտրոններ:

Հիմնական հարցն այն էր, թե արդյոք միջազգային տնտեսական ինստիտուտները, որոնք առաջացել են ԱՄՆ գլխավորությամբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, կարո՞ղ են գոյատևել գլոբալ ուժի աշխարհագրական մի քանի կենտրոններ տեղափոխվելու պայմաններում: Որոշ տնտեսագետների և քաղաքական գործիչների կարծիքով այդ ինստիտուտներն այնքան են կախված ԱՄՆ-ից, որ դրանք չեն կարող գոյատևել Եվրոպայի և Ասիայի տնտեսական ու քաղաքական ուժի զարգացման պայմաններում:

Միջազգային տնտեսական ինստիտուտների հաջողության բացահայտումը: Միջազգային տնտեսական ինստիտուտների հաջողությունը հիմնականում բացատրվում է երեք հիմնական պատճառներով:

Առաջին հերթին դրանց ստեղծման ժամանակ ընդգրկվել են քիչ երկրներ: Օրինակ՝ Բրետոն-Վուդսի համաձայնագիրը կնքվել է 29 երկրի կողմից, իսկ մինչև համաձայնագրի կնքումն աշխատանքների մեծ մասը կատարվել են ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի

կողմից: Նմանապես GATT-ի համաձայնագիրը կնքվել է 23 երկրի կողմից: Ակնհայտորեն բանակցություններն ավելի հեշտ կընթանան, եթե դրանք արտահայտում են 23, այլ ոչ թե 100-ից ավելի երկրների շահերը: Համեմատաբար քիչ թվով երկրները ոչ միայն հեշտացնում են բանակցությունները, այլ նաև նվազեցնում են ԱՄՆ «առաջնորդ» լինելու ծախսերը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ առաջին տասնամյակում, ԱՄՆ-ն ցանկություն հայտնեց կիսելու տնտեսական կայունության օգուտները: Օրինակ՝ Գերմանիայի և Ճապոնիայի նկատմամբ պատժիչ պայմաններ կիրառելու փոխարեն (ինչպես դա կատարվեց Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո) Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ն գործարկեց Մարշալի պլանը Եվրոպայի համար, Դոդջի պլանը՝ Ճապոնիայի համար, որպեսզի նպաստի այդ երկրների տնտեսական ու քաղաքական վերակառուցմանը:

Որոշ տնտեսագետների կարծիքով երկրորդ պատճառը, որի միջոցով միջազգային տնտեսական ինստիտուտները հաջողության են հասել, քեյնսյան տնտեսագիտական քաղաքականության կիրառումն էր զարգացած երկրների կառավարությունների կողմից, ինչն ապահովում էր ավելի շատ միջազգային բացվածություն, քան նախկինում:

Երրորդ պատճառը այն է, որ գրեթե բոլոր երկրները հետպատերազմյան շրջանը սկսեցին բավականին փակ շուկաներով: 1970-ական թթ. սկզբից աշխարհը սկսեց փոխվել: Առաջին հերթին Գերմանիայի ու Ճապոնիայի տնտեսական հաջողությունները նվազեցրին ԱՄՆ ցանկությունը՝ կրելու միջազգային հանրային ապրանքներ մատակարարելու բեռը:

Այսպիսով՝ միջազգային ինստիտուտների գոյատևման խնդիրը պարզաբանելու համար դիտարկենք երկու տեսակետ: Առաջին տեսակետը առաջ է քաշել քաղաքագետների մի խումբ, որոնց անվանում են «ռեալիստներ», իսկ երկրորդ տեսակետը՝

«ինստիտուցիոնալիստները»[47]: Համաձայն ռեալիստների՝ ներկայիս միջազգային տնտեսական ինստիտուտների շրջանակում երկրների համագործակցության ցանկությունը ԱՄՆ առաջնորդության արդյունքն է: Քանի դեռ ԱՄՆ-ն ցանկանում է և ընդունակ է մատուցել կարգ ու կանոն և նվազեցնել անորոշությունը համաշխարհային տնտեսության մեջ, այնքան նրա կողմից գլխավորվող ինստիտուտները կգոյատևեն: Ռեալիստների կարծիքով այդ ինստիտուտները ԱՄՆ ուժի տարածման ու պահպանման համար են, եթե հանկարծ ԱՄՆ-ն իր գերիշխող դիրքը զիջի, ապա նրա կողմից գլխավորվող ինստիտուտները կքայքայվեն կամ նկատելիորեն կթուլանան: Ըստ ինստիտուցիոնալիստների՝ առաջնորդներն առաջանում են պարբերաբար և հաճախ ստեղծում են մի շարք ինստիտուտներ, որոնք հետագայում դառնում են որոշ չափով անկախ: Այսինքն՝ խաղի կանոնները, որոնք որոշվում և սահմանվում են առաջնորդի կողմից, չնայած ուժի նվազմանը, կարող են շարունակել արդյունավետ գործել:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ի՞նչ ենք հասկանում՝ վերազգային կազմակերպություններ ասելով: Ինչպե՞ս են դրանք զարգացել ժամանակի ընթացքում և ո՞ր ոլորտներում են գործունեություն ծավալում:
2. Ինչպիսի՞ն կարող են լինել վերազգային կազմակերպությունների մասնաճյուղերը:
3. Ի՞նչ ենք հասկանում՝ վերազգային կազմակերպությունների աշխարհագրական ու ապրանքային սկզբունքով կառավարման համակարգ ասելով:

[47] Kenen Peter B. (1994), Managing the World Economy: Fifty Years after Breton Woods, Washington DC, Institute for International Economics.

4. Վերազգային կազմակերպությունների ինչպիսի՞ ազդեցություն են ունենում ՕՈՒՆ-երի հոսքերի վրա: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
5. Վերազգային կազմակերպությունների ինչպիսի՞ դասակարգումներ գիտեք: Փորձե՛ք ներկայացնել դրանք:
6. Ի՞նչ ենք հասկանում՝ միջազգային տնտեսական ինստիտուտներ ասելով: Ինչպիսի՞ միջազգային տնտեսական ինստիտուտներ գիտեք: Թվարկե՛ք դրանից մի քանիսը: Հայաստանի Հանրապետությունը անդամակցո՞ւմ է ձեր կողմից թվարկած միջազգային տնտեսական ինստիտուտներին, թե՞ ոչ:
7. Ինչպիսի՞ դերակատարում ունեն միջազգային տնտեսական ինստիտուտները համաշխարհային տնտեսության մեջ: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
8. Ի՞նչ ենք հասկանում՝ հանրային բարիքներ ասելով: Ինչպիսի՞ հանրային բարիքներ գիտեք միջազգային մակարդակում:
9. Միջազգային տնտեսական ինստիտուտները ազդեցություն ունենո՞ւմ են ազգային տնտեսությունների վրա, թե՞ ոչ: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
10. Ներկայացրե՛ք վերազգային որևէ կազմակերպություն: Ցո՛ւյց տվեք դրա տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Վերազգային կազմակերպությունների դասակարգման մեջ ինչպիսի տեղ է զբաղեցնում ձեր կողմից դիտարկվող վերազգային կազմակերպությունը և, ի վերջո, Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալում է, թե ոչ:
11. Ներկայացրե՛ք միջազգային տնտեսական որևէ կազմակերպություն: Հիմնավորե՛ք դրա տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Հայաստանի Հանրապետությունը անդամակցո՞ւմ է ձեր կողմից դիտարկվող միջազգային տնտեսական կազմակերպությանը, թե՞ ոչ:

Հավելված

Աղյուսակ 5.1.1. ՕՈՒՆ-ի հոսքերն ըստ երկրների խմբերի և տարածաշրջանների 2017-2022 թթ., մլրդ դոլար

Տարածաշրջան	ՕՈՒՆ-ի ներհոսք						ՕՈՒՆ-ի արտահոսք					
	2017	2018	2019	2020	2021	2022	2017	2018	2019	2020	2021	2022
Համաշխարհային	**1,700**	**1,495**	**1,540**	**962**	**1,478**	**1,295**	**1,604**	**986**	**1,314**	**732**	**1,729**	**1,490**
1. Զարգացած	**950**	**761**	**800**	**315**	**597**	**378**	**1,095**	**534**	**917**	**350**	**1,244**	**1,031**
1.1 ԵՄ երկրներ	570	364	429	116	152	-125	539	419	475	64	447	96
1.2 Հյուս. Ամեր. երկրներ	304	297	297	123	453	384	379	-41	202	247	447	452
2. Զարգացող	**701**	**699**	**685**	**647**	**881**	**916**	**467**	**415**	**373**	**382**	**485**	**459**
2.1 Աֆրիկա	42	51	45	39	80	45	12	8	5	1	3	6
2.2 Ասիա	505	496	474	516	662	662	417	407	328	383	445	396
2.3 Լատ. Ամերիկա	156	150	160	90	138	208	38	0.1	42	-1.0	38	59

Աղբյուր՝ United Nations World Investment Report 2023:

Գլուխ 6. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրում և գլոբալացում

6.1. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման էությունը և ձևերը

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը ներկայիս համաշխարհային տնտեսության զարգացման փուլի առանձնահատկություններից մեկն է: XX դարի վերջին տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը հանդիսացավ տնտեսությունների զարգացման արագացման և համաշխարհային տնտեսության մեջ առանձին երկրների մրցունակության բարձրացման հզոր գործիքներից մեկը:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններ տնտեսական այն խմբավորումներն են, որոնք ստեղծվել են մասնակից երկրների միջև՝ ինտեգրացիոն գործընթացները կարգավորելու համար: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունները զարգանում են մասնակից երկրների ձեռնարկությունների միջև սերտ և կայուն փոխհարաբերությունների հիման վրա: Հակառակ դեպքում դա բերում է ոչ կայուն տնտեսական զարգացման (օրինակ կարող է լինել ԱՊՀ-ն): Այստեղից կարելի է հետևություն անել, որ տվյալ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորման շրջանակում, չանտեսելով կառավարության տնտեսական կարգավորումը, դրա ակտիվ զարգացումը հնարավոր է միայն տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորման մասնակից երկրների ձեռնարկությունների միջև տնտեսական հարաբերությունների զարգացմամբ:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումների զարգացման գործընթացը սովորաբար բաժանում են փուլերի: Այսպես, Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման

ամենապարզ ձևն ազատ առևտրի գոտին է: Այստեղ մասնակից երկրների միջև առկա առևտրային սահմանափակումները կա՛մ կրճատվում են, կա՛մ ամբողջությամբ վերացվում: Յուրաքանչյուր երկիր միությունից դուրս երկրների հետ արտաքին տնտեսական հարաբերություններում կիրառում է իր սեփական արտաքին առևտրային քաղաքականությունը:

Համագործակցության ավելի սերտ ձև է մաքսային միությունը: Այստեղ՝ միության ներսում, նվազեցվում կամ ամբողջությամբ վերացվում են առևտրային սահմանափակումները: Յուրաքանչյուր երկիր միությունից դուրս երկրների հետ արտաքին տնտեսական հարաբերություններում կիրառում է նախապես որոշված մեկ միասնական արտաքին առևտրային քաղաքականություն: Այսպիսով, ի տարբերություն ազատ առևտրի գոտու՝ մաքսային միության դեպքում մասնակից երկրների կողմից իրականացվում է համակարգված արտաքին առևտրային քաղաքականություն այլ երկրների հետ արտաքին տնտեսական հարաբերություններում:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հետագա զարգացումը հանգեցրեց ընդհանուր շուկայի առաջացմանը: Սա մասնակից երկրների միջև ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ է: Այլ կերպ այս փուլը անվանում են «չորս ազատությունների» փուլ, և դա անհրաժեշտ է ինտեգրացիոն խմբավորման երկրների շուկաների հավասարակշռությունը ապահովելու համար

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ավելի բարդ ձև է տնտեսական ու արժութային միությունը: Այստեղ ազատ առևտրի գոտու, մաքսային միության, ընդհանուր շուկայի համաձայնագրերը համալրվում են մասնակից երկրների միջև տնտեսական ու արժութային ընդհանուր քաղաքականություն իրականացնելու համաձայնագրով: Մասնագիտական գրականության մեջ տնտեսական ու արժութային միությունը հաճախ ներկայացվում է որպես առանձին փուլ: Այստեղ հարկ է նշել, որ նախ պետք

է ձևավորվի տնտեսական միությունը, այնուհետև՝ արժութային միությունը, քանի որ մեկ միասնական արժութային քաղաքականության իրականացումը հնարավոր է միայն ընդհանուր տնտեսական քաղաքականության իրականացումից հետո:

Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիա (European Free Trade Area Association, EFTA): 1957 թ.՝ Հռոմի պայմանագրի ստորագրման ժամանակ, բաց հրավերք էր տրամադրվել Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներին՝ Եվրոպական տնտեսական համայնքին (EEC) անդամակցելու համար, սակայն տարբեր պատճառներով, բացի Բելգիայից, Նիդեռլանդներից, Լյուքսեմբուրգից, Ֆրանսիայից, Արևմտյան Գերմանիայից ու Իտալիայից, մյուս երկրները չստորագրեցին այդ պայմանագիրը: Մասնավորապես Մեծ Բրիտանիան այդ ժամանակ չցանկացավ անդամակցել կազմակերպությանը հետևյալ երեք հիմնական պատճառով: Առաջին հերթին Մեծ Բրիտանիան բավականին կասկածամտորեն էր մոտենում այնպիսի մի պայմանագրի գոյատևմանը, որը որպես մասնակիցներ ներառում էր Գերմանիային ու Ֆրանսիային: Երկրորդ հերթին Մեծ Բրիտանիան չէր ցանկանում վերափոխել գյուղատնտեսության աջակցության իր ծրագիրը (Common Agricultural Policy, CAP): Եվ, վերջապես, EEC-ին անդամակցությամբ Մեծ Բրիտանիան պետք է կիրառեր ընդհանուր արտաքին առևտրային քաղաքականություն, որն այդ ժամանակ ձեռնտու չէր Մեծ Բրիտանիային: Մյուս երկրները չանդամակցեցին հիմնականում Արևմուտք-Արևելք հարաբերություններում չեզոքություն պահպանելու պատճառով:

EEC-ի հետագա զարգացմամբ Մեծ Բրիտանիան սկսեց մտավախություն ունենալ, որ դուրս կմնա այդ ինտեգրացիոն գործընթացից: 1950-ական թթ. վերջին Մեծ Բրիտանիան սկսեց բանակցություններ վարել՝ EEC-ին անդամակցելու համար, սակայն մերժում ստացավ: EEC-ին անդամակցելու բանակցությունների ձախողումը Մեծ Բրիտանիային դրդեց մեկ այլ ինտեգրացիոն

միավորման՝ Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ստեղծման[48]: Այսպիսով՝ EFTA-ի մասնակից երկրներն էին Մեծ Բրիտանիան, Ավստրիան, Շվեյցարիան, Պորտուգալիան, Շվեդիան, Նորվեգիան ու Դանիան: EFTA-ն որպես տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորում ազատ առևտրի համաձայնագիր է, իսկ EEC-ն այդ ժամանակ մաքսային միություն էր: Ինչպես մենք գիտենք, Ազատ առևտրի համաձայնագիրը տարբերվում է Մաքսային միությունից նրանով, որ առաջինի դեպքում գոյություն չունի մեկ միասնական արտաքին առևտրային քաղաքականություն: Բացի դրանից՝ EFTA-ն մասնակից երկրներին չէր ապահովում այնպիսի տնտեսական օգուտներ, ինչպես EEC-ն: Մասնավորապես, EFTA-ն չուներ տնտեսական մեկ միասնական քաղաքականություն և ի տարբերություն EEC-ի՝ GATT-ի բանակցություններում հանդես չեր գալիս որպես մեկ միասնական մարմին:

ԵՄ հետագա ընդարձակման շնորհիվ EFTA մասնակից երկրների մի մասը, այդ թվում՝ նաև Մեծ Բրիտանիան, անդամակցեցին ԵՄ-ին, և ներկայումս EFTA-ին անդամակցում են Շվեյցարիան, Լիխտենշտեյնը, Իսլանդիան ու Նորվեգիան[49]: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպես են EFTA-ն ու ԵՄ-ն՝ որպես տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներ, կարգավորում իրենց արտաքին տնտեսական հարաբերությունները միմյանց հետ: Այսպես, 1994թ. հունվարի 1-ին կնքվեց Եվրոպական տնտեսական տարածքի (European Economic Area, EEA) համաձայնագիրը, համաձայն որի ԵՄ և EFTA-ի երեք անդամ երկրները (Իսլանդիա, Լիխտենշտեյն և Նորվեգիա) համարվում են մեկ ընդհանուր շուկայի/ներքին շուկայի մասնակիցներ: Այսինքն, EEA-ն EFTA-ի համար ապահովում է «չորս ազատությունները», բայց ոչ

---

[48] EFTA-ն ստեղծվել է 1960 թ. հունվարի 4-ին:

[49] Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի պաշտոնական կայքէջը՝ www.efta.int:

ԵՄ քաղաքականությունները (Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականություն, արտաքին առևտրային քաղաքականություն և այլն): 2019թ. օգոստոսին EFTA-ի և Mercosur-ի միջև սկսվեցին բանակցություններ երկու ինտեգրացիոն խմբավորումների միջև ազատ առևտրի համաձայնագիր կնքելու հնարավորության վերաբերյալ:

Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիր (North American Free Trade Agreement, NAFTA)[50]: ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի միջև Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտի ստեղծելու համաձայնագիրը ուժի մեջ մտավ 1994 թ. հունվարի 1-ից: Այս ինտեգրացիոն խմբավորման հիմնական նախաձեռնողը ԱՄՆ վարչակազմն էր: ԱՄՆ վարչակազմի այդ նախաձեռնությունը պայմանավորված էր ամերիկյան վերազգային կազմակերպությունների ազդեցությամբ, քանի որ Միացյալ Նահանգների, Կանադայի և Մեքսիկայի տնտեսությունների փոխկապվածության մեծացումը պահանջում էր միջկառավարական կարգավորում: Այս ինտեգրացիոն խմբավորման ստեղծմանը նպաստեցին նաև այդ ժամանակաշրջանում աշխարհում ընթացող տնտեսական և քաղաքական արմատական փոփոխությունները: Այսպես, ԵՄ-ն սկսեց տարածաշրջանում արագացնել ու ընդլայնել տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները: Ճապոնիան, Չինաստանն ու Հարավարևելյան Ասիայի երկրներն էլ ավելի ուժեղացրին իրենց տնտեսական ներուժի ավելացումը: Այսպիսի իրավիճակը ԱՄՆ-ի առաջ խնդիր դրեց ակտիվացնելու տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներն իր տարածաշրջանում, որպեսզի պահպանի ամերիկյան կազմակերպությունների մրցունակությունը համաշխարհային շուկայում: Միացյալ Նահանգների, Կանադայի ու Մեքսիկայի առաջատար ընկերություն-

[50] 2018 թ. սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ն, Կանադան և Մեքսիկան համաձայնության եկան փոխարինելու NAFTA-ն USMCA-ով (United States–Mexico–Canada Agreement, USMCA, ԱՄՆ-Մեքսիկա-Կանադա համաձայնագիր), ինչը վավերացվեց բոլոր անդամ երկրների կողմից 2020 թ. մարտի 13-ին:

ները ցանկանում էին միավորել ամերիկյան ու կանադական ֆինանսական, գիտատեխնիկական ու ձեռնարկատիրական ներուժը մրցունակություն ապահովող գլխավոր գործոններից մեկի՝ Մեքսիկայի արտադրության ցածր ծախսերին: Մասնավորապես, 1990-ական թթ. տվյալներով Մեքսիկայում մեկ աշխատաժամը մոտ 9 անգամ ավելի քիչ էր վարձատրվում, քան ԱՄՆ-ում:

Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման շրջանակում նախ իրականացվե Միացյալ Նահանգների ու Կանադայի արտաքին ապրանքաշրջանառության ազատականացում Մեքսիկայի հետ, քանի որ ԱՄՆ-ի ու Կանադայի միջև արտաքին առևտուրը NAFTA-ի ստեղծման համաձայնագիրը ստորագրելիս արդեն ազատականացված էր: 1994 թ. վերջին արդյունաբերական ապրանքների փոխադարձ առևտրում մաքսերը նվազեցին 65 %-ով, իսկ առաջիկա 15 տարում նախատեսվում էր ամբողջությամբ վերացնել առևտրային ու ներդրումային գրեթե բոլոր արգելքները: Արդեն 2008 թ. հունվարի 1-ի դրությամբ NAFTA-ի շրջանակում բոլոր մաքսատուրքերն ու քվոտաները (միջազգային առևտրի քանակական սահմանափակումներ) ամբողջությամբ բացառվեցին:

Իրենց տնտեսական ներուժով (ՀՆԱ-ի մակարդակով) Կանադան ու Մեքսիկան զգալի զիջում են ԱՄՆ-ին: Այսպես, 2022 թ. տվյալներով Կանադայի ՀՆԱ-ն՝ հաստատուն գներով արտահայտված, կազմել է ԱՄՆ ՀՆԱ-ի 8.1 %-ը, իսկ Մեքսիկայի ՀՆԱ-ի՝ 5.7 %-ը: Մյուս կողմից՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ծավալով պատկերը բավականին մեղմվում է հատկապես Կանադայի դեպքում: Այսպես, Կանադայի հաստատուն գներով արտահայտված, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի (44,928 դոլար) ու ԱՄՆ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի (62,789 դոլար) միջև տարբերությունն այդքան մեծ չէ, որքան Մեքսիկայի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի (10,077 դոլար) միջև: Ի տարբերություն ԵՄ-ի, որտեղ համեմատաբար թույլ զարգացած երկրներին (Իսպանիա, Հունաս-

տան, Պորտուգալիա) համատեղ բյուջետային հիմնադրամներից տրամադրվում է ֆինանսական օգնություն, NAFTA-ի շրջանակում Մեքսիկային նման օգնություն չի տրամադրվում[51]: Այնուամենայնիվ, որոշ տնտեսագետների կարծիքով NAFTA-ին անդամակցությունը Մեքսիկային թույլ կտար հասնել զարգացած երկրների մակարդակին 50 տարվա փոխարեն 15-20 տարի հետո[52]: Սակայն, ինչպես ժամանակը ցույց տվեց, դա տեղի չունեցավ, քանի որ Մեքսիկան իր տնտեսական զարգացվածությամբ ներկայումս զգալիորեն զիջում է զարգացած երկրներին: NAFTA-ին անդամակցությամբ Մեքսիկան ամենամեծ օգուտները ստանում է օտարերկրյա կապիտալի, մասնավորապես ամերիկյան աճի տեսքով: Օտարերկրյա ուղղակի ներդրումներով, ինչը զարգացող երկրի տնտեսական զարգացման գործընթացում մեծ դեր ունի, Մեքսիկան 1990-ական թթ. Լատինական Ամերիկայում գրավում էր առաջին տեղը: Այսպես, եթե 1986-1991թթ. ընկած ժամանակաշրջանում Մեքսիկայում տարեկան ՕՈՒՆ-ի ծավալը կազմել է տարեկան միջինը 3 մլրդ դոլար, ապա 1994 թվականից ի վեր այդ ցուցանիշը 8 մլրդ դոլարից քիչ չի եղել:

Հարավամերիկյան ընդհանուր շուկա (Mercado Comon del Sur, Mercosur[53]): Հարավամերիկյան ընդհանուր շուկան (Mercosur) հիմնադրվել է 1991 թ., իսկ պաշտոնապես սկսել է գործել 1995 թ. հունվարի 1-ից: Այն տնտեսական ու քաղաքական ինտեգրացիոն խմբավորում է, աշխարհում չորրորդ տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումն իր մեծությամբ՝ ԵՄ-ից,

---

[51] ԵՄ ընդհանուր բյուջեն 2022 թ. կազմել է մոտ 170 մլրդ եվրո, որի գերակշիռ մասը՝ մոտ 29 %-ը, բաժին է ընկնում ԵՄ տարածաշրջանների միջև տնտեսական զարգացման մակարդակների տարբերության կրճատմանը, մոտ 31%-ը՝ CAP ծրագրի իրականացմանը:

[52] Aaron Tornell and Gerardo Esquivel (1997), The Political Economy of Mexico's Entry into NAFTA, Regionalism versus Multilateral Trade Arrangements, NBER-EASE, Vol. 6.

[53] South American Common Market-ը ինտեգրացիոն խմբավորման անգլերեն անվանումն է:

NAFTA-ից և ASIAN-ից հետո[54]: Հարավամերիկյան ընդհանուր շուկայի հիմնական նպատակը տարածաշրջանի միջազգային առևտրում առկա բարձր մաքսատուրքերի ու առևտրի խոչընդոտների նվազեցումը կամ ընդհանրապես վերացումն է: Ինտեգրացիոն խմբավորումը բաղկացած է հիմնադիր և գործընկեր երկրներից: Հիմնադիր երկրներն են Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայն ու Ուրուգվայը: Ինտեգրացիոն խմբավորումն ունի նաև գործընկեր երկրներ, որոնք Հարավամերիկյան ընդհանուր շուկայի անդամ երկրների հետ առևտրում օգտվում են առևտրային արտոնություններից, սակայն ոչ ինչպես խմբավորման մասնակից երկրները միմյանց հետ առևտրում: Բոլիվիան, Չիլին ու Պերուն Հարավամերիկյան ընդհանուր շուկայի առաջին գործընկեր անդամներն են: 2004 թ. հուլիսին Մեքսիկան ու Վենեսուելան նույնպես դարձան խմբավորման գործընկեր անդամներ, իսկ 2012 թ. հուլիսի 31-ից Վենեսուելան անդամակցեց Հարավամերիկյան ընդհանուր շուկային, սակայն իր անդամակցությունը կասեցրեց 2016 թ.: 2023 թ. Բոլիվիան գործընկեր անդամից դարձավ խմբավորման լիիրավ անդամ:

Չնայած իր անվանմանը՝ Հարավամերիկյան ընդհանուր շուկան ներկայումս մաքսային միություն է: Այսպես, ինտեգրացիոն խմբավորման կողմից կիրառվող արտաքին առևտրային մեկ միասնական քաղաքականությունը ուժի մեջ մտավ 1995 թ. հունվարի մեկին: Մյուս կողմից՝ հիմնադրման պահին հստակորեն սահմանվել էր, որ մինչև 1995 թվականը ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների միջև իրականացվող առևտուրը պետք է ամբողջությամբ ազատ լիներ (առանց տարիֆների ու քանակական սահմանափակումների): Սակայն իրականում 1995 թ. ինտեգրացիոն խմբավորման ներսում կատարվող առևտրի միայն

[54] Association of Southeast Asian Nations (ASIAN) ստեղծվել է 1967 թ. օգոստոսի 8-ին Բանգկոգում (Թայլանդ): Հիմնադիր երկրներն են Ինդոնեզիան, Մալազիան, Ֆիլիպինները, Թայլանդն ու Սինգապուրը: Ներկայումս տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորմանը անդամակցում է 10 երկիր:

90 %-ն էր ազատականացված: Վերջին տարիներին Հարավամերիկյան ընդհանուր շուկայի կողմից իրականացվող քաղաքականությունը շատ ավելի հովանավորչական է: Այսպես, 2012 թ. մայիսին խմբավորման անդամ երկրները համաձայնության եկան՝ երրորդ երկրներից ներմուծման վրա կիրառելու 35 % մաքսատուրք:

Հարավամերիկյան ընդհանուր շուկան ամենադինամիկ զարգացող ինտեգրացիոն խմբավորումն է Լատինական Ամերիկայում: Այսպես, Հարավամերիկյան ընդհանուր շուկային բաժին է ընկնում Լատինական Ամերիկայի բնակչության 44 %-ը (ավելի քան 200 մլն մարդ), ՀՆԱ-ի մոտ կեսը:

Եվրոպական միություն (European Union, EU): ԵՄ-ն ներկայումս ամենազարգացած և ամենակատարյալ ինտեգրացիոն խմբավորումն է աշխարհում: Այստեղ հարկ է նշել, որ ԵՄ-ն Արևմտյան Եվրոպայի 27 երկրների ներկայիս անվանումն է, որը նախկինում կոչվում էր Եվրոպական համայնք (European Community, EC) կամ Եվրոպական տնտեսական համայնք (European Economic Community, EEC)[55]:

Իր զարգացման ընթացքում ԵՄ-ն անցել է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման բոլոր փուլերը՝ ազատ առևտրի գոտի, մաքսային միություն, ընդհանուր շուկա, տնտեսական և արժութային միություն: Միևնույն ժամանակ զարգացման ընթացքում մի քանի անգամ փոփոխվել է ինտեգրացիոն խմբավորման պաշտոնական ու ոչ պաշտոնական անվանումը: Այսպիսով՝ փորձենք հակիրճ ներկայացնել ԵՄ զարգացման փուլերը:

I փուլ: Եվրոպայում տնտեսական ինտեգրման առաջին փորձն արվեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբերտ Շումանի կողմից, որը փորձեց միավորել եվրոպական ածխի ու պողպատի արդյունաբերությունները: Ըստ Շումանի պլա-

[55] 2020 թ. փետրվարի 1-ից Մեծ Բրիտանիան դադարեցրեց իր անդամակցությունը Եվրոպական միությանը:

նի՝ նախատեսվում էր միավորել Ֆրանսիայի ու Գերմանիայի արդյունաբերությունները, սակայն Լյուքսեմբուրգը, Բելգիան, Նիդեռլանդներն ու Իտալիան նույնպես ստորագրեցին պայմանագիրը: Եվրոպական ածխի և պողպատի համայնքի պայմանագիրը (European Coal and Steel Commuity, ECSC) ստորագրվեց 1951 թ., և պայմանագրի ստորագրումից հինգ տարի հետո ածխի և պողպատի առևտուրը աճեց 129 %-ով[56]:

II փուլ: ECSC հաջողությունը բերեց քաղաքական ու ռազմական ոլորտներում ինտեգրման առաջին փորձերի՝ Եվրոպական պաշտպանության համայնքի (European Defense Community) և Եվրոպական քաղաքական համայնքի (European Political Community) ստեղծում, սակայն այս փորձերը ձախողվեցին, երբ դրանք 1954 թ. չընդունվեցին Ֆրանսիայի պառլամենտի կողմից: Այդ ժամանակ եվրոպական առաջնորդները որոշեցին կենտրոնանալ տնտեսական ինտեգրման վրա: 1955 թ. ECSC-ի վեց արտաքին գործերի նախարարներ սկսեցին բանակցությունների ռաունդը Մեսինայում (Իտալիա)՝ քննարկելու համար Եվրոպական տնտեսական համայնքի (European Economic Community, EEC) և Եվրոպական ատոմային էներգիայի համայնքի (European Atomic Energy Community, EAEC or Euratom) ստեղծման հնարավորությունները: Առաջինի նպատակն էր ստեղծել մեկ միասնական շուկա ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի համար, իսկ երկրորդինը՝ համատեղ զարգացնել ատոմային էներգիան խաղաղ նպատակների համար: 1957 թ. Հռոմում երկու տարբեր պայմանագրեր ստորագրվեցին, և ստեղծվեցին EEC-ն ու EAEC-ն:

Այսպիսով՝ 1957 թ. մարտի 25-ին Հռոմի պայմանագրի հիման վրա ստեղծվեց Եվրոպական տնտեսական համայնքը (EEC): Համաձայնագիրը ուժի մեջ մտավ 1958 թ. հունվարի 1-ին: Հիմնադիր վեց երկրներն էին Բելգիան, Նիդեռլանդները Լյուքսեմբուրգը,

[56] Hirtis, T. (1991), European Community Economics, 2nd Edition, St. Martin's Press.

Ֆրանսիան, Արևմտյան Գերմանիան ու Իտալիան: Մեծ Բրիտանիան, Դանիան ու Իռլանդիան անդամակցեցին 1977 թ. հուլիսի 1-ին, Հունաստանը՝ 1981 թ., իսկ Իսպանիան և Պորտուգալիան՝ 1986 թ. հունվարի 1-ին: Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադիրների նպատակն էր վերակառուցել իրենց քայքայված տնտեսությունները: Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադիրների տեսանկյունից նրանք փորձելու էին տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջոցով հետագայում հասնել քաղաքական միության ստեղծման:

III փուլ: 1987 թ. Եվրոպական տնտեսական համայնքի տասներկու մասնակից երկրներ նախաձեռնեցին մի ծրագիր, որը նրանց պետք է ապահովեր առևտրից ստացվող լրացուցիչ օգուտներ: Մասնակից երկրները ընդունեցին օրենսդրություն, որը բարելավում և լրացնում էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստորագրած պայմանագիրը: 1987 թ. ընդունած օրենսդրությունը անվանվեց «Միասնական եվրոպական օրենք» (Single European Act, SEA), քանի որ համաձայն այդ օրենքի՝ նախատեսվում էր ստեղծել միասնական եվրոպական ինքնություն:

«Միասնական եվրոպական օրենքի» հիմքում ընկած է «չորս ազատությունների» գաղափարը, որը ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ է: «Միասնական եվրոպական օրենքը» կիրառվեց 1993 թ. հունվարին:

Քանի որ Եվրոպական տնտեսական համայնքը սկսեց ավելի շատ պատասխանատվություն կրել տնտեսական ու սոցիալական հարցերում, ապա Եվրոպական տնտեսական համայնքը սկսեց դիտարկվել ավելի լայն առումով, և առաջ եկավ «Եվրոպական համայնք» (European Community, EC) անվանումը: Հետագայում՝ 1993 թ. նոյեմբերի 1-ին, Մաաստրիխտի պայմանագրով «Community»-ն փոխարինվեց «Union»-ով: Իրականում «Եվրոպական տնտեսական համայնք» անվանումը մինչև օրս գործում

է, երբ հարցը վերաբերում է բացառապես տնտեսական խնդիրներին:

IV փուլ: 1993 թվականից ի վեր սկսվում է եվրոպական ինտեգրման նոր փուլը: ԵՄ-ի համար առաջին պլան է մղվում ԵՄ շրջանակում տնտեսական, արժութային ու քաղաքական միության հաստատումը: 1995 թ. հունվարի 1-ին ԵՄ-ին անդամակցում են Ավստրիան, Ֆինլանդիան ու Շվեդիան: Սակայն ԵՄ զարգացումն ու ընդլայնումն այդքանով չավարտվեցին: Այսպես, 2004 թ. մայիսի մեկին անդամակցեցին Արևելյան Եվրոպայի տասը երկրները[57], 2007 թ. հունվարի 1-ին՝ Ռումինիան ու Բուլղարիան, իսկ 2013 թ. հուլիսի 1-ին՝ Խորվաթիան:

Տնտեսական և արժութային միությանը անցումը նշանակում էր մեկ միասնական եվրոպական արժույթի ու Եվրոպական կենտրոնական բանկի ստեղծում: Այդ նպատակով 1989-1992 թթ. Մաաստրիխտում մշակվեց ռազմավարություն տնտեսական և արժութային միության ստեղծման ու զարգացման համար: Առաջին հերթին ԵՄ մասնակից երկրների ֆինանսական քաղաքականության ունիֆիկացման համար առաջ քաշվեցին Մաաստրիխտյան կոնվերգենցիայի չափանիշները: Տնտեսական ու արժութային միությանը անդամակցող յուրաքանչյուր երկիր պետք է բավարարեր հետևյալ պայմանները.

1. գնաճի (ինֆլյացիայի) մակարդակը չպետք է գերազանցի տնտեսական ու արժութային միության մեջ մտնող երկրների գնաճի միջին մակարդակն ավելի քան 1.5 %-ով,
2. տոկոսադրույքի մակարդակը չպետք է գերազանցի նվազագույն գնաճի մակարդակ ունեցող երեք երկրների տոկոսադրույքների միջին մակարդակն ավելի քան 2 %-ով,
3. պետական բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 %-ը,

[57] Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Կիպրոս, Մալթա, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա Հունգարիա:

4. պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60 %-ը:

Տնտեսական և արժութային միության ձևավորումը իր հերթին ընթացավ երեք փուլով՝

- 1990-1993 թթ.՝ ընդհանուր եվրոպական շուկայի ձևավորման ավարտ և արժութային կոնվերգենցիայի չափանիշների մշակում,
- 1994-1998 թթ.՝ արժութային միության ինստիտուցիոնալ, վարչական և իրավաբանական բազայի ստեղծում,
- 1999-2002 թթ. մեկ միասնական եվրոպական արժույթի՝ եվրոյի աստիճանական կիրառում:

ԵՄ ինստիտուցիոնալ կառուցվածքը: ԵՏՀ հիմնադիրներն ակնկալում էին ստեղծել ֆեդերացիա, որտեղ ազգային/տեղական և եվրոպական/տարածաշրջանային ղեկավարությունը համագործակցում և լրացնում է մեկը մյուսին: Մոդելը նման է ԱՄՆ-ում քաղաքների, նահանգների նուֆեդերալ կառավարության կամ Կանադայում տեղական, նահանգային և ֆեդերալ կառավարության փոխազդեցությանը: Այլընտրանքային տեսակետը, որը հիմնվում է ֆունկցիոնալիզմի վրա նախապատվությունը տալիս է ազգային/տեղական սուվերենության աստիճանական փոխանցմանը դեպի եվրոպական/տարածաշրջանային մակարդակ: Ֆունկցիոնալիստների մոտեցումը հավանաբար ամենավիճելին է, մասնավորապես մոտեցումը քննադատվում է նրանց կողմից, ովքեր առաջ են քաշում ազգային ուժի/անվտանգության և մշակույթի կորստի վտանգը:

Ամեն դեպքում ներկայումս այս երկու մոտեցումներն էլ գործում են: ԵՄ շրջանակում «subsidiarity» հասկացությունը վերաբերում է այս խնդրին, որը նկարագրում է ազգային ու ԵՄ ղեկավարության և ազգային ու ԵՄ ինստիտուտների հարաբերությունը: Subsidiarity-ին սահմանվում է որպես սկզբունք, համաձայն որի՝ ԵՄ-ն միայն լիազորություն կունենա քննարկելու հարցեր, որոնք ավելի արդյունավետ կլուծվեն միջազգային, քան առանձին երկրի

մակարդակով: Որոշ դեպքերի համար այդ հարցերը հստակորեն սահմանված են, իսկ մյուս դեպքերում՝ ոչ: Հարցերը, որոնք պարզ չեն, և որտեղ դեռ շարունակվում է գործել անորոշության որոշակի մակարդակ, ներառում են աշխատուժի շուկայի, սոցիալական ու մրցակցային քաղաքականությունների ոլորտները:

ԵՄ շրջանակում որոշումների կայացումը կատարվում է հետևյալ ինստիտուտների կողմից՝

1. Եվրոպական հանձնաժողով (The European Commission),
2. ԵՄ կամ Նախարարների խորհուրդ (The Council of the European Union),
3. Եվրոպական խորհրդարան (The European Parliament),
4. Արդարադատության դատարան (The Court of Justice):

Եվրոպական հանձնաժողով: Հանձնաժողովը ստեղծման պահից ի վեր ԵՄ գործադիր մարմինն է և ԵՄ ինստիտուցիոնալ համակարգում շատ կարևոր տեղ է զբաղեցնում: Իր գոյության բոլոր ժամանակաշրջաններում Եվրոպական հանձնաժողովն օժտված է եղել բավականին լայն լիազորություններով: Լայն առումով Եվրոպական հանձնաժողովը ներկայացնում է վերպետական շահերը (ԵՄ մակարդակ):

Ամենախոշոր հինգ երկրներից յուրաքանչյուրը (Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա և Իսպանիա) հանձնաժողովում ունեն երկու հանձնակատարներ, իսկ մնացած երկրները՝ մեկական: Հանձնակատարները ընտրվում են հինգ տարի ժամկետով, վերընտրման իրավունքով, առաջադրվում են ազգային կառավարությունների կողմից և հաստատվում են մասնակից երկրների կողմից: Հանձնաժողովն իր անդամներից ընտրում է մեկ հանձնակատար, որը պետք է իրականացնի նախագահի գործառույթը:

ԵՄ կամ նախարարների խորհուրդ: ԵՄ խորհուրդը՝ որպես ԵՄ օրենսդիր մարմին, սահմանում է օրենքներ՝ հիմնվելով Եվրոպական հանձնաժողովի և խորհրդարանի առաջարկությունների

վրա, ինչպես նաև հաստատում է բյուջեն: ԵՄ խորհուրդն իր նստաշրջաններն անց է կացնում Բրյուսելում կամ Լյուքսեմբուրգում: ԵՄ խորհուրդը կազմված է յուրաքանչյուր մասնակից երկրի տարբեր նախարարներից՝ կախված քննարկվող առարկայից: Յուրաքանչյուր նստաշրջանի ժամանակ յուրաքանչյուր մասնակից երկրից առնվազն մեկ նախարար պետք է ներկա լինի: Օրինակ՝ գյուղատնտեսությանը վերաբերող հարցերը քննարկվում են յուրաքանչյուր մասնակից երկրի գյուղատնտեսության նախարարների, իսկ աշխատուժին վերաբերող հարցերը՝ համապատասխան ոլորտի նախարարների կողմից: Այսպիսով՝ կարող ենք նշել, որ լայն առումով ԵՄ խորհուրդն անդամ պետությունների ազգային շահերի համաձայնեցման և պաշտպանության կենտրոն է[58]: ԵՄ խորհրդում որոշումների ընդունման հիմնական ձևերն են պարզ մեծամասնությունը, միաձայնությունն ու որակյալ մեծամասնությունը:

Եվրոպական խորհրդարան: Եվրոպական խորհրդարանը ԵՄ միակ մարմինն է, որի ներկայացուցիչներն ուղղակիորեն ընտրվում են մասնակից երկրների քաղաքացիների կողմից հինգ տարի ժամանակահատվածով: 2003 թ. Եվրոպական խորհրդարանը բաղկացած էր 626 անդամներից, իսկ 2004 թ. մայիսին ԵՄ ընդլայնման հետևանքով խորհրդարանի անդամների թիվը դարձավ 732 ներկայացուցիչ[59]: Անդամները միավորվում են՝ ելնելով քաղաքական, այլ ոչ թե ազգային պատկանելիությունից: Եվրոպական խորհրդարանը յուրաքանչյուր ամիս իր նստաշրջաններն անցկացնում է Ստրասբուրգում (լրացուցիչ նստաշրջաններ անցկացվում են նաև Բրյուսելում):

---

[58] Սարգսյան Ա., Եվրոպական միության ինստիտուտներ և ընթացակարգեր, Ուսումնական նյութերի ժողովածու, Երևան, 2009:

[59] Յուրաքանչյուր անդամ երկիր, կախված իր տնտեսության չափսերից, բնակչության թվաքանակից և այլ գործոններից, կարող է ունենալ նվազագույնը 5, իսկ առավելագույնը՝ 99 ներկայացուցիչ: Եվրոպական խորհրդարանում անդամ երկրների ներկայացուցիչների թիվն անընդհատ փոփոխվել է՝ պայմանավորված ԵՄ ընդլայնմամբ:

Սկզբնական շրջանում խորհրդարանն իր գործունեությամբ հիմնականում կրում էր խորհրդատվական բնույթ: Այդ պատճառով շատ հաճախ ասում էին, որ ԵՄ կառավարման համակարգում գոյություն ունի «ժողովրդավարական պակասուրդ», քանի որ ԵՄ ժողովրդավարական ընտրված մարմինը՝ Եվրոպական խորհրդարանը, իրականում չէր գործում որպես խորհրդարան և չէր ապահովում համապատասխան օրենսդրությամբ: Ժամանակի ընթացքում աստիճանաբար միտում էր նկատվում Եվրոպական խորհրդարանին օրենսդրական գործընթացին մասնակից դարձնելու ուղղությամբ: Ներկայիս Եվրոպական խորհրդարանն իր ստեղծման պահից տասնամյակներ անց արդեն օրենսդրական գործընթացի մասնակից է: Ձևավորվել է չորս հիմնական օրենսդրական ընթացակարգ, որոնց շրջանակում Եվրոպական խորհրդարանը Եվրոպական միության խորհրդի հետ համատեղ մասնակցում է օրենսդրական գործունեությանը[60]:

Արդարադատության դատարան: Արդարադատության դատարանը ԵՄ գերագույն դատարանը և տեղակայված է Լյուքսեմբուրգում: Յուրաքանչյուր մասնակից երկիր առաջադրում է մյուս մասնակից երկրների հետ փոխադարձ համաձայնեցված մեկ դատավոր: Դատարանը մեկնաբանում է պայմանագրերը՝ վերահսկելով, որ դրանք ճիշտ կիրառվեն ԵՄ այլ ինստիտուտների կողմից: Դատարանի կանոնները կրում են պարտադիր բնույթ և գերակայում են ազգային դատարանների հանդեպ:

6.2. Գլոբալիզացիա

Գլոբալիզացիայի էությունը: Թերևս այն հարցին, թե ինչ է գլոբալացումը, կարելի է տալ մեկ շատ կարճ, սակայն հստակ պատասխան. դա այն ամենն է, ինչ կուզենայիք, որ այն ընդ-

[60] Սարգսյան Ա., Եվրոպական միության ինստիտուտներ և ընթացակարգեր, Ուսումնական նյութերի ժողովածու, Երևան, 2009:

գրկեր: Այստեղ հարկ է նաև նշել, որ երբեմն «գլոբալիզացիա» հասկացության փոխարեն գործածում են «գլոբալացում» հասկացությունը՝ հասկանալով միայն գլոբալիզացիայի տնտեսական հատվածը: Այսպիսով, եթե փորձենք ներկայացնել գլոբալիզացիան առավել լայն սահմանմամբ, ապա դա առանձին երկրների տնտեսական, քաղաքական, իրավական և մշակութային ոլորտների միջազգայնացում/ինտեգրում է: Մյուս կողմից, եթե փորձենք սահմանել գլոբալիզացիան առավել նեղ սահմանմամբ՝ հաշվի առնելով միայն դրա տնտեսական հատվածը, ապա գլոբալացումը առանձին երկրների ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի շուկաների միջազգային ինտեգրումն է:

Իրականում դիտարկելով գլոբալիզացիայի դրական կամ բացասական հետևանքները՝ կարելի է հետևություն անել, որ ինչպես և համաշխարհային տնտեսության դեպքում, գլոբալիզացիան միանշանակորեն չի ընկալվում, այսինքն՝ գրականության մեջ չկա գլոբալիզացիայի մեկ միասնական սահմանում: Այդ պատճառով այստեղ մենք կներկայացնենք գլոբալիզացիայի հինգ առավել ընդգրկուն սահմանում:

Մշակութային գլոբալիզացիա: Այստեղ հիմնական խնդիրն այն է, թե արդյոք գոյություն ունի գլոբալ մշակույթ, կամ կան մշակույթի համընդհանուր որոշակի տարրեր, և ինչ աստիճանով է գլոբալ մշակույթը ներառում ազգային մշակույթներն ու սովորույթները: Բոլորս էլ նայում ենք միևնույն ֆիլմերը (ամերիկյան, ռուսական), լսում ենք միևնույն երաժշտությունը (ամերիկյան, անգլիական, ռուսական), խմում ենք նույն ըմպելիքները և այլն: Ընդհանուր առմամբ, ընդունված է համարել, որ մշակութային գլոբալիզացիային խթանում են վերազգային կազմակերպությունները: Մի շարք մասնագետներ այն կարծիքին են, որ ի հաշիվ տեղական մշակույթի ու սովորույթների՝ մենք կունենանք համասեռ գլոբալ մշակույթ: Մյուս կողմից՝ մինչև օրս Եվրոպայում կամ Չի-

նաստանում առկա են տարածաշրջանային մշակութային տարբերություններ:

Տնտեսական գլոբալիզացիա/գլոբալացում: Ընկերությունների տեսանկյունից սա ազգային շուկաների դերի նվազեցում է և գլոբալ/արտաքին շուկաների դերի ավելացում: Ազգային տնտեսությունների փոխկապակցվածությունը գնալով ավելանում է, այսինքն՝ դրանց ապրանքների, աշխատուժի ու կապիտալի շուկաները ավելի են ինտեգրվում մեկը մյուսի հետ:

Աշխարհագրական գլոբալիզացիա: Սա հիմնականում վերաբերում է ավելի սեղմ տարածության ու ժամանակի զգացողությանը, որն ապահովվում է շնորհիվ մեկ վայրից մյուսը ավելի արագ տեղափոխվելու հնարավորությամբ և տեղեկատվության արագ փոխանակմամբ: Գիտելիքներն ու արտադրությունը, որոնք նախկինում կենտրոնացված էին որոշակի տարածաշրջաններում, ներկայումս արդեն կարող են հասանելի լինել բոլորին տեղեկատվության արագ փոխանակման և տրանսպորտային նորարարությունների շնորհիվ:

Ինստիտուցիոնալ գլոբալիզացիա: Սա առնչվում է «ունիվերսալ» ինստիտուտների տարածմանը՝ իրականացնելով որոշակի բարեփոխումներ տնտեսության մեջ: Այս բարեփոխումների շարքին են դասվում.

- շուկայական ճկուն տնտեսության հաստատումը,
- պետական ձեռնարկությունների մասնավորեցումը,
- պետության դերի կրճատումը տնտեսության մեջ:

Միջազգային առումով բարեփոխումները թելադրվում են/իրականացվում են ԱՄՀ-ի ու ՀԲ-ի կողմից: Մյուս վառ օրինակը ԱՀԿ-ն է, որի հիմնական նպատակն է նվազագույնի հասցնել կամ վերացնել միջազգային առևտրում առկա խոչընդոտները՝ խթանելով արտադրության գործոնների ազատ տեղաշարժը:

Քաղաքական գլոբալիզացիա: Սա շուկայական ուժերի ու վերազգային կազմակերպությունների փոխհարաբերությունն է ազ-

գային տնտեսությունների հետ: Որոշ մասնագետների (հակագլոբալիստները) կարծիքով միջազգային շուկաների մրցակցային ճնշումը կարող է զգալիորեն թուլացնել պետության գործառույթները՝ սպառնալով դրա սուվերենությանը (ինքնիշխանությանը): Մյուս կողմից՝ գլոբալիզացիայի կողմնակիցների պնդմամբ այդպիսի մտավախությունները տեղին չեն, քանի որ պետությունը սովորաբար ապահովում է ազգային տնտեսության անվտանգությունը, իրավական համակարգը, առողջապահությունը, կրթությունն ու ենթակառուցվածքների զարգացումը: Վերջիններս շատ կարևոր են այնպիսի տնտեսական գործունեություններ ներգրավվելու համար, որոնք ուղղված կլինեն ազգային տնտեսության զարգացմանը:

Ինչպես նկատում ենք, վերը նշված սահմանումները փոխկապակցված են մեկը մյուսի հետ և ունեն բավականին ընդհանրություններ ու նմանություններ:

Գլոբալացման ազդեցությունն ազգային տնտեսությունների վրա: Համաձայն տեսության՝ կատարյալ մրցակցության պայմաններում գլոբալացումը դրական ազդեցություն է ունենում առանձին ազգային տնտեսությունների ու համաշխարհային տնտեսության վրա: Գլոբալացման շնորհիվ ձեռք է բերվում մասշտաբի արդյունք, արտադրության գործոնները աշխարհում վերաբաշխվում են ավելի արդյունավետորեն, և առավել հասանելի են դառնում գիտությունն ու նորարարությունը: Մյուս կողմից՝ գլոբալացումը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ ազգային տնտեսության (հատկապես զարգացող երկրների) վրա կարճաժամկետ հատվածում:

Այսպես, գլոբալացմամբ կարող է սրվել մրցակցությունը ազգային շուկայում: Այս պարագայում, եթե մենք գործ ունենք զարգացող երկրների հետ, ապա տեղական շուկայում խիստ մրցակցությունը բավականին լուրջ վնասներ կարող է պատճառել տեղական արդյունաբերությանը:

Մյուս կողմից՝ գլոբալացումն ապահովում է ազգային տնտեսությունների բավական «բացվածություն», որը թույլ է տալիս խոշոր վերազգային կազմակերպություններին ու բանկերին մեկ վայրից մյուսը տեղափոխել ֆինանսական վիթխարի միջոցներ: Այդպիսի գործարքների արդյունքում առանձին ազգային տնտեսություններ կարող են զգալի կորուստներ կամ օգուտներ կրել:

Գլոբալացման տնտեսական հետևանքները: Գրականության մեջ քննվում են գլոբալացման բազմաթիվ տնտեսական հետևանքներ: Այստեղ մենք կառանձնացնենք դրանցից մի քանիսը, որոնք, մեր կարծիքով, առավել կարևոր են:

- *Միջազգային առևտրի, կապիտալի և աշխատուժի շարժի խթանում:* Գլոբալացումն առաջին հերթին նպաստել է միջազգային առևտրի ծավալների ավելացմանը: Այսպես, 1950-2007 թթ. ընկած ժամանակահատվածում արտաքին առևտրի աճի միջին տեմպը կազմել է տարեկան 6.2 %, որը գրեթե երկու անգամ գերազանցում է գլոբալացման առաջին ալիքի (1850-1913 թթ.) միջին տարեկան տեմպը[61]: Ավելին, եթե 1990 թ. համաշխարհային ապրանքաշրջանառության հարաբերակցությունը համաշխարհային ՀՆԱ-ին կազմել է 38.8 %, ապա արդեն 2022 թ. այն կազմել է 56.7 %[62]:
- *Եկամուտների հավասարեցման/անհավասարության միտում*: Համաշխարհային տնտեսության մեջ եկամուտների անհավասարությունը ներկայացնելու համար մենք կդիտարկենք Թեյլի ինդեքսը (Theil, 1963)[63]: Որքան մեծ է

[61] Աղբյուր՝ World Trade Report 2008, World Trade Organization:
[62] Աղբյուր՝ World Development Indicators 2023, World Bank:
[63] Թեյլի ինդեքսը ներկայացնում է եկամուտների բաշխվածությունը: Ենթադրենք՝ ունենք n անհատներ, որոնք տիրապետում են xi եկամտի մակարդակի, ապա՝ $T=(1/n) \sum(xi/\mu \times \ln xi/\mu)$, որտեղ $\mu=(1/n)\sum xi$ եկամտի միջին մակարդակն է: Ինդեքսը ընկած է 0-ից մինչև ln(n), վերջինս ցույց է տալիս առավելագույն անհավասարությունը:

Թեյլի ինդեքսը, այնքան ավելի մեծ է եկամուտների անհավասարությունը: Համաձայն Թեյլի ինդեքսի՝ 1820-2000 թթ. ընկած ժամանակահատվածում եկամուտների անհավասարությունն աճել է: Եկամուտների անհավասարությունը հիմնականում աճել է 1820-1910 և 1960-2000 թթ. ընկած ժամանակահատվածներում, որոնք համապատասխանում են գլոբալացման առաջին ու երկրորդ ալիքներին: Այստեղից կարելի է նշել, որ գլոբալացումը խթանել է եկամուտների անհավասարաչափ բաշխմանը:

- *«Հարուստ» և «աղքատ» երկրների տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցում կամ տարբերության խորացում:* Այստեղ խնդիրն այն է, որ այս հիմնախնդիրը չի ընդունվում/ընկալվում միանշանակ: Այսպես, գլոբալացման կողմնակիցները գտնում են, որ համեմատաբար բաց տնտեսությամբ զարգացող երկրները գրանցում են ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր, քան համեմատաբար փակ տնտեսություններ ունեցողները: Ավելին՝ զարգացող երկրների աճի տեմպերը մի քանի անգամ գերազանցում են զարգացած երկրների աճի տեմպերը, և հետևաբար ժամանակի ընթացքում տեղի ունի տնտեսական զարգացման մակարդակների հավասարեցման միտում: Մյուս կողմից՝ մասնագետների մի խումբ այն կարծիքին է, որ վերը նշված մոտեցումը չի կարող ճիշտ լինել, քանի որ այն ստատիկ մոտեցում է (կենտրոնանում է զարգացող երկրների աճի տեմպերի վրա՝ անտեսելով զարգացած երկրների աճի տեմպերը, որոնք չնայած և փոքր են, սակայն զգալի): Համաձայն այս մոտեցման՝ գլոբալացումն էլ ավելի է խորացնում զարգացած ու զարգացող երկրների միջև տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունը:

- *Գլոբալացման ազդեցությունը զարգացող երկրների վրա:* Չնայած այն հանգամանքին, որ համաձայն տեսության՝ գլոբալացման զուտ արդյունքները զարգացող երկրների համար պետք է լինեն դրական, ոչ բոլոր զարգացող երկրներն են շահում գլոբալացումից: Քանի որ զարգացող երկրները հարուստ են «ցածրորակ» աշխատուժով, ապա դրանք հարաբերական առավելություն ունեն աշխատատար արտադրություններում, մասնավորապես կաշվե և տեքստիլ արդյունաբերություններում: Նման արտադրությունների զարգացումը զարգացող երկրներում լրացուցիչ աշխատուժի պահանջարկ է ստեղծում, որի արդյունքում, համաձայն Ստոլպեր-Սամուելսոնի տեսության, պետք է բարձրանա աշխատուժի գինը: Ավելին, քանի որ զարգացող երկրներում ներդրումներն իրենց հետ նաև բերում են լրացուցիչ որակավորում և արտադրության փորձ զարգացած երկրներից, ապա պետք է բարձրանա աշխատուժի որակավորումը, հետևաբար նաև աշխատուժի գինը: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, զարգացող երկրներում աշխատուժի գինն այդքան արագորեն չի աճում:

6.3. Տարածաշրջանացման տնտեսական և քաղաքական ասպեկտները

Վերջին 60 տարիների ընթացքում տարածաշրջանային համագործակցությունը շատ կարևոր դեր և նշանակություն է ձեռք բերել միջազգային հարաբերություններում: Չնայած այն հանգամանքին, որ գլոբալացումը շարունակում է հետաքրքրել քաղաքագետներին, գործարարներին, գիտության ներկայացուցիչներին և մյուսներին, ներկայիս ժամանակաշրջանը կարելի է անվանել «տարածաշրջանացման ժամանակաշրջան»: 1980-ական թթ. վերջերից համաշխարհային տնտեսության մեջ ակտիվորեն ձևա-

վորվում և զարգանում են տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները: Միասնական եվրոպական ակտով (1986 թ. փետրվար) Եվրոպայի ինտեգրման գործընթացի աշխուժացումը նոր իմպուլս հանդիսացավ տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների զարգացման համար: 1991 թ. Լատինական Ամերիկայում ստեղծվեց Հարավամերիկյան ընդհանուր շուկան (Mercosur – Mercado Comon del Sur), իսկ 1994 թ. Հյուսիսային Ամերիկայում Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիրը (NAFTA – North American Free Trade Agreement), Ասիայում ու Խաղաղ օվկիանոսային տարածաշրջանում՝ Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիան (ASEAN – Association of South East Asian Nations), որը ձևավորվել է 1967 թ. և սկսեց ակտիվորեն գործել 1990-ական թթ.:

Կարելի է առանձնացնել տարածաշրջանացման երկու հիմնական ալիք: Առաջին ալիքը զարգացել է 1940-1960-ական թթ. և հիմնվում էր եվրոպական փորձի վրա: Մի շարք գործոններ ստիպեցին Արևմտյան Եվրոպային փնտրել միջազգային համագործակցության նոր ուղիներ: Այդ գործոնների թվին են դասվում պատերազմի ազդեցությունը, ԱՄՆ առաջատար դերն ու դրա ազդեցությունը Եվրոպայի վերակառուցման գործում, Սառը պատերազմի քաղաքականությունը, տարածաշրջանային անվտանգության փոխադարձ կախվածությունը և Եվրոպայի ներսում պետության ու սուվերենության (ինքնիշխանության) հիմնախնդիրը: Առաջին ալիքի ժամանակ տարածաշրջանացման տեսության հիմքում ընկած էր վերազգային և միջպետական միջազգային համագործակցության հիմնախնդիրը: Ինչպես վերազգային, այնպես էլ միջպետական միջազգային համագործակցության ժամանակ դիտարկվում է պետության և սուվերենության (ինքնիշխանության) դերը տարածաշրջանացման գործընթացում: 1970-ական թթ. նվազեց տարածաշրջանացման տեսական ու գործնական հետաքրքրությունը: Հիմնական պատճառը Եվրոպայի ին-

տեգրացիոն գործընթացի դանդաղումն էր այս ժամանակաշրջանում, նաև այն փաստը, որ Եվրոպայի ինտեգրացիոն գործընթացի հարաբերական հաջողությունները աշխարհում ոչ մի տեղ չունեցան իրենց կրկնությունը: Մյուս կողմից՝ 1970-ական թթ. տնտեսական ճգնաժամը բարենպաստ պայմաններ չստեղծեց տարածաշրջանային տնտեսական ինտեգրման զարգացման համար:

Տարածաշրջանացման երկրորդ ալիքը, այսպես կոչված, «նոր տարածաշրջանացումը» սկիզբ է առել 1980-ական թթ. վերջերին: Նոր տարածաշրջանացումը սերտորեն պայմանավորված է գլոբալացման և համակարգային այլ գործոններով: Ներկայումս մեծ տեղ է տրվում ժամանակակից կամ նոր տարածաշրջանացման գործընթացներին: Այստեղ հարկ է նշել, որ շատ քիչ ուշադրություն է դարձվում տարածաշրջանային գործընթացների պատմական ակունքներին: Այդ պատճառով տեսաբանները պետք է հաշվի առնեն պատմության մանրամասները: Համեմատության համար նշենք, որ ինչպես Եվրոպական միությունը (EU – European Uninion), այնպես էլ ASEAN-ը ստեղծվել են տարածաշրջանացման առաջին ալիքի ժամանակ: Անկասկած, այս երկու տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները այդ ժամանակաշրջանի ամենանշանակալի օրինակներն են և ունեն տարածաշրջանային համագործակցության ամենամեծ փորձը: Պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ EU-ի ու ASEAN-ի ներկայիս ձևն ու զարգացման ուղղությունը պայմանավորված են ոչ միայն ժամանակակից փոփոխություններով և գլոբալացման ուժերով, այլ նաև այնպիսի գործոններով, որոնք ընկած են դրանց հիմնադրման ակունքներում:

Մենք հաճախ խոսում ենք տարածաշրջանային ինտեգրման մասին, ինչը հաճախ խառնում են տարածաշրջանացման հետ: Իրականում ինտեգրումը կարելի է դիտարկել որպես գործընթաց, և դա ինստիտուտների ձևավորում է, ինչպես նաև կառավարման նոր համակարգի ստեղծում՝ հիմնվելով տարբեր բաղկացուցիչ

մասերի վրա[64]: Ուստի տարածաշրջանային ինտեգրումը տարածաշրջանացման մասնակի օրինակ է: Չնայած այն հանգամանքին, որ տարածաշրջանային ինտեգրումը տարածաշրջանացման օրինակ է, ոչ բոլոր տարածաշրջանացման օրինակներն են պարունակում ինտեգրում: Սա ենթադրում է, որ եվրոպական ինտեգրումը ավելի լայն հասկացության՝ տարածաշրջանացման կոնկրետ օրինակ է:

Տարածաշրջանացում և ինտեգրման տեսություն: Առաջին ալիք. դասական մոտեցումներ: Ինչպես նշվեց, տարածաշրջանացման տեսություններն առաջացել են երկու հիմնական ալիքներով: Դրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է տարբեր դպրոցների միջև սեփական քննարկումներով: Առաջին ալիքը տևել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մինչև 1980-ական թթ. վերջը: Առաջին ալիքի ձևավորումն ու զարգացումն ունեցել են երկու հիմնական դրդապատճառ: Նախ անհրաժեշտ էր տալ տեսական բացատրություններ Արևմտյան Եվրոպայի տարածաշրջանային ինտեգրման զարգացման համար: Մյուս կողմից՝ անհրաժեշտ էր լուծել անվտանգության խնդիրը: Այս ժամանակահատվածում տեսական քննարկումները ընթանում էին վերազգային ու միջպետական միջազգային համագործակցությունների միջև: Որպես կանոն վերազգային մոտեցումները նպատակ ունեն սահմանափակելու պետությունների սուվերենությունը/ինքնիշխանությունը՝ հաստատելով ինստիտուտներ և որոշումներ կայացնող մարմիններ, որոնք ավելի մեծ տեղ են զբաղեցնում և փոխարինում են պետության սուվերենությանը/ինքնիշխանությանը: Սա իրականում հակադրվում է միջպետական միջազգային համագործակցությանը, որը միջազգային և տարածա-

[64] Christiansen, T. (2005), European Integration and Regional Cooperation, in: Baylis, J. and Smith, S. (eds.), *The Globalization of World Politics – An Introduction to International Relations*, 3rd edition (Oxford University Press: Oxford), p. 580.

շրջանային համագործակցության ժամանակ հիմնվում է սուվերենության/ինքնիշխանության ու պետության վրա:

Արդեն 1950-1960-ական թթ. Եվրոպայում մարտահրավեր նետվեց իշխող «ռեալիզմի» սկզբունքին: Համաձայն այս սկզբունքի՝ միջազգային հարաբերություններում գերակայում են պետությունն ու անվտանգությունը: Ակադեմիական ու որոշումների ընդունման քաղաքական ոլորտներում այս սկզբունքը սկսվեց դիտարկվել որպես խնդրահարույց և լայն քննարկումների առարկա հանդիսացավ Արևմտյան Եվրոպայում: Այդ պատճառով վերազգային մոտեցումները՝ ֆեդերալիզմ, ֆունկցիոնալիզմ ու նեոֆունկցիոնալիզմ, սկսեցին առաջանալ ու զարգանալ՝ խորացնելու ու ներկայացնելու համար եվրոպական ինտեգրացումը:

Ֆեդերալիզմ: Ֆեդերալիզմի հիմքում ընկած է վերազգային ուղղվածությունը: Ֆեդերալիզմը ենթադրում է քաղաքական այնպիսի համայնքի ստեղծում, որը հիմնված է սահմանադրական ու ինստիտուցիոնալ լավ զարգացած համակարգի վրա:

Ֆունկցիոնալիզմ: Տարածաշրջանացումն ու անվտանգությունը իրականում կապված են միմյանց հետ: Չնայած ֆեդերալիզմը դիտարկում է անվտանգությունը եվրոպական մակարդակում, որոշ տեսաբաններ փորձում են դիտարկել այս հիմնախնդիրն ավելի լայն միջազգային մակարդում: Համաձայն ֆունկցիոնալիզմի սկզբունքի՝ ինտեգրումը դիտարկվում է որպես գլոբալ գործընթաց, որն ունի իր սեփական առանձնահատուկ զարգացման դինամիկան[65]: Պետությունները սկսում են համագործակցել որոշակի կոնկրետ բնագավառներում՝ ստեղծելով գործառական նոր ինստիտուտներ: Հաջող համագործակցության հաստատումից հետո պահանջարկ է առաջանում ավելի սերտ համագործակցության ու համագործակցման այլ ոլորտներում: Ինչպես նկատում ենք, այստեղ առկա է հստակ տարանջատում քաղաքական

[65] Այս մոտեցման հիմնադիրն է պատմաբան ու քաղաքագետ Դավիթ Միտրանին (David Mitrany).

ու գործառական համագործակցությունների միջև: Այսպիսով՝ Դավիթ Միտրանի գլոբալ ֆունկցիոնալիզմի մոտեցումն իր հիմնական ազդեցությունն ունեցավ տարածաշրջանային մակարդակում (ԵՄ ձևավորում և զարգացում):

Նեոֆունկցիոնալիզմ: Նեոֆունկցիոնալիզմի սկզբունքը ներառում է ֆունկցիոնալիզմի բազմաթիվ տարրեր, ինչպես նաև արտաքին արդյունքները: Համաձայն Բեյնբրիջի՝ նեոֆունկցիոնալիզմն օգտագործում է ֆունկցիոնալիզմի մեթոդները, որպեսզի հասնի ֆեդերալիզմի նպատակներին[66]: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ նեոֆունկցիոնալիզմի հիմնական նպատակն է մի քանի պետությունների ինտեգրումից ստեղծել նոր պետություն[67]: Ընդգծած այստեղ նպատակը հիմնականում քաղաքական է, սակայն միջոցները սկզբնական շրջանում քաղաքական չեն: Նոր տարածաշրջանային «պետության» ստեղծումը իրականում քաղաքական խնդիր է:

Այսպիսով՝ տարածաշրջանացումը պատմական գործընթաց է, որը չունի գծային տեսք, այլ փոփոխվում է՝ կախված ներքին ու միջազգային քաղաքական և տնտեսական պայմաններից: Տարածաշրջանացման տեսության առաջին քննարկումներն իրականացվել են միջպետական ու վերազգային մոտեցումների միջև: Միջպետական միջազգային համագործակցության մոդելները դեռևս գերակշռում են միջազգային հարաբերություններում, իսկ վերազգային միջազգային համագործակցության մոդելները չափազանց սահմանափակ են:

Նոր տարածաշրջանացում: Երկրորդ ալիք: 1990-ական թթ., Եվրոպայի ինտեգրացիոն գործընթացների զարգացմամբ պայմանավորված, կրկին աճեց հետաքրքրությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման տեսությունների նկատմամբ:

---

[66] Bainbridge, T. (2002), The Penguin Companion to the European Union, 3rd edition, (Penguin: London), p. 299.

[67] Streby Jensen, C. (2003), Neo-functionalism, in: Cini, M. (ed.), European Union Politics (Oxford University Press: Oxford), p. 115.

1970-ական թթ. Եվրոպայում ինտեգրացիոն գործընթացները դանդաղել էին՝ համեմատած 1950-ական թվականների հետ: Սա առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1970-ական թթ. սկզբին Բրետոն Վուդսյան արժութային համակարգի փլուզման, ինչպես նաև 1970-ական թթ. վերջին նավթային ճգնաժամի պատճառով եվրոպական երկրներն իրենց ուշադրությունը սևեռել էին իրենց ներքին հիմնախնդիրների վրա:

1980-ական թթ. սկզբին միջազգային հարաբերությունների տեսությունից անցում կատարվեց և եվրոպական ուսումնասիրություններում առանցքային դեր սկսեց ունենալ կառավարման համակարգը: Ներկայումս ԵՄ-ն դիտարկվում է ո՛չ միջպետական միջազգային կազմակերպություն և ո՛չ էլ վերազգային պետություն, այլ որպես կառավարման ու որոշումների ընդունման համակարգ: Հետազոտության օբյեկտն ինտեգրման ու տարածաշրջանացման հիմնախնդիրներից տեղափոխվեց դեպի կառավարման համակարգի ուսումնասիրում: Կառավարման հայեցակարգը եվրոպական ուսումնասիրություններում նոր էջ բացեց: Կառավարման համակարգը բաղկացած է իրավական ու ազդեցության լայն համակարգերից: Կառավարման համակարգի վրա հիմնված մոտեցումները հաղթահարում են միջպետական ու վերազգային համագործակցության արգելքները և կենտրոնանում են մասնավոր և պետական հատվածների փոխհարաբերությունների վրա: Դրանք քննադատում են ակադեմիական ավանդական տարանջատումը ազգային ու միջազգային քաղաքականությունների ոլորտում[68]:

Այստեղ ամբողջ հարցը այն է, թե ինչ ենք հասկանում՝ կառավարման համակարգ ասելով, և ինչպես է այդ կառավարումը ընթանում: Բեն Ռոսամոնդը սահմանում է կառավարման համա-

[68] Marks G., Hooghe L. and Blank K. (1996), European Integration from the 1980s: State-Centric v. Multi-level Governance', in: *Journal of Common Market Studies*, Vol. 34, No. 3., pp. 346-347.

կարգը որպես «գործողությունների և ինստիտուտների ամբողջություն, որոնք հաստատում են կարգ ու կանոն»[69]:

Նոր տարածաշրջանացման տեսությունները այլևս չէին կենտրոնանում պետության, սուվերենության/ինքնիշխանության ու անվտանգության հիմնահարցերի վրա, որոնք բնութագրական էին տարածաշրջանացման առաջին ալիքի ժամանակ: Փոխարենը նոր տարածաշրջանացման մոտեցումն ուսումնասիրում է վերազգային համագործակցության ժամանակակից ձևերը համեմատական, պատմական ու բազմամակարդակ մեթոդների միջոցով: Նոր տարածաշրջանացման տեսությունների հիմքում ընկած են ոչ միայն քաղաքական ու տնտեսական գործոններ, այլ նաև սոցիալական ու մշակութային գործոններ: Ակնհայտ է, որ նոր տարածաշրջանացման դեպքում մենք գործ ունենք տարածաշրջանացման տարբեր գործընթացների ու ինստիտուցիոնալ կառուցվածքի հետ: Ինստիտուցիոնալացված և ոչ ինստիտուցիոնալացված տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները կարելի է սահմանել որպես մակրոտարածաշրջանացում ու միկրոտարածաշրջանացում, կամ, ինչպես Վոլակն է սահմանում, ֆորմալ և ոչ ֆորմալ ինտեգրացում[70]: Ֆորմալ ինտեգրումը տեղի է ունենում պետությունների մասնակցությամբ, իսկ ոչ ֆորմալը՝ սոցիալական, տնտեսական ու քաղաքական զարգացումների հիման վրա՝ հիմնվելով մասնավոր դերակատարների վրա:

Այսպիսով՝ անփոփելով կարող ենք նշել, որ տարածաշրջանացումը տեղի է ունենում սոցիալ-մշակութային բարդ գործընթացների և արտաքին գործոնների հիման վրա: Ուստի դա պետք է դիտարկվի պատմական և գլոբալ ենթատեքստում: Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձվի արտաքին գործոնների վրա, ինչպիսիք են գլոբալացումն ու միջազգային կարգը:

---

[69] Rosamond, B. (2003), New Theories of European Integration, in: Cini M. (ed.), European Union Politics, (Oxford University Press: Oxford), p. 119.

[70] Wallace, W. (1992), Introduction: The Dynamics of European Integration, in: W. Wallace (ed.), The Dynamics of European Integration (Pinter Publishers: London).

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Թվարկե՛ք և մեկնաբանե՛ք տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման փուլերը:
2. Ինչպիսի՞ տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներ գիտեք: Ո՞րն է դրանցից ամենազարգացածը և ինչու:
3. Ի՞նչը նպաստեց Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ստեղծմանն ու զարգացմանը: Ներկայումս քանի՞ անդամ ունի EFTA-ն:
4. Ե՞րբ է ստեղծվել Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիրը (NAFTA), ո՞ր երկրներն են անդամակցում, և ինչպիսի՞ն է ինտեգրացիոն խմբավորման ներկայիս անվանումը:
5. Եվրոպական միությունը զարգացման քանի՞ փուլ է ունեցել, և որո՞նք են դրանք:
6. Թվարկե՛ք Մաաստրիխտյան կոնվերգենցիայի չափանիշները: Ի՞նչ նպատակով են այդ չափանիշները սահմանվել:
7. Եվրոպական տնտեսական համայնքը (EEC) ազատ առևտրի համաձայնագիր, մաքսային միությո՞ւն է, թե՞ ընդհանուր շուկա: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
8. Եվրոպական համայնքը (EC) ազատ առևտրի համաձայնագի՞ր է, մաքսային միությո՞ւն, թե՞ ընդհանուր շուկա: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
9. Ինչպիսի՞ն է Եվրոպական միության ինստիտուցիոնալ կառուցվածքը:
10. Ինչպիսի՞ ազդեցություն կարող է ունենալ գլոբալացումը ազգային տնտեսությունների վրա: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
11. Տարածաշրջանացման քանի՞ ալիք գոյություն ունի, և ինչպե՞ս են դրանք անվանվում:

12. Որո՞նք են տարածաշրջանացման առաջին ալիքի առանձնահատկությունները:
13. Ինչո՞վ է տարբերվում տարածաշրջանացման երկրորդ ալիքը նախորդից:
14. Ներկայացրե՛ք Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) էությունն ու զարգացումը:
15. Վերլուծե՛ք և ներկայացրե՛ք ՀՀ տնտեսության բացվածության աստիճանը ժամանակի որոշակի հատվածում:

ԲԱԺԻՆ Բ. ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ

Գլուխ 7. Հյուսիսային Ամերիկայի երկրներ

7.1. ԱՄՆ տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ տնտեսական առումով (ՀՆԱ-ի ծավալով) ամենախոշոր երկիրն է և դրանով պայմանավորված՝ հաճախ ԱՄՆ-ն համարում են համաշխարհային տնտեսության «շարժիչ ուժ»: ԱՄՆ-ն նաև խոշորագույն երկիր է իր գրաված տարածքով ու բնակչության թվաքանակով: Այսպես, ԱՄՆ-ն տարածքով (9.5 մլն կմ^2) աշխարհում գրավում է 4-րդ տեղը՝ Ռուսաստանից (17.1 մլն կմ^2), Կանադայից (9.9 մլն կմ^2) ու Չինաստանից (9.6 մլն կմ^2) հետո: Բաղկացած է երեք մասից՝ մայրցամաքային, կղզային ու Ալյասկա թերակղզուց: 2022 թ. տվյալներով բնակչության թվաքանակով (332.2 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 4.3 %-ը) աշխարհում զբաղեցրել է 3-րդ տեղը՝ Հնդկաստանից (1417 մլն մարդ) ու Չինաստանից (1412 մլն մարդ) հետո:

ԱՄՆ տնտեսության զարգացման ներկայիս մակարդակը երկարատև պատմական զարգացման արդյունք է: Դրան նախ նպաստել է հումքային ռեսուրսներով ապահովվածությունը: Երկրի ընդերքը շատ հարուստ է հումքային ռեսուրսների պաշարներով (ավելի քան հարյուր տեսակի հանքային ռեսուրսներ): Արդյունահանող արդյունաբերության արտադրանքի ծավալի 90 %-ը կազմում են էներգակիրները (նավթ, քարածուխ, բնական գազ և ուրան): Այստեղ հարկ է նշել, որ ԱՄՆ-ին բաժին են ընկնում քարածխի ամենամեծ պաշարները աշխարհում (համաշխարհային

պաշարների 27.0 %-ը[71]): Երկաթեղենի արդյունահանման 75 %-ը բաժին է ընկնում երկաթաքարին ու պղնձին: Առանձնանում են նաև գունավոր և թանկարժեք մետաղների հանքավայրերը: Այս ամենի հետ մեկտեղ ազգային տնտեսության բնական ռեսուրսների պահանջարկի մոտ 50 %-ը բավարարվում է ներմուծման հաշվին: ԱՄՆ -նաղքատ է ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի մետաղների պաշարներով, ինչպիսիք են քրոմը, մանգանը, վոլֆրամը:

Բնակլիմայական մեղմ պայմանների ու բերրի հողերի առկայությունը նպաստել է բազմաճյուղ գյուղատնտեսության արդյունավետ զարգացմանը: Տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ թույլ է տալիս մշակել և ստանալ գյուղատնտեսական գրեթե բոլոր մշակաբույսերը:

ԱՄՆ-ն իր տնտեսության մասշտաբներով (ՀՆԱ-ի մակարդակ) համաշխարհային տնտեսության մեջ առաջատար է. ՀՆԱ-ի մեծությամբ համաշխարհային տնտեսության մեջ արդեն բավականին երկար ժամանակահատված հաստատուն կերպով գրավում է առաջին տեղը[72]: Այսպես, 2022 թ. տվյալներով ԱՄՆ անվանական ՀՆԱ-ն կազմել է 25.4 տրիլիոն դոլար, հաստատուն գներով հաշվարկված ՀՆԱ-ն՝ 20.9 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 62.7 հազար դոլար *(տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.1.1)*: 2001 թ. ԱՄՆ տնտեսության տնտեսական աճի տեմպը զգալի նվազեց, ինչը սկզբնական շրջանում պայմանավորված էր բարձր տեխնոլոգիաների ոլորտի ոչ ռացիոնալ զարգացմամբ[73]: Հետագայում՝ 2001 թ. սեպտեմբերի 11-ին, ահաբեկ-

---

[71] Աղբյուր՝ CIA, The World Factbook, 2011: Քարածխի պաշարներով աշխարհում երկրորդ տեղը զբաղեցնում է ՌԴ-ն (համաշխարհային պաշարների 17 %-ը), իսկ երրորդ տեղը Չինաստանը (համաշխարհային պաշարների 13 %-ը):

[72] Ըստ Համաշխարհային բանկի «World Development Indicators» վիճակագրական բազայի՝ 1960 թվականից մինչև օրս ՀՆԱ-ի ծավալով ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցնում է առաջին տեղը:

[73] 1999 թվականից սկսած՝ համակարգչային տեխնիկայի ու ծրագրային ապահովման ընկերությունների բաժնետոմսերի վաճառքի ծավալները զգալիորեն

չությունն իր բացասական ազդեցությունը թողեց ԱՄՆ տնտեսության զարգացման վրա: 2005 թ. սկսած՝ ԱՄՆ տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը ձեռք է բերել նվազման միտում: Այսպես, եթե 2004 թ. ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 3.8 %, ապա արդեն 2007 թ. այն կազմել է 1.9 % (2005 և 2006 թթ. այն կազմել է համապատասխանաբար 3.5 և 2.9 %): 2008-2009 թթ. տնտեսական աճի բացասական ցուցանիշներն արդյունք են ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի, որը հենց սկիզբ առավ ԱՄՆ-ում 2007 թ.[74]: 2020 թ. ԱՄՆ տնտեսության ՀՆԱ-ի աճի բացասական ցուցանիշը (-2.8 %) պայմանավորված էր COVID-19 համավարակով: Ավելին, ինչպես նկատում ենք COVID-19 համավարակն ավելի մեծ բացասական հետևանք է ունեցել ԱՄՆ տնտեսության վրա, քան 2007 թ. ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 7.1.1-ից*, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո ԱՄՆ-ն կարողացավ վերականգնել մինչճգնաժամային ՀՆԱ-ի մակարդակը 2010 թ., իսկ COVID-19 համավարակի բացասական ազդեցությունը՝ 2021 թ.: 2022թ. ԱՄՆ տնտեսության տնտեսական աճը կազմել է 1.9 %, ինչը բավականին լավ ցուցանիշ է զարգացած երկրի համար:

Որպես զարգացած ու համաշխարհային տնտեսության մեջ առաջատար երկիր ԱՄՆ-ում գնաճի մակարդակը միշտ եղել է համեմատաբար ցածր: Վերջին տարիներին ԱՄՆ տնտեսության

ավելացան՝ «2000 թ.» հիմնախնդրով պայմանավորված: Սկզբնական շրջանում դա հանգեցրեց այդ ոլորտում գործող ընկերությունների բաժնետոմսերի գների ավելացման: Արդեն 2000 թ. նկատվեց բաժնետոմսերի վաճառքի ծավալների նվազում, քանի որ ոլորտի ընկերությունները հիմնականում գնել էին անհրաժեշտ տեխնիկան ու ծրագրային ապահովումը: Դա հանգեցրեց բաժնետոմսերի գների կտուկ նվազման:

[74] Ֆինանսական ճգնաժամի պատճառները տե՛ս Հայրապետյան Գ., Ավետիսյան, Գևորգյան Կ., Գլոբալ ֆինանսական ճգնաժամը և դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա», ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Երևան, 2010:

մեջ նկատվել են գնաճի մակարդակի անհամեմատ բարձր ցուցանիշներ: Այսպես, 2022 թ. գնաճի մակարդակը կազմել է 8 %, ինչը ամենաբարձր ցուցանիշն է ամբողջ ժամանակահատվածի համար: ԱՄՆ համաշխարհային տնտեսության մեջ միշտ աչքի է ընկել իր համեմատաբար ցածր գործազրկության մակարդակով: 2007 թ. սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով զգալիորեն ավելացել էր գործազրկության մակարդակը ԱՄՆ տնտեսության մեջ՝ 2010 թվականին կազմելով 9.6 %: 2011 թվականից սկսած՝ գործազրկության մակարդակը ԱՄՆ տնտեսության մեջ ձեռք է բերել նվազման միտում՝ 2019 թ. կազմելով 3.7 % (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.1.1*): 2020 թ., COVID-19 համավարակով պայմանավորված, ԱՄՆ տնտեսության մեջ կրկին գրանցվել է բարձր գործազրկության մակարդակ՝ կազմելով 8.1 %: 2022թ. տվյալներով գործազրկության մակարդակը ԱՄՆ տնտեսության մեջ կազմել է 3.7 %: Այսինքն՝ ամփոփելով կարող ենք նշել, որ ԱՄՆ-ն գործազրկության ցածր մակարդակ ունեցող, զարգացած երկիր է:

Ընդհանուր առմամբ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը զգալի կառուցվածքային փոփոխություններ առաջացրեց ԱՄՆ տնտեսության մեջ: Այսպես, եթե 2004-2008 թթ. ընկած ժամանակաշրջանում առևտրային հաշվեկշռի պակասուրդն ունեցել է աճի միտում՝ 2008 թ. կազմելով -864 մլրդ դոլար, ապա ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով առևտրային հաշվեկշռի պակասուրդը զգալիորեն նվազեց՝ 2009 թ. կազմելով 545 մլրդ դոլար: Առևտրային հաշվեկշռի պակասուրդի նման նվազման պատճառ հանդիսացավ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների կտրուկ կրճատումը: 2010 թվականից սկսած՝ կրկին նկատվել է առևտրային հաշվեկշռի պակա-

սուրդի ավելացման միտում՝ 2022 թ. կազմելով -1,313 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 5.1 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.1.4*)[75]:

ԱՄՆ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը 2022թ. կազմել է -971.5 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի -3.8 %-ը: Վերջին տասնամյակում, հատկապես ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո, այս ցուցանիշը ձեռք էր բերել նվազման միտում: Այսպես, համեմատության համար նշենք, որ մինչճգնաժամային հատվածում (օրինակ՝ 2007 թ.) այս ցուցանիշը կազմել է -718.6 մլրդ դոլար (ՀՆԱ-ի -5.0 %-ը), այնուհետև՝ 2010 թ՝. -441.9 մլրդ դոլար (ՀՆԱ-ի -3.0 %-ը), իսկ 2013 թ.՝ -366.4 մլրդ դոլար (ՀՆԱ-ի -2.2 %-ը)[76]: 2020 թվականից ի վեր ԱՄՆ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը սկսել է աճել:

2022 թ. տվյալներով ԱՄՆ պետական պարտքը (ներքին ու արտաքին) կազմել է 32.7 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 129 %-ը: Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի մեծությամբ ԱՄՆ-ն աշխարհում զբաղեցրել է 11-րդ տեղը: Արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 24.5 տրիլիոն դոլար (ՀՆԱ-ի 96.5 %-ը): Արտաքին պարտքի (պետական և մասնավոր) ցուցանիշի բացարձակ մեծությամբ ԱՄՆ-ն աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ ԱՄՆ-ում զգալիորեն աճել են պետական ու արտաքին պարտքի ցուցանիշները: 2007 թ. տվյալներով ԱՄՆ պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 55.7 %-ը, իսկ արտաքին պարտքը՝ 12.2 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 84.7 %-ը: Ինչպես նկատում ենք, զգալիորեն աճել է հատկապես ԱՄՆ պետական պարտքի ցուցանիշը:

---

[75] Համեմատության համար նշենք, որ ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -3.3 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 16.9 %-ը: Ապրանքների արտահանումը 2022 թ. կազմել է 5.3 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 8.6 մլրդ դոլար:

[76] ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկը 2022 թ. կազմել է 150.1 մլն դոլար կամ ՀՆԱ-ի 0.7 %-ը: Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը մինչև 2022 թվականը միշտ եղել է պակասուրդային: Օրինակ՝ 2021 թ. այն կազմել է -482 մլն դոլար կամ ՀՆԱ-ի -3.5 %-ը:

ԱՄՆ շուկան ամենաճկուն և ամենամրցակցային շուկաներից մեկն է աշխարհում և Գլոբալ մրցունակության ինդեքսում միշտ զբաղեցրել է առաջատար դիրքեր: Այսպես, ըստ Գլոբալ մրցունակության զեկույցի (Global Competitiveness Report)՝ 2019 թ. ԱՄՆ-ն իր վարկանիշով աշխարհում գրավել է երկրորդ տեղը՝ Սինգապուրից հետո[77]: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո ԱՄՆ-ն կորցրեց իր առաջատար դիրքն այս ինդեքսում: Այսպես, 2008 թ. տվյալներով ԱՄՆ-ն այս ինդեքսով աշխարհում գրավում էր առաջին տեղը, 2012 թ.՝ հինգերորդ տեղը՝ Շվեյցարիայից, Սինգապուրից, Շվեդիայից ու Ֆինլանդիայից հետո, իսկ 2016 թ.՝ երրորդ տեղը՝ Շվեյցարիայից ու Սինգապուրից հետո[78]: Ինչպես նկատում ենք, վերջին տարիներին ԱՄՆ-ն ակտիվորեն բարելավել է իր դիրքն այս ինդեքսում:

ԱՄՆ տնտեսությունը միշտ հանդիսացել է գրավիչ ՕՈՒՆ-երի համար: Այսպես, 1997 թ.՝ Հարավարևելյան Ասիայի, Ռուսաստանի ու Լատինական Ամերիկայի արժութաֆինանսական ճգնաժամերից հետո, միջազգային ներդրողների հետաքրքրությունը, ինչը նախկինում կենտրոնացված էր նշված տարածաշրջանների կամ երկրների վրա, մասամբ տեղափոխվեց անդրատլանտյան և ԵՄ գոտի: Մյուս կողմից՝ վերջին շրջանում ՕՈՒՆ-ի կրճատումը ԱՄՆ տնտեսության մեջ պայմանավորված էր այն հանգամանքով, որ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի արդյունքում, ինչը հենց սկիզբ առավ 2007 թ. ԱՄՆ-ում, օտարերկրյա ներդրումները կրճատվեցին ոչ միայն ԱՄՆ տնտեսության մեջ, այլ նաև ամբողջ համաշխարհային տնտեսության մակարդակով: Ներկայումս ՕՈՒՆ-ի ներհոսքի ծավալով ԱՄՆ

[77] Global Competitiveness Report, 2019: 2019 թվականից ի վեր Գլոբալ մրցունակության զեկույցն այլևս երկրների համար չի հաշվարկվում: Փոխարենը կարող եք նայել Աշխարհի մրցունակության վարկանիշը (World Compettivnes Ranking):

[78] Ըստ այս ինդեքսի՝ Հայաստանը վերջին տարիներին նկատելիորեն բարելավել է իր դիրքերը՝ 2019 թ. աշխարհում զբաղեցնելով 69-րդ տեղը: Համեմատության համար նշենք, որ 2012 թ. տվյալներով, ըստ այս ինդեքսի, Հայաստանը զբաղեցնում էր 92-րդ տեղը:

առաջատար է աշխարհում: Այսպես, 2022 թ. տվյալներով ՕՈՒՆ-ի ներհոսքի ծավալով (388 մլրդ դոլար) ԱՄՆ աշխարհում զբաղեցրել է առաջին տեղը, երկրորդ տեղը՝ Չինաստանը (180.2 մլրդ դոլար), երրորդ տեղը՝ Սինգապուրը (140.1 մլրդ դոլար), չորրորդ տեղը՝ Հոնկոնգը (120.1 մլրդ դոլար), իսկ հինգերորդ տեղը՝ Ֆրանսիան (105.4 մլրդ դոլար):

1990-ական թթ. կեսերից սկսած մինչև 2005 թվականը ԱՄՆ տնտեսության տնտեսական աճը զգալիորեն գերազանցում էր OECD անդամ երկրների միջին մակարդակը, մինչդեռ նախորդ տասնամյակում տնտեսական աճի տեմպերը համընկնում էին (*տե՛ս Աղյուսակ 7.1.1*): Սակայն, ինչպես մենք արդեն նշեցինք, սկսած 2005 թվականից՝ ԱՄՆ տնտեսության մեջ նկատվել է ՀՆԱ-ի աճի տեմպի նվազման միտում: Ըստ վերլուծությունների՝ որպես տնտեսական աճի նվազման հիմնական աղբյուր է դիտարկվում զբաղվածության աճի տեմպի նվազումը[79]: Ըստ գնահատումների զբաղվածության աճի տեմպը ներկայումս կազմում է տարեկան 0.7 %: Համեմատության համար նշենք, որ 1980-1990-ական թթ. այդ ցուցանիշը կազմում էր 1.75 %:

Աղյուսակ 7.1.1. ԱՄՆ մակրոտնտեսական ցուցանիշների աճի տեմպերի համեմատությունը OECD անդամ երկրների համանման միջին ցուցանիշների հետ

	ԱՄՆ		OECD	
	1985-1995	1995-2005	1985-1995	1995-2005
Իրական ՀՆԱ	2.9	3.2	2.9	2.4
Մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ	1.9	2.1	2.4	1.8
Աշխատուժի արտադրողականություն	1.3	1.9	1.5	1.5

Աղբյուր՝ OECD, Labour Force Statistics and Economic Outlook database:

[79] OECD Economic Surveys: United State, V2007/9, 2007:

Բնակչությունն ու աշխատանքային ռեսուրսները: Ամերիկյան ազգը ձևավորվել է զանգվածային ներգաղթի շնորհիվ: Օտարերկրացիներին հրապուրում և ձգում էին ազատ, չյուրացված տարածքները, բարձր աշխատավարձը, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական «ազատությունը»: Բնակչությունը պատկանում է վերարտադրության երրորդ տիպին. թե՛ ծնելիության և թե՛ մահացության մակարդակը մեծ չեն[80]: ԱՄՆ բնակչության բնական աճը 2022 թ. տվյալներով կազմել է 0.37 %: Համեմատության համար նշենք, որ 1980-1990-ական թթ. այս ցուցանիշը կազմել է 1.1-1.3 %: Ինչպես նկատում ենք, ԱՄՆ-ում բնակչության բնական աճի տեմպն ունի նվազման միտում: Բնակչության բնական աճի նման ցածր մակարդակի պայմաններում բնակչության թվաքանակի աճի ապահովման գործում բավականին մեծ է ներգաղթի դերը: Այսպես, 2022 թ. տվյալներով ամբողջ բնակչության մոտ 14.5 %-ը կազմում էին ներգաղթածները: XX դարավերջին ԱՄՆ բնակչությունը, ըստ ռասայական հատկանիշների, բաժանվում է 4 հիմնական խմբի.

1. սպիտակներ, որոնք կազմում են ամբողջ բնակչության 74 %-ը: Տարբեր ժամանակներում եկել են Իռլանդիայից,

[80] Ժողովրդագրական ցուցանիշների փոփոխմանը համապատասխան՝ ընդունված է առանձնացնել բնակչության վերարտադրության երեք հիմնական տիպ: Այսպես, III տիպը հաճախ անվանում են «ժամանակակից» կամ «ռացիոնալ» տիպ. առկա է արդյունաբերական հասարակություններում: Այս տիպին բնութագրական է ծնելության ցածր և կյանքի միջին տևողության բարձր մակարդակը: Այս հասարակություններում մահացության մակարդակի վրա հիմնականում ազդում է տարեց մարդկանց մասնաբաժինը: II տիպը հաճախ անվանում են «ավանդական» տիպ, և սա գոյություն ունի ագրարային կամ արդյունաբերացման սկզբնական փուլում գտնվող հասարակություններում: Այս տիպի հիմնական առանձնահատկությունն այն է, որ միաժամանակ բարձր են և՛ ծնելիության, և՛ մահացության մակարդակները: Այսինքն՝ կյանքի միջին տևողությունը բավական ցածր է: I տիպը բնակչության վերարտադրության նախաձևն է ու գոյություն է ունեցել նախնադարյան հասարակություններում և ներկայումս շատ հազվադեպ է հանդիպում, օրինակ՝ Ամազոն գետի շրջակայքում բնակվող որոշ ցեղերի մոտ: Այս ազգերի մոտ մահացությունն այնքան բարձր է, որ նրանց թիվը կրճատվում է:

Շոտլանդիայից, Գերմանիայից ու Իտալիայից: Մեծ է նաև հրեաների, ռուսների, լեհերի, ուկրաինացիների և հայերի սփյուռքը,

2. աֆրիկյան ծագմամբ ամերիկացիներ, որոնք կազմում են ամբողջ բնակչության 12 %-ը (սրանք նախկին ստրուկների սերունդներն են),
3. լատինամերիկացիներ, որոնց թիվը գնալով աճում է,
4. Ասիայից եկածներ, որոնց թիվը նույնպես աճում է:

Չնայած պետական լեզուն անգլերենն է, սակայն 30 մլն ավելի մարդ գործածում է իր մայրենի լեզուն (իսպաներեն, չինարեն, լեհերեն, հայերեն և այլն):

ԱՄՆ-ն աշխատանքային ռեսուրսներով ապահովված երկիր է, իսկ աշխատանքային ռեսուրսներում մեծ տեղ են զբաղեցնում բարձր որակավորում ունեցող կադրերը: Այսպես, 2022 թ. տվյալներով ԱՄՆ աշխատուժը/տնտեսապես ակտիվ բնակչությունը (169 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 62.2 %-ը[81]: 2021 թ. տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 1.7 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 19.2 %-ը՝ արդյունաբերության, իսկ 79.2 %-ը՝ ծառայությունների ոլորտում (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.1.2*)[82]: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 7.1.2*-ից, 2003-2021 թթ. ընկած ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտում ներառված տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը նվազել է հօգուտ ծառայությունների ոլորտում ներառված տնտեսապես ակտիվ բնակչության:

---

[81] Աշխատուժի/տնտեսապես ակտիվ բնակչություն մեջ ներառվում են զբաղվածներն ու գործազուրկները, որոնք ստեղծում են աշխատուժի շուկան ապրանքների ու ծառայությունների արտադրության համար:

[82] ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2022 թ. կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 66.8 %-ը: Վերջին մեկուկես տասնամյակում ՀՀ-ին հաջողվել է մոտ 10 %-ով բարելավել այս ցուցանիշը: Տնտեսապես ակտիվ բնակչության 24.0 %-ը ներգրավված է գյուղատնտեսության, 24.7 %-ը՝ արդյունաբերության, 51.2 %-ը՝ ծառայությունների ոլորտներում:

ԱՄՆ աշխատուժի շուկան աչքի է ընկնում իր բարձր մոբիլությամբ/շարժունությամբ: ԱՄՆ-ում տնտեսապես ակտիվ բնակչությունը տարեկան միջինում հինգ անգամ փոխում է իր աշխատանքը: ԱՄՆ աշխատուժի շուկայում ներգրավված են նաև մեծ թվով օտարերկրացիներ, որոնք ինչպես եվրոպական ու ասիական երկրների մտավոր ներուժ են, այնպես էլ ոչ բարձր որակավորում ունեցող աշխատուժ: Մեծ պահանջարկ են վայելում բարձրագույն կրթությամբ ու բարձր վարձատրություն ստացող մասնագետները (գիտնականներ, ինժեներներ, կառավարիչներ, ծրագրավորողներ, բժիշկներ և այլն), ինչպես նաև ցածր որակավորում ունեցող աշխատուժը, որը ներառված է որպես սպասարկող անձնակազմ առևտրում, հանրային սննդի ապահովման գործընթացում և այլն: Այսպիսի միտումն իր բացասական հետևանքն է թողնում վերը նշված երկու խմբերի միջև աշխատավարձերի ու կենսամակարդակի տարբերության առաջացման գործում:

ԱՄՆ-ում առկա է նաև աշխատուժի «սև շուկան», որտեղ հիմնականում ներգրավված են Ասիայի և Լատինական Ամերիկայի ոչ լեգալ էմիգրանտները: ԱՄՆ-ում բավականին ցածր է գործազրկության մակարդակը: 2009 և 2020 թթ. գործազրկության համեմատաբար բարձր մակարդակները, որոնք կազմել են համապատասխանաբար 9.3 ու 8.1 %, արդյունք էին ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի և COVID-19 համավարակի: 2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակը ԱՄՆ-ում կազմել է 3.6 %: Ինչպես նկատում ենք, ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ աչքի է ընկնում իր գործազրկության ցածր մակարդակով:

ԱՄՆ աշխատուժի շուկայի առանձնահատկությունն այն է, որ զարգացած երկրների շարքում նրան բաժին է ընկնում ամենաշատ աշխատանքային տեղաշարժը, և միևնույն ժամանակ առկա է աշխատուժի բարձր արտադրողականություն: Աշխատուժի միջազգային կազմակերպության (International Labor Organization,

ILO) ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development, OECD) տվյալներով 2022 թ. ամերիկացիները մեկ տարվա ընթացքում աշխատել են միջինում 1810 ժամ, ինչը 203 ժամով գերազանցում է ճապոնացիների (1607 ժամ), 279 ժամով՝ անգլիացիների (1531), 299 ժամով՝ ֆրանսիացիների (1511 ժամ), 470 ժամով՝ գերմանացիների աշխատանքային ժամերը (1340 ժամ)[83]:

Տնտեսության զարգացման առանձնահատկությունները XX դարում: ԱՄՆ տնտեսական առումով վերածվեց համաշխարհային առաջնորդի XX դարի կեսերին, երբ հենց ինքը պատմությունը փոփոխեց ուժերի դասավորվածությունը համաշխարհային տնտեսության մեջ: ԱՄՆ առաջատար դիրքի հիմնական պատճառներից մեկը հանդիսացան համաշխարհային պատերազմները, որոնք զգալիորեն քայքայեցին եվրոպական երկրների տնտեսական ներուժը: ԱՄՆ հիմնական մրցակիցները համաշխարհային շուկայում առաջնորդության համար պայքարում պատերազմից դուրս եկան տնտեսապես քայքայված տնտեսությամբ, իսկ ԱՄՆ-ն ազատ շուկայական հարաբերությունների ու ժամանակին տնտեսության մեջ կառավարության միջամտության շնորհիվ գրավեց առաջնային դիրք:

Նոր տնտեսագիտական ուսմունքին (Քեյնսյան տնտեսագիտություն) անցում կատարելով՝ ԱՄՆ-ին հաջողվեց նաև վերակառուցել իր տնտեսությունը Տնտեսական մեծ ճգնաժամից հետո (1929-1933 թթ.): Ճգնաժամից դուրս գալու համար նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտն առաջարկեց իր հանրահայտ «Նոր կուրսը», որը ներառում էր ֆինանսական օրենքների, տնտեսության կառուցվածքային վերակառուցման, սոցիալական

[83] Աղբյուր՝ www.ilo.org; www.oecd.org, Աշխատուժի միջազգային կազմակերպության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության պաշտոնական կայքէջեր:

օրենքների և տարածաշրջանային քաղաքականության վերափոխումներ:

Ֆինանսական օրենքներ: Այստեղ հարկ է առանձնացնել «Բանկային գործունեության մասին օրենքը», համաձայն որի՝ երկրի բոլոր բանկերի գործունեությունը վերահսկվում էր, իսկ մասնավոր ավանդները երաշխավորվում էին պետության կողմից: Նոր կանոնների համաձայն՝ բանկերին արգելվում էր իրականացնել օրենքին հակասող գործունեություն՝ ձեռք բերել ու պահել արժեթղթեր, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Փոփոխություններ մտցվեցին արժեթղթերի շրջանառության ոլորտում: Այդ նպատակով ընդունվեց «Բորսայական գործառնությունների և արժեթղթերի առևտրի կանոնների մասին օրենքը»:

Տնտեսության կառուցվածքային վերակառուցում: Նոր կուրսի կիրառմամբ նախապատվությունը տրվեց ազգային արդյունաբերության զարգացմանը: Պետպատվերով արտասահմանյան ապրանքների գնման համար գոյություն ունեին արգելքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արտասահմանյան ապրանքի գինն առնվազն երկու անգամ ցածր էր տեղականից, իսկ որակը՝ բարձր դրա ամերիկյան նմանակից:

Փոփոխություններ կատարվեցին նաև գյուղատնտեսական քաղաքականության մեջ: Գյուղատնտեսության հիմնական խնդիրը գերարտադրությունն էր՝ ներքին շուկայում պարենամթերքի ավելցուկը: Այդ պատճառով սահմանափակվեց գյուղատնտեսական արտադրանքի թողարկումը: Բացի դրանից՝ անհրաժեշտ էր ձևավորել ագրոարդյունաբերական համալիրը, որը կբարձրացներ այդ ոլորտի արդյունավետությունը[84]:

---

[84] Ագրոարդյունաբերական համալիրը գյուղատնտեսական ձեռնարկությունների/ֆերմաների և արդյունաբերության կազմակերպչական ու առևտրային կազմակերպություն է: Այսինքն՝ այս համալիրը գյուղատնտեսական և արդյունաբերական այնպիսի ձեռնարկությունների մեկ միասնական համակարգ է, որոնք փոխկապակցված են կայուն արտադրական ու առևտրային կապերով:

Սոցիալական օրենքներ: Հասարակական աշխատանքների կազմակերպման համար սոցիալապես անապահովների զբաղվածության նպատակով մոտ 4 մլն մարդու տրամադրվեց ուղղակի ֆինանսական օգնություն 5 մլրդ դոլարի չափով: Նոր կուրսի շրջանակում գործում էին մոտ 400 հազ. տարբեր ծրագրեր, և կառուցվեցին մոտ հինգ հարյուր նոր օդանավակայաններ, ճանապարհներ, դպրոցներ ու ենթակառուցվածքի այլ օբյեկտներ:

Երիտասարդությանն աշխատանքով ապահովելու համար ընդունվեց «Աշխատանքային ճամբարների օրենքը»: Աշխատանքային ճամբարները նախատեսված էին՝ հսկելու համար արդյունաբերական օբյեկտներն ու տրանսպորտային ենթակառուցվածքը, անցկացնելու բնապահպանական միջոցառումներ: Այս օրենքի ընդունումից հետո՝ առաջին երեք ամսում, արդեն ստեղծվել էր 1300 ճամբար, որոնցում ներառված էին 300 հազ. երիտասարդ գործազուրկներ: 1933-1940 թթ. աշխատանքային ճամբարներում ընդգրկվեց մոտ 2.5 մլն մարդ:

Գների մակարդակը վերահսկելու համար ստեղծվեց Պետական ընկերություն, որը պետք է կառավարեր կոմունալ ծառայությունների ոլորտում բոլոր մենաշնորհների գործունեությունը: Բնական մենաշնորհներն այլևս հնարավորություն չունեին իրենց պայմանները թելադրելու հասարակությանը:

Տարածաշրջանային քաղաքականություն: Երկրի ճգնաժամային տարածաշրջանների տնտեսական իրավիճակը կարգավորելու համար դրանց համար մշակվեցին հատուկ զարգացման ծրագրեր, որոնք ներառում էին դաշնային ֆինանսավորում ու կառավարում: Մասնավորապես, դաշնային կառավարմամբ այդպիսի գոտի ստեղծվեց Թեննեսի գետի հովտում, որը մինչև օրս դեռ գոյություն ունի:

Համաշխարհային տնտեսության մեջ ԱՄՆ առաջատար դիրքի հիմնավորումն ու «ԱՄՆ երկրորդ տնտեսությունը»: Համաշխարհային տնտեսության մեջ ԱՄՆ առաջատար դիրքը պայմա-

նավորված է հիմնականում այլ երկրների նկատմամբ իր գերազանցությամբ՝ շուկայի տարողունակությամբ, գիտատեխնիկական ներուժով, այլ երկրների հետ ամուր և բազմակողմանի միջազգային տնտեսական կապերի համակարգով (առևտուր, ներդրումներ, բանկային կապիտալ և այլն):

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ում հայտնվեցին նաև ֆինանսական զգալի ակտիվներ, որոնք հիմնականում եվրոպական երկրների ոսկու պաշարներն էին: Դրանք մինչպատերազմյան և պատերազմի տարիներին տեղափոխվել էին Ֆորտ-Նոքսի դաշնային պահոց: Հնարավորություն ունենալով ազգային արժույթը ծածկել ոսկով, տիրապետելով հզոր տնտեսության, որը չէր տուժել պատերազմներից՝ ԱՄՆ-ն Բրետտոն-Վուդսյան արժութային համակարգում գլխավոր դիրք գրավեց:

Աջակցելով հետպատերազմյան Եվրոպայի տնտեսության վերակառուցմանը՝ ԱՄՆ-ն Մարշալի պլանի շրջանակում ֆինանսական զգալի օգնություն ցույց տվեց եվրոպական երկրներին: Բացի դրանից՝ ԱՄՆ-ի կողմից Ճապոնիային տրամադրվող տնտեսական ու խորհրդատվական օգնությունը բավական մեծ առումով կանխորոշեց Ճապոնիայի տնտեսական զարգացման հաջողությունը: Ամերիկյան ներդրումները մեծ ծավալներով սկսեցին ներթափանցել Արևմտյան Եվրոպա ու Ճապոնիա՝ ձևավորելով «ԱՄՆ երկրորդ տնտեսությունը»: Վերազգային ընկերություններից ստացված եկամուտները կարևոր գործոն են ԱՄՆ տնտեսությունը զարգացնելու համար, քանի որ դրանցով ֆինանսավորվում է նաև սահմաններից դուրս գործունեությունը: Բացի դրանից՝ դրանք միջազգային համագործակցության ու դրա զարգացման հիմնական աղբյուր են: Այսպիսով՝ ամերիկյան վերազգային ընկերությունների ուղղակի մեծածավալ ներդրումների հիման վրա ձևավորվել և շարունակում է ձևավորվել միջազգային արտադրություն, որով էլ միավորվում է ԱՄՆ տնտեսությունն այլ երկրների

տնտեսությունների հետ: Հենց այդ տնտեսական ներդրումների ամբողջությունը տնտեսագիտական գրականության մեջ ընդունված է անվանել «ԱՄՆ երկրորդ տնտեսություն»: Ինչո՞ւ «երկրորդ տնտեսություն», քանի որ ազգային տնտեսությունն այդ ներդրումների շնորհիվ այնպես է փոխկապակցվել այլ երկրների հետ, որ տեսականորեն չի կարող գոյատևել առանց դրա: Դեռևս 1980-ական թթ. կեսին ամերիկյան կապիտալով վերահսկվող 20 հազ. արտասահմանյան ձեռնարկություններում զբաղված էր մոտ 6.5 մլն աշխատող, ինչը կազմում էր ամբողջ աշխատուժի 1/4-ը: Ներկայումս «ԱՄՆ երկրորդ տնտեսության» ընկերությունների կողմից իրականացվող վաճառքի ընդհանուր ծավալները կազմում են ԱՄՆ ՀՆԱ-ի մոտ 32 %-ը: Իր արտադրական ու ֆինանսական ներուժով «ԱՄՆ երկրորդ տնտեսությունն» ամերիկյան ընկերությունների արտասահմանյան դուստր ձեռնարկությունների ու մասնաճյուղերի հիման վրա չի զիջում բազմաթիվ առաջատար երկրների ազգային տնտեսություններին: Մյուս կողմից՝ ձևավորվել է «ԱՄՆ-զարգացող երկրներ-ԱՄՆ բանաձևը»: Ներկայումս ԱՄՆ ապրանքաշրջանառության ավելի քան 10 %-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին:

Այսպիսով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ն միանշանակորեն վերածվեց համաշխարհային տնտեսական ու քաղաքական առաջնորդի: Սակայն Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի տնտեսությունների վերականգնմամբ դրությունը փոխվեց: Ամերիկյան ապրանքների մրցունակությունը սկսեց նվազել, արժեզրկվեց նաև դոլարի փոխարժեքը եվրոպական երկրների ու Ճապոնիայի արժույթների նկատմամբ: Բրետտոն-Վուդսյան արժութային համակարգի շրջանակում 1 ԱՄՆ դոլարին համապատասխանում էր 0.888 գրամ ոսկի: Քանի որ փոխանակման այդ մակարդակը 1946 թ. մնացել էր անփոփոխ, ապա, փաստորեն, դոլարի փոխարժեքի արժեզրկումն այլ արժույթների հետ համեմատությամբ նշանակում էր, որ արդեն

անհրաժեշտ են ավելի քիչ եվրոպական երկրների արժույթներ կամ ճապոնական իեն՝ մեկ միավոր ԱՄՆ դոլար գնելու համար: Հետագայում այդ դոլարները կարող էին փոխարինվել ոսկով: Այսպիսով՝ դոլարի քանակությունն արտասահմանցիների մոտ աճում էր, իսկ ԱՄՆ ոսկու պաշարները՝ նվազում: ԱՄՆ-ն հայտնվեց այնպիսի մի իրավիճակում, երբ արտասահմանցիների մոտ գտնվող 50 մլրդ դոլարը չէր կարող ծածկվել 10 մլրդ դոլար արժողությամբ ԱՄՆ ոսկու պաշարներով: Այդ պատճառով 1971 թ. դոլարի ոսկով ապահովվածության պարիտետը իջեցվեց, իսկ 1973 թ. դոլարի ոսկով փոխանակումը վերջնականապես վերացվեց:

Եվրոպական երկրների և Ճապոնիայի արտադրական հնարավորությունների աճը զգալի նվազեցրեց ԱՄՆ դերը համաշխարհային տնտեսության մեջ. մոտ 1/3-ով նվազեց ԱՄՆ բաժինը համաշխարհային արտադրության մեջ: ԱՄՆ կապիտալի համաշխարհային արտահանման բաժինը սկսեց նվազել: Մոտ երեք անգամ նվազեց ԱՄՆ ընկերությունների բաժինը համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումներում: Արևմտյան Եվրոպայից ու Ճապոնիայից արտահանումը դեպի ԱՄՆ աճեց երկու անգամ, իսկ ամերիկյան արտահանումը դեպի Եվրոպա և Ճապոնիա սկսեց կրճատվել: 1980-ական թթ. սկզբին ԱՄՆ ներքին շուկան արդեն հեղեղված էր արտասահմանյան մրցունակ ապրանքներով, իսկ ամերիկյան ապրանքները ավելի մեծ դժվարությամբ էին գտնում իրենց արտասահմանյան սպառողներին: ԱՄՆ դիրքերը համաշխարհային տնտեսության մեջ և արտաքին առևտրում զգալի վատթարացան, առևտրային հաշվեկշռի պակասուրդը 1980-ական թթ. կեսերին կազմեց -150 մլրդ դոլար:

Համաշխարհային տնտեսության մեջ առաջատար դիրքերը կորցնելու վտանգի պատճառով ԱՄՆ-ն ստիպված եղավ ձեռնարկել համապատասխան միջոցներ: Համաշխարհային տնտեսության մեջ բարձր տեխնոլոգիական ապրանքների գծով դիրքերը

ամրապնդելու համար զգալի ավելացվեցին գիտահետազոտական աշխատանքները, արագացվեց արդյունաբերության ճյուղային կառուցվածքի վերակառուցումը՝ հօգուտ գիտատար ոլորտների:

ԱՄՆ-ն հատկապես առանձնանում է իր գիտատեխնիկական հզոր ներուժով, որն էլ համաշխարհային տնտեսության մեջ մրցունակության ու տնտեսական զարգացման ամենավճռորոշ գործոններից է: Անընդմեջ աճում են գիտահետազոտական աշխատանքներին հատկացված ծախսերը: Ընդ որում՝ հիմնական գիտական ուսումնասիրությունների 60 %-ը կենտրոնացված է բուհերում, որոնց թիվը մոտ երեք հազար է: Դրանց թվում հատուկ դեր է խաղում 156 համալսարան, որոնք հագեցած են ժամանակակից տեխնիկայով և ունեն բարձրորակ կադրեր: Իր հերթին առաջնային են դրանցից 20-ը, որոնցում կատարվում են շատ մեծ ծավալով գիտական հետազոտություններ (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը, Ստենֆորդի, Պրինստոնի, Հարվարդի համալսարանները և ուսումնական այլ հաստատություններ):

Կիրառական, փորձակոնստրուկտորական աշխատանքների ուսումնասիրություններն հիմնականում իրականացվում են արդյունաբերության տարբեր ոլորտներում: Մեծ նշանակություն ունի գիտության և դրանում ստացված արդյունքներն արտադրության մեջ կիրառման համատեղումը: Անընդհատ ստեղծվում են տարածքային գիտահետազոտական համալիրներ (տեխնոպարկեր, տեխնոպոլիսներ), որոնց թիվը ներկայումս անցնում է 100-ից:

Այսպիսով՝ ԱՄՆ-ն իր գիտատեխնիկական զարգացմամբ դարձել է համաշխարհային տնտեսության «կարգավորիչ ու շարժիչ» ուժը: Սակայն դեռևս չեն լուծվել մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնցից են եկամուտների անհավասարաչափ բաշխվածությունը, հարաբերականորեն աղքատության մակարդակի պահպանումը, առողջապահական համակարգում տեղ գտած թերությունները և այլն:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: ԱՄՆ տնտեսության կառուցվածքն աչքի է ընկնում իր հետարդյունաբերական բնութագրիչներով: 2021 թ. տվյալներով ամբողջ ՀՆԱ-ի 1.0 %-ը ապահովում էր գյուղատնտեսությունը, 17.9 %-ը՝ արդյունաբերությունը, իսկ մնացածը՝ 77.6 %-ը, բաժին էր ընկնում ոչ նյութական արտադրությանը (ծառայությունների ոլորտ) (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.1.3*)[85]: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 7.1.3*-ից, ծառայությունների ոլորտի մասնաբաժնի ավելացումը հիմնականում տեղի է ունեցել արդյունաբերության ոլորտի մասնաբաժնի նվազման հաշվին: ՀՆԱ-ում ծառայությունների ոլորտի բաժնով ԱՄՆ-ին գերազանցում են, օրինակ, Հոնկոնգը (2021 թ. տվյալներով՝ ՀՆԱ-ի 89.6 %-ը), Լյուքսեմբուրգը (2021 թ. տվյալներով՝ ՀՆԱ-ի 77.6 %-ը), որոնք, ելնելով իրենց տնտեսության զարգացման առանձնահատկություններից ու մրցակցային առավելություններից, մասնագիտանում են ծառայությունների ոլորտում: Սակայն հարկ է նշել, որ վերը նշված երկրները ծառայությունների համաշխարհային շուկայում իրենց փոքր մասնաբաժնով չեն կարող մրցակցել ԱՄՆ-ի հետ: Ամերիկյան տնտեսության առանձնահատկությունն այն զարմանալի փաստն է, որ բացառիկ դինամիկ են զարգանում միայն առանձին տարածաշրջաններ: Այսպես, Կալիֆոռնիան այն տարածաշրջաններից է, որտեղ կենտրոնացված են արագ զարգացող ընկերությունները: Այստեղ բնակչության 40 %-ը սնվելուն շատ ժամանակ չի հատկացնում, սակայն այստեղ են որոշվում տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները:

Գյուղատնտեսություն: ԱՄՆ գյուղատնտեսության մեջ զգալի զարգացած է ագրոարդյունաբերական համալիրը, որտեղ արդյունավետորեն համակցվում են գիտությունը, գյուղատնտեսությունը,

[85] ՀՀ-ում 2022 թ. գյուղատնտեսությանը բաժին է ընկել ՀՆԱ-ի 10.3 %-ը, արդյունաբերությանը՝ 25.2 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 55.5 %-ը: Համեմատության համար նշենք, որ 2012 թ. գյուղատնտեսությանը բաժին է ընկել 18 %-ը, արդյունաբերությանը՝ 27.8 %, իսկ ծառայությունների ոլորտին՝ 45.7 %-ը:

տրանսպորտն ու վերամշակվող գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը: ԱՄՆ գյուղատնտեսական մթերքների խոշորագույն արտադրող է: Դրան բաժին է ընկնում հացահատիկի համաշխարհային արտադրության 12 %-ը, եգիպտացորենի 46 %-ը, սոյայի 52 %-ը, բամբակի 21 %-ը, մսամթերքի 17 %-ը և այլն: Հացահատիկային կուլտուրաների արտահանման ծավալով ԱՄՆ-ն աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը: 2022 թ. տվյալներով գյուղատնտեսության ոլորտում ներգրաված մեկ աշխատողին բաժին է ընկել 100,000 դոլարի արդյունք[86]:

Արդյունաբերություն: ԱՄՆ արդյունաբերությունն աչքի է ընկնում գիտատար ճյուղերի զարգացմամբ: Արդյունաբերության մեջ կատարվող ներդրումների մոտ կեսը բաժին է ընկնում համակարգչային տեխնիկայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին: Արտադրության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրումը զգալի նվազեցրել է արտադրության ծախքերը և բարձրացրել աշխատանքի արտադրողականությունը: ԱՄՆ-ում զարգացած են արդյունաբերության բոլոր ոլորտները՝ սկսած ավանդական (արդյունահանող, մետաղագործական, նավթաքիմիական) արդյունաբերությունից մինչև ժամանակակից արդյունաբերությունը (միկրոէլեկտրոնիկա, նոր նյութերի արտադրություն և այլն): ԱՄՆ արդյունաբերության մեջ բավականին մեծ դեր ունի վերամշակող արդյունաբերությունը: Այսպես, եթե 2021 թ. ամբողջ արդյունաբերությանը բաժին է ընկել ՀՆԱ-ի 17.9 %-ը, ապա վերամշակող արդյունաբերությանը բաժին է ընկել ՀՆԱ-ի 11.0 %-ը: 2022 թ. տվյալներով ավտոմեքենաների տարեկան արտադրության քանակով (10.1 մլն ավտոմեքենա) ԱՄՆ աշխարհում գրավել է երկրորդ տեղը Չինաստանից հետո (27 մլն ավտոմեքենա)[87]: Խոշորագույն 500 վերազգային կազմակերպությունների տարեկան եկամուտը

---

[86] ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում ներգրաված մեկ աշխատողին բաժին է ընկնում 6135 դոլար:

[87] International Organization of Motor Vehicle Manufacturers, https://www.oica.net/category/production-statistics/2022-statistics/:

ԱՄՆ-ում 2022 թ. կազմել է մոտ 13 տրիլիոն դոլար կամ ԱՄՆ ՀՆԱ-ի մոտ կեսը, իսկ շահույթը՝ 1.1 տրիլիոն դոլար: Ավելին՝ այդ ընկերությունների շուկայական կապիտալիզացիան կազմել է 22.6 տրիլիոն դոլար, իսկ աշխատողների թվաքանակը՝ մոտ 28.7 մլն մարդ: Ըստ տարեկան եկամտի մակարդակի՝ 2022 թ. տվյալներով ամերիկյան առավել խոշոր 10 վերազգային կազմակերպություններն էին «Walmart» (611 մլրդ դոլար), «Amazon» (513 մլրդ դոլար), «Exxon Mobil» (409 մլրդ դոլար), «Apple» (394 մլրդ դոլար), «UnitedHelth Group» (325 մլրդ դոլար), «CVS Health» (222 մլրդ դոլար), «Berkshire Hathaway» (302 մլրդ դոլար), «Alphabet» (284 մլրդ դոլար), «McKesson» (276 մլրդ դոլար) և «Chevron» ընկերությունները: ԱՄՆ-ում յուրաքանչյուր տարի ստեղծվում են ապրանքների և ծառայությունների մոտ 50 հազար նոր անվանումներ այն դեպքում, երբ 1970 թ. այդ ցուցանիշը չէր գերազանցում 10 հազարը:

Ծառայությունների ոլորտ: Այս ոլորտը ներկայումս շԱՄՆ տնտեսություն հիմնական ոլորտն է և զարգացած են դրա գրեթե բոլոր հիմնական ենթաոլորտները՝ զբոսաշրջություն, բանկային գործ, առևտուր, առողջապահություն, կրթություն և այլն: 2019 թ. տվյալներով ԱՄՆ զբոսաշրջիկների թվով աշխարհում զբաղեցրել է երրորդ տեղը Ֆրանսիայից (89.4 մլն մարդ) ու Իսպանիայից (83.5 մլն մարդ) հետո: Զբոսաշրջության ոլորտը ԱՄՆ տնտեսության համար ապահովել է 239 մլրդ դոլար կամ ամբողջ արտահանման 9.5 %-ը: Վերջին շրջանում շատ արագ զարգանում են խորհրդատվական, շուկայագիտական ու կառավարման ծառայությունները: Ծառայությունների ոլորտում ներգրավված է տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 78 %-ը: Այս ոլորտում մեծ նշանակություն ունեն նաև տրանսպորտային ծառայությունները:

«ԱՄՆ նոր տնտեսությունը». Բիզնեսի գլոբալացում և տեխնոլոգիական ծառայություններ: «Նոր տնտեսության» մոդելն

առաջին հերթին բնութագրվում է բիզնեսի գլոբալացմամբ ու տեխնոլոգիական հեղափոխությամբ:

Բիզնեսի գլոբալացում ասելով՝ հասկանում ենք երկրի և դրա տնտեսական սուբյեկտների ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը: Ներկայումս ամերիկյան խոշոր ընկերությունների եկամուտների մոտ կեսը ձևավորվում է արտասահմանում: Իր հերթին ԱՄՆ-ը ստանում է արտասահմանյան առաջատար ներդրումային ապրանքներ ու տեխնոլոգիաներ, երկրում գործում են եվրոպական ու ճապոնական վերազգային ընկերությունների մասնաճյուղեր ու դուստր ձեռնարկություններ: Եթե 1970-ական թթ. ԱՄՆ տնտեսության 17 %-ն էր կապված արտաքին առևտրին, ապա ներկայումս ամերիկյան տնտեսությունն արդեն 1/4 մասով կախված է արտաքին առևտրից:

«Նոր տնտեսությունում» հովանավորչական քաղաքականության կիրառումը բավականին սահմանափակված է, քանի որ տնտեսական զարգացման համար հենց ազատ շուկայական հարաբերություններն են ամենալավ խթանը:

Ամերիկյան տնտեսության աճի երկրորդ հիմնական աղբյուրը տեխնոլոգիական հեղափոխությունն է, որով ԱՄՆ-ն նույնպես ամուր դիրքեր է գրավում աշխարհում: Անընդհատ կատարելագործվում են թվային տեխնոլոգիաները, ձևավորվում են նոր ընկերություններ, առաջանում են արդյունաբերության նոր ոլորտներ: Եթե նախկինում տնտեսությունը զարգանում էր մեքենաշինության ու բնակարանային շինարարության զարգացման հաշվին, ապա ներկայումս զարգացման միջոց են տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք ապահովում են ամբողջ տնտեսական աճի 1/3-ը: Տեղեկատվական ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում ԱՄՆ աշխարհում իրեն հավասարը չունի: Այս ոլորտն էական դեր է խաղում, քանի որ արագ ու որակյալ տեղեկատվության ապահովմամբ է որոշվում ամբողջ արտադրության

արդյունավետությունը: Ներկայումս ԱՄՆ-ում է կենտրոնացված զարգացած երկրների տվյալների բանկի 75.0 %-ը:

Բիզնեսի գլոբալացումն ու տեղեկատվական նոր տեխնոլոգիաները հանգեցրին ԱՄՆ տնտեսության վերակառուցմանը: Գլոբալացումն ամերիկյան ապրանքների և ծառայությունների համար ստեղծեց իրացման նոր շուկաներ, խթանեց արտասահմանյան շուկա ուղղվածություն ունեցող արտադրությանը: Գլոբալ շուկան ամերիկյան ընկերություններին հնարավորություն տվեց դառնալու շատ ավելի մրցունակ, բարձրացավ ապրանքների որակը, նվազեցին արտադրության ծախքերն ու գները:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց հերթին ազդում են տնտեսության ոլորտների վրա: Դրանց միջոցով հնարավոր է բարձրացնել աշխատուժի արտադրողականությունն ու կառավարման արդյունավետությունը, նվազեցնել ծախքերը: «Նոր տնտեսության» առանձնահատկություններից է նաև այն, որ ժամանակակից տեխնոլոգիաներն անընդհատ կատարելագործվում են՝ թույլ չտալով ապրանքի կյանքի ցիկլի կորի նվազում[88]: Անընդհատ ի հայտ են գալիս արտադրանքի ձևափոխված տարբերակներ կամ լիովին նոր ապրանքներ ու ծառայություններ:

«Նոր տնտեսության» արդյունավետությունը պայմանավորված է նաև ամերիկյան կառավարման համակարգի առանձնահատկությամբ, որը հիմնված է արագ որոշումների ընդունման վրա: Այդ պատճառով ամերիկյան կառավարման մոդելին, ի տարբերություն եվրոպական ու ճապոնական կառավարման մոդելների, բնորոշ է մեծ ռիսկայնությունը:

Արտաքին տնտեսական կապերը: Արտաքին առևտուրը շատ մեծ դեր է կատարում ԱՄՆ տնտեսության զարգացման համար, իսկ արտաքին ապրանքաշրջանառության ծավալով (2022 թ. տվյալներո՝վ 5.4 տրիլիոն դոլար) ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցնում է երկրորդ տեղը՝ Չինաստանից

[88] Ապրանքի կյանքի ցիկլի տեսության հեղինակն է Ռ. Վերնոնը:

(2022 թ. տվյալներով՝ 6.3 տրիլիոն դոլար) հետո: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 7.1.4-ից*, 2007 թ., ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված, 2009 թ. զգալիորեն կրճատվել են արտահանման ու ներմուծման ծավալները: Այնուհետև՝ 2010-2014 թթ. ընկած ժամանակահատվածում, աճել են արտահանման ու ներմուծման ծավալները: 2015-2016 թթ. ընկած ժամանակահատվածում ԱՄՆ արտահանման և ներմուծման ծավալները կրկին ձեռք են բերել նվազման միտում: Այստեղ հարկ է նշել, որ 2015-2016 թթ. ընկած ժամանակահատվածում նվազել են ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների համաշխարհային արտահանման ու ներմուծման ծավալները: Այսպես, եթե 2014 թ. տվյալներով ապրանքների ու ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալները կազմել են համապատասխանաբար 18.8 և 5.1 տրիլիոն դոլար, ապա 2016 թ.՝ 15.9 և 4.8 տրիլիոն դոլար[89]: 2017-2019 թթ. ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ արտահանման ու ներմուծման ծավալները ձեռք են բերել աճի միտում, իսկ 2020 թ. ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների էական կրճատումը պայմանավորված էր COVID-19 համավարակով: Այսպիսով, ինչպես նկատում ենք, 1998-2022 թ. ընկած ժամանակաշրջանում արտահանման և ներմուծման ծավալներն աճել են մոտ 2.5 անգամ: 2022 թ. ԱՄՆ առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է -1.3 տրիլիոն դոլար: Համեմատության համար նշենք, որ 1998 թ. արտահանման ծավալը կազմել է 682.1 մլրդ դոլար, ներմուծման ծավալը՝ 944.3 մլրդ դոլար, իսկ առևտրային հաշվեկշռի պակասուրդը՝ -262.2 մլրդ դոլար: Ավելին՝ ի տարբերություն ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի՝ 2020 թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդը, COVID -19 համավարակով պայմանավորված, չի

[89] 2022 թ. ապրանքների համաշխարհային արտահանման ծավալը կազմել է 24.6 տրիլիոն դոլար, իսկ ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալը՝ 7.0 տրիլիոն դոլար:

նվազել, այլ, հակառակը, աճել է: Առաջին հայացքից թվում է, թե առևտրային հաշվեկշռի ոչ բարենպաստ իրավիճակը (աճի միտում ունեցող բացասական սալդոն) պետք է ազդի երկրի տնտեսական աճի վրա: Սակայն ԱՄՆ այս իրավիճակից քաղում է առավելություն, քանի որ իրականում տեղի է ունենում օտարերկրյա կապիտալի ու առաջատար տեխնոլոգիաների ներհոսք, և աճում է տեղական ներդրումային ու սպառողական ապրանքների մրցունակությունը, ինչն էլ հենց նպաստում է երկրի տնտեսական աճին:

2022 թ. տվյալներով ԱՄՆ-ն ապրանքների արտահանման ծավալով (2,062 մլրդ դոլար կամ համաշխարհային արտահանման 8.1 %) աշխարհում գրավել է երկրորդ տեղը՝ Չինաստանից հետո (3,593 մլրդ դոլար): Ծառայությունների արտահանման ծավալով՝ առաջին տեղը (928.5 մլրդ դոլար կամ համաշխարհային արտահանման 13.2 %-ը): Ապրանքների արտահանումը կազմել է ՀՆԱ-ի 7.8 %-ը, և այս ցուցանիշը նվազման միտում ունի: Համեմատության համար նշենք, որ 1997 թ. ապրանքների արտահանումը կազմել է ՀՆԱ-ի մոտ 12 %-ը: Այստեղ հարկ է նշել, որ 2003 թվականից սկսած՝ ապրանքների արտահանման ծավալով ԱՄՆ-ն իր առաջատար դիրքը զիջեց Գերմանիային, իսկ արդեն 2007 թ.՝ նաև Չինաստանին՝ գրավելով երրորդ տեղը Գերմանիայից ու Չինաստանից հետո: 2008 թ. ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված՝ Գերմանիան 2009 թ. իր առաջատար դիրքը զիջեց Չինաստանին, իսկ 2010 թ.՝ նաև ԱՄՆ-ին:

ԱՄՆ արտահանման հիմնական շուկաներն են Կանադան (17.7 %), Մեքսիկան (16.2 %), Չինաստանը (7.6 %), Ճապոնիան (4.0 %), Մեծ Բրիտանիան (3.9 %) և Գերմանիան (3.8 %): Համեմատության համար նշենք, որ 1997 թ. ԱՄՆ արտահանման հիմնական շուկաներն էին Կանադան (23.0 %), Ճապոնիան (10.3 %), Մեքսիկան (10.1 %), Մեծ Բրիտանիան (5.2 %), Գերմանիան

(3.7 %), Հարավային Կորեան (3.4 %) ու Թայվանը (3.2 %): Ինչպես տեսնում ենք, նշված ժամանակաշրջանում Ճապոնիան իր տեղը զիջել է Մեքսիկային ու Չինաստանին, ինչպես նաև նվազել է արտահանման բաժինը դեպի Հարավարևելյան Ասիայի երկրներ:

Արտահանման մեջ գերակշռող հիմնական ապրանքախմբերն են գյուղատնտեսական արտադրանքը (9.2 %), արդյունաբերական հումքը (օրգանական քիմիական միացություններ) (26.8 %), կապիտալ ապրանքները (ինքնաթիռներ, ավտոմեքենաների մասեր, համակարգիչներ, հեռահաղորդակցման սարքավորումներ) (49.0 %) և սպառողական ապրանքները (ավտոմեքենաներ ու դեղորայք) (15.0 %):

Ամերիկյան տնտեսության համար ներմուծումը ոչ պակաս կարևոր դեր ունի, քան արտահանումը (ներմուծումից է կախված ՀՆԱ-ի արտադրության մոտ 14 %-ը): Այսպես, 2022 թ. տվյալներով ԱՄՆ-ն ապրանքների (3.375 մլրդ դոլար կամ համաշխարհային ներմուծման 13.4 %-ը) ու ծառայությունների ներմուծման ծավալներով (696.7 մլրդ դոլար կամ համաշխարհային ներմուծման 10.6 %-ը) աշխարհում գրավել է առաջին տեղը: Այստեղ հարկ է ավելացնել, որ և՛ ապրանքների, և՛ ծառայությունների ներմուծման ծավալներով ԱՄՆ-ն աշխարհում հաստատուն կերպով գրավում է առաջին տեղը:

ԱՄՆ ներմուծման հիմնական գործընկեր երկրներն են Չինաստանը (17.0 %), Մեքսիկան (14.5 %), Կանադան (13.2 %), Ճապոնիան (4.5 %) և Գերմանիան (4.4 %): Այստեղ հարկ է նշել, որ 1997-2005 թթ. ընկած ժամանակաշրջանի հետ համեմատած՝ Ճապոնիան իր տեղը զիջել է Չինաստանին ու Մեքսիկային, իսկ արդեն 2007 թվականից Կանադան իր առաջատար դիրքը զիջել է Չինաստանին: Մյուս կողմից, եթե 1997 թ. ԱՄՆ առևտրային հաշվեկշռի պակասուրդի 40 %-ը բաժին էր ընկնում Ճապոնիային և Հարավարևելյան Ասիայի երկրներին, ապա ներկայումս

առևտրային հաշվեկշռի պակասուրդի զգալի մասը բաժին է ընկնում Չինաստանին ու Մեքսիկային:

Ներմուծման մեջ գերակշռում են հետևյալ ապրանքախմբերը՝ գյուղատնտեսական արտադրանքը (4.9 %), արդյունաբերական հումքը (32.9 %) (այդ թվում՝ չմշակված նավթ՝ 8.2 %), կապիտալ ապրանքները (ինքնաթիռներ, ավտոմեքենաների մասեր, համակարգիչներ, հեռահաղորդակցման սարքավորումներ) (30.4 %) և սպառողական ապրանքները (ավտոմեքենաներ, հագուստ, դեղորայք, կահույք և այլն) (31.8 %):

Ինչ վերաբերում է կապիտալի միջազգային շարժին, ապա մինչև 1994 թվականը առկա ԱՄՆ զուտ միջազգային ներդրումային ակտիվ դիրքը վերածվեց պասիվ դիրքի[90]: Այսինքն, եթե որևէ երկրի զուտ միջազգային ներդրումային դիրքը բացասական է, ապա երկիրը «վարկառու» երկիր է, հակառակ դեպքում՝ «վարկատու»: Այսպես, ԱՄՆ-ն աշխարհում առաջին «վարկառու» երկիրն է, իսկ Ճապոնիան՝ առաջին «վարկատու» երկիրը: Ավելին՝ 1994 թվականից ի վեր ԱՄՆ զուտ միջազգային ներդրումային պասիվ դիրքն աճի միտում ունի: 2022 թ. տվյալներով ԱՄՆ զուտ միջազգային ներդրումային դիրքը կազմել է -18 տրիլիոն դոլար: Թվում է, թե այսպիսի իրավիճակը վատթարացնում է ԱՄՆ արտաքին ֆինանսական դիրքը: Սակայն չպետք է մոռանանք, որ արտասահմանյան ներդրումների հիմքի վրա գործում է բավականին հզոր «ԱՄՆ երկրորդ տնտեսությունը», և ներկայումս միջազգային ֆինանսական հոսքերն այնպես են խառնվել իրար, որ շատ դժվար է տարբերակել կապիտալի այն բաժինը, ինչը վերահսկվում է ամերիկյան ներդրողների կողմից:

---

[90] Երկրի միջազգային ներդրումային դիրքը վիճակագրական հաշվետվություն է, որում արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի ու վերջի դրությամբ: Երկրի արտաքին պարտքը (պետական ու մասնավոր) հաշվի է առնվում միջազգային ներդրումային դիրքը ներկայացնելիս:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. ՀՆԱ-ի ծավալով ո՞ր տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ:
2. Զբաղեցրած տարածքով ո՞ր երկրներին է զիջում ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ:
3. Ի՞նչ ենք հասկանում՝ արտաքին ապրանքաշրջանառություն ասելով:
4. Ի՞նչ ենք հասկանում՝ առևտրային հաշվեկշիռ ասելով:
5. Արտաքին ապրանքաշրջանառության ծավալով ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ ո՞ր տեղն է զբաղեցնում:
6. ԱՄՆ առևտրային հաշվեկշիռը ավելցուկայի՞ն է, թե՞ պակասուրդային:
7. Ի՞նչ ենք հասկանում՝ երկրի միջազգային ներդրումային դիրք ասելով:
8. ԱՄՆ համաշխարհային տնտեսության մեջ ունի ակտի՞վ, թե՞ պասիվ միջազգային ներդրումային դիրք: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
9. Որքա՞ն է կազմում ԱՄՆ տնտեսապես ակտիվ բնակչությունը 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության մեջ:
10. Ի՞նչ ենք հասկանում՝ «ԱՄՆ երկրորդ տնտեսություն» ասելով: Ինչո՞ւ է սա բնորոշ միայն ԱՄՆ-ին: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
11. Ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալով ո՞ր տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ:
12. Ապրանքների ու ծառայությունների ներմուծման ծավալով ո՞ր տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ:

13. Փորձե՛ք ներկայացնել, թե ինչ է ագրոարդյունաբերական համալիրը, և ինչու է կարևոր երկրի գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար:
14. ՕՈՒՆ-ի ներհոսքի ծավալով ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ ո՞ր տեղն է զբաղեցնում:
15. Զարգացած երկրների շարքում ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի ԱՄՆ աշխատուժի շուկան:
16. Արտաքին պարտքի (պետական ու մասնավոր) մեծությամբ ո՞ր երկրներին է զիջում ԱՄՆ-ն համաշխարհային տնտեսության մեջ:

Հավելված

Աղյուսակ 7.1.1. ԱՄՆ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն դոլար)[91]	15.0	15.6	16.0	16.3	16.3	15.9	16.3	16.6	16.9	17.2	17.7	18.2	18.5	19.0	19.5	20.0	19.2	20.5	20.9
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	3.8	3.5	2.9	1.9	-0.1	-2.5	2.6	1.6	2.2	1.8	2.5	3.1	1.7	2.3	3.0	2.2	-2.8	5.9	1.9
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազ. դոլար)	51.5	52.8	53.8	54.3	53.7	51.9	52.7	53.2	54.0	54.6	55.6	56.8	57.4	58.3	59.8	60.8	58.5	61.8	62.7
Գնաճի մակարդակ (CPI), %	2.7	3.4	3.2	2.9	3.8	-0.4	1.6	3.2	2.1	1.5	1.6	0.1	1.3	2.1	2.4	1.8	1.2	4.7	8
Գործազրկության մակարդակ, %	5.5	5.1	4.6	4.6	5.8	9.3	9.6	8.9	8.1	7.4	6.2	5.3	4.9	4.3	3.9	3.7	8.1	5.3	3.7

Աղբյուր ՝ World Bank, World Development Indicators 2023:

[91] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

Աղյուսակ 7.1.2. ԱՄՆ տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2003-2021 թթ.[92], %

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	1.8	1.8	1.7	1.7	1.6	1.6	1.6	1.7	1.8	1.7	1.6	1.7	1.8	1.8	1.8	1.7	1.7	1.7	1.7
Արդյունաբերություն	22.2	22.1	22.0	22.1	21.9	21.2	19.8	19.4	19.4	19.5	19.7	19.7	19.6	19.5	19.4	19.6	19.6	19.4	19.2
Ծառ. ոլորտ	76.0	76.1	76.3	76.2	76.5	77.2	78.6	78.9	78.8	78.8	78.7	78.6	78.7	78.7	78.8	78.7	78.7	78.8	79.2

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 7.1.3. ԱՄՆ տնտեսության ճյուղային կառուցվածքը 2003-2021 թթ.[93], %

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտ.	1.1	1.3	1.2	1.0	1.1	1.1	1.0	1.0	1.2	1.1	1.3	1.2	1.0	0.9	0.9	0.9	0.8	0.9	1.0
Արդյունաբ.[94]	20.7	21.0	21.2	21.6	21.4	20.8	19.3	19.3	19.4	19.2	19.2	19.3	18.6	18.0	18.4	18.6	18.3	17.5	17.9
Ծառ. ոլորտ[95]	74.6	74.2	74.0	73.7	73.9	74.6	76.5	76.3	75.9	76.2	75.8	75.8	76.7	77.4	77.0	76.7	77.2	78.1	77.6

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2021:

[92] ԱՄՆ տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածության վերաբերյալ տվյալները հասանելի են մինչև 2021 թվականը:
[93] ԱՄՆ տնտեսության ճյուղային կառուցվածքի վերաբերյալ տվյալներն առկա են մինչև 2021 թվականը:
[94] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:
[95] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

Աղյուսակ 7.1.4. ԱՄՆ արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտա-հանում	904	1,037	1,162	1,299	1,057	1,277	1,480	1,545	1,577	1,619	1,501	1,450	1,546	1,665	1,642	1,424	1,754	2,062
Ներմու-ծում	1,732	1,919	2,017	2,165	1,602	1,968	2,263	2,334	2,326	2,410	2,313	2,248	2,406	2,612	2,563	2,406	2,935	3,375
Առև-տրային հաշվ.	-828	-881	-854	-864	-545	-690	-781	-789	-749	-791	-811	-797	-860	-947	-920	-981	-1,181	-1,313

Աղբյուր՝ International Trade Centre:

7.2. Կանադայի տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական ընդհանուր բնութագիրը: Կանադան իր գրաված տարածքով աշխարհում Ռուսաստանից հետո զբաղեցնում է երկրորդ տեղը (9.9 մլն քառ. կմ): Չնայած տարածքի իր մեծ չափերին՝ երկիրը խիտ բնակեցված չէ: Այսպես, 2022 թ. տվյալներով Կանադայի բնակչությունը կազմել է 38.9 մլն մարդ: Լինելով անկախ պետություն Կանադան անդամակցում է Ազգերի բրիտանական համագործակցությանը[96]:

ԱՄՆ նախաձեռնմամբ Կանադան 1976 թվականից «Մեծ յոթնյակի» անդամ է՝ որպես համաշխարհային տնտեսության մեջ եվրոպական երկրների դիրքերի ամրապնդման հակակշիռ: Իր տնտեսական հզորությամբ (հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ի մակարդակ) Կանադան «Մեծ յոթնյակում» բավական երկար ժամանակ զբաղեցնում է վերջին տեղը՝ Իտալիայից հետո[97]: Զարգացած երկրների շարքում Կանադայի տարբերիչ առանձնահատկությունը այն է, որ աշխատանքի միջազգային բաժանման ու միջազգային առևտրի գործընթացներում դրա ինտեգրման աստիճանը բավականին մեծ է: 2022 թ. տվյալներով Կանադայի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է ՀՆԱ-ի 54.6 %-ը, իսկ, օրինակ, ԱՄՆ-ի դեպքում այդ ցուցանիշը կազմել է 21.2 %:

Կանադան բնակլիմայական պայմաններով ու ռեսուրսների հարստությամբ շատ նման է Ռուսաստանին: Այստեղ բավականին շատ են մասամբ, անգամ բացառապես չյուրացված տարածքները: Տարածքի զգալի մասը զբաղեցնում են տունդրան ու

---

[96] Ազգերի բրիտանական միությունը միջկառավարական կազմակերպություն է, որին անդամակցում են 54 անկախ պետություններ: Անդամ պետությունների մեծ մասը նախկինում եղել են Մեծ Բրիտանիայի գաղութներ:

[97] Հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ի մակարդակով Կանադան «Մեծ յոթնյակում» շարունակում է զբաղեցնել վերջին տեղը: Այսպես, 2022 թ. տվյալներով Իտալիայի՝ հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն կազմել է 1.96 տրիլիոն դոլար, իսկ Կանադայինը՝ 1.7 տրիլիոն դոլար:

տայգան (փշատերև անտառների գոտի): Գյուղատնտեսության համար պիտանի է տարածքի 16 %-ը, որի մոտ կեսը մշակվում է:

Կանադան հարուստ է բնական հանածոներով: Տարածքի մոտ 1/3-ը ծածկված է անտառներով: Փայտանյութի պաշարներով (համաշխարհային պաշարների 10 %-ը) Կանադան զբաղեցնում է երրորդ տեղը՝ Ռուսաստանից ու Բրազիլիայից հետո, իսկ մեկ շնչին բաժին ընկնող փայտանյութով՝ առաջին տեղը: Քաղցրահամ ջրի համաշխարհային պաշարների 15 %-ը գտնվում է այստեղ, իսկ հիդրոէներգետիկ պաշարները կազմում են մոտ 65 մլն կվտ.: Այս վերջին ցուցանիշով Կանադան գրավում է աշխարհում երրորդ տեղը ԱՄՆ-ից ու Բրազիլիայից հետո: Կանադայի օգտակար հանածոնները ներկայացնում են Մենդելեևի աղյուսակի գրեթե բոլոր տարրերը: Հատուկ նշանակություն ունեն գունավոր ու ազնիվ մետաղները, ուրանը, նավթը, բնական գազն ու քարածուխը: Բնական հանածոնների այդպիսի առկայության պայմաններում Կանադայի տնտեսության համար մեծ նշանակություն են ունեցել և շարունակում են ունենալ արդյունահանող ու վերամշակող արդյունաբերության ոլորտները: Պատմականորեն երկրում զարգացել են փայտամշակման արդյունաբերությունը, ցորենի արտադրությունը, մետաղագործությունն ու նավաշինությունը:

Սկսած 1950-ական թվականներից՝ Կանադայի տնտեսական աճը պայմանավորված էր ոչ միայն կանադական ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի մեծացմամբ, այլ նաև ներքին պահանջարկի ավելացմամբ: Ներքին շուկայում պահանջարկն աճում էր՝ հիմնականում ի հաշիվ բարձր որակավորում և բարձր եկամուտների մակարդակ ունեցող ներգաղթյալների, որոնք լուծում էին ոչ միայն աշխատանքային ռեսուրսների պակասուրդի խնդիրը, այլ նաև ավելացնում էին ներքին պահանջարկը:

2022 թ. տվյալներով Կանադայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 2.1 տրիլիոն դոլար, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 1.7 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 44,928 (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.2.1*): Ինչպես և ԱՄՆ-ի դեպքում, Կանադան կարողացավ վերականգնել մինչ-ճգնաժամային ՀՆԱ-ի մակարդակը 2010 թ.: 2009-2010 թթ. Կանադայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է համապատասխանաբար -2.9 ու 3.1 %: 2008 թ. տնտեսական աճի տեմպի զգալի նվազումն ու 2009 թ. բացասական ցուցանիշն արդյունք էին ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի, ինչը սկիզբ էր առել 2007 թ. ԱՄՆ-ում: 2020 թ. Կանադայի տնտեսական աճի բացասական ցուցանիշը (-5.3 %) հիմնականում պայմանավորված էր COVID-19 համավարակով: Համավարակի բացասական ազդեցությունը տնտեսություն վրա Կանադան կարողացավ հաղթահարել նույնպես մեկ տարի հետո. 2021թ. Կանադայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 5.0 %: 2022թ. տվյալներով Կանադայի տնտեսության տնտեսական աճի տեմպը կազմել է 3.4 %: Գործազրկության մակարդակը Կանադայում 2022 թ. կազմել է 5.3 %, իսկ գնաճի մակարդակը՝ 6.8 %: Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Կանադայի տնտեսության մեջ, չնայած բնակչության քիչ թվաքանակին, համեմատաբար բարձր է եղել գործազրկության մակարդակը: Ավելին՝ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով ու COVID-19 համավարակով պայմանավորված՝ գործազրկության մակարդակը զգալի ավելացավ՝ 2009 և 2020 թթ. կազմելով համապատասխանաբար 8.3 % ու 9.5 %: Մյուս կողմից, եթե ի սկզբանե Կանադայի գործազրկության մակարդակը գերազանցում էր ԱՄՆ գործազրկության մակարդակը, ապա ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո գրանցվեց հակառակ պատկերը: Այսպես, 2009-2013 թթ. ընկած ժամանակաշրջանում, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված, Կանադայի տնտեսության մեջ գործազրկության մակարդակը եղել է ավելի ցածր,

քան ԱՄՆ-ում: Սկսած 2014 թվականից՝ գործազրկության մակարդակի իր ցածր ցուցանիշով ԱՄՆ-ն կրկին առաջ անցավ Կանադայից: Ինչ վերաբերում է գնաճի մակարդակին, ապա այստեղ հարկ է նշել, որ ինչպես և ԱՄՆ տնտեսության դեպքում, 2021 և 2022 թթ. նկատելիորեն ավելացել է գնաճի մակարդակը Կանադայի տնտեսության մեջ:

Կանադայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը 2022 թ. կազմել է 28.3 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը՝ -6.6 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի -0.3%-ը: Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցության բացասական ցուցանիշը, 2015 թվականի հետ համեմատած, կրճատվել է մոտ ինն անգամ: Նախկինում «Մեծ յոթնյակի» երկրների շարքում Կանադան առանձնացել է իր առևտրային դրական հաշվեկշռով: Սակայն, ինչպես և ԱՄՆ-ի դեպքում, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը զգալի կառուցվածքային փոփոխություններ առաջ բերեց Կանադայի տնտեսության մեջ: 2009 թվականից սկսած՝ Կանադան առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվեց առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրի: Մյուս կողմից, ինչպես նկատում ենք 2021 թվականից սկսած Կանադայի առևտրային հաշվեկշիռը կրկին դրական է, և այն ունի աճի միտում:

2022 թ. տվյալներով Կանադայի պետական պարտքը (ներքին և արտաքին) կազմել է 1.5 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 72.0 %-ը: Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի մեծությամբ Կանադան աշխարհում զբաղեցրել է 55-րդ տեղը: Արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 2.8 տրիլիոն դոլար (ՀՆԱ-ի 133 %-ը): Արտաքին պարտքի (պետական և մասնավոր) ցուցանիշի բացարձակ մեծությամբ Կանադան աշխարհում զբաղեցրել է 12-րդ տեղը: Այստեղ հարկ է նշել, որ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ զգալիորեն աճել են Կանադայի պետական պարտքի ու արտաքին պարտքի ցուցանիշնե-

ը: Այսպես, մինչճգնաժամային հատվածում, օրինակ՝ 2007 թ., պետական պարտքի ու արտաքին պարտքի (պետական և մասնավոր) ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 64.2 % ու 57.4 %:

Բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները: Հաշվի առնելով տարածքի մեծությունն ու բնակչության թվաքանակը՝ Կանադան աշխարհումամենաքիչ բնակեցված երկրներից է: Բնակչության զգալի մասը Եվրոպայից ու ԱՄՆ-ից ներգաղթածների սերունդներն են, որոնք ձևավորել են ազգային հետևյալ հիմնական խմբերը՝ բրիտանացիներ (40 %), ֆրանսիացիներ (23 %), որոնք հատկապես բնակվում են Քվեբեկում, Օնտարիոյում, Եվրոպայից այլ ազգերի ներգաղթածներ (16 %), ասիացիներ (5 %), ամերիկյան հնդկացիներ (4 %), իսկ բնիկների (էսկիմոսներ) թիվը գնալով նվազում է: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր Արևելքից մոտ 100 հազար հայ բնակություն հաստատեց հատկապես Մոնրեալում ու Տորոնտոյում: Երկում իրավահավասար կերպով գործում է երկու պետական լեզու՝ անգլերենն ու ֆրանսերենը: Կապված այդ լեզուների գործածության հետ՝ հաճախ տեղի են ունենում ազգամիջյան բախումներ, երկրի ներսում սրվում է մրցակցությունը նահանգների ու տարածաշրջանների միջև, ինչ-որ չափով դժվարանում է բիզնեսի զարգացումը:

2022 թ. Կանադայի տնտեսապես ակտիվ բնակչությունը (21.3 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 64.9 %-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 1.3 %-ը զբաղված է գյուղատնտեսության, 19.3 %-ը՝ արդյունաբերության, իսկ 79.4 %-ը՝ ծառայությունների ոլորտում: Համեմատության համար նշենք, որ 1998 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 3.8 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 22.2 %-ը՝ արդյունաբերության, իսկ 74 %-ը՝ ծառայությունների ոլորտում:

«Մեծ յոթնյակի» երկրների շարքում համեմատաբար մեծ է եղել Կանադայի գործազրկության մակարդակը, սակայն այն վերջին տարիներին ձեռք է բերել նվազման միտում՝ 2022 թ. կազմելով 5.3 %: 2020 թ. գործազրկության մակարդակը Կանադայի տնտեսության մեջ կազմել է 9.5 %, որը պայմանավորված էր COVID-19 համավարակով:

Կանադայի բնակչության մտավոր ներուժը շատ բարձր է: Կանադան իր երկիր է ընդունում հիմնականում բարձր որակյալ կադրերի՝ մշտական բնակչություն հաստատելու համար: Այսպես, ըստ Մարդկային զարգացման ինդեքսի՝ 2022 թ. Կանադան աշխարհում գրավում էր 15-րդ տեղը՝ առաջ անցնելով ԱՄՆ-ից (21-րդ հորիզոնական), Ճապոնիայից (19-րդ հորիզոնական) ու Ֆրանսիայից (28-րդ հորիզոնական)[98]: Այստեղ հարկ է նշել, որ այս ինդեքսով աշխարհում առաջատարը Նորվեգիան է[99]:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: Կանադայի տնտեսական զարգացումը պատմականորեն պայմանավորված է երեք գործոնով.

1. *բացառիկ բնական ռեսուրսների առկայություն:* Կանադան ունի բոլոր անհրաժեշտ միջոցները տնտեսության ցանկացած ոլորտում արտադրություն կազմակերպելու համար,
2. *ժողովրդագրական գործոն:* Բարձր որակավորում և մտավոր ներուժող ունեցող կադրերի առկայություն ու բարձր որակավորում ունեցող կադրերի անընդհատ շարունակվող ներհոսք,
3. *ԱՄՆ զարգացման մոդելի կիրառում*: Կանադային հաճախ անվանում են ԱՄՆ «փոքր եղբայր»: Կանադայի տնտեսության համար շատ մեծ դեր ունի նաև օտարերկ-

[98] Տե՛ս UNDP-Human Development Report, 2022:
[99] Ըստ Մարդկային զարգացման ինդեքսի՝ ՀՀ-ն աշխարհում զբաղեցրել է 85-րդ տեղը 2022 թ.:

ոյա կապիտալի ներհոսքը, հատկապես՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Ֆրանսիայից: Հարկ է նշել, որ Կանադայի տնտեսության արդյունաբերության ոլորտում նշված երկրներին բաժին է ընկնում ամբողջ ներդրումների 1/3-ը:

Կանադայի տնտեսությունը տարբերվում է ամերիկյանից նրանով, որ այստեղ պետության դերը շատ ավելի մեծ է, քան ԱՄՆ-ում: Օրինակ, եթե ԱՄՆ-ում երկաթուղիները կառուցվել են մասնավոր հատվածի կողմից, ապա Կանադայում սկզբնական շրջանում հենց պետությունն էր դրանով զբաղվում: Պետության վերահսկողության տակ էին գտնվում գրեթե բոլոր կարևոր ոլորտները (արդյունահանող արդյունաբերություն ու ենթակառուցվածք): 1945-1984 թթ. կառավարության դերն էլ ավելի ուժեղացավ: Պետությունը հանդիսացավ ապրանքներ ու ծառայություններ հիմնական արտադրողը, նրա վերահսկողության տակ էին գտնվում էներգետիկան, տրանսպորտն ուկապը, հանքահումքային արդյունաբերությունը և այլն: Իրականացվում էր տնտեսության «կանադացում», որը ենթադրում էր տեղական արտադրողների դիրքերի ուժեղացում և օտարերկրյա կապիտալի սահմանափակ ներհոսք: Այնուամենայնիվ, 1980-ական թթ. սկզբից արդեն կառավարության միջամտության օպտիմալ սահմանները զգալիորեն խախտվել էին, և կառավարության միջամտությունն ավելի ու ավելի քիչ արդյունավետ էր դառնում: 1985 թ. Կանադայի բյուջեի պակասուրդը հասավ վիթխարի ծավալների՝ կազմելով -41.7 մլրդ դոլար (ՀՆԱ-ի -8.5 %): Մյուս կողմից՝ ԱՄՆ զգալի ազդեցություն է ունեցել Կանադայի տնտեսության զարգացման գործում: Ամերիկյան կապիտալը նպաստել է Կանադայի արդյունաբերության զարգացմանը՝ ֆինանսավորելով կանադական ձեռնարկատերերին: Ամերիկյան շուկան միշտ էլ եղել է ու կա որպես կանադական ապրանքների իրացման հիմնական շուկա (ԱՄՆ բնակչությունը մոտ 8.5 անգամ ավելի է, քան Կանադայինը):

Սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից միտումները: 1990-ական թթ. Կանադայի կառավարությունը սկսեց լայնածավալ աշխատանքներ իրականացնել բաց տնտեսություն կառուցելու, համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացներում երկրի մասնակցությունը ընդլայնելու, տնտեսական անկախությունը պահպանելու և ԱՄՆ-ի հետ իրավունքները հավասարեցնելու ուղղությամբ: Միջազգային շուկայում, ռեսուրսների գների անկմամբ ու պահանջարկի նվազմամբ պայմանավորված Կանադայի տնտեսության ավանդական ոլորտների (հանքահումքային, վառելիքաէներգետիկ և այլն) տեսակարար կշիռը, ինչպես նաև եկամուտներն ու կապիտալ ներդրումները բավականին կրճատվեցին: Դրա փոխարեն էապես աճեցին գիտատար ոլորտներում արտադրանքի թողարկումն ու ներդրումները: Հատկապես զարգացան էլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկական, մեքենաշինական, հեռահաղորդակցման միջոցների, ավտոմոբիլաշինության, քիմիական ու դեղագործական ոլորտները:

Արդեն 1990-ական թթ. կեսերին Կանադայի տնտեսական կյանքում տեղի ունեցան կարևոր տեղաշարժեր: Մի քանի տասնամյակում արդեն ձևավորված պետական կարգավորման մեխանիզմը սկսեց վերակառուցվել: Այսպես, 1990-ական թթ. երկրում սկսվեց իրականացվել լայնածավալ սեփականաշնորհման գործընթաց, որի ընթացքում դաշնային կառավարությունը մասնավոր հատվածին փոխանցեց խոշոր վերամշակող արդյունաբերությունը, նավթարդյունաբերությունն ու գազարդյունաբերությունը, երկաթուղային տրանսպորտն ու կապի ոլորտը: Սեփականաշնորհվեցին նաև նավահանգիստներն ու օդանավակայանները:

Այսպիսով՝ 1990-ական թթ. տնտեսության մեջ զգալի նվազեց կառավարության դերը, արտաքին պարտքն ու բյուջեի պակասուրդը սկսեցին կտրուկ նվազել: Այսպես, եթե 1995 թ. տվյալներով Կանադայի պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 101.6 %-ը, ի դեպ, այս ցուցանիշով Կանադան «Մեծ յոթնյակում» զիջում էր

միայն Իտալիային (ՀՆԱ-ի 121 %-ը), ապա՝ արդեն 2007 թ., Կանադայի պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 64.2 %-ը: Ինչպես արդեն նշել ենք, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ Կանադայի պետական պարտքը (ներքին ու արտաքին), ինչպես և մյուս երկրներում, զգալի ավելացավ (2022 թ. Կանադայի պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 72.0 %-ը): Մյուս կողմից, 1990-ական թթ. երկրորդ կեսից սկսած, լուծվեց Կանադայի պետական բյուջեի պակասուրդի հիմնախնդիրը: 1990-ական թթ. երկրորդ կեսից մինչև ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը (2008 թ.) Կանադայի պետական բյուջեն եղել է ավելցուկային: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո Կանադայի պետական բյուջեն կրկին պակասուրդ գրանցեց, սակայն դա նվազման միտում ունի: Այսպես, եթե Կանադայի պետական բյուջեի պակասուրդը 2010 թ. կազմել է ՀՆԱ-ի -2.1 %-ը, ապա արդեն 2019 թ. տվյալներով Կանադայի պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի -1.7 %-ը: 2020 թ. տվյալներով, COVID-19 համավարակով պայմանավորված, Կանադայի պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի -15 %-ը: 2022թ. տվյալներով Կանադայի պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի -1.3 %-ը: Ներկայումս Կանադայի տնտեսական զարգացման գործընթացում կառավարությունը կատարում է կոորդինացնող ու ուղղորդող դեր:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: 2019 թ. տվյալներով Կանադայի տնտեսության ճյուղային կառուցվածքը հետևյալն էր. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 1.7 %-ը, արդյունաբերությանը՝ 24.1 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին բաժին էր ընկնում 67.7 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 7.2.3*):

Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 7.2.3*-ից, Կանադան իր տնտեսության ճյուղային կառուցվածքով, ինչպես Ճապոնիան ու Գերմանիան, «Մեծ յոթնյակի» երկրների շարքում առանձնանում է արդյունաբերության ոլորտի համեմատաբար

մեծ բաժնով: Մյուս կողմից՝ Կանադայի արդյունաբերության նման համեմատաբար մեծ բաժինը, ի տարբերություն Ճապոնիայի ու Գերմանիայի, պայմանավորված է արդյունաբերության մեջ հանքարդյունաբերության համեմատաբար մեծ տեսակարար կշռով: 2001-2019 թթ. ընկած ժամանակահատվածում արդյունաբերության տեսակարար կշիռը 28.4 %-ից նվազել է մինչև 24.1 %: Կանադայի տնտեսության մեջ արդյունաբերության տեսակարար կշռի նվազման պատճառ է Կանադայի կառավարության վարած քաղաքականությունը, իսկ արդյունաբերության նվազմամբ ավելացել է ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը:

Գյուղատնտեսություն: Գյուղատնտեսական արտադրանքի թողարկմամբ ու արտահանմամբ Կանադան աշխարհում գրավում է առաջատար դիրք: Գյուղատնտեսական արտադրանքի հիմքում ընկած են հացահատիկային մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն և այլն: Հացահատիկային մշակաբույսերի արտահանման ծավալով (հիմնականում՝ ցորեն) Կանադան աշխարհում գրավում է երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո: 2019 թ. տվյալներով գյուղատնտեսության ոլորտում ներգրաված մեկ աշխատողին բաժին է ընկել 113,112 դոլարի արդյունք:

Գյուղատնտեսության մեջ աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններից է վառ արտահայտված տարածքային ու ճյուղային մասնագիտացումը: Գյուղատնտեսական բոլոր ֆերմաների մոտ 90 %-ը մասնագիտացված են բուսաբուծության կամ անասնապահության որոշակի ոլորտներում: Ընդ որում՝ անասնապահությանը բաժին է ընկնում ամբողջ գյուղատնտեսական արտադրանքի 60 %-ը: Կանադայի գյուղատնտեսության մեջ, ինչպես և ԱՄՆ-ի դեպքում, գերակշռում են խոշոր ֆերմերային տնտեսությունները: Գյուղատնտեսական հանդակների 3/4-ից ավելին բաժին է ընկնում 40 հա-ից ավելի տարածք ունեցող տնտեսություններին: Երկրում արդեն ձևավորվել է ագրոարդյու-

նաբերական հզոր համալիր, որտեղ գլխավոր դերը պատկանում է սննդի արդյունաբերությանը:

Արդյունաբերություն: Ներկայումս Կանադայի արդյունաբերության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ օտարերկրյա ընկերությունների մասնաբաժինը երկրի արդյունաբերության ընդհանուր ակտիվներում գերազանցում է 40 %-ը, որից ավելի քան 70 %-ը պատկանում է ամերիկյան վերազգային կազմակերպություններին: Մասնավորապես օտարերկրյա ձեռնարկություններին բաժին են ընկնում Կանադայի էլեկտրաէներգիայի ոլորտի ակտիվների 63 %-ը, քիմիական արդյունաբերության ոլորտի ակտիվների 68 %-ը և մեքենաշինության ոլորտի ակտիվների 92 %-ը:

Նախկինում Կանադայի արդյունաբերության մեջ մեծ տեղ էին զբաղեցնում «ռեսուրսատար» ոլորտները, մասնավորապես նավթարդյունաբերությունը, գազարդյունաբերությունն ու անտառանյութի արդյունաբերությունը: Սակայն համաշխարհային տնտեսության մեջ հումքային ապրանքների գների և դրանց նկատմամբ պահանջակի նվազման պատճառով ներկայումս արդյունաբերության զարգացման գործընթացում առաջին պլան են մղվել գիտատար հետևյալ ոլորտները.

- էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների արտադրությունը,
- հեռահաղորդակցման միջոցների արտադրությունը,
- դեղագործական արդյունաբերությունը,
- արդյունաբերական սարքավորումների արտադրությունը,
- նոր նյութերի արտադրությունը (պլաստմասա և սինթետիկ այլ նյութեր):

Զգալի տեմպերով աճում էին նաև ավտոմեքենաների, շինարարական նյութերի և քիմիական արդյունաբերության արտադրության ծավալները: 2000-2020 թթ. Կանադայում արտադրվել է տարեկան մոտ 2.5 մլն ավտոմեքենա: Կանադայի մեքենաշինությունը հիմնվում է ամերիկյան ու ճապոնական խոշոր ընկերու-

թյունների արտասահմանյան մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների վրա: 2020 թվականից ի վեր զգալիորեն կրճատվել է Կանադայում արտադրվող տարեկան ավտոմեքենաների ծավալը՝ 2022 թ. կազմելով տարեկան մոտ 1.2 մլն ավտոմեքենա: Կանադան աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը թղթի արտադրությամբ՝ տարեկան թողարկելով 20 մլն տոննա թուղթ: Տնտեսության առաջատար ոլորտ է նաև տրանսպորտային մեքենաշինությունը՝ շինարարական մեքենաների ու ավիատեխնիկայի արտադրությունը: Կանադական «Bombardier Inc.» կազմակերպությունը տրանսպորտային մեքենաշինության ոլորտում համաշխարհային առաջատարներից մեկն է, որը թողարկում է ոչ միայն ձյունագնաց ավտոմեքենաներ ու ջրային մոտոցիկլետներ, այլ նաև միջին տարածությունների համար նախատեսված օդանավեր (Canadair Regional Jet, CRJ), որոնք շատ մեծ վարկանիշ ունեն Հյուսիսային Ամերիկայում ու Եվրոպայում: Բացի դրանից՝ Կանադայի աերոտիեզերական արդյունաբերությունը թողարկում է «De Havilland (DH8)», «Larjet» և «Short Brothers» ինքնաթիռները:

Բուռն կերպով զարգանում է համակարգչային արդյունաբերությունը, մասնավորապես «Compaq» ընկերության համակարգիչների մեծ մասը արտադրվում է Կանադայում: Հարկ է նշել, որ տնտեսությունում իրականացվող ընդհանուր ներդրումների մոտ 40 %-ը բաժին է ընկնում հենց այս ոլորտին: Այնուամենայնիվ, Կանադայի արդյունաբերության մեջ «ռեսուրսատար» ոլորտները դեռ շարունակում են գերակշռել: Այսպես, 2019 թ. տվյալներով Կանադայի արդյունաբերությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 24.6 %-ը, իսկ վերամշակող արդյունաբերությանը՝ ՀՆԱ-ի 9.3 %-ը:

Ծառայությունների ոլորտ: Ծառայությունների ոլորտում բարենպաստ կերպով զարգանում են հետևյալ ոլորտները.

1. մեծածախ առևտուրը,

2. ձեռնարկատերերին տրամադրվող գործարարության ծառայությունները,
3. հյուրանոցային ծառայությունները,
4. հեռահաղորդակցման ոլորտը:

Ծառայությունների ոլորտի զարգացմանը զգալի նպաստեց ապրանքների ու ծառայությունների արտադրությունում պետության ուղղակի միջամտության վերացումը, ինչը լրացուցիչ խթան դարձավ մասնավոր ծառայությունների ոլորտի զարգացման համար:

Պետական հատվածի կրճատումն ազդեց նաև Կանադայի աշխատուժի շուկայի վրա: Սկզբնական շրջանում նախկին պետական ծառայողները զգալի դժվարություններ էին ունենում մասնավոր հատվածում աշխատանքի տեղավորվելիս: Այսպես, եթե 1997 թ. Կանադայում գործազրկության մակարդակը (9.8 %) մոտ երկու անգամ գերազանցում էր ԱՄՆ գործազրկության մակարդակը, ապա արդեն 2000-ական թթ. այդ տարբերությունը զգալի մեղմացել է: Պայմանավորված ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով և COVID-19 համավարակով՝ Կանադայի գործազրկության մակարդակը 2009 թ. ու 2020 թ. կազմել է համապատասխանաբար 8.3 % ու 9.5 %: Արդեն 2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակը Կանադայում կազմել է 5.3 %:

Արտաքին տնտեսական կապերը: Կանադայի տնտեսության համար արտաքին տնտեսական հարաբերությունները շատ մեծ նշանակություն ունեն: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին ապրանքաշրջանառության ծավալը 2022 թ. տվյալներով կազմել է Կանադայի ՀՆԱ-ի 54.6 %-ը: Միջազգային առևտրում ներգրավվածության մակարդակով Կանադան «Մեծ յոթնյակում» գրավում է առաջին տեղը: Կանադայի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը 2022 թ. կազմել է 1.2 տրիլիոն դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 598.5, իսկ ներմուծումը՝ 570.1 մլրդ դոլար: Այսպիսով՝ Կանադայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը 2022 թ.

կազմել է 28.3 մլրդ դոլար: Այստեղ հարկ է նշել, որ մինչև ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը Կանադայի առևտրային հաշվեկշիռը բավականին երկար ժամանակահատված հաստատուն կերպով եղել է դրական: Այսպես, եթե 1990-ական թթ. վերջին՝ 1998 թ., Կանադայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է 9.3 մլրդ դոլար, ապա 2000-ական թթ. վերջին՝ 2008 թ., կազմել է 46.8 մլրդ դոլար: 2009-2020 թթ. ընկած ժամանակահատվածում առևտրային հաշվեկշռի պակասուրդը հիմնականում ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ու COVID-19 համավարակի արդյունք էր, ինչը տնտեսության մեջ առաջ բերեց կառուցվածքային փոփոխություններ: 2021 թվականից ի վեր Կանադայի առևտրային հաշվեկշիռը դրական է և ունի աճի միտում:

Կանադայի արտաքին առևտրային քաղաքականության ռազմավարությունը կառուցված է այնպես, որ երկիրը մասնակցում է ինչպես համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացներին («Մեծ յոթնյակ», ԱՀԿ), այնպես էլ տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներին (NAFTA/USMCA): 1994 թ. ԱՄՆ-ի ու Կանադայի միջև ազատ առևտրի համաձայնագրին միացավ նաև Մեքսիկան, և ձևավորվեց Հյուսիսամերիկյան ազատ առևտրի ասոցիացիան (North American Free Trade Association, NAFTA): NAFTA-ն նոր պայմաններ ստեղծեց Կանադայի տնտեսական զարգացման համար[100]: Կանադական շուկայում մրցակցություն ապահովելու համար հանվեցին սահմանափակումները ԱՄՆ ու Մեքսիկայի արտադրողների համար: Մյուս կողմից՝ կանադական արտադրողների համար մեծ հնարա-

[100] Ինչպես մենք արդեն նշել ենք, 2018 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ն, Կանադան ու Մեքսիկան համաձայնության եկան փոխարինել NAFTA-ն ԱՄՆ-Մեքսիկա-Կանադա համաձայնագրով (United States-Mexico-Canada Agreement, USMCA): USMCA-ի նպատակն է ավելի քան 25 տարեկան NAFTA-ին բերել XXI դար՝ հատկապես մեծ ուշադրություն է դարձնելով թվային առևտրին, մտավոր սեփականությանը, ֆինանսական ծառայությունների ու գյուղատնտեսական ապրանքների առևտրին:

վորություններ բացվեցին՝ ԱՄՆ ու Մեքսիկայի շուկաներ դուրս գալու համար:

Միաժամանակ դրա հետ մեկտեղ աճում է նաև Կանադայի տնտեսության կախվածությունն արտաքին գործոններից, մասնավորապես ԱՄՆ-ի կողմից կանադական արտադրանքի նկատմամբ պահանջարկից: Ամեն դեպքում ԱՄՆ և ԵՄ երկրների շարունակական տնտեսական աճը բարենպաստ պայմաններ է ստեղծում այդ երկրների շուկաներում կանադական ապրանքների իրացման համար, մասնավորապես մեծ պահանջարկ են վայելում կանադական ներդրումային ապրանքները: 1990-ական թթ. լատինամերիկյան ու ասիական տարածաշրջանների ֆինանսական ճգնաժամը թուլացրեց Կանադայի դիրքերը այդ տարածաշրջաններում: Ավելին՝ 2008 թ. ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը զգալի բացասական ազդեցություն ունեցավ Կանադայի տնտեսության վրա (ՀՆԱ-ի բացասական աճ, գործազրկության ավելացում, առևտրային հաշվեկշռի պակասուրդ և այլն):

Կանադայի արտահանման ավելի քան 70 %-ը բաժին է ընկնում տնտեսության հինգ ոլորտների թողարկած արտադրանքին՝ անտառանյութի արտադրություն, լեռնարդյունահանման ու մետաղագործական արդյունաբերություն, սննդարդյունաբերության ու գյուղատնտեսության ոլորտ, էներգակիրներ ու մեքենաշինություն: Բացի դրանից՝ Կանադան աշխարհում ավանդաբար թղթի, նիկելի, ցինկի, ալյումինի, ասբեստի, երկաթաքարի, ուրանի, ոսկու, նավթի, ցորենի առաջատար արտահանողներից մեկն է:

Կանադան հիմնականում արտահանում է.

- մեքենաներ շու սարքավորումներ (այդ թվում՝ համակարգիչներ ու հեռահաղորդակցման սարքավորումներ) (22 %),
- ավտոմեքենաներ (24 %),
- արդյունաբերական ապրանքներ (18 %),

- անտառանյութի արդյունաբերության արտադրանք (14 %),
- գյուղատնտեսական արտադրանք, այդ թվում՝ ծովամթերք (8 %),
- սպառողական ապրանքներ (3 %):

2022 թ. տվյալներով Կանադայի արտահանման հիմնական գործընկեր երկրներն են ԱՄՆ-ն (77.0 %), Չինաստանը (3.6 %), Մեծ Բրիտանիան (2.3 %), Ճապոնիան (2.2 %) և Մեքսիկան (1.1 %): Ինչպես նշել ենք, ներկայումս Կանադան փորձում է նվազեցնել իր տնտեսության զարգացման կախվածությունը ԱՄՆ շուկայից: Զգալիորեն նվազել է ԱՄՆ տեսակարար կշիռը Կանադայի արտահանման մեջ՝ հօգուտ Չինաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ճապոնիայի: Համեմատության համար նշենք, որ 1998 թ. տվյալներով Կանադայի արտահանման 85 %-ը բաժին էր ընկնում ԱՄՆ-ին: Կանադայի տնտեսությունը չափից ավելի կախված է ԱՄՆ տնտեսության զարգացումից, և Կանադան միշտ ձգտել է տարբերակել իր արտահանման աշխարհագրական կառուցվածքը: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով, ինչը հենց սկիզբ առավ 2007 թ. ԱՄՆ-ում, զգալի նվազեցին Կանադայի արտահանման ծավալները դեպի ԱՄՆ: Սա հենց այն իրավիճակն էր, ինչից Կանադան այդքան փորձում էր խուսափել: Այսինքն՝ Կանադայի արտահանման մեջ ԱՄՆ տեսակարար կշռի նվազումն առաջին հերթին պայմանավորված էր ԱՄՆ շուկայում կանադական ապրանքների նկատմամբ պահանջարկի նվազմամբ ու Կանադայի արտահանման աշխարհագրական կառուցվածքի ընդլայնմամբ: Կանադան ԱՄՆ է արտահանում.

- արտադրված ավտոմեքենաների մոտ 80 %-ը,
- թեթև արդյունաբերության արտադրանքի 65 %-ը,
- էլեկտրասարքավորումների 50 %-ը,
- արդյունաբերական սարքավորումների 50 %-ը,

- անտառանյութի արդյունաբերության արտադրանքի մոտ կեսը:

Կանադան ԱՄՆ-ի համար նաև նավթի խոշոր մատակարար է. արդյունահանվող նավթի ու գազի մոտ կեսը արտահանվում է ԱՄՆ: Բացի դրանից՝ ապրանքների ու ծառայությունների երկկողմանի առևտրի ծավալներով ԱՄՆ-ն ու Կանադան աշխարհում ամենախոշոր գործընկերներն են:

Կանադայի ներմուծման հիմնական գործընկեր երկրներն են ԱՄՆ-ն (49.0 %), Չինաստանը (13.5 %), Մեքսիկան (5.5 %), Գերմանիան (2.9 %) և Ճապոնիան (2.3 %): Համեմատության համար նշենք, որ 1998 թ. ԱՄՆ-ին բաժին էր ընկնում Կանադայի ներմուծման 75 %-ը, ԵՄ երկրներին՝ 9 %-ը, Ճապոնիային՝ 4 %-ը: Կանադայի ներմուծման մեջ գլխավոր ապրանքախմբերն են.

- մեքենաներն ու սարքավորումները (34 %),
- ավտոմեքենաները (22 %),
- արդյունաբերական ապրանքները (20 %),
- սպառողական ապրանքները (11 %),
- գյուղատնտեսական արտադրանքը (այդ թվում՝ ծովամթերք) (6 %):

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք նշել, որ ներկայումս արտաքին տնտեսական հարաբերություններում Կանադայի կառավարության անհանգստության առարկան շարունակում է մնալ արտաքին ապրանքաշրջանառության կենտրոնացումը մեկ գործընկերոջ՝ ԱՄՆ-ի շուրջ: Այսպես, եթե 1990-ական թթ. կեսերին ԱՄՆ-ին բաժին էր ընկնում Կանադայի ամբողջ արտահանման 85 %-ը, իսկ ներմուծման՝ 75 %-ը, ապա 2022 թ. տվյալներով պատկերը հետևյալն էր. ԱՄՆ-ին բաժին էր ընկնում Կանադայի ամբողջ արտահանման 74.5 %-ը, իսկ ներմուծման՝ 63.9 %-ը: Ինչպես նկատում ենք, 1990-2014 թթ. ընկած ժամանակահատվածում Կանադային հաջողվել է զգալի նվազեցնել կախվածությունը ԱՄՆ տնտեսությունից:

Օտարերկրյա շուկաների տարբերակման գործընթացում կանադական ձեռնարկությունները լուրջ դժվարություններ են ունենում, քանի որ տնտեսության մեջ առկա ձեռնարկությունների մեծ մասը դասվում են փոքր ու միջին ձեռնարկությունների շարքին, որոնց համար օտարերկրյա նոր շուկա դուրս գալու ռիսկը սովորաբար բավականին մեծ է: Ի տարբերություն փոքր ու միջին ձեռնարկությունների՝ տնտեսության մեջ գործող խոշոր ձեռնարկությունների զգալի մասը ամերիկյան կազմակերպությունների մասնաճյուղեր են, որոնք գործում են մայր ձեռնարկության կողմից հաստատված մեկ միասնական ռազմավարության շրջանակում:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ի ծավալով ո՞ր տեղն է զբաղեցնում Կանադան «Մեծ յոթնյակի» երկրների շարքում:
2. Իր զբաղեցրած տարածքով ո՞ր երկրներին է զիջում Կանադան համաշխարհային տնտեսության մեջ:
3. Ինչպե՞ս կբացատրեք Կանադայի արտաքին ապրանքաշրջանառություն/ՀՆԱ ցուցանիշի հարաբերական մեծ մակարդակը՝ ի տարբերություն «Մեծ յոթնյակի» մյուս երկրների:
4. Կանադան դրակա՞ն, թե՞ առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկիր է:
5. Որքա՞ն է կազմում Կանադայի տնտեսապես ակտիվ բնակչությունը 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության մեջ:
6. Որո՞նք են Կանադայի տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները:

7. Պետության դերը Կանադայի տնտեսության մեջ, ի տարբերություն ԱՄՆ-ի, շատ ավելի մեծ, թե փոքր է եղել: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
8. Եթե համեմատեք Կանադայի ու ԱՄՆ տնտեսությունների ճյուղային կառուցվածքները, ապա ինչպիսի՞ տարբերություն կգտնեք: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
9. Ո՞ր երկիրն է Կանադայի գլխավոր առևտրային գործընկեր երկիրը:
10. Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն ո՞ր խմբավորմանն է անդամակցում Կանադան: Թվարկե՛ք այդ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորմանն անդամակցող երկրները:

Հավելված

Աղյուսակ 7.2.1. Կանադայի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն դոլար)[101]	1.18	1.24	1.29	1.38	1.39	1.35	1.39	1.44	1.46	1.50	1.54	1.56	1.57	1.62	1.65	1.69	1.60	1.69	1.74
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	3.9	5.0	4.2	6.9	1.0	-2.9	3.1	3.1	1.8	2.3	2.9	0.7	1.0	3.0	2.4	1.9	-5.3	5.0	3.4
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազ. դոլար)	37.0	38.5	39.7	42.0	42.0	40.3	41.1	42.0	42.3	42.8	43.6	43.5	43.5	44.3	44.7	44.9	42.1	44.2	44.9
Գնաճի մակարդակ (CPI), %	1.9	2.2	2.0	2.1	2.4	0.3	1.8	2.9	1.5	0.9	1.9	1.1	1.4	1.6	2.3	1.9	0.7	3.4	6.8
Գործազրկության մակարդակ, %	7.2	6.8	6.3	6.0	6.1	8.3	8.1	7.5	7.3	7.1	6.9	6.9	7.0	6.3	5.8	5.7	9.5	7.5	5.3

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023 թ.:

[101] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

Աղյուսակ 7.2.2. Կանադայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.,[102] %

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	2.1	2.1	2.0	2.1	2.1	2.0	1.9	2.0	1.8	1.8	1.8	1.8	1.7	1.6	1.6	1.5	1.5	1.5	1.6	1.3
Արդյունաբերություն	23.2	23.0	23.0	22.7	22.1	21.7	21.5	20.3	20.1	20.3	20.5	20.3	20.2	19.9	19.6	19.5	19.5	19.3	19.3	19.3
Ծառ. ոլորտ	74.7	74.9	74.9	75.2	75.8	76.3	76.6	77.8	78.0	77.9	77.8	77.9	78.1	78.4	78.8	79.0	79.0	79.2	79.2	79.4

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023 թ.:

Աղյուսակ 7.2.3. Կանադայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2001-2019 թթ.[103], %

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գյուղատնտեսություն	2.1	2.0	2.1	2.2	1.9	1.7	1.6	1.8	1.5	1.5	1.8	1.8	1.9	1.6	1.9	1.9	1.9	1.7	1,7
Արդյունաբերություն[104]	28.4	27.6	27.9	28.4	29.2	28.8	28.7	29.3	25.1	26.4	27.1	26.6	26.6	27.1	24.4	23.3	24.0	24.6	24.1
Ծառ. ոլորտ[105]	62.5	63.0	62.9	62.4	62.0	62.7	63.1	62.7	66.9	65.7	64.8	65.2	65.2	64.9	67.0	68.0	67.1	66.9	67.7

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023 թ.:

[102] Տնտեսապես ակտիվ բնակչության տվյալներն ըստ ոլորտների Կանադայի տնտեսության համար առկա են մինչև 2021 թվականը:
[103] Տնտեսության ճյուղային կառուցվածքի տվյալները Կանադայի տնտեսության համար առկա են մինչև 2019 թվականը:
[104] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:
[105] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

Աղյուսակ 7.2.4. Կանադայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտա-հանում	360.5	388.2	420.2	455.6	315.2	385.8	450.4	454.1	456.6	473.5	408.8	389.1	420.7	450.7	446.5	389.8	503.9	598.5
Ներմու-ծում	314.4	350.1	380.3	408.7	321.0	391.2	450.6	462.3	461.8	463.0	419.7	402.1	432.6	459.8	453.1	404.2	491.7	570.1
Առևտ-րային հաշվ.	46.1	38.1	39.9	46.8	-5.7	-5.4	-0.2	-8.3	-5.1	10.5	-10.9	-13.9	-11.9	-9.1	-6.6	-14.4	12.2	28.3

Աղբյուր՝ International Trade Centre:

Գլուխ 8. Արևմտյան Եվրոպայի երկրներ

8.1. Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների տնտեսության ընդհանուր բնութագիրը և զարգացման առանձնահատկությունները

Տնտեսագիտական գրականության մեջ «Արևմտյան Եվրոպա» հասկացությանը ընդունված է վերագրել մի մեծ տարածաշրջան (երբեմն նաև ընդգրկվում է Հյուսիսային ու Հարավային Եվրոպան), որը ներառում է ավելի քան տասնմեկ երկիր (Ավստրիա, Բելգիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իռլանդիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մոնակո, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Շվեյցարիա): Չնայած այն հանգամանքին, որ «Արևմտյան Եվրոպա» հասկացությունը լայնորեն կիրառվում է, չկա միասնական մոտեցում, թե որ երկրներն են ներառված այդ տարածաշրջանում: Արևմտյան Եվրոպայի երկրների շարքում կան տնտեսական ու քաղաքական առումով խոշոր/առաջատար ու «գաճաճ» երկրներ: Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրները դասվում են զարգացած երկրների շարքին, ինչն էլ հենց հիմք է հանդիսանում տարածաշրջանում այդ երկրների տնտեսական սերտ համագործակցության համար: Այսպիսով՝ Արևմտյան Եվրոպայի երկրներին տնտեսական ու քաղաքական առումով կարելի է դասակարգել խոշոր/ առաջատար զարգացած երկրների, որոնք ընդգրկվում են «Մեծ յոթնյակում», և երկրների, որոնք նույնպես համարվում են զարգացած, սակայն ներառվում «Մեծ յոթնյակում»: Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներն են՝

- Գերմանիան,
- Ֆրանսիան,
- Մեծ Բրիտանիան,
- Իտալիան:

Նշված երկրները ձևավորում են եվրոպական տնտեսության հիմքը, նրանց բաժին է ընկնում ամենահզոր տնտեսական ներուժը տարածաշրջանում: *Աղյուսակ 8.1.1-ում* բերված են Արևմտյան Եվրոպայի վերը նշված առաջատար երկրների մակրոտնտեսական ցուցանիշները:

Աղյուսակ 8.1.1. Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների մակրոտնտեսական որոշ ցուցանիշներ 2022 թ.

Երկրներ	ՀՆԱ[106] (տրիլիոն դոլար)	ՀՆԱ աճ (%)	Մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ	Գնաճի մակարդակ (%)	Գործազրկության մակարդակ (%)
Գերմանիա	3.63	1.8	43,361	6.9	3.1
Մեծ Բրիտանիա	3.20	4.3	47,927	7.9	3.6
Ֆրանսիա	2.63	2.5	38,816	5.2	7.3
Իտալիա	1.96	3.7	33,281	8.2	8.1

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Ինչպես նկատում ենք *Աղյուսակ 8.1.1*-ից, Արևմտյան Եվրոպայում տնտեսական հզորությամբ (իրական ՀՆԱ-ի մեծությամբ) առաջին տեղում է Գերմանիան, երկրորդ տեղում՝ Մեծ Բրիտանիան, երրորդ տեղում՝ Ֆրանսիան, վերջապես չորրորդ տեղում՝ Իտալիան: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ծավալով Արևմտյան Եվրոպայում առաջատարը Մեծ Բրիտանիան է:

2022 թ. տնտեսական աճի ցուցանիշով Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում կրկին առաջատարը Մեծ Բրիտանիան է: Այստեղ հատկանշական է նաև Իտալիայի տնտեսական աճի անհամեմատ մեծ ցուցանիշը, ինչը 2022 թ. կազմել է 3.7 %: Հետաքրքիր է այն փաստը, որ 2020 թ., COVID-19 համավարակով պայմանավորված, ամենացածր տնտեսական անկումը

[106] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

գրանցվել էր Գերմանիայում: Այսպես, 2020 թ. Գերմանիայում ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել էր -3.8 %, Մեծ Բրիտանիայում՝ -10.3 %, Ֆրանսիայում՝ -7.5 %, իսկ Իտալիայում՝ -8.9 %: Մյուս կողմից՝ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ ամենաբարձր տնտեսական անկումը գրանցվել էր Գերմանիայում: Այսպես, 2009 թ. Գերմանիայի տնտեսական աճի տեմպը կազմել էր -5.7 %, Մեծ Բրիտանիայինը՝ -4.2 %, Ֆրանսիայինը՝ -2.9 %, իսկ Իտալիայինը՝ -5.2 %: Ավելին՝ 2010-2016 թթ. ընկած ժամանակահատվածում տնտեսական աճի համեմատաբար բարձր ցուցանիշով առանձնացել են Գերմանիան ու Մեծ Բրիտանիան: 2017-2019 թթ. ընկած ժամանակահատվածում տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպով առանձնացել է Ֆրանսիան: Այսպես, 2019 թ. Ֆրանսիայի ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 1.8 %, Մեծ Բրիտանիայինը՝ 1.7 %, Գերմանիայինը՝ 1.0 %, իսկ Իտալիայինը՝ 0.4 %: Ինչպես նկատում ենք, վերջին տարիներին՝ մինչև COVID-19 համավարակը, զգալիորեն նվազել են Գերմանիայի ու Մեծ Բրիտանիայի տնտեսական աճի ցուցանիշները:

2022 թ. տվյալներով Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում ամենացածր գործազրկության մակարդակով առանձնացել են Գերմանիան (3.1 %) ու Մեծ Բրիտանիան (3.6 %), սակայն միշտ չէ, որ Գերմանիան նման ցածր գործազրկության մակարդակ է ունեցել: Նախկինում Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում Մեծ Բրիտանիան միշտ առանձնացել է իր գործազրկության ցածր մակարդակով: Այսպես, 2007 թ. տվյալներով գործազրկության մակարդակը Մեծ Բրիտանիայում կազմել է 5.3 %, Գերմանիայում՝ 8.6 %, Ֆրանսիայում՝ 7.7 %, իսկ Իտալիայում՝ 6.1 %: 2008-2012 թթ. ընկած ժամանակահատվածում աճել է գործազրկության մակարդակը Արևմտյան Եվրոպայի բոլոր առաջատար երկրներում՝ բացի Գերմանիայից, որտեղ նկատվել է գործազրկության մակարդակի

նվազման միտում, ինչը հիմնականում պայմանավորված էր ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի հետևանքով առաջացած կառուցվածքային փոփոխություններով: 2013 թվականից ի վեր Մեծ Բրիտանիայի տնտեսության մեջ նույնպես նկատվել է գործազրկության մակարդակի նվազման միտում: 2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակը Մեծ Բրիտանիայում կազմել է 3.6 %, ինչը շատ ավել ցածր է, քանի մինչճգնաժամային ժամանակահատվածի ցուցանիշը: Այստեղ հարկ է նշել, որ COVID-19 համավարակը էական ազդեցություն չի ունեցել Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների գործազրկության մակարդակի վրա: Ավելին՝ COVID-19 համավարակը էական ազդեցություն չի ունեցել նաև Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների գնաճի մակարդակի վրա: Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրները միշտ առանձնացել են իրենց գնաճի ցածր մակարդակով: 2022 թ. տվյալներով Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներում նկատվել են գնաճի անհամեմատ բարձր ցուցանիշներ: Գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշներով առանձնացել են հատկապես Իտալիան (8.2 %) ու Մեծ Բրիտանիան (7.9 %):

Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսության հիմնական առանձնահատկությունները: Արևմտյան Եվրոպան, ի տարբերություն աշխարհի մյուս տարածաշրջանների, բավականին աղքատ է օգտակար հանածոներով: Բնական հանածոնների պաշարներով աշխարհում խոշորագույն տասը երկրներն են Ռուսաստանը (77 տրիլիոն դոլար), ԱՄՆ-ն (45 տրիլիոն), Սաուդյան Արաբիան (35 տրիլիոն), Կանադան (33 տրիլիոն), Իրանը (27 տրիլիոն), Չինաստանը (23 տրիլիոն), Բրազիլիան (22 տրիլիոն), Ավստրալիան (20 տրիլիոն), Իրաքը (16 տրիլիոն) և Վենեսուելան (15 տրիլիոն): Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներին բաժին են ընկնում ցինկի համաշխարհային պաշարների 18 %-ը, պղնձի 7 %-ը, էներգակիրների 12 %-ը, այդ թվում՝ ածխի համաշխարհային պաշարների 20 %-ն ու նավթի 5 %-ը:

Սեփական հանքահումքային բազայի սահմանափակվածությունը տարածաշրջանին այս ոլորտով մեծ կախվածության մեջ է դրել արտաքին աշխարհից: Արևմտյան Եվրոպան ներմուծում է տնտեսությունում սպառվող էներգակիրների 2/5-ն ու հումքի այլ տեսակների ¾ը:

Միևնույն ժամանակ Արևմտյան Եվրոպան բավական ապահովված է արտադրության մյուս գործոններով (համապատասխան որակավորում ունեցող աշխատուժ, ֆինանսական կապիտալ և բարձր տեխնոլոգիաներ): Էական ավելցուկ է նկատվում առաջին հերթին աշխատուժի շուկայում, քանի որ գործազրկության մակարդակն առանձին երկրներում կազմում է 10-12 %, սակայն դա ունի նվազման միտում, հատկապես Գերմանիայի դեպքում: Այսպես, եթե 1995 թ. տվյալներով Ֆրանսիայում գործազրկության մակարդակը կազմել է 11.8 %, Գերմանիայում՝ 8.1 %, իսկ ըստ 2005 թ. տվյալների՝ Ֆրանսիայում՝ 8.5 %, Գերմանիայում՝ 11.2 %, ապա՝ 2022 թ.՝ Ֆրանսիայում՝ 7.3 %, Գերմանիայում՝ 3.1 %:

Աշխատուժի արտադրողականության մակարդակով Արևմտյան Եվրոպան զիջում է ԱՄՆ-ին ու Ճապոնիային, չնայած վերջին 15 տարում հաջողվել է 3-5 %-ով կրճատել այդ տարբերությունը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այդպիսի տարբերություններ առաջին հերթին առաջանում են ԵՄ շրջանակում հարաբերականորեն քիչ զարգացած երկրների՝ Հունաստանի, Պորտուգալիայի, Իսպանիայի ու Իռլանդիայի աշխատուժի արտադրողականության հարաբերականորեն ցածր մակարդակի պատճառով:

Արևմտյան Եվրոպան ավանդական ոլորտների (մետաղագործություն, մեքենաշինություն ու մետաղամշակում) տեխնոլոգիական մակարդակով գրեթե ոչնչով չի զիջում ԱՄՆ-ին ու Ճապոնիային, իսկ քիմիական ոլորտում առաջատար է (առաջին հերթին՝ Գերմանիան): Դրա հետ մեկտեղ տարածաշրջանը միկ-

րոէլեկտրոնիկայի, ռոբոտաշինության, բիոտեխնոլոգիայի, օպտիկական էլեկտրոնիկայի ոլորտներով դեռ ետ է մնում ԱՄՆ-ից ու Ճապոնիայից:

Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսության զարգացման սոցիալ-տնտեսական մոդելը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայում ու Ճապոնիայում ձևավորվեց պետական կարգավորմամբ սոցիալական ուղղվածություն ունեցող կապիտալիզմ: Արևմտյան Եվրոպայի տնտեսական զարգացման սոցիալ-տնտեսական մոդելի հիմնական առանձնահատկությունները, որոնք տարբերվում են ամերիկյանից ու ճապոնականից, հետևյալներն են.

- Արևմտյան Եվրոպայում պետական կարգավորման մակարդակը հատկապես սոցիալական ապահովածության բնագավառում շատ ավելի մեծ դեր է կատարում, քան ԱՄՆ-ում ու Ճապոնիայում: Այդ պատճառով էլ Արևմտյան Եվրոպայի վերազգային կազմակերպությունները, որպես կանոն, իրենց ներուժով ու հզորությամբ զիջում են նմանատիպ ամերիկյան և ճապոնական կազմակերպություններին:
- Արևմտյան Եվրոպայի տնտեսական համակարգում սոցիալական ուղղվածությունն ամենաբարձրն է ներկայիս համաշխարհային տնտեսության մեջ: Պետությունը կատարում է սոցիալական շատ ավելի գործառույթներ և շատ ավելի հաճախակի, քան ԱՄՆ-ում ու Ճապոնիայում: Արևմտյան Եվրոպայի կապիտալիզմը շատ ավելի մոտ է «սոցիալ-շուկայական տնտեսությանը»:
- Արևմտյան Եվրոպայի երկրներում բավականին բարձր են տնտեսության բացվածության աստիճանն ու տնտեսական կյանքի միջազգայնացման մակարդակը, քան ԱՄՆ-ում ու Ճապոնիայում:

Արևմտյան Եվրոպայի տնտեսական զարգացման մոդելի այս առանձնահատկությունները հիմնականում պայմանավորված են նրանով, որ Արևմտյան Եվրոպայի հասարակական կյանքում երկար ժամանակահատված մեծ է եղել սոցիալ-դեմոկրատների դերը: Այսպես, 1990-ական թթ. վերջին սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող կուսակցությունները իշխում էին տարածաշրջանի բոլոր խոշոր երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Իտալիա):

Արևմտյան Եվրոպայի երկրների մասնակցությունը համաշխարհային տնտեսությանը: Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսության «բացվածությունը» առաջին հերթին արտահայտվում է արտաքին առևտրի ցուցանիշներով: Այսպես, Արևմտյան Եվրոպայի երկրների արտաքին ապրանքաշրջանառության քվոտան միջինում կազմում է ավելի քան 130.0 %: Համեմատության համար նշենք, որ 2022 թ. տվյալներով ԱՄՆ-ի դեպքում այդ ցուցանիշը կազմել է 21.2 %, իսկ Ճապոնիայի դեպքում՝ 38 %: Արևմտյան Եվրոպայի տնտեսության նման «բացվածության» մակարդակը հիմնականում պայմանավորված է տարածաշրջանի ռեսուրսների և ներքին շուկաների սահմանափակվածությամբ: Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսության այդպիսի բացվածությունը խիստ կախվածություն է առաջացնում համաշխարհային տնտեսությունից և ազդում է դրանց տնտեսությունների մրցունակության աստիճանի վրա ինչպես տարածաշրջանում, այնպես էլ համաշխարհային տնտեսության մեջ:

Արևմտյան Եվրոպայի արտաքին առևտրի բնութագրական գծերից մեկը այն է, որ արտաքին առևտրի հիմնական մասը բաժին է ընկնում ներտարածաշրջանային առևտրին: Արևմտյան Եվրոպայի երկրները, մասնավորապես ԵՄ երկրները, մեկը մյուսի համար գլխավոր առևտրային գործընկերներ են ու արտաքին շուկաներ: Արևմտյան Եվրոպայի երկրների արտաքին ապրանքաշրջանառության ավելի քան 70 %-ը բաժին է ընկնում ներտարա-

ծաշրջանային առևտրին այն դեպքում, երբ Հյուսիսային Ամերիկայի համար (նույնիսկ NAFTA-ի ձևավորումից հետո) այդ ցուցանիշը կազմում է 40 %, Հարավարևելյան Ասիայի դեպքում՝ 30 %, իսկ ԵԱՏՄ երկրների համար այս ցուցանիշը 2022 թ. տվյալներով կազմել է մոտ 15 %:

Ներդրումների ոլորտում տարածաշրջանի պատկերը այլ է: Իրականացվող ընդհանուր ներդրումների ավելի քան 60 %-ը կատարվում է տարածաշրջանից դուրս: Խնդիրն այն է, որ Արևմտյան Եվրոպայի երկրները ներդրումային պայմաններով բավական նման են մեկը մյուսին: Այդ պատճառով Արևմտյան Եվրոպայի ներդրողները փնտրում են այնպիսի երկրներ կամ տարածաշրջաններ, որտեղ ներդրումային պայմանները շատ ավելի լավն են, քան իրենց տարածաշրջանում: Այդպիսի երկրների կամ տարածաշրջանների թվին են պատկանում Հյուսիսային Ամերիկան (առաջին հերթին ԱՄՆ), Հարավարևելյան Ասիայի արդյունաբերական նոր երկրները, ինչպես նաև զարգացող երկրները, որոնց տնտեսություններն ապահովում են բավականին դինամիկ զարգացում:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Թվարկե՛ք Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրները՝ ըստ ՀՆԱ-ի մակարդակի նվազման:
2. Ըստ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մեծության՝ Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներից ո՞ր երկիրն է առաջատար: Փորձե՛ք բացատրել՝ ինչու:
3. Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում ո՞ր երկիրն է առանձնանում համեմատաբար ցածր գործազրկության մակարդակով:
4. Ինչպիսի՞ն է Արևմտյան Եվրոպայի երկրների տնտեսության զարգացման սոցիալ-տնտեսական մոդելը: Ինչո՞վ է

այն տարբերվում տնտեսական զարգացման մյուս մոդելներից:

5. Արևմտյան Եվրոպայի երկրների մասնակցությունը համաշխարհային տնտեսական գործընթացներին բարձր է, թե ցածր: Փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:

8.2. Գերմանիայի տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Գերմանիայի տարածքը կազմում է 357 հազ. կմ^2, իսկ բնակչությունը 2022 թ. տվյալներով կազմել է 83.7 մլն մարդ:

Գերմանիայի տնտեսաաշխարհագրական դիրքը շատ բարենպաստ է. Եվրոպայում գրավում է կենտրոնական դիրք, որտեղ հատվում են տրանսպորտային բոլոր կարևոր ուղիները: Մեծ նշանակություն ունեն Հյուսիսային ու Բալթիկ ծովերը, Քիլի ջրանցքը: Գերմանիայի ինը հարևաններից ինն էլ զարգացած երկրներ են, ԵՄ անդամ, որով էլ ավելի են ամրապնդվում երկրի տնտեսական ու աշխարհաքաղաքական դիրքերը:

Գերմանիայի աշխարհաքաղաքական դիրքն ու նշանակությունը կտրուկ փոխվեց Գերմանիայի Արևմտյան ու Արևելյան մասերի կազմակերպությունից հետո: Եթե նախկինում այն գտնվում էր կապիտալիստական ու սոցիալիստական ճամբարների սահմանագծում, ապա ներկայումս հայտնվել է ԵՄ կենտրոնում և NATO-ի գլխավոր հենարաններից մեկն է Եվրոպայում (ակտիվ (180 հազար մարդ) ու պահեստային զինծառայողների (140 հազար մարդ) թվաքանակով, պատրաստվածության աստիճանով և այլն):

Գերմանիան հարուստ չէ օգտակար հանածոներով: Կարելի է միայն առանձնացնել ածուխը, գորշ ածուխն ու կալիումական աղերը: Մյուս կողմից՝ երկրի հանքահումքային ռեսուրսները, որոնք հզոր դեր են խաղացել երկրի տնտեսական զարգացման գործում, ներկայումս զգալիորեն կորցրել են և շարունակում են կորցնել իրենց նշանակությունը: Օրինակ՝ ներմուծվող քարածուխը չորս անգամ ավելի էժան է, քան տեղականը: Հետագայում կներկայացնենք, թե ինչու է Գերմանիան շարունակում արդյունահանել քարածուխ, եթե ներմուծվողը չորս անգամ ավելի էժան է, քան տեղականը: Սահմանափակ են նաև ջրային ռեսուրսները:

Արդյունաբերության մեջ լայնորեն կիրառվում է ջրօգտագործման փակ շրջանառությունը:

Երկրի տարածքի զգալի մասը հարթավայրային է, բնորոշ է բարեխառն կլիման, տարածքի մոտ 55 %-ը պիտանի է գյուղատնտեսության համար, իսկ 30 %-ը զբաղեցնում են անտառները:

1990 թ. հոկտեմբերի 3-ին՝ Գերմանիայի Արևմտյան ու Արևելյան մասերի կազմակերպությունից հետո, տնտեսական հզորությամբ Գերմանիան Եվրոպայում վերածվեց ամենախոշոր երկրի: 1995 թվականից ի վեր Գերմանիայի տնտեսության աճի տեմպը զգալիորեն նվազեց, և այդ ցուցանիշով Գերմանիան Արևմտյան Եվրոպայում ամենացածր տեմպերով զարգացող երկրներից մեկն էր: Մասնավորապես, տնտեսական աճի տեմպերը զգալիորեն նվազեցին 2001-2003 թթ. ընկած ժամանակաշրջանում՝ 2003 թ. կազմելով -0.7 %: Այսպիսով՝ ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Գերմանիայի տնտեսությունը 2002-2003 թթ. գտնվում էր ստագնացիայի մեջ: Տնտեսական վերականգնումը սկսվեց 2004 թ., որը հիմնվեց արտահանման աճի վրա[107]:

Ներկայումս համաշխարհային տնտեսության մեջ Գերմանիան տնտեսական հզորությամբ (հաստատուն գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալով) գրավում է 4-րդ տեղը՝ ԱՄՆ-ից (20.9 տրիլիոն), Չինաստանից (16.3 տրիլիոն) ու Ճապոնիայից (4.5 տրիլիոն) հետո: Այսպես, 2022 թ. տվյալներով Գերմանիայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 4.1 տրիլիոն դոլար, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 3.63 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 43,300 դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.2.1*): Ինչպես նկատում ենք, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամն ու COVID-19 համավարակը զգալի բացասական ազդեցություն են ունեցել Գերմանիայի տնտեսության վրա:

---

[107] Ինչպես նկատում ենք Հավելված, Աղյուսակ 8.2.1-ից, 2002 թ.Գերմանիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը եղել է -0.2 %: ՀՆԱ-ի աճի տեմպի անկում է նկատվել նաև 2005 թ.: 2009 թ. ՀՆԱ-ի աճի բացասական ցուցանիշը պայմանավորված էր ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով:

2009 և 2020 թթ. Գերմանիայի տնտեսական աճի տեմպը կազմել է համապատասխանաբար -5.7 ու -3.8 %: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ երկու դեպքում էլ Գերմանիային հաջողվեց վերականգնել մինչճգնաժամային ՀՆԱ մակարդակները մեկ տարի անց: 2022 թ. Գերմանիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 1.8 %, իսկ գնաճի ու գործազրկության մակարդակները՝ համապատասխանաբար 6.9 % ու 3.1 %: Անդրադառնալով գնաճի մակարդակին՝ կարող ենք փաստել, որ Գերմանիայի տնտեսության գնաճի մակարդակը համեմատաբար ցածր է եղել և համապատասխանել է ԵՄ եվրոյի գոտու մեջ մտնող երկրների գնաճի միջին մակարդակին: 2022 թ. գրանցված գնաճի ցուցանիշը (6.9 %) ամենաբարձր գնաճի մակարդակն է եղել 2004-2022 թթ. ընկած ժամանակահատվածի համար: Ինչպես նկատում ենք, COVID-19 համավարակը, ինչպես ԱՄՆ ու Կանադայի տնտեսություններում, այնպես էլ զգալի ազդեցություն չի ունեցել Գերմանիայի գործազրկության մակարդակի աճի վրա: Ինչպես արդեն նշել ենք, Գերմանիան Արևմտյան Եվրոպայում նախկինում միշտ առանձնացել է իր գործազրկության համեմատաբար բարձ ցուցանիշով: Իրավիճակը կտրուկ փոխվեց 2007 թ.՝ ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո: Տնտեսության կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ Գերմանիայում, 2010 թ. սկսած, գործազրկության մակարդակը նվազման միտում է ձեռք բերել: Ավելին՝ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ազդեցության պարագայում, եթե մյուս զարգացած երկրներում նկատվել է գործազրկության մակարդակի ավելացում, ապա Գերմանիայում նկատվել է գործազրկության մակարդակի կրճատում:

Գերմանիայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը 2022 թ. կազմել է 87.3 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկը՝ 172.4 մլրդ դոլար: 2022 թ. առևտրային հաշվեկշռի ավելցուկի մեծությամբ կտրուկ վատթարացել է Գերմա-

նիայի դիրքը համաշխարհային տնտեսության մեջ: Առևտրային հաշվեկշռի ավելցուկով Գերմանիան համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցրել է 7-րդ տեղը՝ Չինաստանից (877.6 մլրդ դոլար), Ռուսաստանի Դաշնությունից (380.6 մլրդ դոլար), Սաուդյան Արաբիայից (221.3 մլրդ դոլար), Նորվեգիայից (164.3 մլրդ դոլար), Ավստրալիայից (112.0 մլրդ դոլար) և Քաթարից (97.4 մլրդ դոլար) հետո: Այստեղ հարկ է նշել, որ 2014-2021 թթ. առևտրային հաշվեկշռի ավելցուկով Գերմանիան համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցրել է երկրորդ տեղը՝ Չինաստանից հետո: 2021 թ. տվյալներով Գերմանիայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է 208.2 մլրդ դոլար, իսկ Չինաստանինը՝ 686.1 մլրդ դոլար: 2022 թ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկով Գերմանիան աշխարհում զբաղեցրել է չորրորդ տեղը՝ Չինաստանից (401.8 մլրդ դոլար), Ռուսաստանի Դաշնությունից (237.8 մլրդ դոլար) ու Նորվեգիայից (174.5 մլրդ դոլար) հետո: 2020 թ. տվյալներով Գերմանիան վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկով (275.8 մլրդ դոլար) համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցրել է առաջին տեղը:

2022 թ. տվյալներով Գերմանիայի պետական պարտքը կազմել է 2.7 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 66.1 %-ը: Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի մեծությամբ Գերմանիան աշխարհում զբաղեցրել է 62-րդ տեղը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 6.4 տրիլիոն դոլար (ՀՆԱ-ի մոտ 156 %-ը): Արտաքին պարտքի ցուցանիշի բացարձակ մեծությամբ Գերմանիան աշխարհում զբաղեցնում է 4-րդ տեղը ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Ֆրանսիայից հետո: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ աճեց ինչպես Գերմանիայի պետական պարտքը, այնպես էլ արտաքին (պետական ու մասնավոր) պարտքը, սակայն Գերմանայի պետական և արտաքին պարտքի աճը համեմատաբար փոքր էր՝ «Մեծ յոթնյակի» մյուս երկրների հետ համեմատած: 2007 թ. տվյալներով Գերմանիայի

պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 64.9 %-ը, իսկ արտաքին պարտքը՝ 133.4 %-ը: Այսպես, 2012թ. տվյալներով Գերմանիայի պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 81.0 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր)՝ 166.1 %-ը: Ինչպես նկատում ենք, 2012 թվականի հետ համեմատած՝ զգալիորեն նվազել է Գերմանիայի ինչպես պետական պարտքը, այնպես էլ արտաքին (պետական և մասնավոր) պարտքը:

Բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները: Բնակչության 80 %-ից ավելին գերմանացիներ են: Որպես բարձր կենսամակարդակ ունեցող երկիր այլ երկրներից մշտապես մեծ է եղել աշխատուժի ու փախստականների ներհոսքը: 2022 թ. տվյալներով ներգաղթածները կազմել են Գերմանիայի ամբողջ բնակչության ավելի քան 14.9 %-ը: Գերմանիայի բնակչությունը պատկանում է վերարտադրության երրորդ տիպին: Դեռևս 1970-ական թթ. մեծ անկում ապրեց բնակչության բնական աճը: Ծնելիության մակարդակի վրա բացասական ազդեցություն ունեցավ ուրբանիզացման բարձր մակարդակն ու կանանց զբաղվածության մակարդակի աճը: 2022 թ. տվյալներով ամբողջ բնակչության 77.6 %-ը կենտրոնացած էր քաղաքներում, իսկ կանայք կազմել են տնտեսապես ակտիվ բնակչության 46.7 %-ը: Ներկայումս Գերմանիային բնորոշ է «ազգի ծերացման» գործընթացը: 2022 թ. տվյալներով 65 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող մարդկանց թիվը կազմել է ամբողջ բնակչության ավելի քան 22.4 %-ը, ինչը լրացուցիչ «ծանրաբեռնվածություն» է առաջացնում յուրաքանչյուր աշխատողի համար[108]: Սրա հետ մեկտեղ Գերմանիա-

[108] Այստեղ համեմատության համար կարող ենք նշել, որ այս ցուցանիշը 1998 թ. Գերմանիայում կազմում էր 15.8 %: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ զարգացած երկրների շարքից, հատկապես «Մեծ յոթնյակի» երկրներից, Իտալիան ու Ճապոնիան նույնպես ունեն «ազգի ծերացման» գործընթացի հիմնախնդիր: Այսպես, վերը նշված երկու երկրներում 65 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող մարդկանց թիվը 2022 թ. տվյալներով կազմել է ամբողջ բնակչության ավելի քան 24.0 %-ն ու 29.9 %-ը համապատասխանաբար: Հայաստանի դեպքում այս ցուցանիշը 2022 թ. տվյալներով կազմել է 13.1 % և ունի աճի միտում:

յում բարձր է կյանքի միջին տևողությունը: Այսպես, 2022 թ. տվյալներով Գերմանիայում կյանքի միջին տևողությունը կազմել է 81 տարի, այդ թվում՝ տղամարդկանց կյանքի միջին տևողությունը կազմել է 78, իսկ կանանցը՝ 83 տարի:

2022 թ. տվյալներով Գերմանիայի տնտեսապես ակտիվ բնակչությունը (44.3 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 61.5 %-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության 1.3 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 27.6 %-ը՝ արդյունաբերության, իսկ 71.1 %-ը՝ ծառայությունների ոլորտում: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 8.2.2*-ից, տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների Գերմանիայում փոքր-ինչ տարբերվում է «Մեծ յոթնյակի» մյուս երկրների տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունից[109]: Հատկապես Գերմանիայում հարաբերականորեն մեծ է տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավվածությունն արդյունաբերության ոլորտում, սակայն, ինչպես նկատում ենք, դա ունի նվազման միտում:

Երկար տարիներ Գերմանիայի աշխատուժի շուկայում գլխավոր հիմնախնդիրը շարունակում էր մնալ գործազրկությունը, ինչը 2000-ական թթ. կեսերին նույնիսկ կազմում էր երկնիշ թիվ: Չնայած Գերմանիան բարձր որակավորում ունեցող աշխատուժով ու կրթական մակարդակով աշխարհում գրավում էր առաջատար դիրքեր, սակայն երկրի տնտեսական աճի համար լուրջ խոչընդոտ էր ոչ ճկուն աշխատուժի շուկան: Գերմանիայում աշխատուժի շուկան խիստ կարգավորվում էր, մասնավորապես տնտեսության առաջատար ոլորտներում, այդ պատճառով ձեռնարկատերերը չէին ձգտում նոր աշխատատեղեր ստեղծել: Շատ դեպքերում գործատուներին ավելի հարմար էր վարձել ոչ բարձր կրթական մակարդակ ունեցող օտարերկրյա աշխատուժ, քան

[109] Նմանատիպ իրավիճակ դիտարկվում է նաև Ճապոնիայի ու Իտալիայի տնտեսություններում:

բարձր որակավորում ունեցող, բայց զգալի թանկ տեղական աշխատուժ: 2022 թ. տվյալներով Գերմանիայում գործազրկության մակարդը կազմել է 3.1 %, ինչը ամենացածր ցուցանիշներից մեկն է աշխարհում: Գործազրկության մակարդակի զգալի կրճատումն առաջին հերթին պայմանավորված է աշխատուժի շուկայում կառավարության իրականացրած բարեփոխումներով, որոնք նկատելիորեն ավելացրին աշխատուժի շուկայի ճկունությունը:

Գերմանիայի վերամիավորման տնտեսական հետևանքները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (1945 թ.) Գերմանիան բաժանվեց օկուպացված չորս գոտիների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի միջև: Այնուհետև՝ 1949 թ., երեք գոտիները միավորվեցին ու ստեղծեցին Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը՝ սոցիալ-շուկայական տնտեսությամբ, իսկ ԽՍՀՄ-ի գոտում (Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն) գործում էր պլանային տնտեսությամբ վարչահրամայական համակարգը: 1990 թ. հոկտեմբերի 3-ին երկու պետությունները խաղաղ վերամիավորվեցին, որի հետևանքով մեծացան երկրի տարածքը, բնակչության թիվը, բնական ու աշխատանքային ռեսուրսները և տնտեսական ներուժը:

Վերակազմակերպությունից հետո Գերմանիայի արևելյան հատվածի տնտեսական վիճակը անմխիթար էր: Բարձր զարգացման մակարդակ ունեցող, միջազգային շուկայում մրցունակ արևմտագերմանական տնտեսությունը հակադրվում էր արևելագերմանական թույլ զարգացած պլանային տնտեսությանը: Վերակազմակերպությունից հետո Գերմանիայի արևելյան հատվածը կորցրեց իր սպառման շուկաներն ու արտաքին տնտեսական կապերը նախկին սոցիալիստական երկրների, հատկապես ԽՍՀՄ-ի հետ: Սակայն հետագայում այդ խնդիրը հարթվեց նոր շուկաների ձեռքբերման հաշվին: Տնտեսության հետագա զարգացումն ապահովելու համար առաջին պլան է մղվում Գերմանիայի արևմտյան ու արևելյան հատվածների տնտեսությունների հավա-

սարակշռումը: Անհրաժեշտ էր կառուցվածքային առումով վերափոխել արևելյան շրջանը, փակել ոչ մրցունակ արտադրությունները, բարձրացնել աշխատուժի արտադրողականությունը՝ հասցնելով արևմտյան շրջանի մակարդակին, խրախուսել ներդրումները, ապահովել ազատ մրցակցություն և այլն: Այդ նպատակով ազատականացվեցին գները, իրականացվեց զանգվածային սեփականաշնորհում, վերակառուցվեցին ենթակառուցվածքները: Վերակազմակերպությունից հետո Գերմանիայի տնտեսության համար առաջնային խնդիրներից մեկը գործազրկության կրճատումն էր, այն արևմտյան հատվածում կազմում էր 8-10 %, իսկ արևելյան հատվածում՝ 17-18 %: Մշակվեցին զարգացման ու սոցիալական մի շարք ծրագրեր: Լրացուցիչ ծախսերն ապահովելու համար 1991 թ. սկսվեց կիրառվել «համերաշխության հարկը», որը կազմում էր 7.5 % և կիրառվում էր ինչպես եկամտային հարկի, այնպես էլ շահութահարկի վճարման դեպքում: Ներկայումս «համերաշխության հարկի» դրույքը կազմում է 5.5 % և գանձվում է՝ միայն եկամտի որոշակի մակարդակից սկսած: Ըստ տարբեր գնահատականների՝ զարգացման ու սոցիալական ծրագրերի իրականացմամբ 10-15 տարիների ընթացքում Գերմանիայի արևելյան հատվածի տնտեսական մակարդակը պետք է հավասարվեր արևմտյան հատածի մակարդակին: Գերմանիային հաջողվեց զգալիորեն կրճատել արևելյան հատվածի տնտեսական զարգացման մակարդակի տարբերությունը արևմտյան հատվածի տնտեսական զարգացման մակարդակից: Ներկայումս Գերմանիայի կառավարության բոլոր ծրագրերը կոչված են բարձրացնելու արևելյան հատվածի բնակչության կենսամակարդակը:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: Գերմանիայի տնտեսության ներկայիս զարգացման մոդելը սոցիալ-շուկայական է: Գերմանիայի տնտեսության զարգացման բոլոր ժամանակաշրջաններում տնտեսության մեջ բավական մեծ է եղել պետության դերը, քան

ԱՄՆ-ում ու Մեծ Բրիտանիայում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Գերմանիայում հենց կառավարությունն էր ապահովում հասարակական կայունությունն ու սոցիալական ապահովածությունը: Հիմնվելով սոցիալ-շուկայական տնտեսության սկզբունքների վրա՝ իր հանրահայտ բարեփոխումները անցկացրեց գերմանական «տնտեսական հրաշքի» հայր Լյուդվիգ Էրխարդը:

Սոցիալ-շուկայական տնտեսության մոդելը փոխզիջում է տնտեսական աճի ու հարստության «հավասարաչափ» բաշխման միջև: Համակարգի կենտրոնում դրված է պետության ձեռնարկատիրական գործունեությունը, որը պետք է ապահովի սոցիալական բարիքների «հավասարաչափ» բաշխումը հասարակության մեջ:

Գերմանիայի մակրոտնտեսական զարգացման մոդելի մյուս առանձնահատկությանը, այսպես կոչված, «Հռենոսյան կապիտալիզմն է», որը բնութագրվում է տնտեսության մեջ բանկերի մեծ դերով: Գերմանիայի տնտեսության մեջ բանկերը արդյունաբերական և ծառայությունների ոլորտում գործող ընկերությունների բավական խոշոր բաժնետերեր են: Այդ պատճառով էլ պատահական չէ, որ բանկերն ակտիվորեն ներգրավված են բիզնես որոշումների կայացման գործընթացում: Այսպիսով՝ Գերմանիայի տնտեսության մեջ բանկերի դերը (հաշվի առնելով դրանց իրական ազդեցությունը գործարարության վրա) շատ ավելի մեծ է, քան աշխարհի մյուս առաջատար երկրներում:

Սոցիալական ապահովածության բարձր մակարդակը հանգեցրեց նրան, որ եկամտի գրեթե 40 %-ը բաժին էր ընկնում աշխատավարձերի վճարմանը: Գերմանիայում վճարվող աշխատանք ռեսուրսի գինն աշխարհում ամենաբարձրերից է: 1990-ական թթ. վերջին Գերմանիայի տնտեսության մեջ հարկային դրույքը հասավ չտեսնված մեծության: Այսպես, եթե ԱՄՆ-ում ընկերությունների շահութահարկը կազմում էր 32 %, Մեծ Բրիտա-

նիայում՝ 45 %, ապա Գերմանիայում այդ մեծությունը հասնում էր 57 %-ի[110]: Հարկային բարձր դրույքները գերմանական բազմաթիվ ձեռնարկությունների ստիպում էին զարգացնել իրենց գործունեությունն արտասահմանում, իսկ բարձր եկամուտներ ունեցող ֆիզիկական անձինք նախընտրում էին մշտական բնակություն հաստատել աշխարհի այլ երկրներում (օրինակ՝ Ավստրիա, ԱՄՆ և այլուր):

Հարկերի բարձր մակարդակի ու օտարերկրյա ներդրումների խթանման ծրագրի բացակայության պատճառով Գերմանիան այնքան էլ գրավիչ չէր օտարերկրյա կապիտալի համար: Գերմանական աշխատուժի բարձր գինը զգալի նվազեցնում էր երկրի մրցունակությունը վերազգային կազմակերպությունների գործունեության ծավալման շրջանակում: Օտարերկրյա ձեռնարկությունները Գերմանիայում ավելի շատ հակված էին զբաղվել միայն իրացման հիմնախնդիրներով: Այսպես, 1990-ական թթ. վերջերին Նիդեռլանդներում ընդհանուր ներդրումների 35.0 %-ը բաժին էր ընկնում օտարերկրյա ներդրողներին, Մեծ Բրիտանիայում՝ 25.0 %-ը, Ֆրանսիայում՝ 12.0 %-ը, իսկ Գերմանիայում, չնայած նրան, որ վերջին տասը տարում օտարերկրյա ներդրումների ծավալը եռապատկվել էր, օտարերկրյա ներդրումները ընդհանուր ներդրումներում կազմում էին ընդամենը 7.5 %:

Բնակչության սոցիալական համընդհանուր բողոքները բացառելու համար պետությունը դեռևս շարունակում է սուբսիդավորել տնտեսության վնասով աշխատող ոլորտները: Գերմանիան պահպանում է ոչ միայն ածխի, մետաղագործական և նավաշինական արդյունաբերությունները, որոնք մրցունակ չեն համաշխարհային տնտեսության մեջ, այլև այդ ոլորտների վրա ուղղակի սուբսիդիաների տեսքով ծախսում է ամբողջ պետական բյուջեի մոտ 1/3-ը:

---

[110] Այստեղ հարկ է նշել, որ ներկայումս ընկերությունների շահութահարկը զգալիորեն նվազել է և կազմում է 30 %:

Գերմանիայի տնտեսության զարգացման ժամանակակից մակրոտնտեսական քաղաքականությունը: 1998 թ. սեպտեմբերի 27-ին՝ Գ. Շրեդերի վարչապետ ընտրվելուց հետո, հույս հայտնվեց, որ վերջապես վերջ կտրվի կոնսերվատիզմի ժամանակաշրջանին[111]: Հետաքրքիր է այն փաստը, որ Գերմանիան իր բարեփոխումների քաղաքականությամբ հիմնվում է ոչ թե ԱՄՆ, այլ առաջին հերթին ԵՄ այլ երկրների փորձի վրա: Ժամանակակից տնտեսական բարեփոխումների եվրոպական փորձում կա երկու այլընտրանք՝ կոնսերվատիզմ-«բլեյերիզմ» ու սոցիալիզմ-«ժոսպենիզմ»[112]: Այսպիսով՝ Շրեդերը իր մակրոտնտեսական քաղաքականությամբ հիմնվում էր Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի փորձի վրա, քանի որ Ֆրանսիայի տնտեսությունը բավական նման էր Գերմանիայի սոցիալ-շուկայական տնտեսությանը, իսկ Մեծ Բրիտանիան հաջողությամբ համատեղել էր կոնսերվատիզմն ու լեյբորիզմը:

Իշխանության գալուց անմիջապես հետո Շրեդերը հայտարարեց, որ Գերմանիան պետք է զարգանա շուկայական տնտեսությամբ, որպեսզի վերականգնի երկրի մրցունակությունը համաշխարհային շուկայում: Գերմանիայի տնտեսության ազատականացումը պետք է ապահովեր.

- հարկերի իջեցում,
- աշխատանքի շուկայի ճկունության բարձրացում,
- տնտեսության հասարակական ոլորտի մոդեռնացնում:

Շրեդերի քաղաքականությանը լրջորեն խանգարում էր նախկին ֆինանսների նախարար Օսկար Լաֆոնտենի դիրքորոշումը: Լաֆոնտենը կողմ էր այն տեսակետին, որ տնտեսության մեջ բա-

---

[111] Գերմանիայի ներկայիս վարչապետը Օլաֆ Շոլցն է, որը զբաղեցնում է այդ պաշտոնը 2021 թ. դեկտեմբերի 8-ից: Գերմանիայի նախկին վարչապետը Անգելա Մերկելն էր, որը զբաղեցրել է այդ պաշտոնը 2005 թ. նոյեմբերի 22-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 8-ը (վերընտրվել է 2009 թ., 2013 թ. ու 2018 թ.):

[112] Ծրագրերը կոչվել են այսպես Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի վարչապետներ Էնտոնի Բլեյերի ու Լիոնել Ժոսպենի անուններով:

ռիքները պետք է վերաբաշխվեն, իսկ Գերմանիային սպառնում է ոչ թե մրցունակության թուլացում, այլ ոչ բավարար ներքին պահանջարկ, որը կարելի է մեծացնել պետական ծախսերի ավելացմամբ: Այսպիսով՝ Լաֆոնտենի ազդեցությամբ Շրեդերը փոխեց իր վարած քաղաքականության կուրսը: Գերմանիայի տնտեսությունը վերադարձավ նախկին փոքր-ինչ մոդեռնացված սոցիալ-շուկայական մոդելին: Ամեն դեպքում այս զարգացումները չհանգեցրին Գերմանիայի տնտեսական իրավիճակի բարելավման:

Ֆինանսների նոր նախարար Հանս Էյշելը պատրաստեց Գերմանիայի տնտեսության բարեփոխումների նոր ծրագիր: Գերմանիայի տնտեսության նոր կուրսի հիմնական առանձնահատկություններն էին.

- հարկային բարեփոխումները, ըստ որի՝ 2001 թ. ընկերությունների շահութահարկի դրույքը 45 %-ից կրճատվեց մինչև 35 %[113],
- կրճատվեցին պետական բյուջեի ծախսերը,
- կրճատվեցին պետության կողմից վճարվող կենսաթոշակային ծախսերը, և հարկային արտոնություններ սահմանվեցին մասնավոր կենսաթոշակային խնայողությունների համար,
- աշխատուժի ճկուն շուկայի ստեղծումը:

Այսպիսով՝ Գերմանիայի տնտեսության վերակառուցման հիմքում դրվեցին հարկային ու պետական ծախսերի բարեփոխումները, ինչը հաջողությամբ իրականացվեց Ա. Մերկելի կառավարության կողմից: Միևնույն ժամանակ Անգելա Մերկելի կարծիքով տնտեսությունը պետք է կարգավորվի և վերահսկվի պետության կողմից, և հենց դրա ոչ ճիշտ կամ ոչ բավարար չափով իրա-

[113] Հաջորդ հարկային բարեփոխումները տեղի ունեցան 2008 թ. և ընկերությունների շահութահարկը նվազեցվեց մինչև 30 %, հաստատվեց պրոգրեսիվ եկամտահարկ: Այսպես, տարեկան մինչև 8004 եվրո եկամտի դեպքում՝ 0 %, 8,005-52,881 եվրո եկամտի դեպքում՝ 14 %, 52,882-250,730 եվրո եկամտի դեպքում՝ 42 % և 250,731 եվրո ու բարձր եկամտի դեպքում՝ 45 %:

կանացումն էր, որ պատճառ դարձավ 2008 թ. ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: 2022 թ. տվյալներով Գերմանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը հետևյալն էր. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի մոտ 0.9 %-ը, արդյունաբերությանը՝ 26.9 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 62.7 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.2.3*): Այստեղ համեմատության համար հարկ է նշել, որ 1990-ական թթ. վերջին Գերմանիայի տնտեսության մեջ գյուղատնտեսության բաժինը կազմում էր ՀՆԱ-ի 1.0 %-ը, արդյունաբերությանը՝ 27.7 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 61.5 %-ը: Ինչպես նկատում ենք, Գերմանիայի տնտեսությանը, ինչպես և Կանադայի ու Ճապոնիայի տնտեսություններին, 1990-ական թթ. վերջին ու ներկայումս բնութագրական է «գերարդյունաբերացումը»: Ավելին՝ Գերմանիայի դեպքում 2000-2022 թթ. ընկած ժամանակահատվածում տնտեսության ճյուղային կառուցվածքը շատ աննշան է փոփոխվել: Դա պատահական չէ, քանի որ համաշխարհային տնտեսության մեջ Գերմանիան մասնագիտացած է արդյունաբերական արտադրանքի թողարկմամբ (մասնավորապես՝ մեքենաշինական արդյունաբերություն):

Գյուղատնտեսություն: Պատերազմի ավարտից հետո գյուղատնտեսության բաժինը տնտեսության մեջ զգալիորեն կրճատվեց: Այս ոլորտում կատարված սոցիալ-տնտեսական գլխավոր տեղաշարժը ագրարակային տնտեսությունների դերի աճն էր՝ փոքր ու միջին տնտեսությունների հաշվին, ինչպես նաև անասնապահության ու բուսաբուծության հետագա ինտենսիվացումը: Արդյունաբերության հետ գյուղատնտեսության հետագա սերտաճումը ստեղծեց ագրոարդյունաբերական հզոր համալիր: Չնայած այն հանգամանքին, որ Գերմանիայի գյուղատնտեսության տեսակարար կշիռն ամենափոքրն է Արևմտյան Եվրոպայում, Գերմանիայի գյուղատնտեսությունն աչքի է ընկնում իր որակական

բարձր մակարդակով: 2022 թ. տվյալներով Գերմանիան գյուղատնտեսական արտադրանքի տարեկան արժեքով (37.5 մլրդ դոլար) զբաղեցրել է երրորդ տեղը՝ Ֆրանսիայից (53.1 մլրդ դոլար) ու Իտալիայից (38.0 մլրդ դոլար) հետո: Գերմանիայի գյուղատնտեսության մեջ ¾-ը բաժին է ընկնում անասնապահությանը: Ինտենսիվ բուսաբուծության հիմնական մշակաբույսերը հացահատիկային մշակաբույսերն են: Պարենամթերքի պահանջարկի մոտ 90 %-ը բավարարվում է սեփական գյուղատնտեսական արտադրանքով: Գյուղատնտեսական ապրանքներից Գերմանիան արտահանում է մսամթերք, կաթնամթերք ու հացահատիկ:

Արդյունաբերություն: Գերմանիայի արդյունաբերությունը համաշխարհային տնտեսության մեջ աչքի է ընկնում իր արտադրանքով: Արդյունաբերության առավել մրցակցային ոլորտներն են՝

- մեքենաշինությունը,
- տրանսպորտային մեքենաշինությունը (օրինակ՝ վագոնաշինություն),
- ընդհանուր մեքենաշինությունը (հաստոցների և տարբեր սարքերի արտադրություն),
- էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը,
- ճշգրիտ մեխանիկան ու օպտիկան,
- քիմիական, դեղագործական արդյունաբերությունը,
- սև մետաղագործությունը:

Գերմանիայի արդյունաբերության մեջ աչքի են ընկնում «Volkswagen», «BMW», «Audi» և «Opel» (ավտոմոբիլաշինություն), «Bayer» (դեղագործություն), «Basf» (քիմիական), «Bosh» և «Siemens» (էլեկտրատեխնիկա) և վերազգային այլ ընկերություններ:

Տնտեսության մեջ աստիճանաբար կրճատվում է արդյունահանող արդյունաբերության բաժինը, և զգալի տեմպերով աճում է նոր գիտատար արդյունաբերությունների բաժինը: Վերակազմա-

կերպությունից հետո Արևելյան Գերմանիայի արդյունաբերությունը կառուցվածքային զգալի բարեփոխումների ենթարկվեց, քանի որ այն ի սկզբանե կողմնորոշված էր նախկին Խորհրդային Միության և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի շուկաներ: Քիմիական, տեքստիլ, մետաղագործության, վագոնաշինության ու նավաշինության շատ ձեռնարկություններ փակվեցին, և առաջին պլան մղվեց ճշգրիտ մեխանիկան ու օպտիկան:

Ծառայությունների ոլորտ: Գերմանիան ծառայությունների ոլորտով փոքր-ինչ հետ է մնում այլ զարգացած երկրներից: Գերմանիայում հարաբերականորեն քիչ են նաև աշխատատեղերը ծառայությունների ոլորտում: Այնուամենայնիվ, Գերմանիան համաշխարհային տնտեսության մեջ մասնագիտանում է բանկային, ֆինանսական ծառայությունների և զբոսաշրջության ոլորտներում: Այսպես, 2019 թ. տվյալներով Գերմանիա է այցելել 39.6 մլն զբոսաշրջիկ, ինչը տնտեսության համար ապահովել է 58.2 մլրդ դոլար եկամուտ կամ ամբողջ արտահանման 3.2 %-ը[114]: Գերմանիան ունի բավական զարգացած ենթակառուցվածքներ՝ ավտոմոբիլային ու երկաթուղային ճանապարհների զարգացած ցանց, Եվրոպայում և աշխարհում հայտնի խոշոր օդանավակայաններ (Ֆրանկֆուրտ, Մյունխեն), նավահանգիստներ (Համբուրգ, Բրեմեն): Տրանսպորտային ոլորտում կիրառվում են նորագույն տեխ-

[114] COVID-19 համավարակով պայմանավորված՝ զբոսաշրջության տվյալները ներկայացված են 2019 թ. տվյալներով: Այսպես, 2019 թ. տվյալներով զբոսաշրջիկների համաշխարհային թիվը կազմել է 1,459 մլն մարդ: Առաջատար 10 երկրներն էին Ֆրանսիան (89.4 մլն մարդ), Իսպանիան (83.5 մլն մարդ), ԱՄՆ-ն (79.3 մլն մարդ), Չինաստանը (65.7 մլն մարդ), Իտալիան (64.5 մլն մարդ), Թուրքիան (51.2 մլն մարդ), Մեքսիկան (45.0 մլն մարդ), Թայլանդը (39.8 մլն մարդ), Գերմանիան (39.6 մլն մարդ) ու Մեծ Բրիտանիան (39.4 մլն մարդ): Համեմատության համար նշենք, որ 2006 թ. տվյալներով առաջատար տասը երկրներն էին Ֆրանսիան (77.9 մլն մարդ), Իսպանիան (58.0 մլն մարդ), ԱՄՆ-ն (50.9 մլն մարդ), Չինաստանը (49.9 մլն մարդ), Իտալիան (41.0 մլն մարդ), Մեծ Բրիտանիան (30.6 մլն մարդ), Գերմանիան (23.5 մլն մարդ), Ռուսաստանը (22.4 մլն մարդ), Մեքսիկան (21.3 մլն մարդ) ու Ավստրիան (20.2 մլն մարդ):

նոլոգիաներ, օրինակ՝ սեփական արտադրության «Inter City Express» արագընթաց գնացքներ:

Արտաքին տնտեսական կապերը: Գերմանիայի արտաքին տնտեսական կապերն աչքի են ընկնում նրանով, որ երկիրը համաշխարհային տնտեսության մեջ ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալներով գրավում է առաջատար դիրքեր: Գերմանիայի տնտեսությունը բավական ինտեգրված է համաշխարհային տնտեսությանը. 2022 թ. տվյալներով արտահանման բաժինը ՀՆԱ-ում կազմել է 39.0 %: Ավելին՝ 1998 թվականից ի վեր համաշխարհային տնտեսությանը Գերմանիայի տնտեսության ինտեգրման աստիճանը զգալիորեն աճել է: Այսպես, 1998-2022 թթ. ընկած ժամանակահատվածում արտաքին ապրանքաշրջանառության բաժինը ՀՆԱ-ում 57.1 % աճել է մինչև 75.6 %:

2022 թ. տվյալներով Գերմանիայի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 3,229 մլրդ դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 1,658 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 1,571 մլրդ դոլար: Գերմանիայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է 87.3 մլրդ դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.2.4*): Համեմատության համար նշենք, որ 1998 թ. Գերմանիայի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է ընդամենը 27 մլրդ դոլար: Ինչպես նկատում ենք, նշված ժամանակաշրջանում Գերմանիայի առևտրային հաշվեկշիռը միշտ եղել է դրական: Ավելին՝ նշված ժամանակահատվածում «Մեծ յոթնյակի» երկրների շարքում Գերմանիան միակ երկիրն է, որտեղ առևտրային հաշվեկշիռը միշտ եղել է դրական[115]: 2022 թ. առևտրային հաշվեկշռի ավել-

[115] Ինչպես մենք հետագայում կտեսնենք, գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո Իտալիան առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվել է առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրի, Կանադան ու Ճապոնիան՝ առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրներից առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրների: 2021-2022 թթ. Կանադան գրանցել է

ցուկի մեծությամբ կտրուկ վատթարացել է Գերմանիայի դիրքը համաշխարհային տնտեսության մեջ: Առևտրային հաշվեկշռի ավելցուկով Գերմանիան համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցրել է 7-րդ տեղը՝ Չինաստանից (877.6 մլրդ դոլար), Ռուսաստանի Դաշնությունից (380.6 մլրդ դոլար), Սաուդյան Արաբիայից (221.3 մլրդ դոլար), Նորվեգիայից (164.3 մլրդ դոլար), Ավստրալիայից (112.0 մլրդ դոլար) ու Քաթարից (97.4 մլրդ դոլար) հետո: 2014-2021 թթ. առևտրային հաշվեկշռի ավելցուկով Գերմանիան համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցրել է երկրորդ տեղը՝ Չինաստանից հետո:

2022 թ. տվյալներով ապրանքների արտահանման ծավալով Գերմանիան աշխարհում գրավել է երրորդ տեղը՝ Չինաստանից (3,593 մլրդ դոլար) ու ԱՄՆ-ից (2,062 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (411.7 մլրդ դոլար)՝ չորրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (928.5 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիայից (494.4 մլրդ դոլար) ու Չինաստանից (424,0 մլրդ դոլար) հետո: Հատկանշական է այն փաստը, որ վերջին տարիներին Գերմանիան համաշխարհային տնեսության մեջ աչքի է ընկնում ծառայությունների արտահանման ծավալների զգալի ավելացմամբ: Այս համատեքստում, եթե 2000-ական թթ. կեսերին այս ցուցանիշով Գերմանիան զգալի զիջում էր Մեծ Բրիտանիային, ապա արդեն 2009 թվականից սկսած՝ տարբերությունը էականորեն կրճատվեց: Սա նաև մասամբ պայմանավորված էր ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով, և ծառայությունների համաշխարհային շուկայում Մեծ Բրիտանիայի դերը զգալի նվազեց: 2021 թ. ծառայությունների արտահանման ծավալով Չինաստանը առաջ անցավ Գերմանիայից: Մյուս կողմից՝ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով Գերմանիան կորցրեց իր առաջատար դիրքը համաշխարհային տնտեսության մեջ ապ-

---

առևտրային դրական հաշվեկշիռ, իսկ Իտալիայի առևտրային հաշվեկշիռը (-42.7 մլրդ դոլար) 2022 թ. բացասական է եղել:

րանքների արտահանման գծով առաջինը լինելուց: Այսպես, 2007 թ. ապրանքների արտահանման ծավալով (1,328 մլրդ դոլար) Գերմանիան աշխարհում գրավում էր առաջին, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (211.7 մլրդ դոլար)՝ երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (488.3 մլրդ դոլար) ու Մեծ Բրիտանիայից (315.8 մլրդ դոլար) հետո: Հետագայում՝ 2009 թ., ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ազդեցությամբ Գերմանիան ապրանքների արտահանման ծավալով իր դիրքը զիջեց Չինաստանին, իսկ 2010 թ.՝ նաև ԱՄՆ-ին:

2022 թ. տվյալներով Գերմանիայի արտահանման հիմնական գործընկեր երկրներն էին ԱՄՆ-ն (9.8 %), Ֆրանսիան (7.3 %), Նիդեռլանդները (6.8 %), Չինաստանը (6.7 %), Լեհաստանը (5.7 %), Իտալիան (5.5 %), Ավստրիան (5.1 %), Մեծ Բրիտանիան (4.6 %), Շվեյցարիան (4.5 %): 2007-2022 թթ. ընկած ժամանակաշրջանում Գերմանիայի արտահանման հիմնական գործընկեր երկրների կառուցվածքը փոփոխվել է: Այսպես, 2007 թ. հետ համեմատած՝ 2012 թ. արտահանման գլխավոր գործընկեր երկրների թվում ավելացել են Չինաստանը, 2014 թ.՝ Լեհաստանը, իսկ Բելգիայի ու Իսպանիայի տեսակարար կշիռները զգալիորեն նվազել են նշված ժամանակահատվածում:

Գերմանիայի արտահանման կառուցվածքում գերակշռող հիմական ապրանքախմբերն են մեքենաներն ու սարքավորումները, փոխադրամիջոցները, քիմիական արդյունաբերության ապրանքները, մետաղները, սննդամթերքը և տեքստիլ արտադրանքը:

Ապրանքների ներմուծման ծավալով 2022 թ. տվյալներով Գերմանիան (1,571 մլրդ դոլար), ինչպես և ապրանքների արտահանման դեպքում, աշխարհում գրավել է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (3,375 մլրդ դոլար) ու Չինաստանից (2,715 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (459.2 մլրդ դոլար)՝ կրկին երրորդ տեղը ԱՄՆ-ից (696.7 մլրդ դոլար) ու Չինաստանից (465.0 մլրդ դոլար) հետո: Մինչև 2013 թվականը ծառայություններ-

րի ներմուծման ծավալով Գերմանիան աշխարհում զբաղեցնում էր երկրորդ տեղը, իսկ 2013 թվականից ի վեր ծառայությունների ներմուծման ծավալներով երկրորդ տեղը զբաղեցնում է Չինաստանը:

2022 թ. տվյալներով Գերմանիայի ներմուծման հիմնական գործընկեր երկրներն են Չինաստանը (12.9 %), Նիդեռլանդները (7.4 %), ԱՄՆ-ն (6.1 %), Լեհաստանը (5.4 %), Իտալիան (4.7 %), Ֆրանսիան (4.5 %), Բելգիան (3.8 %), Չեխիան (3.7 %), Շվեյցարիան (3.6 %) և Ավստրիան (3.5 %): 2007-2022 թթ. ընկած ժամանակահատվածում Գերմանիայի ներմուծման հիմնական գործընկեր երկրների կազմում նույնպես տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր: Այսպես, 2007 թ. Ֆրանսիան իր առաջատար դիրքը զիջեց Նիդեռլանդներին, իսկ 2012 թ. սկսած՝ զգալիորեն աճել են Չինաստանի և ԱՄՆ տեսակարար կշիռները: 2014 թվականից Գերմանիայի ներմուծման հիմնական գործընկեր երկրների շարքում ավելացել են Լեհաստանն ու Չեխիան:

Գերմանիայի ներմուծման կառուցվածքում գերակշռող հիմնական ապրանքախմբերն են մեքենաներն ու սարքավորումները, փոխադրամիջոցները, քիմիական արդյունաբերության ապրանքները, սննդամթերքը, տեքստիլ արտադրանքն ու մետաղները:

Գերմանիան բավականին ամուր դիրքեր ունի կապիտալի արտահանման գործընթացում: Այսպես, 2022 թ. տվյալներով զուտ միջազգային ներդրումային դիրքը կազմել է 3.0 տրիլիոն դոլար: Այս ցուցանիշի մեծությամբ Գերմանիան զիջում է միայն Ճապոնիային (3.4 տրիլիոն դոլար):

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ե՞րբ տեղի ունեցավ Գերմանիայի Արևմտյան և Արևելյան մասերի վերակազմակերպությունը, և տնտեսական ի՞նչ հետևանքներ առաջ եկան:

2. Ըստ հաստատուն գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի՝ ո՞ր տեղն է զբաղեցնում Գերմանիան աշխարհում ու Արևմտյան Եվրոպայում:
3. Գերմանիան դրակա՞ն, թե՞ առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկիր է: Ինչպիսի՞ միտում ունի Գերմանիայի առևտրային հաշվեկշռի մեծությունը:
4. Որքա՞ն են կազմում ներգաղթածները Գերմանիայի ընդհանուր բնակչության մեջ:
5. Որքա՞ն է կազմում Գերմանիայի տնտեսապես ակտիվ բնակչությունը 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության մեջ:
6. Ինչպիսի՞ն է Գերմանիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունը տնտեսության մեջ:
7. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի Գերմանիայի տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելը:
8. Ինչպիսի՞ն է Գերմանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը, և ինչո՞վ է այն տարբերվում «Մեծ յոթնյակի» մյուս երկրներից:
9. Գյուղատնտեսական արտադրանքի ծավալով ո՞ր տեղն է Գերմանիան զբաղեցնում Արևմտյան Եվրոպայում:
10. Արտահանման ծավալով ո՞ր տեղն է զբաղեցնում Գերմանիան աշխարհում: Ժամանակի ընթացքում ինչպիսի՞ փոփոխություններ է կրել այդ դիրքը:
11. Համաշխարհային տնտեսության մեջ ներմուծման ծավալով Գերմանիան ո՞ր տեղն է զբաղեցնում:

Հավելված

Աղյուսակ 8.2.1. Գերմանիայի տնտեսության մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն դոլար)[116]	2.89	2.91	3.02	3.11	3.14	2.96	3.09	3.21	3.22	3.23	3.31	3.35	3.43	3.52	3.56	3.60	3.45	3.56	3.63
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	1.2	0.7	3.8	3.0	1.0	-5.7	4.2	3.9	0.4	0.4	2.2	1.5	2.2	2.7	1.1	1.1	-3.8	3.2	1.8
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազար դոլար)	35.0	35.3	36.7	37.8	38.3	36.2	37.2	39.9	40.0	40.1	40.8	41.1	41.7	42.6	42.9	43.3	41.2	42.9	43.3
Գնաճի մակարդակ, (CPI) %	1.7	1.5	1.6	2.3	2.6	0.3	1.1	2.1	2.0	1.5	0.9	0.5	0.5	1.5	1.7	1.4	0.5	3.0	6.9
Գործազրկության մակարդակ, %	10.7	11.2	10.3	8.7	7.5	7.7	7.0	5.8	5.4	5.2	5.0	4.6	4.1	3.8	3.4	3.1	3.8	3.6	3.1

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[116] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

Աղյուսակ 8.2.2 Գերմանիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.[117], %

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատն-տեսություն	2.5	2.4	2.4	2.4	2.3	2.3	1.8	1.7	1.6	1.6	1.6	1.5	1.4	1.4	1.3	1.3	1.3	1.2	1.3	1.3
Արդյունաբե-ռություն	32.4	31.4	31.3	29.8	29.6	29.9	29.3	28.8	28.3	28.2	28.2	27.8	28.0	27.7	27.4	27.4	27.3	27.2	27.5	27.6
Ծառ. ոլորտ	65.2	66.2	66.4	67.8	68.1	67.8	68.9	69.5	70.0	70.1	70.3	70.8	70.5	70.9	71.3	71.3	71.4	71.6	71.2	71.1

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 8.2.3. Գերմանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2004-2022 թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղա-տնտեսու-թյուն	1.0	0.7	0.7	0.8	0.8	0.7	0.8	0.9	0.8	0.9	0.9	0.7	0.7	0.9	0.7	0.8	0.7	0.7	0.9
Արդյունաբե-ռություն[118]	26.4	26.4	27.0	27.2	26.8	24.7	26.8	27.1	27.3	26.8	27.0	27.1	27.6	27.5	27.3	27.0	26.5	27.0	26.9
Ծառ. ոլորտ[119]	63.2	63.4	62.7	61.9	62.2	64.2	62.3	61.8	61.7	62.2	62.1	62.2	61.8	61.8	62.1	62.3	63.3	62.8	62.7

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[117] Գերմանիայի տնտեսապես ակտիվ բնակչության տվյալներն առկա են մինչև 2021 թվականը:
[118] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:
[119] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

Աղյուսակ 8.2.4. Գերմանիայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտա-հանում	977.1	1,121	1,328	1,466	1,127	1,271	1,482	1,410	1,450	1,498	1,328	1,340	1,446	1,556	1,486	1,378	1,631	1,658
Ներմու-ծում	779.8	922.2	1,059	1,204	938.0	1,066	1,260	1,161	1,187	1,214	1,057	1,060	1,167	1,287	1,236	1,171	1,422	1,571
Առևտ-րային հաշվ.	197.3	199.7	269.5	261.9	189.4	204.2	221.9	249.0	263.6	283.2	270.9	280.1	278.8	269.3	250.6	206.4	208.2	87.3

Աղբյուր՝ International Trade Centre:

8.3. Ֆրանսիայի տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Ֆրանսիան իր տարածքով ամենամեծ երկիրն է Արևմտյան Եվրոպայում (550 հազ. կմ^2): 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի բնակչությունը կազմել է 67.9 մլն մարդ:

Ֆրանսիան ԵՄ հիմնադիր երկիր է և իր տնտեսությամբ շատ կարևոր դեր է կատարում Եվրոպայում: Ֆրանսիայում է գտնվում ԵՄ «մայրաքաղաքներից» մեկը՝ Ստրասբուրգը, որտեղ տեղակայված են Եվրոպական միության խորհուրդը, Եվրոպական խորհրդարանն ու ԵՄ կառավարման այլ մարմիններ:

Բնական պայմաններն ու ռեսուրսները համեմատաբար բարենպաստ են արտադրական գործունեություն զարգացնելու համար: Հիմնական բնական հանածոներն են երկաթաքարը, քարածուխը, բոքսիտը, բնական գազը, ուրանը, վոլֆրամը, կապարը, արծաթը: Ակնհայտ է, որ բնական հանածոներով Ֆրանսիան առավելություն ունի Գերմանիայի նկատմամբ: Շատ բարենպաստ են նաև Ֆրանսիայի ագրոկլիմայական պայմաններն ու ռեսուրսները, որոնց շնորհիվ մշակվում են կլիմայական գրեթե բոլոր գոտիներին բնորոշ գյուղատնտեսական մշակաբույսերը:

2022 թ. տվյալներով Ֆրանսիայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 2.77 տրիլիոն դոլար, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 2.63 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 38,816 դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.3.1*): ՀՆԱ-ի մեծության ցուցանիշով Ֆրանսիան Եվրոպայում Գերմանիայից հետո գրավում է երկրորդ տեղը: 2008 և 2009 թթ. տնտեսական աճի համապատասխանաբար չափազանց փոքր (0.3 %) ու բացասական ցուցանիշներն (-2.9 %) արդյունք էին ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի: Ֆրանսիան կարողացավ վերականգնել ՀՆԱ-ի մինչճգնաժամային մակարդակն արդեն 2010 թ., սակայն ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով

պայմանավորված՝ մինչև 2015 թվականը Ֆրանսիայի տնտեսության տնտեսական աճի տեմպը զգալիորեն նվազել է: 2016-2019 թթ. Ֆրանսիայի ՀՆԱ-ի աճի տեմպը նկատելիորեն ավելացել է՝ 2019 թ. կազմելով 1.8 %: 2020 թ. Ֆրանսիայի տնտեսության տնտեսական աճի նման մեծ բացասական ցուցանիշը (-7.5 %) COVID-19 համավարակի արդյունք էր**:** Այս ենթատեքստում կարող ենք նշել, որ Ֆրանսիայի տնտեսության վրա ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի բացասական ազդեցությունն այնքան մեծ չէր, որքան Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի ու Իտալիայի տնտեսություններում: Այսպես, 2009 թ. Ֆրանսիայի տնտեսական աճի բացասական ցուցանիշը (-2.9 %) զգալիորեն զիջում էր Գերմանիայի (-5.7 %), Իտալիայի (-5.3 %) ու Մեծ Բրիտանիայի (-4.2 %) ցուցանիշներին: Հակառակ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամին՝ COVID-19 համավարակի բացասական ազդեցությունը շատ ավելի մեծ է Ֆրանսիայի (-7.5 %), քան Գերմանիայի տնտեսության վրա (-3.8 %): 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի տնտեսական աճի տեմպը կազմել է 2.5 %: Ֆրանսիայի տնտեսության մեջ գնաճի մակարդակը 2021-2022 թթ. կազմել է համապատասխանաբար 1.6 և 5.2 %: Գնաճի մակարդակը սովորաբար Ֆրանսիայի տնտեսության մեջ եղել է համեմատաբար ցածր ու համապատասխանել է ԵՄ եվրոյի գոտու մեջ մտնող երկրների գնաճի միջին մակարդակին: Ինչպես նկատում ենք, ինչպես ու Գերմանիայի դեպքում, 2022 թ. Ֆրանսիայի տնտեսության մեջ կտրուկ ավելացել է գնաճի մակարդակը (5.2 %): Հակառակ դրան՝ Ֆրանսիայի տնտեսության մեջ, համեմատած ԵՄ երկրների միջին մակարդակի հետ, բավականին բարձր է գործազրկության մակարդակը, ինչը, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված, էլ ավելի աճեց՝ 2015 թ. կազմելով 10.4 %: 2017 թվականից սկսած՝ Ֆրանսիայի տնտեսության մեջ նկատվում է գործազրկության մակարդակի նվազման միտում:

2022 թ. ֆրանսիայի տնտեսության մեջ գործազրկություն մակարդակը կազմել է 7.3 %:

Ֆրանսիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -204.8 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը՝ -56.6 մլրդ դոլար: Այստեղ հարկ է նշել, որ մինչև 1990-ական թթ. վերջը Ֆրանսիան առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկիր էր: Այսինքն՝ Ֆրանսիան առևտրային հաշվեկշռի ավելցուկ ունեցող երկրից վերածվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդ ունեցող երկրի, իսկ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ունի աճի միտում: Առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծությամբ Ֆրանսիան զբաղեցնում է չորրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (-1.3 տրիլիոն դոլար), Մեծ Բրիտանիայից (-285.8 մլրդ դոլար) ու Հնդկաստանից (-279.8 մլրդ դոլար) հետո:

2022 թ. տվյալներով Ֆրանսիայի պետական պարտքը կազմել է 2.9 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 103.9 %-ը: Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի մեծությամբ Ֆրանսիան աշխարհում զբաղեցրել է 20-րդ տեղը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 7.4 տրիլիոն դոլար (ՀՆԱ-ի մոտ 268 %-ը): Արտաքին պարտքի ցուցանիշի բացարձակ մեծությամբ Ֆրանսիան աշխարհում զբաղեցրել է 3-րդ տեղը՝ ԱՄՆ-ից ու Մեծ Բրիտանիայից հետո: Ինչպես և Գերմանիայի դեպքում, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով զգալիորեն աճել է Ֆրանսիայի ինչպես պետական, այնպես էլ արտաքին (պետական և մասնավոր) պարտքը: Այսպես, 2007 թ. տվյալներով Ֆրանսիայի պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 63.9 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր)՝ 171.8 %-ը: Մյուս կողմից՝ ի տարբերություն Գերմանիայի՝ Ֆրանսիային չհաջողվեց ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո նվազեցնել իր պետական ու արտաքին պարտքի մակարդակները:

Բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները: Ֆրանսիայի բնակչության 85 %-ը ֆրանսիացիներ են, իսկ մնացած մա-

սը կազմում են ազգային փոքրամասնություններն ու ներգաղթածները: Դեռևս 1960-1970 թթ. երկրում զգացվեց աշխատանքային ռեսուրսների պակաս, սկսվեց զանգվածային ներգաղթ Հյուսիսային Աֆրիկայից, Պորտուգալիայից և Իսպանիայից: Վերջին շրջանում, ինչպես և Գերմանիայում, զգալի ավելացել է օտարերկրյա աշխատուժի բաժինը: Այսպես, 2022 թ. տվյալներով ամբողջ բնակչության ավելի քան 11.5 %-ը կազմում էին ներգաղթածները: Մյուս կողմից՝ Եվրոպայի այլ երկրների հետ համեմատած՝ նոսր է բնակեցված, և ինչպես Գերմանիայի դեպքում, Ֆրանսիային բնորոշ է ազգի ծերացման գործընթացը: 2022 թ. տվյալներով 65 տարեկան ու ավելի մարդկանց թիվը կազմում էր ամբողջ բնակչության ավելի քան 21.6 %-ը, և այս ցուցանիշն աճի միտում ունի: 2010-2022 թթ. ընկած ժամանակահատվածում ցուցանիշը աճել է մոտ 5.0 %-ով: Այդ նպատակով Ֆրանսիայի կառավարությունը ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն է վարում՝ տարբեր միջոցներով բնակչության բնական աճը խրախուսելու համար:

Այստեղ հարկ է նշել, որ Ֆրանսիայի տնտեսությունը համեմատաբար բավականին մրցունակ է իր բարձր որակավորում ունեցող աշխատուժի շնորհիվ[120]: Այսպես, 2022 թ. տվյալներով կրթության վրա կատարված պետական ծախսերը կազմել են Ֆրանսիայի ՀՆԱ-ի մոտ 5.2 %-ն ու ամբողջ պետական ծախսերի 8.9 %-ը[121]:

Ֆրանսիայի տնտեսության մեջ աշխատանքային ռեսուրսները բաշխված են հետարդյունաբերական երկրներին համապա-

---

[120] Ըստ Գլոբալ մրցունակության զեկույցի (Global Competitiveness Report, 2019)՝ Ֆրանսիան իր տնտեսության մրցունակությամբ 2019 թ. համաշխարհային տնտեսության մեջ գրավել է 15-րդ, Գերմանիան՝ 7-րդ, իսկ Մեծ Բրիտանիան՝ 9-րդ տեղը: Այս ինդեքսով աշխարհում առաջատար երեք երկրներն են Սինգապուրը, ԱՄՆ-ն ու Հոնկոնգը:

[121] Այստեղ հարկ է նշել, որ 2022 թ. տվյալներով կրթության վրա կատարված պետական ծախսերը ՀՀ-ի դեպքում կազմել է ՀՆԱ-ի 2.5 %-ն ու ամբողջ պետական ծախսերի 9.6 %-ը:

տասխան: 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի տնտեսապես ակտիվ բնակչությունը (31.6 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 56.2 %-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության 2.5 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 19.5 %-ը՝ արդյունաբերության, իսկ 78.0 %-ը՝ ծառայությունների ոլորտում: Ֆրանսիայի տնտեսության մեջ, ի տարբերություն Գերմանիայի, շարունակվում է պահպանվել համեմատաբար բարձր գործազրկության մակարդակ (2022 թ.՝ 7.3 %): Մյուս կողմից, ինչպես նկատում ենք, ի տարբերություն Գերմանիայի ու Մեծ Բրիտանիայի՝ Ֆրանսիայի գյուղատնտեսության մեջ համեմատաբար մեծ է տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավվածությունը: Սա, թերևս, հիմնականում բացատրվում է Ֆրանսիայի գյուղատնտեսության զարգացման համար բարենպաստ պայմաններով ու արտահանման մեջ դրա համեմատաբար մեծ տեսակարար կշռով: Ֆրանսիան իր գյուղատնտեսության արտադրանքի արտահանման ծավալով զբաղեցնում է առաջին տեղը Եվրոպայում, իսկ աշխարհում՝ երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: Ֆրանսիայի տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելը շատ նման է գերմանականին: Ֆրանսիայում նույնպես գործում է տնտեսական զարգացման սոցիալ-շուկայական մոդելը: Տնտեսության մեջ բավականին մեծ է պետության դերը: Այսպես, պետության կողմից կատարված ծախսերը կազմում են ՀՆԱ-ի մոտ 58.4 %-ը, և ամբողջ զբաղվածների 24.0 %-ը ներգրավված է պետական ոլորտում: Պետության կողմից կատարված ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշով Ֆրանսիան զարգացած երկրների շարքում զբաղեցնում է առաջին տեղը[122]: Վերազգային խոշոր ընկերություններում, ինչպիսիք են «Renault»-ը (ավտոմոբիլաշինություն), «Thomson»-ը

[122] ՀՀ-ում 2022 թ. պետության կողմից կատարված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 26.4 %-ը: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2020 թ.՝ կազմելով 30.6 %-ը:

(էլեկտրոնիկա) ու «Aerospaciale»-ը (ինքնաթիռներ ու հրթիռներ), կառավարությունն ուներ իր զգալի մասնակցությունը: Պետական հատվածում աշխատավարձի դրույքը գերազանցում էր մասնավոր հատվածում վճարվող աշխատավարձի դրույքը: Ավելին՝ պետական ոլորտում աշխատողները ստանում էին ավելի բարձր կենսաթոշակ, տարբեր նպաստներ, քան մասնավոր հատվածում աշխատողները: Զգալիորեն բարձր էին նաև գործազրկության համար վճարվող նպաստները: Այս գործում բավականին մեծ էր նաև արհմիությունների դերը:

Ներկայիս Ֆրանսիայի տնտեսությունը զարգանում է նոր պայմաններում: Եվրոպայի կազմակերպությունը և ներկայիս գլոբալացման գործընթացները զգալի ազդեցություն են թողնում Ֆրանսիայի ազգային տնտեսության զարգացման վրա: ԵՄ շրջանակում և ընթացող գլոբալացման գործընթացներում տնտեսական հաջող զարգացումը պահանջում է ազատական տնտեսության, տնտեսության ներքին կարգավորման ցածր մակարդակ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների զարգացում, որոնք կարող են ծառայել որպես տնտեսական աճի գիտատեխնիկական բազա:

Ֆրանսիայի տնտեսության համար դեռևս ամբողջովին լուծված չեն հետևյալ հիմնախնդիրները:

- Սոցիալական երաշխիքների համակարգը լուրջ խոչընդոտում է Ֆրանսիայի տնտեսության զարգացմանը: Սոցիալական երաշխիքների զարգացած համակարգն առաջին հերթին ֆինանսավորվում է հարկատուների շնորհիվ: Նախկինում պետական ոլորտում աշխատողները չէին ենթարկվում կրճատման ու 55-60 տարեկան հասակից կարող էին անցնել կենսաթոշակի՝ կախված աշխատանքի բնույթից: Մեծ Բրիտանիայում կենսաթոշակի անցման միջին տարիքը 63-ն է, իսկ Գերմանիայում 60 տարեկանն է: 2018 թ. կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրով կենսաթոշակային տարիքը 60-ից բարձրացվեց

62 տարեկան, իսկ ամբողջական կենսաթոշակը ստանալու համար պահանջվում է առնվազն 40 տարվա աշխատանքային ստաժ: 2022 թ. տվյալներով 55-64 տարեկան մարդկանց միայն 56.9 % է զբաղված Ֆրանսիայում: 2010 թվականից ի վեր այս ցուցանիշը աճի միտում ունի: Այսպես, 2010 թ. 55-64 տարեկան մարդկանց միայն 41.0 % էր համարվում զբաղված Ֆրանսիայում:

- Պետական ու մասնավոր հատվածների միջև առկա է զգալի տարբերություն: Ի սկզբանե Ֆրանսիան փորձել է ընդլայնել պետական ոլորտում զբաղվածների թիվը, և երկրում առկա բուհերն առաջին հերթին կողմնորոշվել են դեպի պետական ծառայողների պատրաստում: Ավելին՝ պետական ծառայողները հետաքրքրված չեն իրենց աշխատանքի որակի բարձրացման գործում այնպես, ինչպես մասնավոր հատվածում ներգրավված աշխատողները: Այդ պատճառով կառավարման ֆրանսիական մոդելը բավականին անարդյունավետորեն է գործում:
- Տեղի է ունենում մարդկային կապիտալի արտահոսք: Ինչպես նշեցինք, քանի որ պետական ոլորտում աշխատողների աշխատավարձերն ու սոցիալական երաշխիքներն ավելի բարձր են, ապա բուհեր ավարտողները, աշխատուժի շուկայում բարձր մրցակցության պատճառով աշխատանք չգտնելով Ֆրանսիայում, հեռանում են այլ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ ու Մեծ Բրիտանիա:
- Պետական ֆինանսների հիմնախնդիրը: Սոցիալական երաշխիքների համակարգի պատճառով Ֆրանսիան շատ դժվարությամբ է կարողանում ապահովել Մաաստրիխտի համաձայնագրի չափանիշները, այն էլ՝ միայն մասնակիորեն:

Ֆրանսիայի տնտեսության սոցիալ-շուկայական վերափոխումները: 1990-ական թթ. Ֆրանսիայի տնտեսությունը ենթարկ-

վեց բարեփոխումների երկու ալիքի: Առաջին բարեփոխման հեղինակն էր Ալեն Ժյուպենը, որը 1995 թ. Ժակ Շիրակի նախագահ ընտրվելուն պես նշանակվեց որպես վարչապետ[123]: Բարեփոխումների երկրորդ ալիքի հեղինակն էր հաջորդող վարչապետ, սոցիալիստ Լիոնել Ժոսպենը, որը, շարունակելով պահպանել սոցիալական կայունությունը հասարակության մեջ, միևնույն ժամանակ իրականացնում էր տնտեսության ապակենտրոնացում:

Ա. Ժյուպեի բարեփոխումները: Նախկին վարչապետ Ա. Ժյուպեն բավական խիստ ազատական տնտեսական քաղաքականության կողմնակից էր: Նա իր առաջ խնդիր էր դրել վերափոխելու Ֆրանսիայի սոցիալական տնտեսությունը՝ լուծելով հետևյալ հիմնախնդիրները.

- մի շարք սոցիալական երաշխիքների նվազեցմամբ մեղմացնել Ֆրանսիայի տնտեսության սոցիալական ճգնաժամը,
- պետական ֆինանսների մասով ապահովել Մաաստրիխտի համաձայնագրի բոլոր չափանիշները՝ կրճատելով սոցիալական ծրագրերը, նվազեցնելով պետական բյուջեի ծախսերը: Այս քաղաքականությունը պետք է ապահովեր բյուջեի պակասուրդի ու պետական պարտքի կրճատում: Հարկ է նշել, որ 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 103.9 %-ը, սակայն այս ցուցանիշը հիմնականում արդյունք է գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի ու COVID-19 համավարակի

[123] Ֆրանսիայի ներկայիս վարչապետը Էդուարդ Ֆիլիպն է, որն առաջադրվել է նախագահ Էմանուել Մակրոնի կողմից 2017 թ. մայիսի 15-ին: Այստեղ հարկ է նշել, որ 2005-2007 թթ. վարչապետի պաշտոնը զբաղեցրել է Դոմենիկ դե Վիլեպին (նախագահը՝ Ժակ Շիրակ), 2007-2012 թթ.՝ Ֆրանսուա Ֆիլոն (նախագահը՝ Նիկոլա Սարկոզի), 2012-2014 թթ.՝ Ժան Մարկ Էրոն (նախագահը՝ Ֆրանսուա Օլանդ), 2014-2016 թթ.՝ Մանուել Վալս (նախագահը՝ Ֆրանսուա Օլանդ), 2016 թ. դեկտեմբերի 6-2017 թ. մայիսի 10-ը՝ Բերնարդ Քազենուֆ (նախագահը՝ Ֆրանսուա Օլանդ):

բացասական հետևանքների: 2007 թ. տվյալներով Ֆրանսիայի պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 63.9 %-ը,

- անցկացնել այնպիսի հարկային բարեփոխումներ, որոնք կնպաստեն տնտեսական աճի խթանմանը,
- մեծացնելով աշխատուժի շուկայի ճկունությունը՝ կրճատել գործազրկության մակարդակը:
- իրականացնել սեփականաշնորհման լայնածավալ գործընթաց:

Ժյուպեի կառավարությունը պահանջեց վերացնել պետական ոլորտում աշխատողների արտոնությունները, ինչն անմիջապես ամբողջ երկրում լայնածավալ բողոքի ցույցեր առաջացրեց: Պետական ծառայողները դեմ էին Ժյուպեի բարեփոխումներին, քանի որ դա նրանց համար նշանակում էր 1968 թ. ձեռք բերած սոցիալական երաշխիքների կորուստ: Հակառակ պետական հատվածին՝ մասնավոր հատվածի աշխատողները կողմ էին բարեփոխումներին, սակայն չկարողացան պետական ծառայողների արհմիությունների նման միասնական ու համախմբված հանդես գալ: Բարեփոխումները դադարեցին, քանի որ Ֆրանսիայի տնտեսությունը պատրաստ չէր ազատական վերափոխումների, և Ժյուպենը ստիպված էր վերադառնալ տնտեսության սոցիալ-շուկայական զարգացման մոդելին: Միակ բարեփոխումները, որոնք, չնայած պետական արհմիությունների բողոքներին, շարունակվեցին իրականացվել, դրանք սեփականաշնորհման ու հարկային բարեփոխումներն էին: 1990-ական թթ. կեսերին Ֆրանսիայում սեփականաշնորհվեցին այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք էին «Banque National de Paris»-ը, «Elf Aquitaine»-ը, «Rhone-Poulenc»-ը և այլն: Ընկերությունների շահութահարկը նվազեցվեց մինչև 33.3 %, սակայն միաժամանակ պետական բյուջեի կորուստները փոխհատուցելու համար բարձրացվեց ավելացված արժեքի հարկը: Ներկայումս ավելացված արժեքի հարկը Ֆրանսիայում կազմում է 20 %, գյուղատնտեսական ապրանքնե-

րի, սննդամթերքի մեծ մասի և գրքերի համար գործում է 5.5 % դրույքը, իսկ դեղորայքի համար՝ 2.1 % դրույքը[124]:

Լ. Ժոսպենի բարեփոխումները: 1997 թ. ընտրություններում ձախակողմյան թևը ստացավ ձայների մեծամասնություն, և նոր վարչապետ ընտրվեց Լ. Ժոսպենը: Ըստ Ժոսպենի՝ Ֆրանսիայի տնտեսության զարգացումն ավանդորեն պայմանավորված է սոցիալական ուղղությամբ: Ֆրանսիան ունի զարգացման իր սեփական ուղին, որն ամենևին էլ չի նշանակում, որ պետք է ամբողջությամբ վերացնել հին մեխանիզմը: Այդ պատճառով Ֆրանսիայի տնտեսության զարգացումը պետք է ընթանա աստիճանական բարեփոխումներով: Այստեղ հարկ է նշել, որ Լ. Ժոսպենի բարեփոխումներն անվանում են «խաղաղ հեղափոխություն»: Տնտեսական կյանքի ոլորտները, որտեղ արդեն բարեփոխումների արդյունքները տեսանելի են, հետևյալներն են.

- ձեռնարկատիրական գործունեություն: Ներկայումս արդեն զգալի նվազել է պետության դերը տնտեսության մեջ,
- տնտեսության վերակառուցում: Առաջին պլան են մղվել բաժնետերերի շահերը, իսկ աշխատավարձերի վճարումն աստիճանաբար համեմատվում և չափվում է կատարված աշխատանքի հետ,
- բարձր տեխնոլոգիաներ: Կառավարությունը սկսել է մեծ ուշադրություն դարձնել բարձր տեխնոլոգիաների ոլորտին՝ խթանելով մասնավոր ներդրումները դեպի այդ ոլորտ,

Սակայն Ֆրանսիայի հասարակությունը շարունակում է դիմակայել վերափոխումներին: 2000 թ. ուժի մեջ մտավ շաբաթական 35 աշխատաժամ նոր օրենքը, որը բավական մեծ վնաս պատճառեց Ֆրանսիայի տնտեսության մրցունակությանը: Նախկինում Ֆրանսիայում աշխատանքի տևողությունը կազմում էր

[124] ԵՄ անդամ երկրներում ավելացված արժեքի հարկի նվազագույն մակարդակը կազմում է 15 %, իսկ առավելագույն մակարդակը կազմում է 25 %:

շաբաթական առավելագույնը 39 ժամ: Օրենքի ընդունումից հետո 4 տարվա ընթացքում սահմանված նորման գերազանցողները լրացուցիչ առաջին 4 ժամվա համար ենթարկվելու են ավելի բարձր հարկման՝ առկա եկամտահարկից 10 % բարձր: Բոլոր աշխատանքները պետք է ավարտվեն ոչ ուշ, քան 18:30-ը, իսկ խախտողները ենթարկվելու են բարձր տուգանքների:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մակարդակով երկիրը բավական հետ է մնում զարգացած այլ երկրներից: Այստեղ խնդիրն այն է, որ ֆրանսիացիներն այնքան էլ հակված չեն ուսումնասիրելու օտար լեզուներ, քան այլ եվրոպական երկրների քաղաքացիները: Այդ իսկ պատճառով ֆրանսիացիները սահմանափակ հնարավորություններ ունեն համացանցում, քանի որ այնտեղ զետեղված տեղեկատվության 90 %-ը անգլերեն է:

2017 թ. իշխանության գալով՝ Էմանուել Մակրոնի կառավարությունը փորձում է երկրում իրականացնել բարեփոխումներ հարկային համակարգի, աշխատուժի շուկայի, կենսաթոշակային համակարգի ու պետական հատվածի ոլորտներում, սակայն այդ բարեփոխումները շատ դժվարությամբ են ընթանում, քանի որ Ֆրանսիայի հասարակությունը շատ դժվարությամբ է հրաժարվում սոցիալական ապահովածության զարգացած համակարգի արտոնություններից:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Ֆրանսիայի տնտեսության ներկայիս զարգացումը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով՝ գիտատեխնիկական առաջընթաց, արտաքին տնտեսական կապերի ընդլայնում և ԵՄ շրջանակում տնտեսական ինտեգրացիոն գործընթացների խորացում: Հիմնականում այս գործոններն են կանխորոշել ինչպես երկրի տնտեսության կառուցվածքային վերափոխումների ուղղությունները, այնպես էլ արտադրության սկզբունքորեն նյութատեխնիկական նոր բազայի ձևավորումը: Տնտեսության ճյուղային կառուցվածքում նախ կրճատվեցին արդյունահանող արդյունաբերության ու գյու-

ղատնտեսության բաժինները, առավել արագորեն սկսեցին զարգանալ մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, հեռահաղորդակցման սարքավորումների արտադրությունը, աերոտիեզերական արդյունաբերությունը և այլն: Այսպես, 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը հետևյալն էր. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 1.9 %-ը, արդյունաբերությանը՝ 16.8 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 70.7 %-ը:

Գյուղատնտեսություն: 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի գյուղատնտեսությունը տարեկան 53.1 մլրդ դոլար արժեքով առաջինն էր ԵՄ երկրների շարքում: Ֆրանսիայի գյուղատնտեսության մեջ գործում է մոտ 730,000 ֆերմերային տնտեսություն: Ֆրանսիայի բաժինը ԵՄ ընդհանուր գյուղատնտեսության ոլորտում կազմում է 23.0 %, մինչդեռ Գերմանիայի ու Իտալիայի բաժինը միասին կազմում էր 25.0 %: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալով Ֆրանսիան աշխարհում ԱՄՆ-ից հետո գրավում է երկրորդ տեղը: Հացահատիկի, շաքարի ճակնդեղի, խոշոր եղջերավոր անասունների, ընտանի թռչունների ու գինու արտադրությամբ առաջինն է Եվրոպայում, իսկ վերամշակված սննդամթերքի արտահանմամբ՝ առաջինը աշխարհում:

Պատմականորեն երկրում ձևավորվել է երկու տիպի տնտեսություն. հյուսիսում՝ խոշոր մեքենայացված, որոնք չնայած քիչ են, բայց տալիս են գյուղատնտեսական արտադրանքի մոտ կեսը, իսկ հարավում՝ գյուղացիական ավանդական մանր տնտեսություններ: Պետությունը խրախուսում է գյուղացիական խոշոր տնտեսությունների զարգացմանը՝ մասշտաբի արդյունք ապահովելու համար:

Ֆրանսիայի գյուղատնտեսության առաջատար ոլորտն անասնապահությունն է, որին բաժին է ընկնում գյուղատնտեսական ընդհանուր արտադրանքի 2/3-ից ավելին: Ֆրանսիան գինու, գարու, կաթնամթերքի արտադրությամբ աշխարհում դասվում է

առաջատար եռյակ երկրների շարքին, իսկ հացահատիկի շաքարի, մսի արտադրությամբ՝ առաջատար տասնյակ երկրների շարքին:

Ֆրանսիայի գյուղատնտեսությունն ունի արդյունաբերացման բարձր մակարդակ: Այսպես, գյուղատնտեսության ոլորտում տեխնիկայի հագեցվածությամբ և քիմիական պարարտանյութերի օգտագործմամբ զիջում է միայն Իռլանդիային, Գերմանիային ու Դանիային:

Արդյունաբերություն: Ֆրանսիան իր արդյունաբերության տարեկան ծավալով (467.5 մլրդ դոլար) 2022 թ. Եվրոպայում Գերմանիայից (1.1 տրիլիոն դոլար) և Մեծ Բրիտանիայից (515.3 մլրդ դոլար) հետո զբաղեցրել է երրորդ տեղը: Ներկայումս Ֆրանսիայի արդյունաբերությունը բնութագրվում է փոքր ու միջին ձեռնարկությունների (20-ից մինչև 499 աշխատողներով ձեռնարկություններ) գերակշռությամբ: 2022 թ. տվյալներով փոքր և միջին ձեռնարկությունները կազմում էին ամբողջ ձեռնարկությունների 93 %-ը, որում ներգրավված էր արդյունաբերության ոլորտի տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 44.0 %-ը, և նրանց բաժին էր ընկնում ամբողջ արտահանման 22.4 %-ը:

Ֆրանսիայի խոշոր վերազգային ընկերություններից են «Peugeot»-ն, «Reno»-ն (ավտոմոբիլաշինական), «Thomson»-ն (էլեկտրոնիկա), «Michelin»-ն (անվադողեր), «Saint-Gobain»-ն (ապակու արտադրություն), «Arianespace»-ն (ինքնաթիռներ, ուղղաթիռներ) և այլն: Ֆրանսիական վերազգային ընկերությունները որոշ արտադրատեսակների արտադրությամբ համաշխարհային շուկայում զբաղեցնում են առաջատար դիրքեր:

Այսպես, «Michelin» ընկերությունն անվադողերի արտադրության մեջ համաշխարհային առաջատարներից մեկն է: «Saint-Gobain» ընկերությունը համաշխարհային տնտեսության մեջ ունի նմանատիպ դիրք ապակու արտադրության մեջ և համաշխարհային շուկայում երկրորդ ամենախոշոր արտահանողն է:

Պլաստմասսայի արդյունաբերությամբ Ֆրանսիան համաշխարհային տնտեսության մեջ գրավում է չորրորդ տեղը: Քիմիական ու դեղագործական արդյունաբերությամբ Ֆրանսիան երկրորդ է Եվրոպայում Գերմանիայից հետո, իսկ արտահանմամբ զբաղեցնում է չորրորդ տեղը աշխարհում՝ Չինաստանից, ԱՄՆ-ից և Գերմանիայից հետո:

Եվրոպական ավիացիայի, պաշտպանության ու տիեզերքի ընկերությունը (European Aeronautic, Defense and Space Company, EADS), որն առաջացել է ֆրանսիական «Aerospatial Matra», գերմանական «DaimlerChrysler Aerospace» և իսպանական «CASA» ընկերությունների միաձուլման արդյունքում, աշխարհում գրավում է երրորդ տեղը: Ֆրանսիական «Arianespace» ընկերությունը, որը պատկանում է EADS խմբին, օդային տրանսպորտի արտադրության ոլորտում («Airbus», «Falcon», «Mirage») համաշխարհային առաջատարներից մեկն է:

Ֆրանսիայի արդյունաբերության մեջ գլխավոր ոլորտներից է էներգետիկան, որը կախված է էներգակիրների (հատկապես նավթ և գազ) ներմուծումից: Ֆրանսիան էլեկտրաէներգիայի արտադրությամբ Եվրոպայում զիջում է միայն Գերմանիային: Հատուկ ուշադրություն է դարձվում ատոմային էներգիայի զարգացմանը: Ատոմային կայաններից արտադրված էլեկտրաէներգիայի տեսակարար կշռով (76.0 %) աշխարհում Ֆրանսիան գրավում է առաջին տեղը (Բելգիայում՝ 61.0 %, Կորեայում՝ 54.0 %): Այստեղ հարկ է նշել, որ աշխարհում Ճապոնիայից հետո Ֆրանսիան գրավում է երկրորդ տեղը էներգետիկ սարքավորումների արտադրությամբ, հատկապես ատոմային կայանների համար:

Ֆրանսիայի արդյունաբերական արտադրության կառուցվածքում առաջատար տեղ է գրավում նաև մեքենաշինությունը, հատկապես ավտոմոբիլաշինությունը: Այստեղ հարկ է նշել, որ վերջին տարիներին զգալի նվազել է թողարկվող ավտոմեքենաների ծավալը: Այսպես, եթե 2007 թ. Ֆրանսիայում տարեկան թո-

դարկվում էր ավելի քան 3 մլն ավտոմեքենա, ապա 2022 թ. տվյալներով՝ 1.3 մլն ավտոմեքենա: Ֆրանսիական ընկերությունները ներկայումս ցանկանում են ընդլայնել իրենց գործունեությունը զարգացող երկրներում, օրինակ՝ Բրազիլիայում ու Չինաստանում, սակայն այդ երկրներում առկա է խիստ մրցակցություն:

Ֆրանսիան լիակատար առաջատար է պերճանքի ապրանքների ու նորաձևության արդյունաբերության ոլորտում: Այս ոլորտում Ֆրանսիան է համաշխարհային առաջնորդ «L'Oreal» ու հանրաճանաչ այլ ընկերությունների՝ համաշխարհային տնտեսության մեջ առաջին արտահանողը (ամբողջ համաշխարհային շուկայի մոտ 35.0 %-ը):

Ծառայությունների ոլորտ: Ծառայությունների ոլորտը, ինչպես և մյուս զարգացած երկրներում, Ֆրանսիայի տնտեսության հիմնական ոլորտն է: Ֆրանսիայում զարգացած են զբոսաշրջությունը, բանկային գործը, ապահովագրությունը, առևտուրը, կրթությունը, առողջապահությունը և այլն: Այսպես, Ֆրանսիայի ապահովագրական համակարգը գրավում է աշխարհում հինգերորդ տեղը: Այս ոլորտում ընդգրկված է շուրջ 600 ընկերություն, որտեղ աշխատում է ավելի քան 200 հազար մարդ: Հատկապես կարելի է առանձնացնել «Axa» (իր մեծությամբ երկրորդ ապահովագրական ընկերությունը Եվրոպայում), «CNP» ու «AGF» ընկերությունները, որոնք ներկայումս Ֆրանսիական երեք առաջատար ապահովագրական ընկերություններն են:

2000 թ. Ամստերդամի, Բրյուսելի ու Փարիզի ֆոնդային բորսաների (արժեթղթերի և ապրանքների) միաձուլմամբ առաջացավ «Euro Next»-ը, որը, 2002 թ. միավորելով Պորտուգալիայի ֆոնդային բորսան (արժեթղթերի ու ապրանքների) և գնելով Լոնդոնի ապրանքային ֆոնդային բորսան, էլ ավելի աճեց: 2005 թ. «Euro Next»-ը հայտարարեց Նյու Յորքի ֆոնդային բորսայի (New York Stock Exchange) հետ միավորման մասին, իսկ կազմակերպությունը տեղի ունեցավ 2007 թ. ապրիլի 4-ին: 2022 թ. դեկտեմբերի

տվյալներով «Euro Next»-ն շուկայական կապիտալիզացիայի ծավալով առաջին ֆոնդային բորսան էր Եվրոպայում (4.99 տրիլիոն դոլար), որտեղ ցուցակագրված էր ավելի քան 2000 բաժնետոմս:

Ֆրանսիայի ծառայությունների ոլորտում մեծ դեր ունի նաև զբոսաշրջությունը: Այսպես, 2019 թ. տվյալներով Ֆրանսիա այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 89.4 մլն մարդ, և այս ցուցանիշով Ֆրանսիան աշխարհում գրավում է առաջին տեղը: 2019 թ. տվյալներով զբոսաշրջությունը Ֆրանսիայի տնտեսության համար ապահովել է 71.0 մլրդ դոլար կամ ամբողջ արտահանման 8.0 %-ը:

Արտաքին տնտեսական կապերը: Ֆրանսիայի տնտեսության կառուցվածքային վերափոխման պայմաններում անընդհատ աճում է արտաքին տնտեսական կապերի, հատկապես արտաքին առևտրի դերը: Այսպես, 2022 թ. տվյալներով Ֆրանսիայի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1,418 մլրդ դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը կազմել է 606.8, իսկ ներմուծումը՝ 811.6 մլրդ դոլար: Ֆրանսիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -204.8 մլրդ դոլար: Համեմատության համար նշենք, որ 1997 թ. Ֆրանսիայի արտահանումը կազմում էր 385.6 մլրդ դոլար, ներմուծումը՝ 350 մլրդ դոլար, իսկ առևտրային հաշվեկշռի ավելցուկը՝ 35.6 մլրդ դոլար: Ինչպես նկատում ենք, 1997-2022 թթ. ընկած ժամանակաշրջանում զգալիորեն աճել են Ֆրանսիայի և՛ արտահանումը, և՛ ներմուծումը: Մյուս կողմից՝ Ֆրանսիան առևտրային հաշվեկշռի ավելցուկ ունեցող երկրից վերածվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդ ունեցող երկրի, իսկ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ունի աճի միտում:

2022 թ. տվյալներով Ֆրանսիան ապրանքների արտահանման ծավալով (606,8 մլրդ դոլար կամ համաշխարհային արտահանման 2.5 %-ը) աշխարհում գրավել է տասներորդ տեղը՝ Չի-

նաստանից (3,593 մլրդ դոլար), ԱՄՆ-ից (2,062 մլրդ դոլար), Գերմանիայից (1,658 մլրդ դոլար), Նիդեռլանդներից (770.3 մլրդ դոլար), Ճապոնիայից (752.0 մլրդ դոլար), Իտալիայից (700.3 մլրդ դոլար), Կորեայից (683.5 մլրդ դոլար), Բելգիայից (636.4 մլրդ դոլար) ու Հոնկոնգից (611,4 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (337.1 մլրդ դոլար)՝ վեցերորդ տեղը՝ ԱՄՆ-ից (928.5 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիայից (494.4 մլրդ դոլար), Չինաստանից (424.0 մլրդ դոլար), Գերմանիայից (411.7 մլրդ դոլար) ու Իռլանդիայից (355.1 մլրդ դոլար) հետո:

2022 թ. տվյալներով Ֆրանսիայի արտահանման հիմնական գործընկեր երկրներն են Գերմանիան (15.0 %), Իտալիան (9.2 %), ԱՄՆ (8.2 %), Բելգիան (7.8 %), Իսպանիան (7.7 %), Մեծ Բրիտանիան (5.7 %), և Նիդեռլանդները (4.1 %): Այստեղ հարկ է նշել, որ 2007 թ. հետ համեմատած՝ Ֆրանսիայի հիմնական գործընկեր երկրների կառուցվածքն ու տեսակարար կշիռները զգալի փոփոխության չեն ենթարկվել. զգալիորեն ավելացել է միայն ԱՄՆ տեսակարար կշիռը: Ֆրանսիայի արտահանման մեջ գերակշռում են հետևյալ ապրանքախմբերը՝ մեքենաներ ու տրանսպորտային միջոցներ, ինքնաթիռները, քիմիական ու դեղագործական ապրանքները, ոգելից ու ոչ ոգելից խմիչքները, չուգունն ու պողպատը:

Ֆրանսիան ապրանքների ներմուծման ծավալով (811,6 մլրդ դոլար կամ համաշխարհային ներմուծման 3.2 %-ը) 2022 թ. աշխարհում գրավել է վեցերորդ տեղը՝ ԱՄՆ-ից (3,375 մլրդ դոլար), Չինաստանից (2,715 մլրդ դոլար), Գերմանիայից (1,571 մլրդ դոլար), Ճապոնիայից (905,0 մլրդ դոլար) և Մեծ Բրիտանիայից (816,2 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (285,8 մլրդ դոլար)՝ կրկին վեցերորդ տեղը՝ ԱՄՆ-ից (696.7 մլրդ դոլար), Չինաստանից (465.0 մլրդ, դոլար), Գերմանիայից (459.2 մլրդ դոլար), Իռլանդիայից (372.8 մլրդ դոլար) ու Մեծ Բրիտանիայից հետո (317.0 մլրդ դոլար): Այստեղ հարկ է նշել, որ մինչև ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը 2007 թ. ծառա-

յությունների ներմուծման ծավալով առաջատար հինգ երկրներն էին՝ ԱՄՆ-ն (372.5 մլրդ դոլար), Գերմանիան (259.4 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիան (214.5 մլրդ դոլար), Ֆրանսիան (169.0 մլրդ դոլար) ու Ճապոնիան (158.5 մլրդ դոլար): 2010 թ. Չինաստանը ծառայությունների ներմուծման ծավալով առաջ անցավ Ֆրանսիայից ու Մեծ Բրիտանիայից, իսկ 2013 թ.՝ նաև Գերմանիայից:

Ներմուծման հիմնական գործընկեր երկրներն են Գերմանիան (12.5 %), Չինաստանը (10.0 %), Բելգիան (8.9 %), ԱՄՆ (7.8 %), Իսպանիան (6.7 %), Իտալիան (6.5 %), Նիդեռլանդները (4.1 %) ու Մեծ Բրիտանիան (3.7 %): Ինչպես և Ֆրանսիայի արտահանման դեպքում, այնպես էլ ներմուծման մեջ, 2007 թ. հետ համեմատած, չի նկատվել հիմանական գործընկեր երկրների կառուցվածքի և տեսակարար կշիռների զգալի փոփոխություն՝ բացի ԱՄՆ և Չինաստանի տեսակարար կշիռների ավելացումից: Ներմուծման մեջ գերակշռում են հետևյալ ապրանքախմբերը՝ մեքենաներ ու սարքավորումները, նավթը, ինքնաթիռները, փոխադրամիջոցները, քիմիական ապրանքները:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ո՞ր տեղն է զբաղեցնում Ֆրանսիան Արևմտյան Եվրոպայում իր զբաղեցրած տարածքով:
2. Որքա՞ն է կազմում Ֆրանսիայի բնակչությունը, և ո՞ր տեղն է զբաղեցնում բնակչության թվաքանակով Ֆրանսիան Արևմտյան Եվրոպայում:
3. Ֆրանսիան դրակա՞ն, թե՞ առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկիր է: Ո՞ր տեղն է զբաղեցնում այս ցուցանիշով Ֆրանսիան աշխարհում:
4. Որքա՞ն են կազմում ներգաղթածները Ֆրանսիայի ընդհանուր բնակչության մեջ:

5. Որքա՞ն է կազմում 65 տարեկան և ավելի մարդկանց թիվը Ֆրանսիայի ամբողջ բնակչության մեջ:
6. Ինչքա՞ն է կազմում Ֆրանսիայի տնտեսապես ակտիվ բնակչությունը 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության մեջ:
7. Ինչպիսի՞ն է Ֆրանսիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունը տնտեսության մեջ:
8. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի Ֆրանսիայի տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելը:
9. Ի՞նչ բարեփոխումներ կատարեցին Ա. Ժյուպեն ու Լ. Ժոսպենը, և ի՞նչ ազդեցություն ունեցան դրանք Ֆրանսիայի տնտեսության համար:
10. Ինչպիսի՞ն է Ֆրանսիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը: Ո՞ր տեղն է զբաղեցնում Ֆրանսիան գյուղատնտեսական արտադրանքի ծավալով Արևմտյան Եվրոպայում:
11. Ո՞ր տեղն է զբաղեցնում Ֆրանսիան միջազգային զբոսաշրջիկների թվով աշխարհում:

Աղյուսակ 8.3.1. Ֆրանսիայի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն)[125]	2.19	2.22	2.28	2.33	2.34	2.27	2.32	2.36	2.37	2.39	2.41	2.44	2.46	2.52	2.56	2.61	2.41	2.57	2.63
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	2.8	1.7	2.4	2.4	0.3	-2.9	1.9	2.2	0.3	0.6	1.0	1.1	1.1	2.3	1.9	1.8	-7.5	6.4	2.5
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազար դոլար)	34.9	35.2	35.8	36.4	36.3	35.1	35.6	36.2	36.2	36.2	36.4	36.6	36.9	37.7	38.3	38.9	35.8	38.0	38.8
Գնաճի մակարդակ, (CPI) %	2.1	1.7	1.7	1.5	2.8	0.1	1.5	2.1	2.0	0.9	0.5	0.0	0.2	1.0	1.9	1.1	0.5	1.6	5.2
Գործազրկության մակարդակ, %	8.9	8.5	8.5	7.7	7.1	8.7	8.9	8.8	9.4	9.9	10.3	10.4	10.0	9.4	9.0	8.4	8.6	7.8	7.3

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 8.3.2. Ֆրանսիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.[126],%

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	4.1	4.3	3.9	3.6	3.7	3.5	2.7	2.9	2.9	2.9	2.9	3.1	2.8	2.7	2.9	2.6	2.5	2.5	2.4	2.5
Արդյունաբերություն	25.4	24.1	24.3	23.8	23.8	23.3	23.3	22.7	22.3	22.2	21.8	21.3	20.5	20.3	20.2	20.4	20.2	20.4	20.0	19.5
Ծառ. ոլորտ	70.5	71.6	71.9	72.6	72.5	73.2	74.0	74.4	74.8	74.9	75.3	75.6	76.6	77.0	76.9	77.0	77.3	77.0	77.7	78.0

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[125] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

[126] Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների Ֆրանսիայի տնտեսության համար առկա է մինչև 2021 թվականը:

Աղյուսակ 8.3.3. Ֆրանսիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2004-2022 թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղատնտեսություն	1.8	1.7	1.5	1.6	1.5	1.3	1.6	1.7	1.6	1.5	1.6	1.6	1.4	1.5	1.6	1.5	1.6	1.6	1.9
Արդյունաբերություն[127]	20.0	19.6	19.3	19.1	18.8	18.3	17.8	18.0	17.9	18.0	17.7	17.7	17.4	17.2	17.2	17.4	16.4	16.4	16.8
Ծառ. ոլորտ[128]	68.2	68.5	68.7	69.0	69.7	70.8	70.7	70.2	70.3	70.3	70.3	70.2	70.5	70.3	70.1	70.0	71.2	70.6	70.7

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 8.3.4. Ֆրանսիայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահանում	434.3	479.0	539.7	594.5	464.1	511.6	585.7	558.5	567.9	566.6	493.9	488.8	524.0	568.9	556.5	476.1	570.8	606.8
Ներմուծում	475.8	529.9	611.3	695.0	540.5	599.1	713.7	666.7	671.2	659.9	563.4	560.5	608.8	660.1	643.9	569.3	704.7	811.6
Առևտրային հաշվ.	-41.5	-50.8	-71.6	-100.4	-76.3	-87.5	-127.9	-108.2	-103.3	-93.2	-69.5	-71.7	-84.8	-91.1	-87.4	-93.2	-134	-205

Աղբյուր՝ International Trade Centre:

[127] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:

[128] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

8.4. Մեծ Բրիտանիայի տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Մեծ Բրիտանիայի տարածքը կազմում է 244 հազ. կմ^2: 2022 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայի բնակչությունը կազմել է 66.9 մլն մարդ:

Մեծ Բրիտանիան կամ Անգլիայի Միացյալ Թագավորությունը կազմված է չորս տարածաշրջաններից (Շոտլանդիա, Անգլիա, Ուելս և Հյուսիսային Իռլանդիա): Ներկայումս Մեծ Բրիտանիայի թագավորը կամ թագուհին միայն ձևական խորհրդանիշ ունի, իսկ կառավարման իրական ուժը պատկանում է խորհրդարանին: Մեծ Բրիտանիայի խորհրդարանը բաղկացած է երկու մասից՝ Լորդերի ու Ներկայացուցիչների պալատներից: Ներկայացուցիչների պալատնի անդամները ընտրվում են քաղաքացիների կողմից: Երկու պալատներից ամենաազդեցիկը Ներկայացուցիչների պալատն է: Կառավարության ղեկավարը վարչապետն է և հարում է քաղաքական այնպիսի կուսակցության, որը ամենաշատ տեղերն է զբաղեցնում ներկայացուցիչների պալատում: Մեծ Բրիտանիան գլխավորում է նաև Ազգերի բրիտանական համագործակցությունը, որը միջկառավարական կազմակերպություն է[129]:

Մեծ Բրիտանիան քաղաքական ու տնտեսական կարևոր ուժ է Եվրոպայում ու ամբողջ աշխարհում: Հենց այստեղ է ստեղծվել կապիտալիստական հարաբերությունների/շուկայական տնտեսության գաղափարը, այստեղ են ձևավորվել վերազգային առաջին ընկերությունները: Չնայած Մեծ Բրիտանիան 1973 թվականից ԵՄ անդամ է, սակայն չի մտել եվրոպական մեկ միասնական արժույթի՝ եվրոյի գոտու մեջ: Ավելին՝ 2016 թ. հունիսի 23-ին կայացած հանրաքվեով՝ 51.9 % կողմ ձայներով, որոշվեց, որ Մեծ Բրիտանիան դադարեցնում է ԵՄ-ին իր անդամակցությունը:

[129] Ազգերի բրիտանական համագործակցությանն անդամակցում է 54 անկախ պետություն, որոնք նախկինում հիմնականում եղել են Մեծ Բրիտանիայի գաղութներ (Կանադա, Հնդկաստան, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Մալազիա, Սինգապուր, Հարավաֆրիկյան Հանրապետություն և այլն):

Ծրագրված էր, որ 2019 թ. մարտի 29-ին Մեծ Բրիտանիան պետք է վերջնականապես դադարեցներ իր անդամակցությունը ԵՄ-ին, սակայն վերջնաժամկետը երկու անգամ երկարաձգվեց, քանի որ խորհրդարանը չէր հաստատում վարչապետ Թերեզա Մեյի բանակցային փաթեթը: Վերջինս հրաժարական տվեց խորհրդարանի կողմից երրորդ անգամ հաստատում չստանալուց հետո: Նոր վարչապետ Բորիս Ջոհնսոնին հաջողվեց ստանալ խորհրդարանի հաստատումը, և որոշվեց, որ Մեծ Բրիտանիան պետք դադարեցնի իր անդամակցությունը ԵՄ-ին մինչև 2020 թ. հունվարի 31-ը:

Մեծ Բրիտանիան աչքի չի ընկնում օգտակար հանածոների բազմազանությամբ, սակայն դրանցից մի քանիսն արդյունաբերական շրջանների ձևավորման գործում հսկայական դեր են խաղացել: Արդյունաբերության զարգացման բնառեսուրսային ներուժում առանձնանում են էներգակիր ռեսուրսները (քարածուխ, նավթ, գազ): Կան նաև երկաթաքարի, անագի, պղնձի հանքավայրեր, սակայն դրանք չեն բավարարում ներքին պահանջարկը: Հյուսիսային ծովի նավթի ու գազի իր զգալի պաշարներով Մեծ Բրիտանիան Եվրոպայում նավթ ու գազ արդյունահանող գլխավոր երկիրն է: Միևնույն ժամանակ նա Եվրոպայում ամենաշատ էներգիա սպառող երկրներից մեկն է: Երկար տարիներ հանդիսանալով զուտ նավթ ու գազ արտահանող երկիր՝ 2004 թ. Մեծ Բրիտանիան վերածվեց զուտ գազ ներմուծող երկրի: Ավելին, ինչպես և կանխատեսվել էր Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից, արդեն 2010 թ. Մեծ Բրիտանիան վերածվեց զուտ նավթ ներմուծող երկրի:

Մեծ Բրիտանիայի տնտեսությունը հիմնված է մասնավոր հատվածի վրա: Մասնավոր հատվածի բաժինը ՀՆԱ-ում գերազանցում է 85 %-ը, և դրան բաժին է ընկնում երկրում ամբողջ

զբաղվածների 75 %-ը[130]: Ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար Մեծ Բրիտանիայի կառավարությունն ապահովել է բոլոր անհրաժեշտ միջոցները:

2022 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 3.1 տրիլիոն դոլար, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 3.2 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 47,923 դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.4.1*): Այստեղ հարկ է նշել, որ ՀՆԱ-ի մեծությամբ Մեծ Բրիտանիան Եվրոպայում գրավում է երկրորդ տեղը Գերմանիայից հետո, իսկ աշխարհում՝ հինգերորդ տեղը ԱՄՆ-ից (20.9 տրիլիոն դոլար), Չինաստանից (16.3 տրիլիոն դոլար), Ճապոնիայից (4.5 տրիլիոն դոլար), Գերմանիայից (3.6 տրիլիոն դոլար) հետո: 2000-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում՝ մինչև ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը, Մեծ Բրիտանիայի ՀՆԱ-ի աճի միջին տեմպը կազմել է 2.9 %: Այս ցուցանիշով Մեծ Բրիտանիայի տնտեսությունը աճել է շատ ավելի արագ, քան ԵՄ անդամ այլ երկրների տնտեսությունը: Մյուս կողմից՝ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը զգալի բացասական հետևանքներ ունեցավ Մեծ Բրիտանիայի տնտեսության հատկապես ֆինանսական ոլորտի վրա: Այդ պատճառով, ի տարբերություն Գերմանիայի, որն արդեն 2010 թ. գրեթե վերականգնել էր իր ՀՆԱ-ի մինչճգնաժամային մակարդակը՝ 2010 թ. գրանցելով 4.2 % տնտեսական աճ, Մեծ Բրիտանիային 2010 թ. դեռ չէր հաջողվել վերականգնել մինչճգնաժամային ՀՆԱ-ի մակարդակը (2010 թ. Մեծ Բրիտանիայի ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 2.1 %): 2020 թ. տնտեսական աճի նման մեծ բացասական ցուցանիշը (-9.7%) COVID-19 համավարակի արդյունք էր: Մեծ Բրիտանիայի տնտեսության մեջ 2022 թ. գնաճի մակարդակը կազմել է 7.9 %, իսկ գործազրկության մակարդակը՝ 3.6 %, ինչպես Գերմանիայի ու Ֆրանսիայի դեպքում 2022 թ. գրանցվել է գնաճի

[130] ՀՀ-ում, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, 2022 թ. տվյալներով մասնավոր հատվածին բաժին է ընկել ամբողջ զբաղվածների մոտ 76.6 %-ը:

մակարդակի անհամեմատ մեծ ցուցանիշ: Այստեղ հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայի տնտեսության մեջ գնաճի մակարդակը սովորաբար փոքր-ինչ գերազանցել է Արևմտյան Եվրոպայի մյուս առաջատար երկրների գնաճի մակարդակին, քանի որ Մեծ Բրիտանիան, մինչև 2020 թ. հունվարի 31-ը լինելով ԵՄ անդամ, մեկ միասնական արժութային համակարգի անդամ չէր: Հետևաբար համեմատաբար բարձր գնաճի մակարդակ գրանցվել է հատկապես հետճգնաժամային (2008-2013 թթ.) ժամանակահատվածում: Անդրադառնալով Մեծ Բրիտանիայի գործազրկության մակարդակին՝ կարող ենք նշել, որ Մեծ Բրիտանիան Արևմտյան Եվրոպայում միշտ առանձնացել է իր գործազրկության համեմատաբար ցածր մակարդակով: 2009-2012 թթ. գործազրկության համեմատաբար բարձր մակարդակն արդյունք էր 2007 թ. ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի: Մեծ Բրիտանիայի գործազրկության մակարդակը, 2013 թվականից սկսած, ձեռք բերեց նվազման միտում: Ինչպես նկատում ենք, COVID-19 համավարակը, ինչպես և Գերմանիայի ու Ֆրանսիայի դեպքում, ազդեցություն չի ունեցել ՄԵԾ Բրիտանիայի գործազրկության մակարդակի վրա:

Մեծ Բրիտանիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -285.8 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը՝ -101.7 մլրդ դոլար: Առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծությամբ Մեծ Բրիտանիան զբաղեցնում է երկրորդ տեղը ԱՄՆ-ից (-1.3 տրիլիոն դոլար) հետո:

2022 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայի պետական պարտքը կազմել է 3.0 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 97.1 %, և այս ցուցանիշի մեծությամբ Մեծ Բրիտանիան աշխարհում զբաղեցրել է 29-րդ տեղը), իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 9.2 տրիլիոն դոլար (ՀՆԱ-ի մոտ 296.0%): Արտաքին պարտքի ցուցանիշի բացարձակ մեծությամբ Մեծ Բրիտանիան աշխարհում զբաղեցրել է 2-րդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո: Ի տարբերություն

Գերմանիայի, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված, զգալիորեն աճել է Մեծ Բրիտանիայի պետական պարտքը, և նվազել է արտաքին պարտքը: Այսպես, 2007 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայի պետական պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 43.6 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր)՝ ՀՆԱ-ի 382.0 %-ը:

Բնակչությունն ու աշխատանքային ռեսուրսները: Մեծ Բրիտանիան յուրահատուկ տեղ և դեր ունի համաշխարհային տնտեսության մեջ, մեքենաների հայրենիքն է, այստեղ են կատարվել բազմաթիվ գյուտեր ու հայտնագործություններ:

Երկրի բնակչության թիվը սկզբնական շրջանում աճում էր բնական աճի շնորհիվ, սակայն XIX դարում ուրբանիզացմանը զուգընթաց ծնելիության մակարդակը սկսեց աստիճանաբար նվազել: Անգամ առանձին տարիներ բնակչության աճը բնութագրվում էր բացասական ցուցանիշներով: Բնակչության ցածր աճը հանգեցրել է ազգի ծերացման գործընթացին և սոցիալական ծախսերի ավելացմանը (2022 թ. տվյալներով 65 տարեկան և ավելի մարդկանց թիվը կազմում էր ամբողջ բնակչության ավելի քան 19.1 %-ը, և այս ցուցանիշն ունի աճի միտում): Ընդ որում՝ Մեծ Բրիտանիայում ազգի ծերացման գործընթացը սկսվել է ավելի շուտ, քան այլ երկրներում: Մեծ Բրիտանիայի բնակչությունը բազմազգ է, անգլիացիները կազմում են ամբողջ բնակչության 81.5 %-ը, զգալի մաս են կազմում շոտլանդացիներն ու իռլանդացիները: Այլ ազգերից այստեղ ապրում են հնդիկներ, չինացիներ, արաբներ, հրեաներ և այլն: Մեծ Բրիտանիային բնորոշ է ազգամիջյան լարվածությունը անգլիացիների ու իռլանդացիների միջև: Մեծ Բրիտանիան առանձնանում է բնակչության բարձր կենսամակարդակով, ուրբանիզացման աստիճանով (ավելի քան 84.3 %):

2022 թ. տնտեսապես ակտիվ բնակչությունը (34.4 մլն մարդ) Մեծ Բրիտանիայում կազմել է 15 տարեկան և դրանից բարձր

տարիք ունեցող բնակչության 62.3 %-ը: 2021 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 1.0 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 18.0 %-ը՝ արդյունաբերության, իսկ 81.0 %-ը՝ ծառայությունների ոլորտում (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.4.2*): Գործազրկության մակարդակը 2022 թ. կազմել է 3.6 %: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ 2009 թվականից ի վեր գործազրկության մակարդակը զգալիորեն աճել էր Մեծ Բրիտանիայում՝ 2011 թ. կազմելով 8.0 %: 2012 թվականից ի վեր գործազրկության մակարդակը ձեռք է բերել նվազման միտում, և ներկայումս ամենացածր մակարդակներից մեկն է աշխարհում:

Մեծ Բրիտանիան աչքի է ընկնում բարձրորակ աշխատուժով ու գիտական ներուժով: Տնտեսապես ակտիվ բնակչության կեսից ավելին գրասենյակային աշխատողներ են:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: Մեծ Բրիտանիայի տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ երկիրը չի զարգանում սոցիալ-շուկայական սկզբունքներով, ինչպես, օրինակ, Գերմանիան ու Ֆրանսիան, այլ օգտագործում է զարգացման նեոլիբերալ անգլոսաքսոնական մոդել: Այդ պատճառով Մեծ Բրիտանիայի տնտեսական զարգացման մոդելը շատ ավելի մոտ է ԱՄՆ զարգացման մոդելին և զգալիորեն տարբերվում է եվրոպական երկրների տնտեսական զարգացման մոդելից: Տնտեսության ազատականացման աստիճանով (Index of Economic Freedom) 2022 թ. Մեծ Բրիտանիան Եվրոպայում զբաղեցնում էր 17-րդ, իսկ աշխարհում՝ 30-րդ տեղը: Այս ցուցանիշով առաջատար տասը երկրներն են Սինգապուրը, Շվեյցարիան, Իռլանդիան, Թայվանը, Լյուքսեմբուրգը, Նոր Զելանդիան, Դանիան, Էստոնիան, Շվեդիան ու Նորվեգիան: Համեմատության համար նշենք, որ Գերմանիան տնտեսական ազա-

տականացման ցուցանիշով աշխարհում գրավել է 18-րդ (Եվրոպայում 12-րդ), իսկ Ֆրանսիան՝ 62-րդ տեղը[131]:

Մեծ Բրիտանիայի տնտեսության ներկայիս զարգացման նեոլիբերալ մոդելի հիմքը դրվել է 1979 թ., երբ տնտեսությունում կիրառվեց «տեթչերիզմի» քաղաքականությունը: Քաղաքականության անվանումը ծագում է բրիտանական պահպանողականների առաջնորդ ու 1979-1990-ական թթ. վարչապետ Մարգարիտ Տեթչերի անունից: Մեծ Բրիտանիայում «տեթչերիզմը», ինչպես և «ռեյգանոմիկան» ԱՄՆ-ում, նախատեսում էր նեոկոնսերվատիվ բարեփոխումներ տնտեսության մեջ՝ նվազեցնելով տնտեսության մեջ պետության ակտիվ դերը:

Պահպանողականների իշխանության գլուխ եղած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի տնտեսական քաղաքականությունը ներառում էր մի շարք ծրագրերի իրականացում:

1. Շուկայական մեխանիզմի և ձեռնարկատիրական գործունեության աջակցություն: Այս ծրագիրն իրագործվեց շնորհիվ.
   - սեփականաշնորհման քաղաքականության. 1979-1994 թթ. ընկած ժամանակաշրջանում սեփականաշնորհվեցին այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք էին «British Telecom»-ը, «British Coal»-ը, «British Airways»-ը և այլն: Սեփականաշնորհման գործընթացը պետական բյուջեի համար ապահովեց 55.5 մլրդ ֆունտ ստեռլինգ,
   - տնտեսության ապակարգավորման. տնտեսության կարգավորման համար պետության ծախսերը զգալի նվազեցին,

[131] Տնտեսական ազատականության ինդեքս, Index of Economic Freedom, 2024. The Heritage Foundation: Մինչև 2021 թվականը առաջատարը եղել է Հոնկոնգը, սակայն 2021 թվականից սկսած՝ այն դիտարկվում է որպես ՉԺՀ մաս: Այստեղ հարկ է նշել, որ համաձայն այս ինդեքսի՝ Հայաստանը գրավել է աշխարհում 47-րդ տեղը:

- հարկային բարեփոխումների իրականացման. զգալի նվազեցվեց ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարկային բեռը:

2. Պետական ծախսերի կրճատում: 1982-1990 թթ. երկրորդ կեսն ընկած ժամանակաշրջանում պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում զգալիորեն կրճատվեց՝ 1990-ական թթ. երկրորդ կեսին կազմելով ՀՆԱ-ի 32.0 %-ը[132]:
3. Դրամավարկային քաղաքականություն: Գնաճի դեմ պայքարի համար, որը 1979 թ. կազմում էր մոտ 13.2 %, դրամավարկային քաղաքականությունը իրականացվում էր մոնետարիզմի դասական օրենքներով: Վերահսկվում էր շրջանառության մեջ առկա դրամի քանակությունը, իսկ դրամավարկային քաղաքականության կարևոր գործիք հանդիսացավ կարճաժամկետ տոկոսադրույքը:

Ընդհանուր առմամբ «տետչերիզմը» առաջնությունը տալիս էր տնտեսության առաջարկի կարգավորմանը, որը ենթադրում էր հրաժարում պահանջարկի աջակցության քեյնսյան գաղափարից: Անգլիական առաջարկի տնտեսագիտությունը ներառում էր.

- հրաժարում պետական ուղղակի վերահսկումից,
- ներքին շուկայում մրցակցության խթանում,
- պետական նվազագույն կարգավորում՝ անցում տնտեսության մակրոտնտեսական պետական կարգավորման անուղղակի մեխանիզմների,
- որոշ ոլորտների կարգավորում (մասնավորապես, որտեղ շուկայական մեխանիզմը գործում է ոչ արդյունավետ, օրինակ՝ ատոմային էներգետիկա, տրանսպորտի որոշ ոլորտներ):

---

[132] ՀՀ-ում պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում 2022 թ. տվյալներով կազմել է 26.4 %: Վերջին տասնամյակում այս ցուցանիշի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2020 թ. (30.6 %): Համեմատության համար նշենք, որ Մեծ Բրիտանիայում այս ցուցանիշը 2022 թ. կազմել է ՀՆԱ-ի 45.1%-ը:

Կառավարությունն ազատվեց նախկին ոչ արդյունավետ գործող որոշ ձեռնարկություններից, իսկ կառավարության ներկայիս նոր դերը հանգեց դրամավարկային ու ֆիսկալ քաղաքականությունների միջոցով տնտեսության անուղղակի կարգավորման:

Նախկինում վնասով աշխատող պետական ընկերության օրինակ, որը ներկայումս արդեն մասնավոր է և մեծ հաջողություններ է գրանցել, կարող է հանդիսանալ «British Airways» ընկերությունը: Վնասով աշխատող պետական այս ընկերությունը 1987 թ.՝ սեփականաշնորհումից արդեն երկու տարի հետո, վերածվեց եկամտաբեր ընկերության և ներկայումս աշխարհի խոշորագույն 10 ավիաընկերություններից մեկն է:

Եվրոպայում ընթացող ինտեգրացիոն գործընթացների շրջանակում Մեծ Բրիտանիան իր տնտեսական զարգացման մոդելով զգալի առանձնանում էր եվրոպական այլ երկրներից, և դա իր հետին բերում էր որոշակի խնդիրների առաջացման: ԵՄ-ն հաճախ ստիպում էր Մեծ Բրիտանիային վերաշտկել երկրի տնտեսական զարգացման կոնսերվատիվ կուրսը:

Վարչապետ Մարգարիտ Տեթչերին (1979-1990 թթ.) հաջորդած Ջոն Մեյջերը (1990-1997 թթ.), Թոնի Բլեյերը (1997-2007 թթ.), Գորդոն Բրաունը (2007-2010 թթ.), Դավիթ Կամերունը (2010-2016 թթ.), Թերեզա Մեյը (2016-2019 թթ.), Բորիս Ջոհնսոնը (2019-2022 թթ.) և ներկայիս վարչապետ Ռիշի Սունակը (2022 թ. հոկտեմբերի 25-ից) չեն փոխել Մեծ Բրիտանիայի տնտեսական քաղաքականությունը: Մեծ Բրիտանիայի այդպիսի դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ Մեծ Բրիտանիայի տնտեսության զարգացման մոդելն ավելի արդյունավետ է գործում, քան եվրոպական այլ երկրների տնտեսական զարգացման մոդելները: Այսպես, վերջին տարիների ընթացքում նախքան ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը Մեծ Բրիտանիայի ՀՆԱ-ի աճի տեմպերը եղել են ամենաբարձրը ԵՄ շրջանակում: Գործազրկության մակարդակը 2007 թ. Մեծ Բրիտանիայում (5.4 %) շատ ավելի ցածր

էր, քան Գերմանիայում (8.4 %) և Ֆրանսիայում (8.3%): Այդ պատճառով Մեծ Բրիտանիան շարունակում էր զբաղեցնել իր սկզբունքային դիրքորոշումը ԵՄ-ում: Այսպես, Գերմանիան ու Ֆրանսիան իրենց գերակայությամբ ու սոցիալ-շուկայական տնտեսություններով գլխավորում էին ԵՄ-ն: Այս պարագայում ԵՄ-ին լիարժեք ինտեգրումը Մեծ Բրիտանիայի համար կնշանակեր հրաժարում տնտեսության մեջ նախկին լիբերալ սկզբունքներից: Հակառակ դեպքում Մեծ Բրիտանիան պետք է գործեր այնպես, ինչպես ԵՄ շատ այլ երկրներ՝ ավելացնելով հարկերը և տնտեսության մեջ պետական կարգավորումը: Հետևաբար պատահական չէր, որ Մեծ Բրիտանիան 1999 թ. հունվարից չանցավ մեկ միասնական արժույթի՝ եվրոյի, իսկ հետագայում՝ 2016 թ. հունիսի 23-ին կայացած հանրաքվեով որոշվեց, որ Մեծ Բրիտանիան դադարեցնում է ԵՄ-ին իր անդամակցությունը: 2020 թ. հունվարի 31-ից Մեծ Բրիտանիան այլևս ԵՄ անդամ երկիր չէ:

Այսպիսով՝ Մեծ Բրիտանիայի տնտեսության մոդելը շատ ավելի մրցունակ է, քան Գերմանիայի ու Ֆրանսիայի սոցիալ-շուկայական մոդելները: Այսպես, ըստ Գլոբալ մրցունակության զեկույցի՝ 2006 թ. տվյալներով Մեծ Բրիտանիան տնտեսական մրցունակությամբ աշխարհում գրավում էր 21-րդ, Գերմանիան՝ 26-րդ, իսկ Ֆրանսիան՝ 35-րդ տեղը: Մյուս կողմից՝ այստեղ հարկ է նշել, որ վերջին տարիներին Գերմանիան զգալիորեն բարելավել է իր դիրքերն այս ցուցանիշով, և արդեն 2019 թ. տվյալներով Գերմանիան գրավում էր 7-րդ, Մեծ Բրիտանիան՝ 9-րդ, իսկ Ֆրանսիան՝ 15-րդ տեղը[133]:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Մեծ Բրիտանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2022 թ. հետևյալն էր. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 0.8 %-ը, արդ-

[133] Գլոբալ մրցունակության զեկույց, Global Competitiveness Report, 2019: Հարկ է նշել, որ համաձայն այս ցուցանիշի՝ Հայաստանն աշխարհում գրավել է 69-րդ տեղը:

յունաբերությանը՝ 16.7 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 72.2 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.4.3*):

Գյուղատնտեսություն: Մեծ Բրիտանիայի գյուղատնտեսությունն աչքի է ընկնում իր արտադրողականության և արդյունավետության բարձր մակարդակով: Զարգացած երկրների շարքում, հատկապես «Մեծ յոթնյակում», ՀՆԱ-ում գյուղատնտեսության ոլորտի նման փոքր մասնաբաժնով Մեծ Բրիտանիան առանձնանում է: Այստեղ հարկ է նշել, որ այս ցուցանիշի համեմատաբար փոքր մակարդակով Մեծ Բրիտանիայից հետո առանձնանում է նաև Գերմանիան (0.9 %): Մեծ Բրիտանիան սննդամթերքի սեփական արտադրությամբ ապահովում է իր ներքին պահանջարկի գրեթե կեսը: Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերն ցորենը, կարտոֆիլն ու շաքարի ճակնդեղը:

Արդյունաբերություն: Մեծ Բրիտանիայի արդյունաբերությունը բնութագրվում է արդյունահանող ոլորտների զգալի դերով: Քարածխի արդյունահանման կրճատման և ոչ եկամտաբեր հանքահորերի փակմանը զուգահեռ ավելացվում է նավթի ու գազի արդյունահանումը Հյուսիսային ծովից: Այս ոլորտում աչքի են ընկնում «Royal Dutch/Shell» ու «British Petroleum» վերազգային խոշոր ընկերությունները:

Մեծ Բրիտանիայի վերամշակող արդյունաբերությունում աչքի են ընկնում հետևյալ ոլորտները.

- տրանսպորտային մեքենաշինությունը, որին բաժին է ընկնում ամբողջ արդյունաբերության 12.4 %-ը, որտեղ հատուկ առանձնանում են.
  - ավտոմեքենաշինությունը. այս ոլորտում գործող ընկերություններն են «Land Rover»-ը, «Jaguar»-ը, «Vauxhall»-ը, «Bentley»-ն, «Aston Martin»-ը, «McLaren»-ն ու «Rolls-Royce»-ը, որոնց բաժին է ընկնում ամբողջ ավտոմեքենաների արտադրության ավելի քան 90 %-ը,

- նավաշինությունը, այդ թվում՝ նավերի սարքավորումների արտադրությունը,
- աերոտիեզերական արդյունաբերությունը, որն աշխարհում ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի աերոտիեզերական արդյունաբերությունից հետո երրորդն է և արտադրում է քաղաքացիական ու ռազմական ինքնաթիռներ՝ «British Aerospace», «Harrier», «Tornado», «Eurofighter», ինչպես նաև եվրոպական «Airbus Industry» կոնցեռնի համար սարքավորումներ,

➢ սննդի արդյունաբերությունը, որին բաժին է ընկնում ամբողջ արդյունաբերական արտադրանքի 12.5 %-ը,

➢ ընդհանուր մեքենաշինությունը. գյուղատնտեսական տեխնիկայի ու հաստոցների արտադրությունը. Մեծ Բրիտանիան հաստոցների արտադրությամբ աշխարհում գրավում է 6-րդ տեղը: Այս ոլորտում առաջատար երկրներն են Չինաստանը (28 %), Գերմանիան (13 %), Ճապոնիան (12 %), Հարավային Կորեան (5.1 %) և Իտալիան (5 %),

➢ էլեկտրատեխնիկայի արտադրությունը. այս ոլորտում գործող հանրահայտ ընկերություններն են «IBM»-ն ու «Compaq»-ը,

➢ քիմիական արդյունաբերությունը, որին բաժին է ընկնում ամբողջ արդյունաբերության 11.0 %-ը: Մեծ Բրիտանիան դեղորայքի արտադրությամբ ու արտահանման ծավալներով աշխարհում գրավում է 6-րդ տեղը Գերմանիայից, Շվեյցարիայից, Բելգիայից, ԱՄՆ-ից ու Ֆրանսիայից հետո,

➢ մետաղագործական արդյունաբերությունը, որին բաժին է ընկնում ամբողջ արդյունաբերության 10.8 %-ը:

Մեծ Բրիտանիայի ներկայիս արդյունաբերության զարգացումը պայմանավորված է բարձր տեխնոլոգիաներով: Այդ պատ-

ճառով բրիտանական ապրանքներն առանձնանում են իրենց բարձր գիտատարությամբ: Մեծ Բրիտանիան դասվում է այն երկրների շարքին, որը համաշխարհային տնտեսության մեջ աչքի է ընկնում իր գիտատեխնիկական առաջընթացով, իսկ Եվրոպայում ունի ամենամեծ գիտատեխնիկական ներուժը: Մեծ Բրիտանիան Նոբելյան մրցանակ ստացած գիտնականների թվով (ավելի քան 70) ԱՄՆ-ից հետո երկրորդ երկիրն է: 2022 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայում գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսերը կազմում էին ՀՆԱ-ի մոտ 2.9 %-ը, այդ թվում՝ բոլոր գիտահետազոտական աշխատանքների մոտ 35.0 %-ը ֆինանսավորում է պետությունը[134]:

Ծառայությունների ոլորտ: Մեծ Բրիտանիայի ծառայությունների ոլորտում ներգրավված է ավելի քան 27.2 մլն մարդ (տնտեսապես ակտիվ բնակչության 80 %-ը), իսկ երկրի մայրաքաղաք Լոնդոնը համաշխարհային ֆինանսական կենտրոններից մեկն է:

Մեծ Բրիտանիայի ծառայությունների ոլորտից կարելի է առանձնացնել ֆինանսներն ու զբոսաշրջությունը: Մեծ Բրիտանիայի տնտեսության համար հատկապես շատ մեծ է ֆինանսների դերը, որը ապահովում է ՀՆԱ-ի մոտ 70.0 %-ը: Ֆինանսական ծառայություններից կարելի է առանձնացնել բանկային գործունեությունը (աշխարհի 50 ամենախոշոր բանկերն իրենց գործունեությունն են ծավալել Լոնդոնում), ապահովագրությունը, ածանցյալ ֆինանսական գործիքների շուկան (ֆյուչերսներ, օպցիոններ և այլն), ֆինանսական լիզինգը, արտարժույթի շուկան (գործառնություններ եվրարժույթի հետ) և այլն:

Ծառայությունների ոլորտում երկրորդ կարևոր ոլորտը զբոսաշրջությունն է: Լոնդոնը աշխարհի խոշորագույն զբոսաշրջու-

---

[134] 2022 թ. տվյալներով ՀՀ-ում գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 0.2 %-ը: Այստեղ հարկ է նշել, որ ՀՆԱ-ում գիտահետազոտական աշխատանքների բաժնով աշխարհում առաջատար հինգ երկրներն են Իսրայելը (5.5 %), Հարավային Կորեան (4.9 %), ԱՄՆ-ն (3.5 %), Բելգիան (3.4 %) ու Շվեդիան (3.3 %):

թյան կենտրոններից մեկն է: Այսպես, 2019 թ. տվյալներով Մեծ Բրիտանիա է այցելել ավելի քան 39.4 մլն զբոսաշրջիկ: Զբոսաշրջության ոլորտում զբաղված է երկրի տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 7.0 %-ը, և այս ոլորտը Մեծ Բրիտանիայի տնտեսության համար ապահովել է 50.5 մլրդ դոլար եկամուտ կամ ամբողջ արտահանման 5.8 %-ը:

Մեծ Բրիտանիայի արտաքին տնտեսական կապերը: Արտաքին տնտեսական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի տնտեսության համար էական դեր են կատարում: Մեծ Բրիտանիան շատ ավելի բաց է օտարերկրյա ներդրումների համար, քան Գերմանիան ու Ֆրանսիան: Երկրի բարենպաստ ներդրումային միջավայրն ապահովվում է ոչ միայն գրավիչ հարկային համակարգով, այլ նաև բավական ցածր տոկոսադրույքով ու ներքին շուկայում մրցակցության բավական բարձր մակարդակով[135]: Կառավարությունը տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալ ներգրավելու համար, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտ, ստեղծել է գրեթե բոլոր անհրաժեշտ պայմանները: Այսպես, երկրում իրենց գործունեությունն են ծավալել վերազգային այնպիսի խոշոր կազմակերպություններ, ինչպիսիք են՝ «Motorola»-ն, «Nokia»-ն, «Epson»-ը, «Ford»-ը, «BMW»-ն, «Samsung»-ը և այլն: Ընդհանուր առմամբ Մեծ Բրիտանիայում գործում է ավելի քան 13 հազար օտարերկրյա ընկերություն: ԵՄ շրջանակում իրականացվող օտարերկրյա ներդրումների գրեթե 1/3-ը բաժին է ընկնում հենց Մեծ Բրիտանիային: Ավելին՝ դեպի ԵՄ երկրներ կատարվող ամերիկյան ներդրումների գրեթե 50 %-ը բաժին է ընկնում Մեծ Բրիտանիային:

2022 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայի արտահանումը կազմել է 530.4 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 816.2 մլրդ դոլար: Մեծ Բրիտանիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է -285.8 մլրդ դոլար: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ*

[135] 2022 թ. տվյալներով տոկոսադրույքը Մեծ Բրիտանիայում կազմել է 5.25 %:

8.4.4-ից, Մեծ Բրիտանիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը նշված ժամանակահատվածում միշտ եղել է բացասական:

Մեծ Բրիտանիան ապրանքների արտահանման ծավալով 2022 թ. աշխարհում գրավել է 14-րդ, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (494.4 մլրդ դոլար)՝ 2-րդ տեղը՝ ԱՄՆ-ից (928.5 մլրդ դոլար) հետո: Այստեղ հարկ է նշել, որ մինչ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը Մեծ Բրիտանիան ապրանքների արտահանման ծավալով շատ ավելի բարենպաստ դիրք էր գրավում համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, 2007 թ. տվյալներով Մեծ Բրիտանիան իր արտահանման ծավալով (454.0 մլրդ դոլար) համաշխարհային տնտեսության մեջ գրավում էր 8-րդ տեղը: 2008 թ. Մեծ Բրիտանիան իր դիրքը զիջեց Բելգիային, իսկ 2009 թ.՝ նաև Հարավային Կորեային[136]:

2022 թ. տվյալներով Մեծ Բրիտանիայի արտահանման գլխավոր գործընկեր երկրներն են ԱՄՆ-ն (11.8 %), Նիդեռլանդները (8.1 %), Գերմանիան (7.7 %), Իռլանդիան (6.7 %), Չինաստանը (6.5 %), Շվեյցարիան (6.4 %) Ֆրանսիան (5.6 %): 2007-2014 թթ. ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի արտահանման գլխավոր գործընկեր երկրներն ու դրանց տեսակարար կշիռները գրեթե չեն փոփոխվել, սակայն 2014 թ. սկսած՝ զգալիորեն նվազել են Բելգիայի, Իսպանիայի ու Իտալիայի տեսակարար կշիռները, և աճել են ԱՄՆ ու Չինաստանի տեսակարար կշիռները:

Մեծ Բրիտանիայի արտահանման մեջ գլխավոր ապրանքախմբերն են արդյունաբերական ապրանքները, վառելիքը, քիմիական ապրանքները, սննդամթերքը, խմիչքն ու ծխախոտը:

---

[136] 2007 թ. տվյալներով Բելգիան իր արտահանման ծավալով (430.8 մլրդ դոլար) գրավում էր 9-րդ տեղը համաշխարհային տնտեսության մեջ, իսկ Հարավային Կորեան (371.4 մլրդ դոլար)՝ 10-րդ տեղը: 2022 թ. տվյալներով Հարավային Կորեան ապրանքների արտահանման ծավալով (683.5 մլրդ դոլար) համաշխարհային տնտեսության մեջ գրավում էր 7-րդ, իսկ Բելգիան (636.4 մլրդ դոլար)՝ 8-րդ տեղը:

Ապրանքների ներմուծման ծավալով Մեծ Բրիտանիան 2022 թ. աշխարհում գրավել է 5-րդ տեղը (համաշխարհային ներմուծման 3.2 %)՝ ԱՄՆ-ից (3,375 մլրդ դոլար), Չինաստանից (2,715 մլրդ դոլար), Գերմանիայից (1,582 մլրդ դոլար) ու Ճապոնիայից հետո (905,0 մլրդ դոլար), իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (317.0 մլրդ դոլար)՝ կրկին 5-րդ տեղը՝ ԱՄՆ-ից (696.6 մլրդ դոլար), Չինաստանից (465.0 մլրդ դոլար), Գերմանիայից (459.2 մլրդ դոլար) և Իռլանդիայից (372.8 մլրդ դոլար) հետո: Այստեղ հարկ է նշել, որ նախկինում ծառայությունների ներմուծման ծավալով Մեծ Բրիտանիան համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցնում էր 3-րդ տեղը՝ ԱՄՆ-ից ու Գերմանիայից հետո: Արդեն 2010 թ. ծառայությունների ներմուծման ծավալով Մեծ Բրիտանիան իր դիրքը զիջեց Չինաստանին, իսկ 2011 թ.՝ Ֆրանսիային: 2013 թ. ծառայությունների ներմուծման ծավալով Չինաստանն առաջ անցավ նաև Գերմանիայից:

Ներմուծման գլխավոր գործընկեր երկրներն են Չինաստանը (12.5 %), ԱՄՆ-ն (11.8 %), Գերմանիան (8.7 %), Նորվեգիան (6.5 %), Ֆրանսիան (4.1 %), Իտալիան (3.6 %), Նիդեռլանդները (3.5 %): 2007-2014 թթ. ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի ներմուծման գլխավոր գործընկեր երկրներն ու դրանց տեսակարար կշիռները գրեթե չեն փոփոխվել, սակայն 2014 թվականից սկսած՝ զգալիորեն նվազել են Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի տեսակարար կշիռները, և աճել են Չինաստանի ու ԱՄՆ տեսակարար կշիռները:

Մեծ Բրիտանիայի ներմուծման մեջ գերակշռող ապրանքախմբերն են արդյունաբերական ապրանքները, մեքենաները, վառելիքն ու սննդամթերքը:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Քանի՞ տարածաշրջանից է բաղկացած Մեծ Բրիտանիան:
2. Ի՞նչ է Ազգերի բրիտանական համագործակցությունը:
3. Ո՞ր թվականին է Մեծ Բրիտանիան մտել մեկ միասնական արժույթի գոտու մեջ:
4. Ե՞րբ Մեծ Բրիտանիան դադարեցրեց ԵՄ-ին իր անդամակցությունը:
5. ՀՆԱ-ի ծավալով ո՞ր տեղն է զբաղեցնում Մեծ Բրիտանիան Եվրոպայում ու աշխարհում:
6. Ինչպիսի՞ն է Մեծ Բրիտանիայի առևտրային հաշվեկշիռը:
7. Արտաքին պարտքի ցուցանիշի բացարձակ մեծությամբ Մեծ Բրիտանիան աշխարհում ո՞ր տեղն է զբաղեցնում:
8. Թվարկե՛ք Մեծ Բրիտանիայի մակրոտնտեսական մոդելի զարգացման առանձնահատկությունները:
9. Ի՞նչ ենք հասկանում՝ Մեծ Բրիտանիայի առաջարկի տնտեսություն ասելով:
10. Ո՞ր տեղն է զբաղեցնում Մեծ Բրիտանիան աշխարհում ծառայությունների արտահանման ծավալով:
11. Ապրանքների ու ծառայությունների ներմուծման ծավալներով ինչպիսի՞ տեղեր է զբաղեցնում Մեծ Բրիտանիան աշխարհում:

Հավելված

Աղյուսակ 8.4.1. Մեծ Բրիտանիայի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն)[137]	2.53	2.60	2.67	2.73	2.72	2.61	2.66	2.70	2.74	2.79	2.88	2.95	3.02	3.08	3.14	3.19	2.83	3.1	3.2
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	2.4	2.6	2.6	2.3	-0.2	-4.2	2.1	1.5	1.5	1.9	3.0	2.6	2.3	2.1	1.7	1.7	-9.7	8.7	4.3
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազար դոլար)	41.9	42.8	43.6	44.3	43.8	41.7	42.2	42.4	42.8	43.4	44.3	45.0	45.4	45.9	46.2	46.6	41.8	45.8	47.9
Գնաճի մակարդակ(CPI), %	1.4	2.1	2.5	2.4	3.5	2.0	2.5	3.9	2.6	2.3	1.5	0.4	1.0	2.6	2.3	1.7	1.0	2.5	7.9
Գործազրկության մակարդակ, %	4.6	4.8	5.4	5.3	5.6	7.5	7.8	8.0	7.9	7.5	6.1	5.3	4.8	4.3	4.0	3.7	4.3	5.1	3.6

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 8.4.2. Մեծ Բրիտանիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.[138], %

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	1.4	1.3	1.3	1.4	1.4	1.4	1.1	1.1	1.2	1.2	1.2	1.1	1.3	1.1	1.1	1.2	1.1	1.0	1.0	1.0
Արդյունա-	23.9	23.3	22.3	22.2	22.1	22.2	22.0	19.6	19.2	19.2	19.1	18.9	19.0	18.7	18.5	18.3	18.1	18.1	18.2	18.0

[137] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

[138] Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածության տվյալներն ըստ ոլորտների Մեծ Բրիտանիայի տնտեսության համար առկա են մինչև 2021 թվականը:

բերություն																				
Ծառ. Ո-լորտ	74.7	75.4	76.4	76.4	76.6	76.4	76.9	79.3	79.6	79.6	79.7	80.1	79.8	80.2	80.4	80.6	80.8	80.8	80.8	81.0

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2021:

Աղյուսակ 8.4.3. Մեծ Բրիտանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2004-2022 թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղատնտեսություն	0.8	0.5	0.6	0.6	0.7	0.7	0.6	0.7	0.6	0.6	0.7	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.7	0.8
Արդյունաբերություն[139]	20.3	20.3	20.3	19.8	20.0	18.8	18.9	18.5	18.5	18.8	18.4	18.2	17.6	17.8	17.9	18.0	17.0	16.6	16.7
Ծառ. ոլորտ[140]	68.9	69.3	69.2	69.7	69.9	71.6	70.6	70.1	70.3	69.9	70.1	70.5	71.1	70.9	70.9	70.9	72.8	72.3	72.2

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2022:

Աղյուսակ 8.4.4. Մեծ Բրիտանիայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահանում	392.7	458.5	454.0	482.0	359.6	422.0	517.3	481.2	548.0	511.1	466.3	411.5	442.1	487.1	468.3	395.6	468.5	530.4
Ներմուծում	528.5	614.8	679.9	705.3	552.0	627.6	717.6	689.1	657.2	694.3	630.2	636.4	641.3	669.6	692.4	634.1	695.5	816.2
Առևտրային հաշվ.	-136	-156	-226	-223	-192	-206	-200	-208	-109	-183	-164	-225	-199	-183	-224	-238	-227	-286

Աղբյուր՝ International Trade Centre:

[139] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:

[140] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

8.5. Իտալիայի տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Իտալիայի տարածքը կազմում է 300 հազ. կմ^2, իսկ բնակչությունը 2022 թ. տվյալներով կազմել է 58.9 մլն մարդ: Իտալիան կազմված է երեք մասից՝ մայրցամաքային, Ապենինյան թերակղզի և կղզային (Սիցիլիա, Սարդինիա և մի շարք մանր կղզիներ): Տարածքի ներսում գտնվում է երկու փոքր պետություն՝ Վատիկանն ու Սան Մարինոն:

Իտալիան հարուստ չէ բնական հանածոներով: Կարելի է առանձնացնել միայն բոքսիտները, ցինկը, պղինձն ու գորշ քարածուխը: Հակառակ դրան՝ երկիրը բնակլիմայական հիանալի պայմաններ ունի գյուղատնտեսության ու զբոսաշրջության զարգացման համար: Անտառներով ծածկված են տարածքի 1/5-ը, այն էլ՝ հիմնականում հյուսիսային շրջաններում:

Բնական հանածոների սակավությունը, թույլ արտադրական բազան, Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի առաջատար երկրներից հետամնացությունը, կապիտալի դանդաղ կուտակումը մեծ չափով ազդել են Իտալիայի տնտեսության զարգացման առանձնահատկության վրա: Իտալիայի տնտեսության զարգացման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ սկսած XIX դարի կեսից՝ նկատվել է պետության դերի ու պետական սեփականության զգալի մեծացում տնտեսության մեջ: Այդ պատճառով պատահական չէ, որ զարգացած երկրների շարքում Իտալիային բաժին էր ընկնում ամենամեծ պետական ոլորտներից մեկը: 2022 թ. տվյալներով պետության կողմից կատարված ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 56.8 %-ը, ինչը բավականին բարձր ցուցանիշ է զարգացած երկրների շարքում[141]:

---

[141] Այս ցուցանիշի մեծությամբ Իտալիան զարգացած երկրների շարքում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ Ֆրանսիայից (58.4 %) հետո: ԱՄՆ-ում այս ցուցանիշը կազմել է 38.5 %, Մեծ Բրիտանիայում՝ 45.1 %, Ճապոնիայում՝ 44.0 %, իսկ Գերմանիայում՝ 49.7 %:

Ներկայումս Իտալիան իր տնտեսական ներուժով (իրական ՀՆԱ-ի ծավալ) Եվրոպայում գրավում է չորրորդ տեղը Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից հետո, իսկ աշխարհում ութերորդ տեղը ԱՄՆ-ից (20.9 տրիլիոն դոլար), Չինաստանից (16.3 տրիլիոն դոլար), Ճապոնիայից (4.5 տրիլիոն դոլար), Գերմանիայից (3.6 տրիլիոն դոլար), Մեծ Բրիտանիայից (3.2 տրիլիոն դոլար), Հնդկաստանից (2.9 տրիլիոն դոլար) և Ֆրանսիայից (2.6 տրիլիոն դոլար) հետո:

2022 թ. տվյալներով Իտալիայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 2.0 տրիլիոն դոլար, իսկ հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 1.96 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն կազմել է 33,281 դոլար (*Տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.5.1*): 2021-2022 թթ. Իտալիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է համապատասխանաբար 8.3 % և 3.7 %[142]: 2008 և 2009 թթ. տնտեսական աճի բացասական ցուցանիշները պայմանավորված են ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով, իսկ 2012 թ. և 2013 թ. ՀՆԱ-ի աճի բացասական ցուցանիշները հիմնականում «եվրոպական պարտքային ճգնաժամի» արդյունք են, իսկ վերջինս հատկապես առավել վառ դրսևորվեց Իտալիայի, Հունաստանի, Իսպանիանի և Պորտուգալիայի տնտեսություններում[143]: Վերջապես 2020 թ. ՀՆԱ-ի աճի բացասական ցուցանիշը արդյունք էր COVID-19 համավարակի: Ինչպես նկատում ենք, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված

[142] Ինչպես և Գերմանիայի դեպքում, 2002 թ. և 2003 թ. Իտալիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպի զգալի շեղում է նկատվել: Այսպես, նշված տարիներին Իտալիայի տնտեսությունը նույնպես գտնվել է ստագնացիայի մեջ (ՀՆԱ-ի աճի տեմպը գրեթե զրո է եղել):

[143] Եվրոպական պարտքային ճգնաժամը սկիզբ է առել 2010թ. Հունաստանում և Իռլանդիայում, այնուհետև տարածվեց ամբողջ եվրոգոտու վրա: Եվրոպական պարտքային ճգնաժամի հիմնական աղբյուրը եղել է Հունաստանի պետական պարտատոմսերի շուկան: Եվրոպական մի շարք երկրների համար պետական պարտքի վերաֆինանսավորումն առանց միջնորդների օգնության դարձավ բավականին դժվար կամ անհնար:

ՀՆԱ-ի աճի բացասական ցուցանիշի մեծությամբ Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում Իտալիան (2009 թ. -5.3%) զիջում էր Գերմանիային (2009 թ. -5.7%): COVID-19 համավարակով պայմանավորված ՀՆԱ-ի աճի բացասական ցուցանիշի մեծությամբ Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում Իտալիան (2020 թ. -8.9%) զիջում էր Մեծ Բրիտանիային (2020 թ. -9.7%): 2021-2022 թթ. գնաճի մակարդակն Իտալիայի տնտեսության մեջ կազմել է համապատասխանաբար 1.9 % և 8.2 %, իսկ գործազրկության մակարդակը 2022 թ. կազմել է 8.1 %: Ինչպես Արևմտյան Եվրոպայի մյուս առաջատար երկրների դեպքում, 2022 թ. գրանցվել է գնաճի մակարդակի անհամեմատ մեծ ցուցանիշ: Ավելին, ինչպես Արևմտյան Եվրոպայի մյուս առաջատար երկրներում, բացի Գերմանիայից, ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով զգալիորեն ավելացել է գործազրկության մակարդակը Իտալիայի տնտեսության մեջ:

Իտալիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -42.7 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը՝ -30.2 մլրդ դոլար: Հարկ է նշել, որ 2012 թվականից ի վեր Իտալիան առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվեց առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրի, իսկ առևտրային դրական հաշվեկշիռն ունեցել է աճի միտում մինչև 2020 թվականը: 2021 թվականից Իտալիայի առևտրային դրական հաշվեկշիռը ձեռք բերեց նվազման միտում, իսկ 2022 թ. Իտալիան կրկին վերածվեց առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրի:

2022 թ. տվյալներով Իտալիայի պետական պարտքը կազմել է 2.8 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 142 %-ը, ինչը զգալիորեն բարձր է եվրոգոտու միջին մակարդակից (91.0 %): Այս ցուցանիշի մեծությամբ Իտալիան աշխարհում զբաղեցրել է 5-րդ տեղը՝ Ճապոնիայից, Հունաստանից, Լիբանանից և Յեմենից հետո), իսկ արտաքին պարտքը (պետական ու մասնավոր) կազմել է 2.58 տրի-

լիոն դոլար (ՀՆԱ-ի մոտ 129.0 %): Արտաքին պարտքի ցուցանիշի բացարձակ մեծությամբ Իտալիան աշխարհում զբաղեցրել է 9-րդ տեղը: Ինչպես և մյուս Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներում, Իտալիայում նույնպես զգալիորեն ավելացել են պետական ու արտաքին պարտքի մակարդակները: Այսպես, 2007 թ. տվյալներով Իտալիայի պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 104.0 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր)՝ 47.4 %-ը:

Բնակչությունն ու աշխատանքային ռեսուրսները: Իտալիայի բնակչությունը միատարր է, բնակչության 98 %-ը իտալացիներ են: Իտալիան մյուս զարգացած երկրներից առանձնանում է նրանով, որ բավականին մեծ սփյուռք ունի: 1861-1985 թթ. ընկած ժամանակահատվածում ավելի քան 29 մլն իտալացիներ արտագաղթել են, որոնցից 10 միլիոնը հետ են վերադարձել, իսկ 19 միլիոնը մշտական բնակություն են հաստատել այլ երկրներում: XX դարում Իտալիայի բնակչությունն աճել է մոտ երկու անգամ, և ներկայումս Իտալիան բնակչության թվով (58.9 մլն մարդ) Արևմտյան Եվրոպայում գրավում է 4-րդ տեղը (Գերմանիան՝ 83.7 մլն մարդ, Ֆրանսիան՝ 67.9, Մեծ Բրիտանիան՝ 66.9 մլն մարդ): 1980-ական թվականներից հետո Իտալիայի բնակչության բնական աճը նվազման միտում ունի: Բնական աճի ցածր մակարդակը նպաստում է ազգի ծերացման գործընթացին: Այսպես, 2022 թ. տվյալներով 65 տարեկան ու ավելի մարդկանց թիվը կազմում էր ամբողջ բնակչության ավելի քան 24.0 %-ը: Ինչպես մենք արդեն նշել ենք, Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում նման բարձր ցուցանիշ ունեն նաև Գերմանիան (22.4 %) ու Ֆրանսիան (21.6 %): Իտալիային բնորոշ է նաև ներքին միգրացիան, որն ուղղված է հարավից դեպի հյուսիս ու գյուղական շրջաններից դեպի քաղաքներ:

2022 թ. տնտեսապես ակտիվ բնակչությունը (25.5 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակ-

չության 49.1 %-ը: 2021 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 4.1 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 26.6 %-ը՝ արդյունաբերության, իսկ 69.3 %-ը՝ ծառայությունների ոլորտում (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.5.2*): Ինչպես նկատում ենք, գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշռով Իտալիան գերազանցում է Արևմտյան Եվրոպայի մյուս առաջատար երկրներին (Ֆրանսիան՝ 2.5 %, Գերմանիան՝ 1.2 %, Մեծ Բրիտանիան՝ 1.0 %): Ի տարբերություն «Մեծ յոթնյակի» մյուս երկրների՝ Իտալիայի տնտեսության մեջ, ինչպես Գերմանիայի (27.6 %) ու Ճապոնիայի (23.7 %) տնտեսություններում, տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավվածությունն արդյունաբերության ոլորտում բավականին մեծ է: Մյուս կողմից, ինչպես և Ֆրանսիայի (7.3 %) դեպքում, Իտալիայի տնտեսության մեջ համեմատաբար բարձր է գործազրկության մակարդակը, որը 2022 թ. տվյալներով կազմել է 8.1 %:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: Առաջին հայացքից թվում է, թե Իտալիան իր տնտեսական զարգացվածության մակարդակով բավական հետ է մնում Գերմանիայից, Ֆրանսիայից ու Մեծ Բրիտանիայից: Սակայն վերջին երկու տասնամյակում Իտալիայի տնտեսության մեջ զգալի առաջխաղացում է նկատվել: Մասնավորապես Իտալիային հաջողվեց հաղթահարել գնաճի հիմնախնդիրը, կրճատել գործազրկության մակարդակը և խթանել ներդրումների մակարդակը տնտեսության մեջ: Համեմատության համար նշենք, որ եթե 1997 թ. գործազրկության մակարդակը կազմում էր 12.0 %, ապա արդեն 2007 թ. Իտալիայի տնտեսության մեջ գործազրկության մակարդակը զգալիորեն նվազել էր՝ կազմելով 6.1 %: Ինչպես նկատում ենք, նշված ժամանակահատվածում Իտալիային հաջողվել է երկու անգամ կրճատել գործազրկության մակարդակը: Այստեղ հարկ է նշել, որ Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների շարքում նշված ժամանակաշրջանում

գործազրկության համեմատաբար ցածր մակարդակով Իտալիան զիջում էր միայն Մեծ Բրիտանիային: Հետագայում՝ 2007 թ., ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ և 2010 թ. Եվրոպայում սկզբնավորված պարտքային ճգնաժամերով պայմանավորված, գործազրկության մակարդակը աճեց՝ 2022 թ. կազմելով 8.1 %: 1997-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում պետական պարտքի բաժինը ՀՆԱ-ում 124.4 %-ից կրճատվեց մինչև 104.0 %, սակայն կրկին գլոբալ ֆինանսատնտեսական, պարտքային ճգնաժամերով ու COVID-19 համավարակով պայմանավորված՝ Իտալիայի պետական պարտքն աճեց՝ 2022 թ. կազմելով ՀՆԱ-ի 142.0 %-ը: Այստեղ հարկ է ավելացնել, որ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ժամանակ Արևմտյան Եվրոպայի բոլոր առաջատար երկրների պետական պարտքի մակարդակը զգալիորեն ավելացել է:

Բեռլուսկոնիի կառավարությանը հաջողվեց 1996 թ. «Նոր ձեռնարկությունների ստեղծման օրենքը» տարածել ամբողջ երկրի մասշտաբով: Միայն 1998 թ. Իտալիայում ստեղծվեց 12 հազար փոքր ու միջին ձեռնարկություն: Ներկայումս տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 75 %-ը ներգրավված է հենց փոքր ու միջին ընկերություններում: Մյուս կողմից՝ Իտալիային հաջողվեց սոցիալական համաձայնություն ձեռք բերել հասարակության մեջ: Աճում էր ինչպես աշխատավարձի դրույքը, այնպես էլ նոր աշխատատեղերի քանակը, իսկ աշխատուժի նախկին «սև շուկայի» բաժինն աստիճանաբար նվազում է: Ներկայումս ամբողջ աշխատուժի գրեթե 20.0 %-ն է ներգրավված «սև շուկայում»: Իտալիայի տնտեսության մեջ ոչ լեգալ աշխատուժի նման մեծ քանակությունը հիմնականում բացատրվում է աշխատուժի շուկայի խիստ կարգավորմամբ, որի պատճառով էլ ձեռնարկատերերը նախընտրում էին ոչ լեգալ զբաղվածությունը:

Իտալիայում շատ յուրահատուկ է փոքր, միջին ու խոշոր ձեռնարկությունների հարաբերակցությունը: Այսպես, 1950-1970-

ական թթ. տնտեսական աճը հանգեցրեց զանգվածային արտադրության առաջացման և տնտեսության մեջ խոշոր ձեռնարկությունների գերակշռման: Խոշոր ձեռնարկությունները կենտրոնացան երկրի հյուսիսարևմտյան հատվածում, մասնավորապես «արդյունաբերական եռանկյունում» (Թուրին-Միլան-Ջենովա): 1970-ական թթ. արդյունաբերական ճգնաժամի պատճառով խոշոր ձեռնարկությունները կորցրին իրենց դերը Իտալիայի տնտեսության մեջ, և 1970-1990-ական թթ. տնտեսության մեջ հիմնականում սկսեցին զարգանալ փոքր ու միջին ձեռնարկությունները: Փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացումը թույլ տվեց մասամբ փոխհատուցել Իտալիայի տնտեսության մեջ զանգվածային արտադրության ճգնաժամի բացասական արդյունքները:

Ներկայումս փոքր ու միջին գործարարության հիման վրա առաջացել է «Երրորդ Իտալիան», որը ներառում է երկրի կենտրոնական ու արևելյան հատվածները: Այս տարածաշրջանում կենտրոնացված են փոքր ու միջին ձեռնարկությունները, որոնք արտադրում են տեքստիլ արտադրանք, հագուստ, կոշկեղեն, կահույք ու կերամիկա: Բացի դրանից՝ այստեղ կան նաև ժամանակակից արտադրությունների այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մեխանիկան ու մեքենաշինությունը: Փոքր ու միջին ընկերությունների վրա կենտրոնացած շրջանները ստեղծում են թեթև արդյունաբերության ու մեքենաշինության կլաստերներ: Փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեությունը ներկայումս ապահովում է տնտեսական աճ երկրի կենտրոնական և հյուսիսարևելյան հատվածներում, իսկ արդյունաբերական հյուսիսային ու ագրարային հարավային հատվածները գտնվում են տնտեսական ճգնաժամի մեջ:

Այսպիսով՝ Իտալիայի տնտեսական զարգացման մոդելին առաջին հերթին բնութագրական է տնտեսության մեջ փոքր ու միջին ձեռնարկությունների մեծ դերը: Իտալական փոքր ու միջին ձեռնարկությունները բավական արդյունավետ են: Երկրի ամբողջ

զբաղվածների 75.0 %-ը ներգրավված են ձեռնարկություններում, որոնց անձնակազմը չի գերազանցում 50 մարդը, այդ թվում՝ ամբողջ զբաղվածների 30.0 %-ը անհատ ձեռներեցներ են, որոնք զբաղվում են իրենց ընտանեկան բիզնեսով:

Իտալիայում գործող օրենքները շատ բարենպաստ են փոքր ու միջին գործարարության ստեղծման համար: Ավելին՝ իտալական փոքր ու միջին ձեռնարկություններն ունեն արտահանման ահռելի մեծ ներուժ և շատ զգայուն են համաշխարհային շուկայի կառուցվածքային փոփոխությունների հանդեպ: Այսպես, իտալական փոքր ու միջին ձեռնարկությունների արտահանման ծավալները մոտ երկու անգամ գերազանցում են ֆրանսիական նմանօրինակ փոքր ու միջին ձեռնարկությունների արտահանման ծավալները: Այս ամենի հետ մեկտեղ մինչև օրս արդիական են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են երկրի հյուսիսային, կենտրոնական ու հարավային հատվածների միջև տնտեսական տարբերության հաղթահարումը, ոչ համապատասխան ենթակառուցվածքներն ու տնտեսության մեջ առկա կոռուպցիան:

Համաշխարհային տնտեսական զարգացման նոր պայմանները, համաշխարհային համակարգի գլոբալացումը, եվրոպական ինտեգրացիոն գործընթացների խորացումը, եվրոպական մեկ միասնական արժույթի՝ եվրոյի ներմուծումն ու կիրառումը Իտալիայի համար ստեղծում են տնտեսական զարգացման նոր բարենպաստ պայմաններ:

Տնտեսության զարգացման ժամանակակից քաղաքականությունը: Իտալիայի տնտեսական զարգացման մակրոտնտեսական նախկին մոդելը, որում առաջատար դերը պատկանում էր պետությանը, գործեց մինչև 1990-ական թթ. սկիզբը: Իտալիան ձեռք բերեց Արևմտյան Եվրոպայում ամենակարգավորվող երկրի հռչակը, որտեղ գործում էին գրեթե 150 հազար տարբեր օրենքներ:

1990-ական թթ. ավարտվեց Արևմուտքի ու Արևելքի միջև ռազմական հակասությունը, ուժեղացավ եվրոպական ինտեգրացիոն գործընթացը: Եվրոպական արժութային միության ձևավորումը ԵՄ մասնակից երկրների առաջ նոր խնդիրներ դրեց: Եթե Մաաստրիխտի արժութային կոնվերգենցիայի չափանիշները ենթադրում են գնաճի ու տոկոսադրույքի ցածր մակարդակներ, բյուջեի պակասուրդի ու պետական պարտքի մակարդակների համապատասխանորեն ՀՆԱ-ի 3 % և 60 % բաժիններ, ապա Իտալիայի բյուջեի պակասուրդը 1992 թ. կազմում էր ՀՆԱ-ի 9.5 %-ը, իսկ պետական պարտքը՝ ՀՆԱ-ի 108 %-ը:

1994 թ. իշխանության եկավ Սիլվիո Բեռլուսկոնիի կառավարությունը[144]: Բեռլուսկոնիի կառավարության առաջնային խնդիրներն էին.

- բյուջեի պակասուրդի և պետական պարտքի կրճատմամբ պետական ֆինանսների բարելավումը,
- գնաճի մակարդակի նվազեցումը,
- սեփականաշնորհման գործընթացի արագացումը,
- հարկային դրույքների կրճատման ու հարկային արտոնությունների միջոցով ներդրումների խթանումը,
- գործազրկության մակարդակի կրճատումը (հատկապես՝ երիտասարդների գործազրկության, որը կազմում էր 30.0 %):

Բեռլուսկոնիի տնտեսական քաղաքականությանը կոչեցին «տնտեսական խիստ քաղաքականություն»: Իտալիայի տնտեսության մեջ բարեփոխումների անցկացման ռազմավարությունը նման չէր ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի բարեփոխումների անցկացման ռազմավարությանը: Իտալիայում որպես բարեփոխումների

---

[144] Սիլվիո Բեռլուսկոնին երեք անգամ ընտրվել է վարչապետ՝ **1)** 1994թ. մայիսի 4-1995 թ. հունվարի 17, **2)** 2001 թ. հունիսի 11 - 2006 թ. մայիսի 17, 3**)** 2008 թ. մայիսի 8-2011 թ. նոյեմբերի 16: Իտալիայի ներկայիս վարչապետը Ջորջա Մելոնին է (2022 թ. հոկտեմբերի 22-ից):

անցկացման ռազմավարություն ընտրվեց դրա փուլային ու հաջորդական իրականացումը: Հին համակարգի անմիջապես վերացումը շատ վատ հետևանքներ կարող էր ունենալ երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման վրա: Բարեփոխումների շնորհիվ Իտալիայում պետական ոլորտի բաժինը սկսեց կրճատվել, բարձրացավ արտադրության արտադրողականությունը, ստեղծվեցին նոր աշխատատեղեր: Այսպես, արդեն 1996 թ. բյուջեի պակասուրդը կազմում էր ՀՆԱ-ի -6.7 %-ը, իսկ գնաճի մակարդակը՝ 5.2 %-ը: Ավելին՝ 1997 թ. Իտալիային հաջողվեց կրկնակի կրճատել գնաճի մակարդակը (2.5 %) և այդ ցուցանիշով նույնիսկ առաջ անցնել Մեծ Բրիտանիայից (2.9 %): Սակայն Իտալիային չհաջողվեց կրճատել պետական պարտքի մեծությունը, որը 1996 թ. կազմեց ՀՆԱ-ի 124.4 %-ը: Այստեղ հարկ է նշել, որ արդեն 2007 թ. տվյալներով բյուջեի պակասուրդը կազմում էր ՀՆԱ-ի -1.5 %-ը, իսկ պետական պարտքը՝ ՀՆԱ-ի 104.0 %-ը:

Բարեփոխումները սկսելուց հետո Բեռլուսկոնիի կառավարությունը շուտով պաշտոնաթող արվեց՝ ի պատասխան իտալացիների սոցիալական իրավունքների կրճատման: Նոր վարչապետ ընտրվեց Ռոմանո Պրոդին (1996-1998 թթ.), որը ձևավորեց ձախակողմյան իշխանությունը, իսկ Բեռլուսկոնին դարձավ ազգային ժողովի ընդդիմության առաջնորդը[145]: Պրոդիի քաղաքականության գլխավոր խնդիրն էր առաջ մղել Իտալիային դեպի առաջատար դիրքեր: Սկսվեց իրականացվել բանկային համակարգի մասնավորեցման գործընթացը, մասնավորապես «Banko Di Roma» բանկի պետական բաժնետոմսերի 36.5 % վաճառքն ավելի քան մեկ միլիարդ դոլար եկամուտ ապահովեց պետական բյուջեի համար:

[145] 2001-2006 թթ. կրկին Բեռլուսկոնին ընտրվեց Իտալիայի վարչապետ, իսկ 2006-2008 թթ. նրան նորից հաջորդեց Ռոմանո Պրոդին: 2008 թ. մայիսի 8-2011 նոյեմբերի 16-ը կրկին Իտալիայի վարչապետ ընտրվեց Սիլվիո Բեռլուսկոնին:

Ավելի արմատական բարեփոխումներ անցկացվեցին հարկային համակարգում: Ընկերության շահութահարկի մակարդակը 37.0 %-ից իջեցվեց մինչև 31.4 %, և միևնույն ժամանակ բարձրացվեց ավելացված արժեքի հարկը[146]: Հետագայում՝ 2017 թ., ընկերությունների շահութահարկը էլ ավելի նվազեցվեց, և նախկինում գործող 31.4 %-ի փոխարեն ներկայումս կազմում է 24.0 %: Ավելացված արժեքի հարկը կազմում է 22 %, դեղորայքի, մարդատար մեքենաների, հյուրանոցների և ռեստորանների դեպքում՝ 10 %, իսկ սննդամթերքի ու գրքերի դեպքում՝ 4 %:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Իտալիայի տնտեսության առանձնահատկություններից մեկը տնտեսության անհավասարաչափ զարգացումն է, որը հակասություն է առաջացնում երկրի զարգացած արդյունաբերական հյուսիսի ու կենտրոնի և հարաբերականորեն թույլ զարգացած ագրարային հարավի միջև:

2022 թ. տվյալներով Իտալիայի տնտեսության կառուցվածքը հետևյալն էր. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 1.8 %-ը, արդյունաբերությանը՝ ՀՆԱ-ի 23.8 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 64.3 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.5.3*):

Գյուղատնտեսություն: Զարգացած այլ երկրների գյուղատնտեսության հետ համեմատած՝ Իտալիայի գյուղատնտեսությունը այնքան էլ արդյունավետ չէ, քանի որ այստեղ նույնպես առկա են մեծ թվով փոքր ու միջին ընկերություններ, և այդ պատճառով էլ այստեղ ներգրավված են համեմատաբար ավելի շատ աշխատանքային ռեսուրսներ, քան այլ զարգացած երկրներում: 2021 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 4.1 %-ը ներգրավված էր գյուղատնտեսության ոլորտում: Գյուղատնտեսությունը հիմնականում զարգացած է Իտալիայի հարավային մասում, որտեղ մշակվող բույսերն են ցորենը, կարտոֆիլը, շաքա-

[146] Իտալիայում գործում է պրոգրեսիվ եկամտահարկ, որը ընկած է 23-43 %-ի միջակայքում: Այսպես, 0-15000 եվրո՝ 23 %, 15,001-28,000 եվրո՝ 27 %, 28,001-55,000 եվրո՝ 38 %, 55,001-75,000 եվրո՝ 41 %, 75,000 ու ավելի եվրո՝ 43 %:

րի ճակնդեղը, միջերկրական բանջարեղենն ու մրգերը: Իտալիան հիմնականում մասնագիտանում է գյուղատնտեսական բուսական արտադրանքի մեջ: Իտալիայի գյուղատնտեսության համար բացասական հետևանքներ է ունենում Միասնական եվրոպական գյուղատնտեսական քաղաքականությունը (Common Agricultural Policy, CAP), քանի որ երկրի ոչ արդյունավետ ազգային գյուղատնտեսական արտադրանքը եվրոպական այլ երկրների գյուղատնտեսական արտադրանքի հետ մրցակցելիս լուրջ խնդիրներ է ունենում:

Արդյունաբերություն: Իտալիայի արդյունաբերության մեջ մեծ նշանակություն ունեն վերամշակող արդյունաբերության ոլորտները: Իտալիան մասնագիտանում է հետևյալ ապրանքների արտադրության ոլորտում.

- մեքենաշինական արտադրանք ու տրանսպորտային սարքավորումներ, այդ թվում՝
  - տեքստիլ արտադրանք թողարկելու համար նախատեսված սարքավորումներ. այս ոլորտում Իտալիան Եվրոպայում գրավում է 3-րդ տեղը՝ Գերմանիայից ու Շվեյցարիայից հետո),
  - գյուղատնտեսական մեքենաներ,
  - ճանապարհաշինարարական սարքավորումներ (այս ոլորտում Իտալիան աշխարհում գրավում է 4-րդ տեղը),
  - ավտոմոբիլներ («Fiat», «Iveco», «Ferrari», «Lamborghini»),
  - երկաթուղային գնացքներ (այս ոլորտում Իտալիան Եվրոպայում Ֆրանսիայից և Գերմանիայից հետո գրավում է 3-րդ տեղը),
- աերոտիեզերական արդյունաբերություն, մասնավորապես «Alenia» ընկերության կողմից թողարկվող ինքնաթիռներն ու ավիատեխնիկան և «Augusta» ընկերության

կողմից արտադրվող ուղղաթիռներն ու թեթև ինքնաթիռները,

- քիմիական արդյունաբերություն. Իտալիան դեղորայքի արտադրության ու արտահանման ծավալով աշխարհում գրավում է 6-րդ տեղը՝ Գերմանիայից, Շվեյցարիայից, Բելգիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից ու Մեծ Բրիտանիայից հետո, իսկ իտալական դեղորայքը համաշխարհային շուկայում աչքի է ընկնում իր համեմատաբար ոչ բարձր գնով,
- մետաղագործական արդյունաբերություն. այս ոլորտի ծավալով Իտալիան ԵՄ երկրների շարքում Գերմանիայից հետո գրավում է 2-րդ, իսկ աշխարհում՝ 10-րդ տեղը),
- թեթև արդյունաբերություն. տեքստիլ արտադրանք, կոշկեղեն, կահույք (կահույքի արտադրությամբ Իտալիան աշխարհում գրավում է 3-րդ տեղը՝ Չինաստանից ու ԱՄՆ-ից հետո),
- շինարարական արտադրանք:

Ընդհանուր առմամբ Իտալիան մասնագիտանում է միջին գիտատարություն պահանջող ապրանքների արտադրության մեջ, քանի որ տեխնոլոգիապես զիջում է գիտատեխնիկական առաջընթացի համաշխարհային առաջատարներին: Իտալիայում գիտատեխնիկական հետազոտությունների վրա ծախսվող գումարի բաժինը ՀՆԱ-ում շատ ավելի քիչ է, քան Գերմանիայում, Ֆրանսիայում կամ Մեծ Բրիտանիայում[147]: Այսպիսով՝ գիտատեխնիկական առաջընթացի ոլորտում Իտալիայի առաջնային խնդիրը ներկայումս առաջատար այլ երկրներից տեխնոլոգիական տարբերության կրճատումն ու իր արտադրանքի գիտատարության ու մրցունակության բարձրացումն է: Այդ պատճառով Իտալիան մեծ

[147] 2000-2022 թթ. ընկած ժամանակահատվածում գիտատեխնիկական հետազոտությունների վրա ծախսված գումարները կազմել են ՀՆԱ-ի միջինում 1.2 %-ը, Մեծ Բրիտանիայում՝ 1.9 %-ը, Ֆրանսիայում՝ 2.2 %-ը, Գերմանիայում՝ 2.7 %-ը: Նույն ժամանակահատվածում այս ցուցանիշը ՀՀ տնտեսության համար կազմել է 0.2 %:

ջանքեր է գործադրում այլ երկրների հետ գիտատեխնիկական համագործակցության, առաջատար երկրների ընկերություններից արտոնագրեր ստանալու ու օտարերկրյա ներդրումների ներգրավման համար:

Ծառայությունների ոլորտ: Իտալիայի ծառայությունների ոլորտում աչքի են ընկնում զբոսաշրջությունն ու բանկային գործը: Իտալիայի համար զբոսաշրջությունը եկամտի գլխավոր աղբյուրներից է: Այսպես, 2019 թ. տվյալներով Իտալիա այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 64.5 մլն մարդ: 2019 թ. տվյալներով զբոսաշրջությունն Իտալիայի տնտեսության համար ապահովել է 51.9 մլրդ դոլար կամ ամբողջ արտահանման 8.1 %-ը: Իտալիայի տնտեսության համար ոչ պակաս նշանակություն ունի բանակային համակարգը: Իտալիան բանկերի հայրենիքն է. բնակեցված վայրերի 67 %-ում կան բանկային հաստատություններ:

Արտաքին տնտեսական կապերը: 2022 թ. տվյալներով Իտալիայի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1,443 մլրդ դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 700.3 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 743 մլրդ դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 8.5.4*): Իտալիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է -42.7 մլրդ դոլար: Այստեղ հարկ է նշել, որ 2012 թվականից ի վեր Իտալիան առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվեց առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրի, իսկ առևտրային դրական հաշվեկշիռն ունեցել է աճի միտում մինչև 2020 թվականը: 2021 թվականից Իտալիայի առևտրային դրական հաշվեկշիռը ձեռք բերեց նվազման միտում, իսկ 2022 թ. Իտալիան կրկին վերածվեց առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրի: Համեմատության համար նաև նշենք, որ 1990-ական թթ. վերջին Իտալիայի առևտրային հաշվեկշիռը դրական էր, այնուհետև՝ 2000-ական թթ. սկզբից, Իտալիան դասվեց առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրների

շարքին, և մինչև 2011 թվականը առևտրային բացասական հաշվեկշիռը ունեցել է աճի միտում:

2022 թ. տվյալներով Իտալիան ապրանքների արտահան ծավալով աշխարհում գրավել է 7-րդ տեղը՝ Չինաստանից (3,388 մլրդ դոլար), ԱՄՆ-ից (2,019 մլրդ դոլար), Գերմանիայից (1,689 մլրդ դոլար), Նիդեռլանդներից (936.2 մլրդ դոլար), Ճապոնիայից (717.5 մլրդ դոլար) ու Հարավային Կորեայից (632.2 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (87.3 մլրդ դոլար)՝ 18-րդ տեղը: Այստեղ հարկ է նշել, որ մինչ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը 2007 թ. տվյալներով ապրանքների արտահանման ծավալներով (500.2 մլրդ դոլար) Իտալիան աշխարհում զբաղեցնում էր 6-րդ տեղը Գերմանիայից (1,328 մլրդ դոլար), Չինաստանից (1,220 մլրդ դոլար), ԱՄՆ-ից (1,162 մլրդ դոլար), Ճապոնիայից (714.3 մլրդ դոլար) ու Ֆրանսիայից (539,7 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (116.6 մլրդ դոլար)՝ 7-րդ տեղը ԱՄՆ-ից (488.3 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիայից (315.0 մլրդ դոլար), Գերմանիայից (211.8 մլրդ դոլար), Ֆրանսիայից (196.8 մլրդ դոլար), Չինաստանից (125.4 մլրդ դոլար), Ճապոնիայից (121.4 մլրդ դոլար) ու Իսպանիայից (119.8 մլրդ դոլար) հետո:

Իտալիայի արտահանման գլխավոր գործընկեր երկրներն են Գերմանիան (11.5 %), ԱՄՆ-ն (9.7 %), Ֆրանսիան (9.4 %), Իսպանիան (4.8 %), Շվեյցարիան (4.5 %), Մեծ Բրիտանիան (4.0 %): Այստեղ հարկ է նշել, որ 2007 թվականից ի վեր Իտալիայի արտահանման գլխավոր երկրների կառուցվածքն ու տեսակարար կշիռները չեն ենթարկվել զգալի փոփոխությունների:

Իտալիայի արտահանման մեջ գերակշռող ապրանքախմբերն են տեքստիլ արտադրանքն ու հագուստը, արտադրության սարքավորումները, տրանսպորտային միջոցները, քիմիական արտադրանքը, սննդամթերքն ու մետաղները:

Ապրանքների ներմուծման ծավալով 2022 թ. Իտալիան աշխարհում գրավել է 10-րդ տեղը, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (93.0 մլրդ դոլար)՝ 15-րդ տեղը: Այստեղ հարկ է նշել, որ վերջին մի քանի տարիներին ապրանքների ու ծառայությունների ներմուծման ծավալներով Իտալիան զգալիորեն զիջել է իր դիրքերը: Այսպես, 2010 թ. տվյալներով ապրանքների ներմուծման ծավալով (486.9 մլրդ դոլար) Իտալիան զբաղեցրել է 7-րդ տեղը՝ ԱՄՆ-ից (1,968 մլրդ դոլար), Չինաստանից (1,396 մլրդ դոլար), Գերմանիայից (1,066 մլրդ դոլար), Ճապոնիայից (694.0 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիայից (627.6 մլրդ դոլար) ու Ֆրանսիայից (599.1 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (113.1 մլրդ դոլար)՝ 9-րդ տեղը՝ ԱՄՆ-ից (409.3 մլրդ դոլար), Գերմանիայից (263.4 մլրդ դոլար), Չինաստանից (193.3 մլրդ, դոլար), Մեծ Բրիտանիայից (184.4 մլրդ դոլար), Ֆրանսիայից (181.6 մլրդ դոլար) Ճապոնիայից (164.7 մլրդ դոլար), Նիդեռլանդներից (135.9 մլրդ դոլար) ու Հնդկաստանից (114.9 մլրդ դոլար) հետո:

Իտալիայի ներմուծման գլխավոր գործընկեր երկրներն են Գերմանիան (13.5 %), Չինաստանը (8.6 %), Ֆրանսիան (7.2 %), Նիդեռլանդները (5.5 %), Իսպանիան (4.7 %), Բելգիան (3.7 %) ու ԱՄՆ-ն (3.5 %): 2007 թվականից ի վեր Իտալիայի ներմուծման գլխավոր երկրների շարքին դասվում են Չինաստանը ու ՌԴ-ն: 2014 թվականից ի վեր ՌԴ տեսակարար կշիռը զգալիորեն նվազել է, իսկ Չինաստանի տեսակարար կշիռն աճի միտում ունի:

Ներմուծման մեջ գերակշռող հիմնական ապրանքախմբերն են քիմիական արտադրանքը, տրանսպորտային միջոցները, էներգակիրները, մետաղները, տեքստիլ արտադրանքը, հագուստն ու սննդամթերքը:

Ինչպես նկատում ենք, ներմուծման կառուցվածքում գերակշռող ապրանքախմբերը, բացի էներգակիրներից, ամբողջությամբ համապատասխանում են արտահանման կառուցվածքում գերակշռող ապրանքախմբերին: Ավելին, ի տարբերություն 1990-

ական թվականների, երբ Իտալիայի ներմուծման գլխավոր գործընկեր երկրները միայն ԵՄ երկրներն էին, սկսած 2000-ական թթ. առաջին կեսից՝ այդ երկրներին արդեն ավելացել են նաև Չինաստանն ու Ռուսաստանը (մինչև 2014 թվականը): Ավելին՝ Չինաստանը բոլոր եվրոպական կամ ընդհանրապես զարգացած երկրների համար ձեռք է բերում ներմուծման գլխավոր գործընկերոջ կարգավիճակ:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. ՀՆԱ-ի ծավալով ինչպիսի՞ տեղ է զբաղեցնում Իտալիան Եվրոպայում ու աշխարհում:
2. Ինչպիսի՞ն է Իտալիայի առևտրային հաշվեկշիռը ներկայումս, և զարգացման ի՞նչ միտում է ունեցել:
3. Թվարկե՛ք Իտալիայի մակրոտնտեսական մոդելի զարգացման հիմնական առանձնահատկությունները:
4. Ներկայացրե՛ք Իտալիայի գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունը:
5. Ի՞նչ ենք հասկանում՝ «Երրորդ Իտալիա» ասելով, փորձե՛ք հիմնավորել ձեր կարծիքը:
6. Ապրանքների արտահանման ու ներմուծման ծավալներով ո՞ր տեղերն է զբաղեցրել Իտալիան աշխարհում:
7. Ինչպիսի՞ն է պետության դերը Իտալիայի տնտեսության զարգացման գործում: Փորձեք հիմնավորել ձեր կարծիքը:

Աղյուսակ 8.5.1. Իտալիայի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն)[148]	1.91	1.92	1.96	1.99	1.97	1.86	1.89	1.91	1.85	1.82	1.82	1.83	1.85	1.87	1.90	1.91	1.74	1.89	1.96
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	1.4	0.8	1.8	1.5	-1.0	-5.3	1.7	0.7	-3.0	-1.8	0.0	0.8	1.3	1.7	0.9	0.4	-8.9	8.3	3.7
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազար դոլար)	33.1	33.2	33.7	34.0	33.5	31.6	32.0	32.2	31.1	30.2	29.9	30.2	30.6	31.2	31.5	32.0	29.3	31.9	33.2
Գնաճի մակարդակ, (CPI), %	2.2	2.0	2.1	1.8	3.3	0.8	1.5	2.8	3.0	1.2	0.2	0.0	-0.1	1.2	1.1	0.6	-0.1	1.9	8.2
Գործազրկության մակարդակ, %	7.9	7.7	6.8	6.1	6.7	7.8	8.4	8.4	10.7	12.2	12.7	11.9	11.7	11.2	10.6	10.0	9.3	9.5	8.1

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 8.5.2. Իտալիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.[149], %

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	4.9	4.7	4.1	4.2	4.3	4.0	3.7	3.7	3.8	3.7	3.7	3.6	3.6	3.8	3.9	3.8	3.8	3.9	4.0	4.1
Արդյունաբերություն	31.6	31.8	30.8	30.7	30.0	30.1	29.8	29.2	28.6	28.3	27.6	27.0	26.9	26.6	26.1	26.0	26.1	25.9	26.4	26.6
Ծառ. ոլորտ	63.5	63.5	65.0	65.1	65.7	65.9	66.5	67.1	67.6	68.0	68.7	69.3	69.5	69.7	70.0	70.2	70.1	70.2	69.6	69.3

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[148] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

[149] Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածության տվյալներն ըստ ոլորտների Իտալիայի տնտեսության համար առկա են մինչև 2019 թվականը:

Աղյուսակ 8.5.3. Իտալիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2004-2022 թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղատնտեսություն	2.3	2.0	1.9	1.9	1.9	1.8	1.8	1.9	2.0	2.1	2.0	2.1	1.9	2.0	1.9	1.9	2.0	1.9	1.8
Արդյունաբերություն[150]	23.4	23.3	23.4	23.8	23.6	21.9	21.9	21.7	21.3	21.2	20.8	20.9	21.2	21.3	21.5	21.5	21.6	23.2	23.8
Ծառ. ոլորտ[151]	64.5	64.8	64.3	64.1	64.7	66.7	66.3	66.2	66.4	66.7	67.1	67.0	66.6	66.4	66.3	66.3	66.7	64.8	64.3

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 8.5.4. Իտալիայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահանում	372.9	417.1	500.2	541.7	406.4	446.8	523.2	501.5	518.1	529.5	456.9	461.5	507.4	543.5	537.7	495.9	615.9	700.3
Ներմուծում	384.2	442.5	511.8	560.9	414.8	486.6	558.8	489.1	479.3	474.1	410.9	404.5	453.5	499.3	474.9	422.6	568.2	743.0
Առևտրային հաշվ.	-11.8	-25.4	-11.6	-19.1	-8.3	-40.1	-35.6	12.4	38.7	55.4	46.0	56.9	53.8	44.1	62.7	73.3	47.7	-42.7

Աղբյուր՝ International Trade Centre:

[150] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:

[151] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

Գլուխ 9. Արևելյան Ասիայի երկրներ

9.1. Ճապոնիայի տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Ճապոնիայի տարածքը կազմում է մոտ 378 հազ կմ^2, իսկ բնակչության թվաքանակը 2022 թ. տվյալներով կազմել է 125.1 մլն մարդ:

Ճապոնիայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունն այն է, որ երկիրը արշիպելագ (կղզեխումբ) է, որի կազմում առանձնանում են չորս մեծ՝ Կյուսյու, Սիկոկու, Հոնսյու ու Հոկկայդո, և մի շարք փոքր կղզիներ: Այդպիսի աշխարհագրական տեղաբաշխվածությամբ էլ մասամբ բացատրվում է Ճապոնիայի պատմականորեն «փակվածությունը» և ազգային յուրահատուկ մտածողությունը:

Ճապոնիան օգտակար հանածոներով ու էներգառեսուրսներով համեմատաբար աղքատ է: Կարելի է նշել, որ տնտեսական առումով տեսանելի նշանակություն ունեն միայն կրաքարի, ծծմբի ու քարածխի հանքավայրերը: Ամբողջ տարածքի միայն 13 %-ն է պիտանի գյուղատնտեսության զարգացման համար: Ինչ վերաբերում է համաշխարհային օվկիանոսի բնական ռեսուրսներին, ապա երկիրն այս դեպքում զգալի առավելություն ունի: Ճապոնիան աշխարհում ծովային մթերքներ արտադրող ու արտահանող ամենախոշոր երկրներից մեկն է: Բացի դրանից՝ ծովային մթերքները կազմում են ազգային սննդի սպառման ավելի քան 20 %-ը:

Դեռևս վաղ ժամանակներից հումքային ռեսուրսների պակասը լրացվել է ներմուծման շնորհիվ: Գրեթե ամբողջ աշխարհից հումքային ռեսուրսները ներմուծվում են, վերամշակվում, ապա՝ արտահանվում որպես պատրաստի վերջնական արտադրանք: Հումքային ռեսուրսների ներմուծման այդպիսի քաղաքականությունը տնտեսական մեծ հաջողություններ ապահովեց, քանի որ

ետպատերազմյան շրջանում հումքային ռեսուրսների գները համեմատաբար շատ ավելի ցածր էին, քան վերամշակված ապրանքների գները:

Աղյուսակ 9.1.1. Ճապոնիայի մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունը OECD անդամ երկրների համանման միջին ցուցանիշների հետ

	1992-2002		2002-2007	
	Ճապոնիա	OECD	Ճապոնիա	OECD
Իրական ՀՆԱ-ի աճի տեմպ, %	0.9	2.6	2.1	2.7
Մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ի աճի տեմպ, %	0.6	2.0	2.1	2.0
Աշխատուժի արտադրող., %	1.0	1.6	1.9	1.5

Աղբյուր՝ OECD, OECD Economic Outlook, No. 82 (December 2007), OECD, Paris:

Գրեթե մեկ տասնամյակ շարունակվող ստագնացիայից հետո Ճապոնիայի տնտեսությունը, 2002 թ. սկսած, ենթարկվեց ժամանակակից բարեփոխումների: 1992-2002 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՆԱ-ի աճի տեմպը չի գերազանցել 1.0 %-ը: Այդ պատճառով մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ի ծավալով Ճապոնիան փոքր-ինչ զիջում է մյուս զարգացած երկրներին: 2002-2007 թթ. ընկած ժամանակահատվածում մեկ շնչի բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպը միջինում կազմել է 2.1 % (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.1.1*): Ճապոնիայի տնտեսության վերջին շրջանում գրանցած հաջողության հիմնական պատճառներից մեկը արտադրողականության զգալի աճն է: Այսպես 2002-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում, 1992-2002 թթ. ընկած ժամանակաշրջանի հետ համեմատած, արտադրողականությունը աճել է գրեթե երկու անգամ:

ՀՆԱ-ի ծավալով Ճապոնիայի տնտեսությունն աշխարհում բավական երկար ժամանակ հաստատուն կերպով գրավում էր երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո: 2005 թ. Չինաստանն իր իրական ՀՆԱ-ի մակարդակով (2010 թվականից ի վեր ինչպես իրական, այնպես էլ անվանական ՀՆԱ-ի) առաջ անցավ Ճապոնիայից: ՀՆԱ-ի մակարդակով Ճապոնիան համաշխարհային տնտեսության մեջ գրավում է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից ու Չինաստանից հետո: Մյուս կողմից հարկ է նշել, որ զարգացած երկրների շարքում Ճապոնիան իր ՀՆԱ-ի մակարդակով շարունակում է պահպանել իր դիրքը՝ ԱՄՆ-ից հետո գրավելով երկրորդ տեղը:

2022 թ. տվյալներով Ճապոնիայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 4.23 տրիլիոն դոլար, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 4.50 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 36,032 դոլար: 2021-2022 թթ. Ճապոնիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է համապատասխանաբար 2 և -1 % (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.1.1*): 2009 թ. տնտեսական աճի նման մեծ բացասական ցուցանիշը (-5.7 %) պատճառ էր ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի, ինչը սկիզբ առավ 2007 թ. ԱՄՆ-ում և զգալի բացասական ազդեցություն թողեց համաշխարհային տնտեսության վրա: Իր հերթին 2020 թ. տնտեսական աճի բացասական ցուցանիշն (-4.6 %) արդյունք էր COVID-19 համավարակի բացասական հետևանքների: Ճապոնիան մյուս զարգացած երկրների շարքում առանձնանում է գնաճի համեմատաբար ցածր մակարդակով: Ավելին՝ որոշ տարիներին գրանցվել է նույնիսկ գնանկում: 2022 թ. գրանցված գնաճի մակարդակը (2.5) ամենաբարձր ցուցանիշներից մեկն է նշված ժամանակահատվածի համար[152]: Նույնիսկ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամով պայմանավորված՝ գնաճի մակարդակը 2008 թ. կազմել է 1.4

[152] Այստեղ հարկ է նշել, որ 1992 թ. սկսած Ճապոնիայի տնտեսության մեջ հիմնականում գրանցվել է գնանկում, իսկ գնաճի ամենաբարձր մակարդակը (2.8 %) գրանցվել է 2014 թ., ինչը նախկինում անընդհատ նվազող սպառողական ապրանքների գների նվազման բացասական արդյունքների մեղման արդյունք էր:

%: Ճապոնիան մյուս զարգացած երկրների շարքում առանձնանում է նաև իր գործազրկության անհամեմատ ցածր ցուցանիշով, ինչը աննշան է ավելացել նույնիսկ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ու COVID-19 համավարակի պայմաններում: 2022 թ. տվյալներով Ճապոնիայի տնտեսության մեջ գործազրկության մակարդակը կազմել է 2.6 %:

Ճապոնիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -153.0 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկը՝ 90.9 մլրդ դոլար: Ժամանակի ընթացքում Ճապոնիան առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվել է առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրի: Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկով Ճապոնիան աշխարհում զբաղեցել է 7-րդ տեղը՝ Չինաստանից (400.1 մլրդ դոլար), ՌԴ-ից (237.8 մլրդ դոլար), Նորվեգիայից (174.5 մլրդ դոլար), Գերմանիայից (172.4 մլրդ դոլար), Սաուդյան Արաբիայից (153.4 մլրդ դոլար) ու Նիդեռլանդներից (93.8 մլրդ դոլար) հետո: Այստեղ հարկ է նշել, որ 2020 թ. տվյալներով վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկով Ճապոնիան աշխարհում զբաղեցրել է երրորդ տեղը՝ Չինաստանից (274 մլրդ դոլար) ու Գերմանիայից հետո (268.5 մլրդ դոլար):

2022 թ. տվյալներով Ճապոնիայի պետական պարտքը կազմել է 10.9 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 260 %-ը (այս ցուցանիշով Ճապոնիան աշխարհում գրավել է առաջին տեղը), իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 4.34 տրիլիոն դոլար (ՀՆԱ-ի 101.6 %): Արտաքին պարտքի ցուցանիշի բացարձակ մեծությամբ Ճապոնիան աշխարհում գրավել է հինգերորդ տեղը՝ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից ու Գերմանիայից հետո: Այստեղ հարկ է նշել, որ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով զգալիորեն ավելացել է Ճապոնիայի պետական և արտաքին (պետական և մասնավոր) պարտքը: Այսպես, 2007 թ. տվյալներով Ճապոնիայի պետական պարտքը կազ-

մում էր ՀՆԱ-ի 170.1 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր)՝ 34.0 %-ը:

Բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները: Բնակչության 99 %-ը ճապոնացիներ են, այլ ազգերից գերակշռում են կորեացիները (600 հազ.), որոնք որպես անվճար աշխատուժ բերվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Երկրի տնտեսական զարգացման գործընթացում զգալի դեր են խաղացել ազգային առանձնահատկությունները, սովորույթները ու աշխատուժի յուրահատկությունները: Ճապոնիան մեկուսացված է եղել ցամաքից, հատկապես Եվրոպայից: Տնտեսության վրա հիմնականում ազդել են Չինաստանի և Կորեայի հին արևելյան քաղաքակրթությունները: Ճապոնիան հաճախ է մասնակցել ռազմական գործողությունների, սակայն միշտ պարտվել է, ինչն էլ զարգացրել է որոշակի «ոչ լիարժեքության» բարդույթ: Մյուս կողմից էլ, կտրված լինելով ցամաքից, միշտ թվացել է, որ ետ է մնում համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացից: Այդ պատճառով էլ պատահական չէ, որ ճապոնացիները ձգտում են ազատվել այդ բարդույթներից:

Յուրահատուկ է նաև Ճապոնիայի հասարակության զարգացման մոդելը: Հասարակության մեջ խստորեն պահպանվում է հիերարխիան՝ առաջնությունը տալով տարիքով մեծերին ու սոցիալական դիրքին: Երկիրը գրեթե «փակ» է օտարերկրացիների համար: Ճապոնացիներին բնորոշ է նաև «Սյուիվիզմը», որն արտահայտվում է նրանց հավաքական վարքագծում, ընդհանուր ճաշակում ու նախասիրություններում: «Սյուիվիզմի» բացատրության համար ձևավորվել է հետևյալ ասացվածքը՝ «Կարմիր լույսի տակ փողոցը կարելի է անցնել, եթե բոլորը միասին անցնեն»:

Հատուկ ուշադրության են արժանի նաև Ճապոնիայի աշխատուժի շուկայի առանձնահատկությունները, որը, ելնելով ազգային բնորոշ գծերից, հիմնվում է հետևյալ երեք սկզբունքների վրա՝

1. աշխատանքի վարձման ցմահ համակարգ, որն ավելի շատ կիրառվում է խոշոր ընկերություններում,
2. աշխատավարձի անընդհատ բարձրացում՝ հաշվի առնելով աշխատանքային ստաժը, փորձն ու հմտությունները,
3. ձեռնարկատերերի կազմակերպություն:

Ճապոնիան զարգացած երկրների շարքում առանձնանում է իր զբաղվածության բարձր մակարդակով: Այսպես, 2022 թ. տվյալներով Ճապոնիայի տնտեսության մեջ գործազրկության մակարդակը կազմել է 2.6 %: 2022 թ. տնտեսապես ակտիվ բնակչությունը (68.6 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 62.5 %-ը:

2021թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 3.2 %-ը զբաղված էր գյուղատնտեսության ու ձկնորսության, 23.7 %-ը՝ արդյունաբերության, իսկ 73.1 %-ը՝ ծառայությունների ոլորտում (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.1.2*): Ինչպես նկատում ենք, Ճապոնիան իր տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածության կառուցվածքով փոքր-ինչ տարբերվում է «Մեծ յոթնյակի» մյուս երկրներից: Այստեղ տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավվածությունն արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ, ի տարբերություն «Մեծ յոթնյակի» մյուս երկրների, շատ ավելի մեծ է[153]: Որպես աշխատուժին փոխարինող լայնորեն օգտագործվում են ռոբոտները: Ընդ որում՝ ռոբոտների համաշխարհային արտադրության ավելի քան 50 %-ը բաժին է ընկնում Ճապոնիային, և դրանք հիմնականում արտադրվում են «Toyota» ու «Nissan» ընկերություններում: Ճապոնիան աչքի է ընկնում շատ բարձր որակյալ, փորձառու և աշխատասեր աշխատուժով: Բացի դրանից՝ գործնականում չեն գրանցվել գործադուլների դեպքեր:

---

[153] Տնտեսապես ակտիվ բնակչության արդյունաբերության ոլորտում ներգրավվածության համեմատաբար մեծ մակարդակով «Մեծ յոթնյակի» երկրներից առանձնանում է նաև Գերմանիան (ՀՆԱ-ի 27.6 %-ը):

Տնտեսության ետպատերազմյան զարգացման առանձնահատկությունները: Ճապոնիայի ներկայիս տնտեսական զարգացման հաջողությունը բացատրվում է վառ արտահատված ետպատերազմյան զարգացման առանձնահատկություններով: Ճապոնիան չափազանց պահպանողական երկիր է և զարգացման պատմական շրջանում փոփոխվել է երկու անգամ: Առաջինը պայմանավորված էր Մեյդզի բուրժուական հեղափոխությամբ, երբ անցում կատարվեց միջնադարյան Ճապոնիայից դեպի կապիտալիզմ: Երկրորդը պայմանավորված էր Երկրորդ համաշխարհային պատերազմում Ճապոնիայի պարտությամբ, երբ տնտեսությունը վերակառուցելու համար առաջ եկավ ժամանակակից դեմոկրատական կառավարումը:

Ճապոնիան ետպատերազմյան շրջանում հայտնվեց բավականին ծանր վիճակում: Պատերազմական գործողությունների պատճառով երկիրը կորցրել էր իր արդյունաբերական ներուժի մոտ 1/3-ը, բավական բարձր էին գործազրկության ու գնաճի մակարդակները: Նույնիսկ «կոտրվել» էր ճապոնացիների ազգային հպարտությունը: Երկիրը պարտվել էր պատերազմում, և ԱՄՆ զորքերն օկուպացրել էին երկիրը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ճապոնիայի տնտեսությանը բնութագրական էր.

1. կենտրոնացված պլանավորումը,
2. աշխատավարձի հաստատագրված դրույքներ ու կարգավորվող գները,
3. արտադրողների, մատակարարների ու սպառողների միջև խիստ փոխկապակցվածությունը,
4. քարտային համակարգը,
5. ռազմական տնտեսության առկայությունը, որում գործում էին մենաշնորհային դիրք ունեցող խոշոր կոնցեռները, և դրանցից շատերը ներկայացնում էին ռազմարդյունաբերական համալիրը:

Այսպիսով՝ Ճապոնիայի՝ «ծագող արևի երկիր» դառնալու մեկնարկային պայմանները բավական ծանր էին: Իրականում նմանատիպ կերպով վերակառուցվում էր նաև Գերմանիան, գրեթե նույնպիսի խնդիրներ ուներ Խորհրդային Միությունը: Ինչպե՞ս Ճապոնիային հաջողվեց հաղթահարել իր խնդիրները և դառնալ տնտեսապես ամենահզոր երկրներից մեկը աշխարհում: Այս հարցի պատասխանը այնքան էլ միանշանակ չէ: Այստեղ իրենց դերն են ունեցել ոչ միայն ավանդական արևելյան մտածողությունն ու ճապոնացիների աշխատասիրությունը, այլ նաև օկուպացիոն իշխանությունները, որոնք էլ իրականում սկիզբ դրեցին Ճապոնիայի բարեփոխումների ծրագրին:

Ճապոնիայի բարեփոխումների ծրագիրը մշակվեց ամերիկյան առաջատար տնտեսագետների ու կիրառական մասնագետների կողմից, իսկ տեղում բարեփոխումներն իրականացեց հայտնի գեներալ Դուգլաս Մակարտուրը: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ն չէր ձգտում հանդիսանալ որպես բարերար: ԱՄՆ-ին նախ հետաքրքրում էին բավական գործնական նպատակներ, որոնք ելնում էին նրա աշխարհաքաղաքական շահերից: ԱՄՆ-ն ձգտում էր վերջ տալ Ճապոնիայի ռազմական ուժին, և նրա նպատակն էր հիմնովին կործանել Ճապոնիայի ռազմական ներուժը:

Ճապոնիայում իրականացվող բարեփոխումները ներառում էին.

1. արժութային համակարգում բարեփոխումները,
2. տնտեսությունը անկման վիճակից դուրս բերող միջոցառումները,
3. աշխատանքային հարաբերությունների բարեփոխումները,
4. տնտեսության մեջ մենաշնորհների վերացումը,
5. ռազմական ձեռնարկությունների փոփոխումը (կոնվերսիա),

6. բյուջետային բարեփոխումները, արժույթի շրջանառության և արտարժույթի փոխարժեքի կայունացումը,
7. հարկային բարեփոխումները:

Օկուպացիոն իշխանությունները հասարակության մեջ ապահովում էին քաղաքական կայունությունը, դրանց գործառույթների մեջ մտնում էր դատական համակարգը, առողջապահությունը, կրթությունն ու մրցակցության պաշտպանությունը:

Գործադիր դերը տրված էր ճապոնացիներին: Ճապոնիայի կառավարությունը զբաղվում էր բյուջետային պլանավորմամբ, ֆինանսներով, դրամի շրջանառության կազմակերպմամբ:

Նախ Ճապոնիայում կայունացվեց ֆինանսական համակարգը, որի շրջանակում ԱՄՆ-ն տրամադրեց ֆինանսական օգնություն, մատակարարվեց վառելանյութ, պարենամթերք ու դեղամիջոցներ: Հումանիտար ապրանքները վաճառվում էին բնակչությանը, իսկ ստացված միջոցներն օգտագործվում էին գյուղատնտեսության նպատակային ֆինանսավորման համար (չմոռանանք, որ առաջնահերթ խնդիրներից մեկը բնակչությանը պարենամթերքով ապահովելն էր): Հարկ է նշել, որ արդեն տասը տարի հետո Ճապոնիան կարողացավ ամբողջությամբ ետ վճարել ԱՄՆ-ին ցուցաբերած օգնության դիմաց:

Ճապոնիայի տնտեսական բարեփոխումների հաջորդ առանձնահատկությունը այն էր, որ որպես կանխամտածված գերակայություն ընտրվեց ոչ թե արժույթի շրջանառության կայունացումը, այլ արտադրության ծավալների աճը: Ճապոնիայի հիմնական արդյունաբերական ներուժը հանդիսացավ հասարակական արդյունաբերությունը: Երկրի ռազմական հզորությունը վերացնելու նպատակով իրականացվեց ռազմական արդյունաբերության փոփոխում: Ճապոնիայի ռազմական ամբողջ արդյունաբերությունը դադարեցվեց: Փոփոխությունը ձևակերպվեց նաև օրենսդրորեն: Համաձայն Ճապոնիայի սահմանադրության՝ չի թույլատրվում ունենալ ՀՆԱ-ի 1 %-ը գերազանցող ռազմական

ծախսեր, չի թույլատրվում նաև ունենալ, ներմուծել ու պահել ատոմային զենք: Այս սահմանափակումները որոշ առումով նպաստեցին տեխնոլոգիաներում ու արդյունաբերությունում Ճապոնիայի առաջատար դիրքին հասնելուն: Այն ժամանակ, երբ գերտերությունները զբաղված էին սպառազինության մրցարշավով, Ճապոնիան համաշխարհային շուկայում աչքի էր ընկնում իր արդեն գիտատար հասարակական արտադրանքով:

Երբ ԱՄՆ-ի կողմից Ճապոնիայի օկուպացիան արդեն մոտենում էր իր ավարտին, երկրում անցկացվեց «Դոդջի շոկային թերապիան», որի հեղինակն էր Դետրոյտի բանկի կառավարիչ Ջորջ Դոդջը: Դոդջը հայտնի էր նաև ետպատերազմյան Արևմտյան Գերմանիայի արժութային համակարգի բարեփոխումների ծրագրի մշակմամբ: «Շոկային թերապիան», ինչպես նաև Ճապոնիայի բոլոր բարեփոխումները ամբողջական ծրագրեր էին և ներառում էին.

1. բյուջետային բարեփոխումներ, որոնց հիմքը հանդիսացավ բոլոր հոդվածներով պետական եկամուտների ու ծախսերի հավասարակշռությունը, ընդհատվեց վնասով աշխատող ձեռնարկություններին սուբսիդիաների տրամադրումը, կրճատվեցին կառավարման ծախսերը,
2. նոր վարկային քաղաքականություն, որն ուղղված էր հիմնականում չապահովված վարկերի տրամադրման կանխմանը,
3. գնային բարեփոխում, ըստ որի՝ հանվեցին հաստատագրված գները,
4. արտարժութային բարեփոխումներ, համաձայն որի՝ հաստատագրված փոխարժեք հաստատվեց ճապոնական իենի ու ամերիկյան դոլարի միջև (360 իեն մեկ դոլարի դիմաց)[154]:

[154] 2022 թ. մարտի 16-ի դրությամբ ճապոնական իենի փոխարժեքը դոլարի նկատմամբ հետևյալն էր՝ 118 իեն մեկ ԱՄՆ դոլարի դիմաց:

«Շոկային թերապիայի» ամենագլխավոր արդյունքն այն էր, որ հաստատագրված գների վերացումից հետո հաջողվեց խուսափել գնաճից: Այնուամենայնիվ, առաջացավ ֆինանսների խնդիր: Ճապոնական շատ ձեռնարկություններ կարիք ունեին զգալի ներդրումների: Այս խնդրի լուծման համար ԱՄՆ-ն առաջարկեց Ճապոնիային իրականացնել հարկային բարեփոխումներ: Ճապոնիայի համար այն մշակվեց Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Շոուպի կողմից: Ըստ հարկային նշված բարեփոխումների՝

1. հարկային բեռի առավելագույն մակարդակն իջեցվեց մինչև 35 %,
2. կատարվեց ձեռնարկության ունեցվածքի ու հողի հաշվեկշռային արժեքի վերագնահատում իրական շուկայական գներով:

Շոուպի հարկային բարեփոխումների հիմնական արդյունքը կապիտալի կուտակման խթանների ստեղծումն էր: Ինչպես հայտնի է, Ճապոնիան մինչև օրս առանձնանում է կապիտալի կուտակման բարձր մակարդակով և ներդրումային հզոր ներուժով: Այսպես, 1970 թ. խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցությունը Ճապոնիայում կազմել է 42.2 %[155]: Դոդջի բարեփոխումից հետո օկուպացիոն իշխանություններն ամբողջ տնտեսական քաղաքականությունը փոխանցեցին Ճապոնիայի կառավարությանը: ԱՄՆ ընդհատեց Ճապոնիային ֆինանսական ու խորհրդատվական օգնության ցուցաբերումը:

Ճապոնիայի «տնտեսական հրաշքը»: Սովորաբար ընդունված է համարել, որ Ճապոնիայի տնտեսական զարգացման հաջողությունը պայմանավորված էր կապիտալ ներդրումների բարձր մակարդակով, ցածր աշխատավարձի դրույքով և ռազմական մեծ ծախսերի բացակայությամբ: Սակայն միևնույն ժամա-

[155] 2022 թ. տվյալներով խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցությունը Ճապոնիայում կազմել է 28.0 %, իսկ այս ցուցանիշով ներկայումս առաջատար է Չինաստանը՝ 2022 թ. 47.0 %:

նակ Ճապոնիայի տնտեսական զարգացման հաջողությունը կախված էր մի շարք այլ պատճառներից: Այսպես, ետպատերազմյան շրջանում Ճապոնիայում ընթացող տնտեսական ու գիտատեխնիկական վերափոխումների նպատակն էր կառուցել դեմոկրատական կապիտալիզմ, որի ընթացքում տեղի ունեցավ, այսպես կոչված, «տնտեսական հրաշքը»: Ճապոնիայի «տնտեսական հրաշքն» ուներ հիմնական պատճառներ:

1. Ճապոնիայում բավականին բարձր էր խնայողությունների և ներդրումների մակարդակը: 1970 թ. այս ցուցանիշը Ճապոնիայում կազմել է 42.2 %, իսկ 2022 թ. տվյալներով՝ 28.0 %: 2022 թ. խնայողություններ/ՀՆԱ հարաբերակցության համաշխարհային միջին մակարդակը կազմել է մոտ 27.0 %[156]:
2. Տնտեսական զարգացման գործում հսկայական դեր խաղաց պետությունը: Ինչպես նշել է հայտնի տնտեսագետ Սամուելսոնը, «Ճապոնիայում գործում է պետական քաղաքականություն՝ առանց պետական սեփականության»: Պետությունը մեծ նշանակություն տվեց գիտահետազոտական աշխատանքներին՝ դրանց իրականացման համար հատկացնելով մեծ չափերի հասնող ֆինանսական միջոցներ[157]: Ավելին՝ տնտեսության ՀՆԱ-ի աճի 2/3-ը ապահովվում էր գիտության ու կրթության շնորհիվ: Հե-

[156] 2021 և 2022 թթ. տվյալներով այս ցուցանիշի մակարդակը Հայաստանի Հանրապետությունում կազմել է համապատասխանաբար 20 % ու 22 %, ինչը բավականին ցածր է համաշխարհային միջին մակարդակից: Մինչև ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը այս ցուցանիշն ունեցել է աճի միտում՝ 2007 թ. կազմելով 29 %: 2008-2019 թթ. գրանցվել է ցուցանիշի անկում՝ 2019 թ. կազմելով 10 %, իսկ 2020 թվականից սկսած՝ կրկին նկատվում է ցուցանիշի աճի միտում:

[157] 2022 թ. տվյալներով գիտահետազոտական աշխատանքների վրա ծախսված գումարը կազմել է Ճապոնիայի ՀՆԱ-ի 3.3 %-ը, ինչը բավականին բարձր ցուցանիշ է զարգացած երկրների շարքում: Այստեղ հարկ է նշել, որ այս ցուցանիշը Հայաստանի Հանրապետությունում կազմել է 0.2 %:

տաքրքիր է նաև այն փաստը, որ աշխատուժի 90 %-ն ունի գիտելիքների բակալավրի աստիճան:

3. Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Ճապոնիայի տնտեսական քաղաքականությունը հակված էր ավելի շատ պաշտպանելու արտադրողների, քան սպառողների շահերը:
4. Արդյունաբերության ոլորտները բոլոր ձևերով պաշտպանվում էին արտասահմանյան մրցակցությունից:
5. Արտադրական հարաբերություններն ունեն խիստ, յուրօրինակ կազմակերպման ոճ, բնորոշ են կեյրեցուները (կորպորատիվ միություններ), շատ են փոքր ու միջին ձեռնարկությունները (մինչև 50 աշխատատեղով):
6. Ճապոնիայի տնտեսությանը բնորոշ է համաշխարհային շուկայի փոփոխություններին հարմարվողականությունը:
7. Ճապոնացիներն ունեն աշխատուժի յուրօրինակ եղանակ (ցմահ ապահովված են աշխատանքով, ղեկավարների ու աշխատողների միջև աշխատավարձի և աշխատանքային օրը կազմակերպելու գործում տարբերությունները մեծ չեն և այլն):
8. Բավական քիչ են ռազմական ծախսերը (չեն գերազանցում ՀՆԱ-ի 1 %-ը):
9. Կարևորվում են մարքեթինգային լավ կարողությունները, շուկայի լավ իմացությունը և դրա հնարավորությունների օպտիմալ օգտագործումը:

Հետագայում սրանցից յուրաքանչյուրն ավելի զարգացավ թե՛ խորությամբ, թե՛ բովանդակությամբ: Այսպես, մինչև այժմ մեծ ուշադրություն է դարձվում բարձրագույն կրթության զարգացմանը, որի հիմնական նպատակն է պատրաստել որակյալ ինժեներներ և տեխնիկական այլ մասնագետներ: Ներկայումս Ճապոնիայում կրթության մակարդակն ու որակը չեն զիջում ամերիկյանին: Ավելին՝ էլեկտրոնիկայի ու էլեկտրատեխնիկայի գծով ինժեներնե-

րի տարեկան պատրաստմամբ Ճապոնիան նույնիսկ առաջ է անցել ԱՄՆ-ից:

Ճապոնիայում ու ԱՄՆ-ում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները ցույց են տվել, որ այն ձեռնարկություններում, որտեղ աշխատում են ամերիկացները չեն համարում իրենցը, իսկ ճապոնացիների մոտ դա ճիշտ հակառակն է: Այսպես, ամերիկյան ձեռնարկությունում աշխատող ամերիկացիների մոտ 10-12 %-ն են հայտարարել, որ անընդհատ մտածում են ձեռնարկության զարգացման խնդիրների մասին, իսկ նմանատիպ ճապոնական ձեռնարկությունում՝ 61 %-ը: Կառավարման ճապոնական փորձն ամերիկացիները հաճախ անվանում են Ճապոնիայի տնտեսական թաքնված զենք: ԱՄՆ-ում ճապոնական կառավարման մոդելը լրջորեն հետազոտվում է, այդ ոլորտում փորձի փոխանակման համար հրավիրվում են ճապոնացի կառավարիչներ և այլ մասնագետներ:

Ճապոնիայում գիտությունը սերտորեն կապված է արդյունաբերությանը: Ամբողջ գիտահետազոտական ծախսերի 70 %-ն իր վրա է վերցնում արդյունաբերության ոլորտը: Բնական է, որ հիմնական ուշադրությունը կենտրոնացված է կիրառական հետազոտությունների վրա: Երկրի համալսարաններում իրականացվող տեսական և կիրառական հետազոտությունները հիմնականում կատարվում են արդյունաբերության ոլորտի պատվերով:

Գիտատեխնիկական ոլորտում «Առաջ անցնել ԱՄՆ-ից» խնդիրը հաղթահարելու ու աշխարհում առաջատար դիրք զբաղեցնելու համար առաջ քաշվեց այդ ոլորտում պետության կարգավորման անհրաժեշտությունը: Այդ քաղաքականության իրականացման գործընթացում մեծ դեր ունեցավ 1953 թ. ստեղծված Արտաքին առևտրի և արդյունաբերության նախարարությունը, որը հատուկ ստեղծվեց գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա՝ խթանելու արտադրությանն ու արտահանումը: ՀՆԱ-ի ստեղծման գործընթացում ունենալով ավելի քիչ բաժին, քան

ԱՄՆ-ն ու Արևմտյան Եվրոպայի այլ երկրները՝ Ճապոնիան իր տնտեսական աճով ու գիտատեխնիկական առաջընթացով գրանցեց զգալի հաջողություններ:

Արդյունաբերական նոր քաղաքականությունը կիրառվեց սկզբում պողպատաձուլման, ածխի ու էլեկտրաէներգետիկայի ոլորտներում: Հետագայում այս քաղաքականության զարգացումը տարածվեց նավաշինության, մեքենաշինության և քիմիական արդյունաբերության ոլորտների վրա: Ներկայումս դա տարածվում է էլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկայի և նոր նյութերի ստացման ոլորտների վրա:

Ներկայումս արդեն կարելի է վստահաբար պնդել, որ անցել են այն ժամանակները, երբ ռազմական արդյունաբերության զարգացումը հիմք էր ստեղծում նորագույն տեխնոլոգիաների զարգացման համար: Ռազմական արդյունաբերությունն օգտագործում է տեխնիկական այն նորարարությունները, որոնք ստեղծվել են տնտեսության տարբեր ոլորտներում: Այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում տեխնիկական շատ նորարարություններ թաքցվում էին և սահմանափակ քանակությամբ օգտագործվում ռազմական արդյունաբերության մեջ, Ճապոնիան դրանք կիրառում էր զանգվածային արտադրության մեջ:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: Պատերազմի ավարտից և ԱՄՆ-ի կողմից տնտեսության վերականգնումից հետո՝ մինչև 1970-ական թվականները, Ճապոնիայի տնտեսությանը բնորոշ էր զարգացման էքստենսիվ մոդելը, որի առանձնահատկություններն էին.

1. աշխատանքի միջազգային բաժանման ուղղահայաց մասնակցության ձևը: Ճապոնիան, չունենալով բնական հանածոների իր սեփական ռեսուրսները ու հիմնվելով ներմուծվող հումքի վերամշակման վրա, վերածվեց երկիրձեռնարկության: Ճապոնիայում իրականացվում էր հումքի ամբողջական վերամշակում՝ պատրաստի արտադ-

րանք ստանալու համար: Երկրում առկա էր ծանր արդյունաբերության գրեթե բոլոր ավանդական ոլորտների արտադրական ցիկլը (պողպատաձուլություն, նավթավերամշակում, քիմիական արդյունաբերություն և այլն): Պատրաստի արտադրանքը հիմնականում արտահանվում էր զարգացած երկրներ:

2. Արտադրության մեջ «մասշտաբի էֆեկտի» առավելագույն օգտագործումը: Ճապոնիան իր հիմնական արդյունաբերության ոլորտներում ապահովել է արտադրության զգալի կենտրոնացում: Խոշոր ձեռնարկություններն ավելացնում էին թողարկվող արտադրանքի ծավալները, և միավոր արտադրանք թողարկելու ծախքերը նվազում էին
3. Առաջատար գիտատեխնիկական փորձի կիրառումն ու յուրացումը: Հետպատերազմյան առաջին տարիներին արդյունաբերությունում գրեթե բացակայում էր սեփական գիտատեխնիկական բազան, այդ պատճառով առաջատար տեխնոլոգիաները ներմուծվում էին: Աստիճանաբար բարելավվում և կատարելագործվում էին տեխնոլոգիաները, սկսեցին ի հայտ գալ սեփական հետազոտություններն ու մտահղացումները, որոնք որոշ դեպքերում չէին զիջում ամենալավ համաշխարհային իրենց նմանակներին:
4. Տնտեսության պետական կարգավորման համակարգում կառավարության մեծ դերը: Ամբողջական պահանջարկի կարգավորման քեյնսյան մոտեցմամբ երկրի առաջատար ոլորտները, մասնավորապես բանկային համակարգը, պահվում էր կառավարության խիստ վերահսկողության տակ, վերջինս ընտրել էր իր արդյունաբերական քաղաքականության գերակայությունները: Տնտեսության համար բնութագրական էր պետական պատվերների համակարգը, իսկ դրամավարկային քաղաքականության ոլոր-

տում նախապատվությունը տրվեց տոկոսադրույքի մակարդակի վերահսկմանը:

Ճապոնիայի զարգացման էքստենսիվ մոդելը ապահովեց ամենաբարձր տնտեսական աճի տեմպերը զարգացած երկրների շարքում: 1960-1973 թթ. Ճապոնիայում տնտեսական աճի միջին տեմպը կազմել է 14 %, ինչը թույլ տվեց խոսել ճապոնական «Տնտեսական հրաշքի» մասին, և Ճապոնիան սկսեցին անվանել «ծագող արևի երկիր»: Այսպիսով՝ ամփոփելով կարող են նշել, որ 1960-1970-ական թթ. Ճապոնիայի տնտեսությանը բնութագրական էր.

1. լայնամասշտաբ ներդրումային գործընթացը, արդյունաբերության տեխնիկական արդիականացումը,
2. մետաղագործության ու մեքենաշինության բուռն զարգացումը,
3. արտահանման աճը:

Ճապոնիայի արտադրության և արտահանման կառուցվածքը զարգացավ՝ հօգուտ ծանր արդյունաբերության ոլորտների:

Սակայն չնայած այս ամենին՝ Ճապոնիայի գերարդյունաբերացումը հանգեցրեց նաև բացասական հետևանքների: Այսպես, ծանր արդյունաբերության բուռն զարգացումը առաջացրեց շրջակա միջավայրի զգալի աղտոտում: 1970-ական թթ. էկոլոգիական առումով Ճապոնիան աշխարհում ամենաաղտոտված երկիրն էր: Լրիվ զբաղվածության պայմաններում զգացվեց աշխատուժի պակասուրդ, մասնավորապես զգալի պակասուրդ զգացվեց երիտասարդների աշխատուժի շուկայում: Նկատվեց նաև արդյունաբերական ձեռնարկությունների անհավասար տեղաբաշխվածություն: Դրանք հիմնականում կենտրոնացված էին երկրի կենտրոնական շրջաններում, իսկ երկրի հյուսիսային շրջանը դեռ շարունակում էր մնալ ճգնաժամային վիճակում:

Այսպիսով՝ 1970-ական թթ. առաջին կեսին երկրի էքստենսիվ մոդելով հետագա զարգացումը կասկածի տակ դրվեց: 1973-1974 թթ.

«նավթային ճգնաժամը» բացահայտեց Ճապոնիայի տնտեսության զգալի կախվածությունը ներմուծվող էներգակիր ռեսուրսներից: Տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ Ճապոնիայի արտահանման վրա, քանի որ նվազեց պատրաստի արտադրանքի համաշխարհային պահանջարկը: Արտահանման կողմնորոշում ունեցող Ճապոնիայի տնտեսության զարգացման մոդելը զգալի բարեփոխումների կարիք էր զգում: Ավելին՝ Ճապոնիայի տնտեսությունը զարգացման ռազմավարության փոփոխության պիտի ենթարկվեր, մասնավորապես պետք էր անցում կատարել դեպի նոր տնտեսական զարգացման ինտենսիվ մոդելի:

1970-ական թթ. կեսերին մշակվեց տնտեսական զարգացման նոր մոդել, որի առանձնահատուկ գծերն էին.

1. արտադրական ռեսուրսների ինտենսիվ օգտագործումը: Հումքի ու նյութերի խնայողաբար օգտագործման հաշվին նվազեցվեցին արտադրության ծախքերը, ավելի արդյունավետ սկսվեցին օգտագործվել աշխատանքային ռեսուրսները,
2. արտադրության և զբաղվածության կառուցվածքային ոլորտի փոփոխությունը: Առաջին պլան մղվեցին գիտատար ոլորտները, ինչպիսիք էին մեքենաշինությունը, էլեկտրոնիկան, նոր նյութերի արտադրությունը, հեռահաղորդակցությունը,
3. տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացի դերի զգալի մեծացումը: Սա շատ արագորեն ապահովեց սպասվող արդյունքները: Ճապոնիան տեխնոլոգիաների ներմուծմանը զուգահեռ սկսեց արտադրել իր սեփական տեխնոլոգիաները: Որոշ չափով զիջելով ֆունդամենտալ հետազոտություններում՝ ներկայումս Ճապոնիան առաջատար է կիրառական հետազոտություններում (հասարակական տեխնոլոգիաներ),

4. արտաքին տնտեսական ռազմավարության փոփոխությունը: Ապրանքների արտահանման կողմնորոշվածությունից անցում կատարվեց դեպի կապիտալի արտահանում: Ճապոնիան սկսեց ուղղակի ու պորտֆելային լայնածավալ ներդրումներ կատարել արտասահման, սկզբնական շրջանում՝ հիմնականում Հարավարևելյան Ասիայի ու ԱՄՆ-ի շուկաներ, իսկ հետագայում՝ նաև Արևմտյան Եվրոպա,
5. տնտեսության պետական կարգավորման համակարգում գերակայությունների փոփոխությունը: Այստեղ ֆինանսական կարգավորումից (տոկոսադրույքի մակարդակի վերահսկում, պետական ձեռնարկատիրություն) անցում կատարվեց պետական կարգավորման անուղղակի մեթոդների (գնաճի զսպում, դրամական զանգվածի վերահսկում, ազգային արժույթի փոխարժեքի կայունության ապահովում): Պետության կողմից իրականացվող մակրոտնտեսական նոր քաղաքականության հիմնական նպատակն էր ստեղծել շուկայական այնպիսի համակարգ, որի միջոցով պետությունը կարող էր անուղղակիորեն կարգավորել շուկան:

Զարգացման ինտենսիվ մոդելին անցման շնորհիվ բարձրացավ Ճապոնիայի տնտեսության արդյունավետությունը, Ճապոնիան դարձավ համաշխարհային տնտեսության հիմնական կենտրոններից մեկը, ուժեղացավ ճապոնական իենի դերը համաշխարհային տնտեսության մեջ, և ներկայումս ճապոնական իենը պահուստային արժույթներից մեկն է համաշխարհային տնտեսության մեջ:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Ինչպես մենք արդեն նշել ենք, Ճապոնիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը փոքր-ինչ տարբերվում է զարգացած այլ երկրների ճյուղային կառուցվածքից: 2021 թ. տվյալներով Ճապոնիայի տնտեսությանը

բնորոշ էր հետևյալ կառուցվածքը: Գյուղատնտեսությանն ու ձկնորսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 1.0 %-ը, արդյունաբերությանը՝ 28.8 %-ը, իսկ ծառայությունների ոլորտը ապահովում էր ՀՆԱ-ի 69.9 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.1.3*): Ելնելով վերոնշյալից՝ կարելի է փաստել, որ Ճապոնիայի տնտեսության մեջ համեմատաբար մեծ է արդյունաբերության տեսակարար կշիռը, այսինքն՝ Ճապոնիայի տնտեսությանը բնութագրական է «գերարդյունաբերացումը»[158]: Այստեղ համեմատության համար հարկ է նշել, որ 1990-ական թթ. վերջին Ճապոնիայի տնտեսության մեջ գյուղատնտեսությանն ու ձկնորսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 1.6 %-ը, արդյունաբերությանը՝ 31.9 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 66.5 %-ը: Ինչպես նկատում ենք *Հավելված, Աղյուսակ 9.1.3*-ից, ծառայությունների ոլորտի աճը հիմնականում տեղի է ունեցել արդյունաբերության ոլորտի նվազման հաշվին:

Գյուղատնտեսություն: Այս ոլորտն ապահովում է երկրի սննդամթերքի պահանջարկի մոտ 70 %-ը: Հիմնական մշակաբույսերն են բրինձը, կարտոֆիլը, շաքարեղեգն ու շաքարի ճակնդեղը: Ճապոնիայի գյուղատնտեսությունն աչքի է ընկնում իր բարձր բերքատվությամբ ու ինտենսիվությամբ: Հողի սակավության պատճառով երկրում գործում են գյուղատնտեսական հատուկ ձեռնարկություններ, որտեղ մրգերն ու բանջարեղենը աճեցվում են արհեստական միջավայրում, որն իր կառուցվածքով նման է բնական պայմաններին: Բերքի մշակման գործընթացը հսկվում է հատուկ սարքավորումներով: Բացասականն այն է, որ գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացում շատ բարձր է քիմիայի բաժինը: Ճապոնիայի համար մեծ նշանակություն ունի ձկնարդյունաբերությունը, չնայած ձկների որոշ տե-

[158] Նմանատիպ իրավիճակ է Կանադայի ու Գերմանիայի տնտեսություններում, որտեղ արդյունաբերությանը բաժին են ընկնում ՀՆԱ-ի համապատասխանաբար 24.1 %-ն ու 26.9 %-ը:

սակներ ներմուծվում են (օրինակ՝ Նորվեգիայից՝ լոսոս տեսակի ձուկը):

Արդյունաբերություն: Ներկայումս Ճապոնիայի արդյունաբերությանը հատկանշական են ծանր ու արդյունահանող ոլորտների բաժնի կրճատումն ու գիտատար ոլորտների ակտիվ զարգացումը: Հատուկ նշանակություն ունեն այնպիսի գիտատար ոլորտներ, ինչպիսիք են ռոբոտների, միկրոսխեմաների, հեռահաղորդակցման սարքավորումների արտադրությունն ու աերոտիեզերական արդյունաբերության ոլորտները: Բացի դրանից՝ Ճապոնիան մասնագիտանում է նաև մեքենաշինության էլեկտրոնային սարքավորումների, քիմիական արդյունաբերության և մետաղագործության (բարձր որակի պողպատ) մեջ: 2022 թ. տվյալներով Ճապոնիայում արտադրվել է տարեկան մոտ 8.0 մլն ավտոմեքենա, և այս ցուցանիշով Ճապոնիան աշխարհում զբաղեցրել է երրորդ տեղը՝ Չինաստանից (27.0 մլն ավտոմեքենա) ու ԱՄՆ-ից (10.1 մլն ավտոմեքենա) հետո:

Ճապոնիան աշխարհում առաջատար է կենցաղային օգտագործման կիրառական տեխնոլոգիաների արտադրությամբ: Հատկապես կարելի է առանձնացնել այն տեխնոլոգիաների զարգացումը, որոնք բարելավում են էկոլոգիական միջավայրը: Դեռ 1960 թ. երկիրը տնտեսական աճի պատճառով կանգ առավ միջավայրի ոչ բարենպաստ էկոլոգիական խնդրի առաջ, և այդ ժամանակաշրջանից վերազգային կազմակերպությունների ռազմավարության մեջ էական փոփոխություններ կիրառվեցին: Միայն ճապոնական մեքենաշինական ընկերությունները տարեկան մոտ 2 մլրդ դոլար են ծախսում՝ էկոլոգիապես մաքուր ավտոմեքենաներ ստեղծելու համար:

Գիտահետազոտական ընդհանուր աշխատանքների մոտ 80 %-ը ֆինանսավորվում է խոշոր ընկերությունների կողմից: Չնայած սեփական տեխնոլոգիական բազային՝ Ճապոնիան ակտիվորեն կիրառում է արտասահմանյան լավագույն նորամուծու-

թյունները և ներդնում դրանք արտադրական գործընթացներում: Արդյունաբերական խոշոր վերազգային ընկերություններից են «Komatsu», «Mitsubishi», «Toyota», «Nissan», «Hitachi», «Toshiba», «Sony», «Matsushita», «Sharp» և այլ ընկերություններ:

Ճապոնիայի էներգետիկան բավական մեծ չափով կախված է ներմուծումից: Ներմուծման ընդհանուր ծավալի մոտ 16 %-ը կազմում են էներգակիրները: Արտաքին կախվածությունն էներգառեսուրսներից նվազեցնելու նպատակով ակտիվ աշխատանքներ են կատարվում՝ օգտագործելու ոչ ավանդական էլեկտրաէներգիայի աղբյուրները (արևային էներգիա, երկրի ընդերքի, մակընթացությունների էներգիա և այլն): Ամբողջ արտադրվող էլեկտրաէներգիայի մոտ 1/3-ը ապահովում են ատոմակայանները:

Ոչ նյութական ոլորտ: Այստեղ հատկապես զարգանում են առևտուրը, ֆինանսական ու բանկային ծառայությունները: Ֆինանսական համակարգն ու մանրածախ առևտուրը գտնվում են Ճապոնիայի կառավարության խիստ կարգավորման/վերահսկողության ներքո: Մանրածախ առևտրի ոլորտում կառավարության կարգավորումը վերաբերում է խանութների տարածքների սահմանափակումներին: Մանրածախ առևտրի ոլորտում գործող ընկերությունները հեշտությամբ չեն կարող վերածվել խոշոր ընկերությունների, քանի որ առկա է օրենսդրական այնպիսի դաշտ, որը փորձում է պաշտպանել փոքր ու միջին բիզնեսին: Ներկայումս տնտեսության մեջ նկատվում է ոչ նյութական ոլորտի (ֆինանսներ, հեռահաղորդակցություն, տրանսպորտ, զբոսաշրջություն և այլն) աճ: Մեծ նշանակություն ունեն նաև գործարար ծառայությունները, որոնք առնչվում են արտադրության սպասարկմանը (խորհրդատվություն, ինժենիրինգ, մարքեթինգ):

Արտաքին տնտեսական կապերը: Արտաքին տնտեսական հարաբերություններում Ճապոնիան նույնպես ունի որոշակի առանձնահատկություններ: Չնայած նրան, որ ետպատերազ-

մյան շրջանում Ճապոնիան հիմնականում զարգանում էր արտաքին պահանջարկի հաշվին, երկիրն այլ զարգացած երկրների հետ համեմատ համեմատաբար ավելի քիչ է ընդգրկված աշխատանքի միջազգային բաժանման գործընթացում: Այսպես, ներքին պահանջարկի միայն 10 %-ն է բավարարվում ներմուծման հաշվին (ԱՄՆ-ում այդ ցուցանիշը մոտ երկու անգամ ավելի բարձր է, իսկ ԵՄ երկրներում՝ մոտ հինգ անգամ): Այսպիսով՝ Ճապոնիայի տնտեսության վիճակը զգալի ազդեցություն չի թողնում համաշխարհային տնտեսության զարգացման վրա և հակառակը: Վերը նշվածը հաստատվեց 1990-ական թթ. ասիական արժութաֆինանսական, ինչպես նաև 2008 թ.՝ ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամերի ժամանակ: Մյուս կողմից՝ այդ կերպ Ճապոնիան ապահովագրում է իր ներքին շուկան արտաքին ոչ բարենպաստ գործոններից:

2022 թ. տվյալներով Ճապոնիայի արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 1,657 մլրդ դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը կազմել է 752, իսկ ներմուծումը՝ 905 մլրդ դոլար: Ճապոնիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է -153 մլրդ դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.1.4*): Այստեղ հարկ է նշել, որ վերջին տարիներին զգալիորեն վատթարացել են Ճապոնիայի արտաքին առևտրի ցուցանիշները: Այսպես, եթե 2007 թ. առևտրային դրական հաշվեկշռի ցուցանիշով (92.0 մլրդ դոլար) Ճապոնիան աշխարհում գրավում էր հինգերորդ տեղը՝ Գերմանիայից (269.5 մլրդ դոլար), Չինաստանից (263.9 մլրդ դոլար), Ռուսաստանից (152.5 մլրդ դոլար) և Սաուդյան Արաբիայից (145 մլրդ դոլար) հետո, ապա արդեն 2016 թ. տվյալներով առևտրային դրական հաշվեկշռով Ճապոնիան առաջատար 10 երկրների շարքում չէր[159]: 2011-2015 թթ. ընկած ժամանակահատ-

[159] Ընդհանրապես «Մեծ յոթնյակի» երկրների շարքում առևտրային հաշվեկշռի ավելցուկով առանձնանացել են Գերմանիան, Ճապոնիան ու Կանադան, իսկ մյուս երկրների մոտ գրանցվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդ: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պատճառով Կանադայի առևտրային հաշ-

վածում Ճապոնիան առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվեց առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրի, իսկ առևտրային բացասական հաշվեկշիռն ունեցել է աճի միտում: 2016-2017 թթ. ընկած ժամանակահատվածում Ճապոնիայի առևտրային հաշվեկշիռը դրական է եղել, իսկ 2018 թվականից ի վեր՝ կրկին բացասական, նաև ունի աճի միտում:

2022 թ. տվյալներով Ճապոնիան ապրանքների արտահանման ծավալով աշխարհում գրավել է հինգերորդ տեղը (համաշխարհային արտահանման 3.6 %-ը)՝ Չինաստանից (3,593 մլրդ դոլար), ԱՄՆ-ից (2,062 մլրդ դոլար), Գերմանիայից (1,676 մլրդ դոլար) ու Նիդեռլանդներից (768,2 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (166,6 մլրդ դոլար)՝ տասնմեկերորդ տեղը[160]: Ծառայությունների միջազգային արտահանման մեջ Ճապոնիայի դիրքը հարաբերականորեն թույլ է (տասնմեկերորդ տեղը կամ համաշխարհային արտահանման 3.0 %-ը), որը հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի տնտեսության «գերարդյունաբերացմամբ» և տնտեսության զարգացման մյուս առանձնահատկություններով:

Ապրանքների արտահանման աշխարհագրական կառուցվածքը հետևյալն է՝ Չինաստան (19.2 %), ԱՄՆ (18.6 %), Հարավային Կորեա (7.2 %), Հոնկոնգ (5.1 %), Թայլանդ (4.2 %): Մինչև 2009 թվականը Ճապոնիայի արտահանման առաջին գործընկեր

վեկշիռը բացասական է եղել 2009-2020 թթ. ընկած ժամանակահատվածում, իսկ 2012-2022 թթ. ընկած ժամանակաշրջանում Իտալիան առևտրային բացասական հաշվեկշիռ ունեցող երկրից վերածվել է առևտրային դրական հաշվեկշիռ ունեցող երկրի:

[160] Ծառայությունների արտահանման ծավալով 2022 թ. աշխարհում առաջատար տասը երկրներն էին ԱՄՆ-ն (928,5 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիան (494,4 մլրդ դոլար), Չինաստանը (424,0 մլրդ դոլար), Գերմանիան (411,7 մլրդ դոլար), Իռլանդիան (355,1 մլրդ դոլար), Ֆրանսիան (337,1 մլրդ դոլար), Հնդկաստանը (309,3 մլրդ դոլար), Սինգապուրը (291,2 մլրդ դոլար), Նիդեռլանդները (272,8 մլրդ դոլար) և Իսպանիան (272,8 մլրդ դոլար): Այստեղ հարկ է նշել, որ վերջին տարիներին զգալիորեն աճել են Գերմանիայի, Չինաստանի, Իռլանդիայի և Հնդկաստանի բաժինները ծառայությունների համաշխարհային արտահանման մեջ:

երկիրը ԱՄՆ-ն էր, սակայն 2009-2013 թթ. ընկած ժամանակաշրջանում Ճապոնիայի արտահանման գլխավոր գործընկեր երկիրը Չինաստանն էր: 2014-2020 թթ. ընկած ժամանակահատվածում Ճապոնիայի արտահանման գլխավոր առևտրային գործընկեր երկիրը կրկին ԱՄՆ-ն էր, իսկ 2021 թվականից ԱՄՆ-ն իր տեղը նորից զիջեց Չինաստանին: Ճապոնիայի արտահանման մեջ գերակշռող հիմնական ապրանքախմբերն են տրանսպորտային սարքավորումները, մետաղագործական արտադրանքը, էլեկտրական սարքերն ու ապարատները, ավտոմեքենաները, կիսահաղորդիչներն ու քիմիական արդյունաբերության ապրանքները:

Ապրանքների ներմուծման ծավալով 2022 թ. Ճապոնիան աշխարհում զբաղեցրել է չորրորդ տեղը (համաշխարհային ներմուծման 3.6%)՝ ԱՄՆ-ից (3,375 մլրդ դոլար), Չինաստանից (2,715 մլրդ դոլար) ու Գերմանիայից (1,582, մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով՝ (209,5 մլրդ դոլար)՝ տասներորդ տեղը (ծառայությունների համաշխարհային ներմուծման 3.9 %-ը)[161]:

Ճապոնիայի ներմուծման գլխավոր գործընկեր երկրներն են Չինաստանը (20.5 %), ԱՄՆ-ն (10.0 %), Ավստրալիան (9.1 %), Սաուդյան Արաբիան (5.1 %) և Հարավային Կորեան (4.2 %): Համեմատության համար նշենք, որ 1997 թ. ամբողջ ներմուծման 25 %-ը բաժին էր ընկնում Հարավարևելյան Ասիայի երկրներին, ԱՄՆ-ին՝ 23 %-ը, իսկ Չինաստանին՝ 9 %-ը:

Ճապոնիայի ներմուծման մեջ գերակշռող հիմնական ապրանքախմբերն են մեքենաներն ու սարքավորումները, վառելիքը, սննդամթերքը, արդյունաբերական հումքը, տեքստիլ իրերն ու քիմիական ապրանքները:

---

[161] Ծառայությունների ներմուծման ծավալով 2022 թ. աշխարհում առաջատար հինգ երկրներն են ԱՄՆ-ն (696,7 մլրդ դոլար), հետո՝ Չինաստանը (465,0 մլրդ դոլար), Գերմանիան (459,2 մլրդ դոլար), Իռլանդիան (372,8 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիան (317,0 մլրդ դոլար) ու Ֆրանսիան (285,8 մլրդ դոլար):

Ճապոնիան կայուն դիրքեր ունի կապիտալի արտահանման համակարգում: Համաշխարհային տնտեսության մեջ Ճապոնիան զուտ խոշորագույն վարկատու է, որին բաժին է ընկնում միջազգային վարկավորման ընդհանուր ծավալի մոտ 50 %-ը: Այսպես, 2022 թ. տվյալներով Ճապոնիայի զուտ միջազգային ներդրումային դիրքը դրական է և կազմել է 3.4 տրիլիոն դոլար: Այստեղ հարկ է նշել, որ զուտ միջազգային ներդրումային բացասական դիրքով աշխարհում առաջին տեղը զբաղեցնում է ԱՄՆ-ն (-18 տրիլիոն դոլար): Բացի դրանից՝ հաշվի առնելով զարգացած ու զարգացող երկրների կողմից արտաքին առևտրում կիրառվող տարբեր սահմանափակումները՝ Ճապոնիան մուտք է գործում այլ երկրների շուկաներ օտարերկրյա ուղղակի ու պորտֆելային ներդրումների միջոցով: Ճապոնիայի ֆինանսաարդյունաբերական խոշորագույն ընկերությունները, ինչպիսիք են «Mitsubishi»-ն, «Mitsui»-ն, «Sumitomo»-ն, «Fuji»-ն, «Sanwa»-ն, ունեն ֆինանսական վիթխարի հզորություն ու արտադրական ուժեղ բազա:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Վերջին երկու տասնամյակի ընթացքում Ճապոնիայի տնտեսության զարգացման հաջողությունը ի՞նչ գործոնի աճով է բացատրվում:
2. ՀՆԱ-ի ծավալով Ճապոնիան աշխարհում ու զարգացած երկրների շարքում ո՞ր տեղերն է զբաղեցնում:
3. 2022 թ., ինչպես Միացյալ Նահանգների, Կանադայի ու Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների տնտեսություններում, Ճապոնիայում ևս գրանցվել է գնաճի բա՞րձր, թե՞ ցածր մակարդակ: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:

4. Ճապոնիայի առևտրային հաշվեկշիռը դրակա՞ն է, թե՞ բացասական: Ինչպիսի՞ աճի միտում ունի Ճապոնիայի առևտրային հաշվեկշիռը:
5. Ինչպիսի՞ն է Ճապոնիայի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը: Փորձե՛ք համեմատել առևտրային հաշվեկշռի հետ և հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
6. Ո՞ր տեղն է զբաղեցնում Ճապոնիան աշխարհում պետական պարտքի մակարդակով: Ի՞նչ եք կարծում՝ ինչ գործոն/գործոններ է/են ազդել Ճապոնիայի պետական պարտքի մակարդակի վրա:
7. Ներկայացրե՛ք Ճապոնիայի աշխատուժի շուկայի հիմնական առանձնահատկությունները:
8. Ինչպիսի՞ն է տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունը Ճապոնիայի տնտեսության մեջ: Ի՞նչ եք կարծում՝ ինչ գործոն/գործոններ են ազդել Ճապոնիայի գյուղատնտեսության մեջ տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածության վրա:
9. Թվարկե՛ք Ճապոնիայի տնտեսության ետպատերազմյան զարգացման առանձնահատկությունները:
10. Ներկայացրե՛ք Ճապոնիայի «Տնտեսական հրաշքի» հիմնական պատճառները:
11. Որո՞նք են Ճապոնիայի տնտեսական զարգացման մակրոտնտեսական մոդելի հիմնական առանձնահատկությունները:
12. Ինչպիսի՞ առանձնահատկություն ունի Ճապոնիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը:
13. Ո՞ր տեղերն է զբաղեցնում Ճապոնիան ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալներով համաշխարհային տնտեսության մեջ:
14. Ինչպիսի՞ն է Ճապոնիայի զուտ միջազգային ներդրումային դիրքը:

Հավելված

Աղյուսակ 9.1.1. Ճապոնիայի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն դոլար)[162]	4.15	4.23	4.29	4.35	4.29	4.05	4.22	4.22	4.28	4.36	4.37	4.44	4.48	4.55	4.57	4.59	4.38	4.46	4.50
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	2.2	1.8	1.4	1.5	-1.2	-5.7	4.1	0.0	1.4	2.0	0.3	1.6	0.8	1.7	0.6	0.3	-4.6	2.1	1.0
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազար դոլար)	32.5	33.1	33.5	33.9	33.5	31.6	32.9	33.0	33.5	34.2	34.3	34.9	35.2	35.9	36.1	36.3	34.4	35.5	36.0
Գնաճի մակարդակ (CPI), %	0.0	-0.3	0.3	0.0	1.4	-1.3	-0.7	-0.3	0.0	0.3	2.8	0.8	-0.1	0.5	1.0	0.5	0.0	-0.2	2.5
Գործազրկ. մակարդակ %	4.7	4.4	4.1	3.9	4.0	5.1	5.1	4.5	4.3	4.0	3.6	3.4	3.1	2.8	2.4	2.4	3.0	2.8	2.6

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[162] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

Աղյուսակ 9.1.2. Ճապոնիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.[163], %

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատն-տես.	4.7	4.6	4.6	4.5	4.4	4.3	4.3	4.2	4.1	4.0	3.9	3.8	3.7	3.6	3.5	3.4	3.5	3.4	3.2	3.2
Արդյունա-բեր.	29.9	29.1	28.4	28.0	27.7	27.5	27.2	26.1	25.6	25.3	25.3	25.3	25.1	25.0	24.7	24.6	24.4	24.2	24.0	23.7
Ծառ. ոլորտ	65.3	66.2	67.0	67.6	67.9	68.2	68.6	69.6	70.4	70.7	70.9	71.0	71.2	71.4	71.8	71.9	72.1	72.4	72.8	73.1

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 9.1.3. Ճապոնիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2004-2021 թթ.[164], %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտե-սություն	1.2	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.0	1.0	1.1	1.1	1.0	1.0	1.0	1.0
Արդյունաբերու-թյուն[165]	30.0	29.9	29.7	29.6	28.8	27.1	28.3	26.7	26.6	26.7	27.3	28.6	28.6	28.9	29.1	28.7	29.0	28.8
Ծառ. ոլորտ[166]	69.0	69.5	69.4	69.6	70.3	71.9	70.5	71.7	71.7	71.6	70.9	69.8	69.9	69.5	69.5	69.3	69.5	69.9

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[163] Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների Ճապոնիայի տնտեսության համար առկա է մինչև 2021 թվականը:

[164] Տնտեսության ճյուղային կառուցվածքի ցուցանիշների տվյալները Ճապոնիայի տնտեսության համար առկա են մինչև 2021 թվականը:

[165] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:

[166] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

Աղյուսակ 9.1.4. Ճապոնիայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահա-նում	594.9	646.7	714.3	781.4	580.7	769.8	823.1	798.5	715.1	690.2	624.8	644.9	698.1	738.2	705.8	640.9	757.4	752.0
Ներմու-ծում	515.8	579.0	622.2	762.5	551.9	692.6	855.3	885.8	833.2	812.2	625.6	606.9	671.9	748.4	720.9	634.6	773.7	905.0
Առևտ-րային հաշվ.	79.1	67.7	92.1	18.8	28.7	77.2	-32.2	-87.3	-118	-122	-0.6	38.0	26.2	-10.2	-15.1	6.2	-16.2	-153

Աղբյուր՝ International Trade Centre:

9.2. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսությունը

Տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքը կազմում է 9.6 մլն կմ^2, իսկ բնակչությունը 2022 թ. տվյալներով կազմել է 1.41 մլրդ մարդ: Տարածքով ՉԺՀ-ն աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը՝ ՌԴ-ից (17 մլն կմ^2) ու Կանադայից (9.9 մլն կմ^2) հետո, իսկ բնակչության թվաքանակով՝ երկրորդ տեղը[167]: Չինաստանի տնտեսության զարգացումը հավասարաչափ չի ընթանում: Այսպես, աղքատության շեմին գտնվող վիթխարի բնակչության հետ մեկտեղ, որոնք հիմնականում բնակվում են Չինաստանի արևմտյան ու կենտրոնական տարածաշրջաններում, երկրում առկա են նաև զարգացման բարձր մակարդակ ունեցող տարածաշրջաններ (երկրի արևելյան ծովափնյա տարածաշրջանները), որոնք իրենց զարգացման ու բնակչության եկամուտների մակարդակով կարող են համեմատվել զարգացած երկրների հետ:

Իրականում «Մեծ Չինաստանը կազմված է երեք մասից՝ 1. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 2. Հոնկոնգ, որը մտել է Չինաստանի կազմի մեջ 1997 թ., սակայն առաջիկա 50 տարիների ընթացքում պահպանելու է իր ինքնավար կարգավիճակն ու օրենսդրությունը, 3. Թայվան, որն իրեն հռչակել է անկախ պետություն, և որի սուվերենությունը պաշտոնական Պեկինը չի ճանաչում:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը աշխարհի ամենախոշոր տերություններից մեկն է: Այսպես, Չինաստանը մտնում է ատոմային ակումբի մեջ, բաց է թողնում տիեզերական

[167] Մինչև 2021 թվականը բնակչության թվաքանակով Չինաստանն աշխարհում զբաղեցրել է առաջին տեղը, իսկ 2022 թ. բնակչության թվաքանակով Հնդկաստանն առաջ է անցել Չինաստանին:

ապարատներ և ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ է[168]:

Չինաստանն ապահովված է վիթխարի բնական ռեսուրսներով: Բնական ռեսուրսների պաշարներով Չինաստանը զիջում է միայն ՌԴ-ին ու ԱՄՆ-ին: Այն աշխարհում կապարի, ցինկի, ալյումինի, նիկելի, փայտանյութի խոշորագույն հինգ արտադրողներից մեկն է: Չինաստանը նաև աշխարհում ցորենի, մսամթերքի, մրգերի, բանջարեղենի, բամբակի, քարածխի խոշորագույն արտադրողներից է:

Դեռևս հին ժամանակներից Չինաստանը համարվել է առաջատար տերություն գիտության ու տեխնիկայի զարգացման գծով: Չինաստանում է հայտնաբերվել.

- կողմնացույցը (Ք.ա. I դ.),
- թուղթը (I դ.),
- երկաթի արտադրության տեխնոլոգիան (IV դ.):

Մինչև օրս Չինաստանը շարունակում է պահպանել համաշխարհային մակարդակի տեխնոլոգիաներ արտադրելու իր ներուժը: Այս առումով պատահական չէ, որ 1998 թ. նոյեմբերին Պեկինում հիմնադրվեց «Microsoft» ընկերության գիտահետազոտական կենտրոնը, որը միակն է ԱՄՆ-ից դուրս:

Չինաստանի տնտեսական համակարգն առանձնահատուկ է նրանով, որ դրա հիմքում ընկած են շուկայական հարաբերությունները, սակայն վերջինս իրականացվում է կոմունիստական կուսակցության վերահսկողությամբ: Այսինքն՝ Չինաստանի տնտեսությունն շուկայական հարաբերությունների և սոցիալիստական համակարգի խառնուրդ է:

Ըստ որոշ կանխատեսումների՝ արդեն 2010 թ. Չինաստանի տնտեսության ՀՆԱ-ն պետք է գերազանցեր ԱՄՆ տնտեսության ՀՆԱ-ն: 2005 թվականից ի վեր Չինաստանն իրական ՀՆԱ-ի մա-

---

[168] ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ երկրներն են Չինաստանը, Ֆրանսիան, ՌԴ-ն, Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ:

կարդակով գերազանցում է Ճապոնիային՝ գրավելով աշխարհում երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո[169]:

2022 թ. տվյալներով Չինաստանի անվանական ՀՆԱ-ն կազմել է 17.9 տրիլիոն դոլար, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն՝ 16.3 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 11,560 դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.2.1*): Այստեղ հարկ է նշել, որ չնայած ՀՆԱ-ի ծավալով Չինաստանն աշխարհում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո, սակայն մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն բավականին ցածր է:

2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում Չինաստանի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը միանիշ թվից վերածվել է երկնիշ թվի: 2008 թվականից սկսած՝ Չինաստանի տնտեսական աճի տեմպը զգալի նվազեց, ինչի պատճառ հանդիսացավ 2007 թ. ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը, իսկ հետագայում՝ 2010 թ.՝ ԵՄ անդամ երկրներում սկսած պարտքային ճգնաժամը և այլն: Ամեն դեպքում այստեղ հարկ է նշել, որ Չինաստանը դասվում է այն եզակի երկրների շարքին, որ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի տարիներին գրանցել է նման տնտեսական աճի ցուցանիշներ, իսկ տնտեսական աճի ցուցանիշը բացասական չի եղել: 2021-2022 թթ. Չինաստանի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպերը կազմել են համապատասխանաբար 8.4 % ու 3.0 %: Ինչպես նկատում ենք, նույնիսկ 2020 թ., COVID-19 համավարակով պայմանավորված, Չինաստանի տնտեսության աճի տեմպը չնայած նվազել է, սակայն բացասական չի եղել՝ կազմելով 2.2 %: Միևնույն ժամանակ պահպանվել է համեմատաբար ցածր գնաճի մակարդակ, ինչը 2020 թ. կազմել է 2.4 %: 2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակը Չինաստանի տնտեսության մեջ կազմել է 4.9 %[170]:

---

[169] 2005 թ. Չինաստանի իրական ՀՆԱ-ն կազմել է 4.4 տրիլիոն դոլար, իսկ Ճապոնիայի իրական ՀՆԱ-ն՝ 4.2 տրիլիոն դոլար:

[170] Գործազրկության մակարդակը ներկայացված է քաղաքների համար և արտահայտում է քաղաքների գործազրկության միջին մակարդակ, իսկ գյուղական

Չինաստանի առևտրային հաշվեկշիռը դրական է, և 2005-2015 թթ. ընկած ժամանակաշրջանում այն ունեցել է աճի միտում՝ 2015 թ. կազմելով 590 մլրդ դոլար: 2016-2018 թթ. ընկած ժամանակահատվածում Չինաստանի առևտրային դրական հաշվեկշիռը կրճատվել է՝ 2018 թ. կազմելով 359 մլրդ դոլար: Այնուհետև՝ 2019 թ. սկսած, Չինաստանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կրկին ձեռք է բերել աճի միտում՝ 2022 թ. կազմելով 877 մլրդ դոլար: Չինաստանը առևտրային դրական հաշվեկշռի ցուցանիշով 2014 թվականից ի վեր աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը՝ առաջ անցնելով Գերմանիայից: Չինաստանի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկը 2022 թ. կազմել է 401 մլրդ դոլար, և այս ցուցանիշով նույնպես Չինաստանն աշխարհում զբաղեցել է առաջին տեղը՝ կրկին առաջ անցնելով Գերմանիայից (172 մլրդ դոլար): Այստեղ հարկ է նշել, որ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկի ցուցանիշով Չինաստանն (188.6 մլրդ դոլար) աշխարհում 2017 թ. գրավել է երկրորդ տեղը՝ Գերմանիայից (288.5 մլրդ դոլար) հետո:

2022 թ. տվյալներով Չինաստանի պետական պարտքը կազմել է 13.8 տրիլիոն դոլար կամ ՀՆԱ-ի 77.1 %-ը, և այս ցուցանիշի մեծությամբ Չինաստանն աշխարհում գրավել է 111-րդ տեղը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 2.4 տրիլիոն (ՀՆԱ-ի մոտ 13.7 %-ը): Արտաքին պարտքի ցուցանիշի մեծությամբ Չինաստանը աշխարհում գրավել է 13-րդ տեղը: Այստեղ հարկ է նշել, որ Չինաստանը այն եզակի երկրներից մեկն է, որտեղ նույնիսկ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի ազդեցությամբ նկատելիորեն չեն ավելացել պետական պարտքի ու արտաքին պարտքի (պետական և մասնավոր) մակարդակները: Այսպես, համեմատության համար նշենք, որ 2007 թ. Չինաստանի

շրջաններում գործազրկության մակարդակը զգալիորեն բարձր է (առանձին դեպքերում որոշակի տարածաշրջաններում այն գերազանցում է նույնիսկ 20.0 %-ը):

պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 18.4 %-ը, իսկ արտաքին պարտքը՝ ՀՆԱ-ի 11.0 %-ը:

Բնակչությունն ու աշխատանքային ռեսուրսները: Չնայած այն հանգամանքին, որ Չինաստանը բազմազգ երկիր է, բնակչության 91 %-ը չինացիներ են: Բնակչության թվաքանակով Չինաստանն աշխարհում երկար ժամանակ զբաղեցրել է առաջին տեղը: Վերջին տասնամյակում զգալիորեն նվազել է Չինաստանի ու Հնդկաստանի միջև բնակչության թվաքանակի տարբերությունը: Այսպես, եթե 2010 թ. տվյալներով Չինաստանի բնակչությունը կազմում էր 1.33 մլրդ մարդ, իսկ Հնդկաստանինը՝ 1.23 մլրդ մարդ, ապա 2020 թ. Չինաստանի բնակչությունը կազմել է 1.41 մլրդ մարդ, իսկ Հնդկաստանինը՝ 1.39 մլրդ մարդ: Ավելին՝ 2022 թ. Հնդկաստանը բնակչության թվաքանակով առաջ անցավ Չինաստանին:

2022 թ. Չինաստանի տնտեսապես ակտիվ բնակչությունը (781 մլն մարդ) կազմել է 15 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բնակչության 71 %-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության 24.4 %-ը զբաղված է գյուղատնտեսության, 28.2 %-ը՝ արդյունաբերության, իսկ 47.4 %-ը՝ ծառայությունների ոլորտում (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.2.2*): Ինչպես նկատում ենք, նշված ժամանակահատվածում երկու անգամ նվազել է գյուղատնտեսության ոլորտում ներառված տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը: Մյուս կողմից, չնայած այդ նվազմանը, դեռևս բավականին մեծ է տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը գյուղատնտեսության ոլորտում:

2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակը Չինաստանի տնտեսության մեջ կազմել է 4.9: Չինաստանի տնտեսության համար գործազրկության մակարդակը ներկայացված է քաղաքների համար և արտահայտում է քաղաքների գործազրկության մակարդակի միջին մակարդակը, իսկ գյուղական շրջաններ-

րում գործազրկության մակարդակը բավականին բարձր է, և առանձին դեպքերում այն կարող է կազմել նույնիսկ 20.0 %:

Չինաստանի տնտեսությունը մինչև բարեփոխումները: Մինչև 1979 թվականը Չինաստանի տնտեսությունը կենտրոնացված պլանային էր: Երկրի տնտեսական արտադրանքի մեծ մասը ուղղորդվում ու վերահսկվում էր պետության կողմից: Պետությունը նշանակում էր արտադրության նպատակները, վերահսկում էր գները և վերաբաշխում էր ռեսուրսների մեծ մասը տնտեսության մեջ: 1950-ական թթ. չինական բոլոր տնային գյուղացիական տնտեսությունները վերածվեցին խոշոր համայնքների: 1960-1970-ական թթ. արագ արդյունաբերացմանը նպաստելու համար կառավարությունը իրականացրեց լայնածավալ ներդրումներ ֆիզիկական ու մարդկային կապիտալում: Որպես արդյունք արդեն 1978 թ. արդյունաբերական արտադրանքի մոտ 3/4-ը արտադրվում է կենտրոնացված պլանային ձեռնարկությունների կողմից՝ ըստ կենտրոնացված պլանային նպատակների: Մասնավոր ու օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններ գրեթե գոյություն չունեին: Միջազգային առևտուրը սահմանափակվում էր այն ապրանքներով, որոնք չէին կարող արտադրվել կամ ձեռք բերվել Չինաստանում:

Կենտրոնացված պլանային կառավարության իրականացրած քաղաքականության շնորհիվ Չինաստանի տնտեսությունը գործում էր անարդյունավետ: Վերջինիս հիմնական պատճառը այն էր, որ ձեռնարկությունների ու գյուղացիական տնտեսությունների համար եկամտի դրդապատճառները շատ աննշան էին, և գների ու արտադրության վերահսկումը տնտեսության մեջ մեծ շեղումներ էր առաջացնում: Չինաստանում բնակչության կենսամակարդակը նշանակալիորեն շատ ավելի ցածր էր, քան զարգացող մյուս երկրներում: Չինաստանի կառավարությունը ձեռնամուխ եղավ իրականացնելու աստիճանական բարեփոխումներ՝ հուսա-

լով, որ այդ բարեփոխումները զգալի կմեծացնեն տնտեսական աճն ու բնակչության կենսամակարդակը:

Տնտեսական բարեփոխումների կիրառումը: 1979 թվականից սկսած՝ Չինաստանը կիրառեց տնտեսական մի շարք բարեփոխումներ: Կենտրոնացված պլանային կառավարությունը գնային ու սեփականության դրդապատճառներ նախաձեռնեց գյուղացիական տնտեսությունների համար: Գյուղացիական տնտեսությունները հնարավորություն ստացան բերքի մի մասը վաճառելու ազատ շուկայում: Բացի դրանից՝ կառավարությունն օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, բարձր տեխնոլոգիական ապրանքների ներմուծման, արտահանման խթանման համար ափամերձ շրջաններում հաստատեց չորս հատուկ տնտեսական գոտիներ: Լրացուցիչ բարեփոխումները, որոնք իրականացվեցին փուլերով, նպատակ ունեին ապակենտրոնացնելու տնտեսական քաղաքականությունը որոշակի ոլորտներում, մասնավորապես՝ առևտրի: Մի շարք ձեռնարկությունների տնտեսական վերահսկումը տրվեց նահանգային ու տեղական կառավարություններին, որոնց թույլատրվեց գործել և մրցել ազատ շուկայական սկզբունքներով: Լրացուցիչ ափամերձ շրջաններ ու քաղաքներ դիտարկվեցին որպես բաց քաղաքներ ու զարգացման գոտիներ, ինչը նրանց հնարավորություն տվեց իրականացնելու ազատ շուկայական բարեփոխումներ ու առաջարկելու հարկային ու առևտրային դրդապատճառներ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար:

Չինաստանի տնտեսական աճը բարեփոխումներից հետո: Տնտեսական բարեփոխումներից հետո Չինաստանի տնտեսությունը աճում էր զգալիորեն ավելի արագ, քան մինչև բարեփոխումները (*տե՛ս Աղյուսակ 9.2.1*):

Աղյուսակ 9.2.1. Չինաստանի իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպերը 1960-2022 թթ.[171]

Ժամանակահատված	Տարեկան աճի միջին տեմպը %
1960-78 (մինչ բարեփոխումները)	5.4
1979-2007 (բարեփոխումներից հետո)	9.9
2008-2022	7.6

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 9.2.1*-ից, 1960-1978 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՆԱ-ի տարեկան աճի միջին տեմպը կազմել է 5.4 %: Բարեփոխումների ժամանակահատվածում (1979 թ. մինչև 2007) Չինաստանի ՀՆԱ-ի տարեկան աճի միջին տեմպը կազմել է 9.9 %: Տնտեսական բարեփոխումներից հետո, 1978 թվականի հետ համեմատած, արդեն 2007թ. Չինաստանի տնտեսությունն աճել է ավելի քան տասնհինգ անգամ, իսկ մեկ շնչին բաժին ընկող ՀՆԱ-ն, ինչը բնակչության կենսամակարդակի գնահատման ամենապարզ ձևն է, ավելի քան 11 անգամ: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամից հետո՝ 2008-2022 թթ. ընկած ժամանակահատվածում, Չինաստանի ՀՆԱ-ի տարեկան աճի միջին տեմպը կազմել է 7.6 %:

Այսպիսով՝ տնտեսական բարեփոխումներն ապահովեցին բարձր արդյունավետություն, ինչը խթանեց արտադրության աճն ու ավելացրեց ռեսուրսները՝ տնտեսության մեջ լրացուցիչ ներդրումներ կատարելու համար: Չինաստանի տնտեսական արագ աճը տնտեսագետները հիմնականում վերագրում են երկու հիմնական գործոնների.

1. լայնամասշտաբ կապիտալ ներդրումներ, ինչը հիմնականում ֆինանսավորվել է տեղական խնայողությունների ու օտարերկրյա ներդրումների միջոցով,

[171] Չինաստանի տնտեսությանը վերաբերող բոլոր տվյալները բերված կամ հաշվարկված են՝ հիմք ընդունելով Չինաստանի կառավարության պաշտոնական տվյալները:

2. արտադրողականության արագ աճ:

Պատմականորեն Չինաստանն աչքի է ընկել խնայողությունների բարձր մակարդակով: 1979 թ., երբ բարեփոխումները սկսեցին կիրառվել, տեղական խնայողությունների մակարդակը կազմում էր ՀՆԱ-ի 32 %-ը: Սակայն այս ժամանակաշրջանում խնայողությունների մեծ մասը ստեղծվել էր պետական ձեռնարկությունների կողմից, ինչն օգտագործվեց կենտրոնացված պլանային կառավարության կողմից տեղական ներդրումների համար: Տնտեսական բարեփոխումները, որոնք ներառում էին նաև տնտեսության ապակենտրոնացում, նպաստեցին երկրում տնային տնտեսությունների խնայողությունների զգալի աճին (այս ցուցանիշը ներկայումս կազմում է Չինաստանի տեղական խնայողությունների մակարդակի մոտ կեսը): Որպես արդյունք խնայողությունների մակարդակն արդեն 2007 թ. Չինաստանում կազմեց ՀՆԱ-ի մոտ 49 %-ը, և այս ցուցանիշով Չինաստանը դասվում է աշխարհում ամենաբարձր խնայողությունների մակարդակ ունեցող երկրների շարքին: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ խնայողությունների մակարդակը 2007 թ. կազմում էր ՀՆԱ-ի 17.5 %-ը, իսկ Ճապոնիայում՝ 29.1 %-ը: 2022 թ. տվյալներով խնայողությունների մակարդակը Չինաստանում կազմել է ՀՆԱ-ի 47.0-ը:

Որոշ տնտեսագետների կարծիքով արտադրողականության աճը մյուս հիմնական գործոնն է, որը նպաստեց Չինաստանի արագ տնտեսական աճին: Արտադրողականության աճը հիմնականում պայմանավորված էր ռեսուրսների վերաբաշխմամբ դեպի ավելի արդյունավետ օգտագործման ոլորտներ, մասնավորապես այնպիսի ոլորտներ, որոնք նախկինում վերահսկվում էին կենտրոնացված պլանային կառավարության կողմից (գյուղատնտեսություն, առևտուր և ծառայություններ): Օրինակ՝ գյուղատնտեսական բարեփոխումները խթանեցին արտադրության զարգացմանը՝ հնարավորության տալով աշխատուժին աշխատանք փնտրե-

լու ավելի արտադրողական արդյունաբերության ոլորտում: Չինաստանի տնտեսության ապակենտրոնացումը հնարավորություն տվեց ավելացնելու ոչ պետական ձեռնարկությունների թվաքանակը, որոնք հակված էին իրականացնելու ավելի արդյունավետ գործունեություն, քան նախկինում կենտրոնացված վերահսկում ունեցող ձեռնարկությունները: Բացի դրանից՝ տնտեսության մեծ մասը (հիմնականում արտահանման ոլորտը) ենթարկվում էր մրցակցային ուժերին: Տեղական ու նահանգային կառավարություններին թույլատրվում էր հաստատել տարբեր ձեռնարկություններ՝ ելնելով շուկայական սկզբունքներից: Ավելին՝ ՕՈՒՆ-ի հոսքը Չինաստան ապահովեց նոր տեխնոլոգիաներ ու գործընթացներ, որոնք իրենց հերթին խթանեցին արտադրողականության աճը:

Չինաստանի տնտեսության տնտեսական զարգացման մոդելը: Չինաստանի տնտեսական զարգացման մոդելը սոցիալիստական և շուկայական մոդելների խառնուրդ է: 1990-2022 թթ. ընկած ժամանակահատվածում Չինաստանի տնտեսական զարգացման մոդելի հիմնական առանձնահատկություններն էին.

- տնտեսական զարգացման բարձր տեմպերը (Աղյուսակ 9.2.1),
- տնտեսական աճի էքստենսիվ բնույթը[172],
- ՕՈՒՆ-ի մեծ ներհոսքը,
- արտադրողականության աճը[173],

[172] Չինաստանի տնտեսական աճի էքստենսիվ բնույթն առաջին հերթին պայմանավորված է բնակչության մեծ թվաքանակով, որը 2022 թ. տվյալներով կազմել է 1,41 մլրդ մարդ:

[173] Չինացի երիտասարդները կրթություն են ստանում կրթության բնագավառում մեծ հաջողությունների հասած առաջատար երկրներում: Մյուս կողմից՝ ՕՈՒՆ-ի հետ մեկտեղ Չինաստանը ձեռք է բերում լավագույն հմտություններ, փորձ ու տեխնոլոգիաներ:

- տնտեսության արտահանման կողմնորոշվածությունը, որը հատկապես շատ վառ արտահայտվեց 2000 թվականից հետո[174]:

Չինաստանն աշխարհում համարվում է խոշորագույն ագրարաարդյունաբերական տերություն: Այդ պատճառով պատահական չէ, որ Չինաստանի համար որպես գլխավոր ռազմավարական նպատակ հանդիսացավ համաշխարհային տնտեսության մեջ առաջատար դիրք գրավելը արդյունաբերական արտադրանքի մակարդակով: Չինաստանի տնտեսական աճի համար մեծ դեր է խաղում անընդհատ աճող ներքին պահանջարկը: Մյուս կողմից՝ Չինաստանի տնտեսական աճի աղբյուրներ են.

- աշխատանքային ռեսուրսները,
- բնական ռեսուրսները,
- ներդրումային բարենպաստ միջավայրը:

Չինաստանի տնտեսական աճի վրա մեծ ազդեցություն է ունենում նաև ազգային տնտեսության բաց քաղաքականությունը: Չինաստանը շատ բարձր աստիճանով ինտեգրված է համաշխարհային տնտեսությանը: Այսպես, արտաքին ապրանքաշրջանառություն/ՀՆԱ հարաբերակցությունը 2022 թ. տվյալներով կազմել է 35.2 %, ինչը Չինաստանի նման մեծ երկրի համար բավականին բարձր ցուցանիշ է:

Ներկայումս Չինաստանը փորձում է անցում կատարել տնտեսական աճի էքստենսիվ ձևից դեպի ինտենսիվ ձևի: Առաջ են քաշվել տնտեսության զարգացման գերակա ոլորտներն ըստ դրանց կարևորության աստիճանի.

- գյուղատնտեսություն, որի զարգացումը կարևոր նախապայման է հասարակության սոցիալական ու քաղաքական կայունության համար: Չնայած Չինաստանի տնտե-

[174] Եթե 1998 թ. տվյալներով Չինաստանն իր արտահանման ծավալով ետ էր մնում «Մեծ յոթնյակի» անդամ երկրներից, ապա 2010 թվականից ի վեր Չինաստանն արտահանման ծավալով աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը:

սության մեջ գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումները սկսվել են 1978 թ., սակայն մինչև օրս գյուղատնտեսության ոլորտում ներգրավված է ավելի քան 700 մլն մարդ (ամբողջ բնակչության կեսից ավելին),

- տնտեսության հիմնական ոլորտները, որոնց շարքին դասվում են էներգետիկան, տրանսպորտը, կապը (ենթակառուցվածք), մետաղագործությունը (ծանր արդյունաբերություն), քիմիական արդյունաբերությունը,
- տնտեսության հենքային ոլորտները, որոնց շարքին դասվում են մեքենաշինությունը, ավտոմոբիլաշինությունը, էլեկտրոնիկան, տեքստիլը, սննդի արդյունաբերությունը:

Վերջին շրջանում մեծ նշանակություն է ձեռք բերել բարձր տեխնոլոգիաների ոլորտը (էլեկտրոնիկա, աերոտիեզերական արդյունաբերություն):

Չնայած վերը նշված բոլոր հաջողություններին՝ Չինաստանի տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները շարունակում են մնալ.

- բնակչության մեծ թվաքանակը, ինչն առաջացնում է աշխատուժի ավելցուկ հատկապես ցածր որակավորում ունեցող աշխատուժի մոտ, և դժվարացնում է կառավարության կողմից զբաղվածության ապահովման գործընթացի իրականացումը,
- տարածքի անհավասարաչափ զարգացումը, որը ներկայումս շատ լուրջ խոչընդոտ է տնտեսության հետագա զարգացման համար: Երկրի առանձին տարածաշրջաններ (Հյուսիսարևմտյան ու Կենտրոնական տարածաշրջաններում գյուղատնտեսության ոլորտը հիմնականում թույլ է զարգացած) զգալի հետ են մնում ծովափնյա տարածաշրջաններից (Հարավարևելյան տարածաշրջան, որտեղ կենտրոնացած է գրեթե ամբողջ արդյունաբերական ներուժը),

- պետական ձեռնարկությունները, որոնք ապահովում են ամբողջ Չինաստանի արդյունաբերական արտադրանքի 1/3-ը, ծանր լարվածություն են ստեղծում Չինաստանի տնտեսության համար: Կառավարությունը ավելի արդյունավետ օժանդակում է ոչ եկամտաբեր պետական ձեռնարկություններին՝ եկամտաբեր ոլորտներից ռեսուրսներն ուղղելով դեպի այդ ձեռնարկություններ: Ավելին՝ շատ պետական ձեռնարկությունների վատ ֆինանսական դրությունը կառավարության համար դժվարացնում է առևտրային արգելքների նվազեցման գործընթացը, քանի որ դա կհանգեցնի շատ պետական ձեռնարկությունների սնանկացման,
- բանկային համակարգը մի շարք լուրջ խնդիրներ ունի՝ պայմանավորված պետական ձեռնարկությունների օժանդակմամբ ու շուկայական սկզբունքներով միայնակ գործելու ձախողմամբ: Չինաստանի բանկային համակարգը կարգավորվում ու վերահսկվում է կենտրոնական կառավարության կողմից, որը հաստատում է տոկոսադրույքները և փորձում է բաշխել վարկերը չինական պետական ձեռնարկությունների միջև: Կենտրոնական կառավարությունն օգտագործում է բանկային համակարգը՝ պետական ձեռնարկություններին օժանդակելու համար՝ ստիպելով պետական բանկերին տրամադրել ցածր տոկոսադրույքով վարկեր, առանց որի պետական ձեռնարկությունների մեծ մասը կսնանկանա: Ներկայումս պետական բանկերի կողմից տրամադրվող վարկերի 50 %-ից ավելին բաժին է ընկնում պետական ձեռնարկություններին, բացի դրանից՝ վարկերի մեծ մասը հետ չեն վերադարձվում: Չինաստանի բանկային համակարգի համար կոռուպցիան մեկ այլ խնդիր է, երբ հաճախ վարկերը տրամադրվում են քաղաքական կապերի հիման վրա: Այս

համակարգը ստեղծում է լայնածավալ անարդյունավետություն տնտեսության մեջ, քանի որ խնայողությունները չեն բաշխվում՝ ամենաբարձր հնարավոր հատույց ստանալու համար:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Չինաստանի տնտեսությանն իր կառուցվածքով ագրարային-արդյունաբերական է: Այսպես, 2022 թ. տվյալներով գյուղատնտեսությանը բաժին է ընկել ՀՆԱ-ի 7.3 %-ը, արդյունաբերությանը՝ 39.9 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 52.8 %-ը: Ինչպես նկատում ենք, 2002-2022 թթ. ընկած ժամանակահատվածում զգալի նվազել են գյուղատնտեսության ու արդյունաբերության տեսակարար կշիռները՝ հօգուտ ծառայությունների ոլորտի (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.2.3*):

Գյուղատնտեսություն: Չինաստանի տնտեսության մեջ զգալի մեծ է եղել և շարունակում է մնալ այդպիսին գյուղատնտեսության ոլորտի դերը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, գյուղատնտեսության ոլորտի զարգացումն առաջին հերթին կոչված է ապահովելու հասարակության սոցիալական ու քաղաքական կայունություն: Չնայած այն հանգամանքին, որ Չինաստանն իր գյուղատնտեսական արտադրանքի թողարկման ծավալով (մոտ 1.3 տրիլիոն դոլար) աշխարհում գրավում է առաջին տեղը, տարածքի միայն 13 %-ը է պիտանի գյուղատնտեսության զարգացման համար: Չինաստանի գյուղատնտեսության մեջ գերակշռում է բուսաբուծությունը, իսկ անասնապահությանը բաժին է ընկնում ամբողջ գյուղատնտեսական արտադրանքի մոտ 30 %-ը: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ արդեն 1990-ական թթ. վերջին Չինաստանում հաղթահարվել էր պարենամթերքի ու առաջին անհրաժեշտության ապրանքների պակասուրդի հիմնախնդիրը:

Արդյունաբերություն: Չինաստանի տնտեսության տնտեսական աճի բարձր տեմպերը հիմնականում ապահովվել են վերամշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտի զար-

գացման շնորհիվ: Վերամշակող արդյունաբերության ամենադինամիկ զարգացող ոլորտը մեքենաշինությունն է, որին ներկայումս բաժին է ընկնում ամբողջ վերամշակող արդյունաբերության ավելի քան 30 %-ը: Այս ոլորտում հատկապես արագ տեմպերով զարգացել են տրանսպորտային մեքենաշինությունն ու էլեկտրատեխնիկայի արտադրությունը: Այս ոլորտներում Չինաստանն ակտիվորեն կիրառում է օտարերկրյա տեխնոլոգիաներ, ինչն էլ ավելի է բարձրացնում ոլորտի արդյունավետությունը: Այսպես, 2022 թ. տվյալներով Չինաստանում արտադրվել է տարեկան 27.0 մլն ավտոմեքենա, ինչը կազմում է համաշխարհային արտադրության 31.7 %-ը: Ավտոմեքենաների տարեկան արտադրության քանակով Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը[175]: Չինաստանը համաշխարհային տնտեսության մեջ առաջատար տեղ է գրավում նաև կենցաղային էլեկտրոնիկայի արտադրությամբ: Այսպես, 2018 թ. տվյալներով Չինաստանի էլեկտրոնիկայի արդյունաբերության եկամուտը կազմել է մոտ 1.8 տրիլիոն ԱՄՆ դոլար[176]: Չինաստանի տնտեսության մեջ վերամշակող արդյունաբերության զարգացող մյուս ոլորտը քիմիական արդյունաբերություն է, որին բաժին է ընկնում ամբողջ վերամշակող արդյունաբերության ավելի քան 12.0 %-ը: Չինաստանի արդյունաբերության մեջ մեծ տեղ է զբաղեցրել և շարունակում է զբաղեցնել տեքստիլ արդյունաբերությունը, որին բաժին է ընկնում ամբողջ վերամշակող արդյունաբերության ավելի քան 9.0 %-ը: Չինաս-

[175] 2022 թ. տվյալներով ավտոմեքենաների տարեկան արտադրությամբ առաջատար տասը երկրներն էին Չինաստանը (27.0 մլն), ԱՄՆ-ն (10.0 մլն), Ճապոնիան (7.8 մլն), Հնդկաստանը (5.4 մլն), Հարավային Կորեան (3.7 մլն), Գերմանիան (3.6 մլն), Մեքսիկան (3.5 մլն), Բրազիլիան (2.3 մլն), Իսպանիան (2.2 մլն) ու Թայլանդը (1.8 մլն):

[176] 2018 թ. տվյալներով էլեկտրոնիկայի արդյունաբերության ոլորտում վաճառքի ծավալներով առաջատար 10 երկրներն են Չինաստանը (1.8 տրիլիոն դոլար), ԱՄՆ (724 մլրդ դոլար), Ճապոնիան (323 մլրդ դոլար), Հարավային Կորեան (212 մլրդ դոլար), Գերմանիան (148 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիան (97 մլրդ դոլար), Ֆրանսիան (81 մլրդ դոլար), Հնդկաստանը (79 մլրդ դոլար), Բրազիլիան (62 մլրդ դոլար) ու Ռուսաստանը (54 մլրդ դոլար):

տանի տեքստիլ արդյունաբերությունը շատ մրցունակ է համաշխարհային տնտեսության մեջ և տեքստիլի արտադրության ու արտահանման ծավալներով Չինաստանն աշխարհում զբաղեցնում է առաջին տեղը:

Ծառայությունների ոլորտ: Վերջին տարիներին զգալի տեմպերով զարգանում է Չինաստանի ծառայությունների ոլորտը, և այստեղ առանձնանում են զբոսաշրջությունն ու ֆինանսական ծառայությունները: Այսպես, 2019 թ. տվյալներով Չինաստանն այցելած զբոսաշրջիկների թվով (ավելի քան 65.7 մլն մարդ) աշխարհում գրավել է չորրորդ տեղը՝ Ֆրանսիայից (89.4 մլն մարդ), Իսպանիայից (83.5 մլն մարդ) և ԱՄՆ-ից (79.3 մլն մարդ) հետո: Զբոսաշրջությունն ապահովել է 46.6 մլրդ դոլար կամ ամբողջ արտահանման 1.8 %-ը: Վերջին տարիներին Չինաստանը զգալի հաջողություններ է գրանցել ծառայությունների արտահանման գործընթացում: 2022 թ. ծառայությունների արտահանման ծավալով (424,0 մլրդ դոլար) Չինաստանն աշխարհում զբաղեցրել է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (928,5 մլրդ դոլար) ու Մեծ Բրիտանիայից (494,4 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (465,0 մլրդ դոլար) Չինաստանն աշխարհում զբաղեցրել է երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (696,7 մլրդ դոլար) հետո:

Արտաքին տնտեսական կապերը: Չինաստանի տնտեսության առանձնահատկությունն այն է, որ զգալիորեն աճում է տնտեսության կախվածությունն արտաքին առևտրից: Այսպես, 1998-2007 թթ. արտաքին առևտրաշրջանառության բաժինը ՀՆԱ-ում 32.8 %-ը աճել է մինչև 38.5 %, իսկ 2022 թ. տվյալներով այս ցուցանիշը կազմել է 35.2 %, ինչը Չինաստանի նման մեծ երկրի համար բավականին բարձր ցուցանիշ է:

Այստեղ հարկ է նշել, որ չնայած բնակչության մեծ թվաքանակին և ներքին շուկայում պահանջարկի անընդհատ աճին՝ Չինաստանի ներքին շուկան դեռևս չի համարվում բավականին տարողունակ, քանի որ բնակչության մեծ մասի եկամուտների մա-

կարդակը զգալի ցածր է: Ինչպես արդեն նշել ենք, 2022 թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն Չինաստանում կազմել է 11,560 ԱՄՆ դոլար: Այդ պատճառով Չինաստանի տնտեսական զարգացումը հիմնականում կենտրոնացած է արտահանման կողմնորոշում ունեցող ոլորտների զարգացման վրա:

2022 թ. տվյալներով Չինաստանի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 6,308 մլրդ դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 3,593 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 2,715 մլրդ դոլար: Չինաստանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է 877,6 մլրդ դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 9.2.4*): 2004 թվականից սկսած՝ Չինաստանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը զգալի տեմպերով սկսել է աճել: Այսպես, եթե 2004 թ. Չինաստանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է 32.0 մլրդ դոլար, ապա արդեն 2008 թ. այն կազմել է 299 մլրդ դոլար: 2009-2011 թթ. առևտրային հաշվեկշռի ավելցուկի նվազումը հիմնականում ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի արդյունք էր: 2012 թվականից սկսած՝ առևտրային դրական հաշվեկշիռը կրկին մեծ տեմպերով սկսել է աճել՝ 2015 թ. կազմելով 594.0 մլրդ դոլար: 2016-2018 թթ. ընկած ժամանակահատվածում Չինաստանի առևտրային դրական հաշվեկշիռը կրճատվել է՝ 2018 թ. կազմելով 359.2 մլրդ դոլար: Այնուհետև՝ 2019 թվականից սկսած, Չինաստանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը կրկին ձեռք է բերել աճի միտում՝ 2022 թ. կազմելով 877,6 մլրդ դոլար:

Ապրանքների արտահանման ծավալով 2022 թ. Չինաստանն աշխարհում գրավել է առաջին, իսկ ծառայությունների արտահանման ծավալով (424,0 մլրդ դոլար)՝ երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից (928,5 մլրդ դոլար) ու Մեծ Բրիտանիայից (494,4 մլրդ դոլար) հետո: Այստեղ հարկ է նշել, որ 2021 թվականից ի վեր Չինաստանը ծառայությունների արտահանման ծավալով առաջ է անցել Գերմանիայից:

Էժան աշխատուժի ու հանքահումքային ռեսուրսների առկայության պայմաններում Չինաստանը ցածրարժեք և աշխատատար արտադրությունների գծով վերածվել է բավականին մրցունակ երկրի միջազգային մակարդակում: Որպես արդյունք արդյունաբերական արտադրանքը կազմում է Չինաստանի առևտրի զգալի մասը: Չինաստանի ներմուծման մեծ մասը, օրինակ՝ հումք, բաղադրիչներ, մասեր ու սարքավորումներ, օգտագործվում է՝ արտահանման համար արտադրանք թողարկելու համար: Օրինակ՝ մանածագործական իրեր ու հագուստ արտադրելու համար Չինաստանը ներմուծում է բամբակ ու մանածագործական արտադրանք թողարկելու համար սարքավորումներ: Չինաստանի ներմուծման մի զգալի մաս կազմում են բաղադրիչներն ու մասերը, որոնք հավաքվում են չինական ձեռնարկություններում, հետո՝ արտահանվում: Այդպիսի ապրանքներ են կենցաղային էլեկտրոնիկայի ապրանքներն ու համակարգիչները:

Չինաստանի արտահանման հիմնական գործընկեր երկրներն են ԱՄՆ-ն (16.2 %), Հոնկոնգը (8.3 %), Ճապոնիան (4.9 %), Հարավային Կորեան (4.6 %) և Վիետնամը (4.1 %)[177]: Այստեղ հարկ է նշել, որ 2007 թվականի հետ համեմատած՝ Չինաստանի արտահանման հիմնական գործընկեր երկրների կառուցվածքն ու տեսակարար կշիռները գրեթե չեն փոփոխվել՝ բացառությամբ այն հանգամանքի, որ զգալիորեն ավելացել են Հնդկաստանի (3.2 %) ու ՌԴ (2.1 %) տեսակարար կշիռները: Չինաստանի արտահանման գլխավոր ապրանքախմբերն են մեքենաներն ու սարքավորումները, տվյալներ մշակող մեքենաները,

[177] Չինաստանի առևտրի տվյալները հաճախ զգալի տարբերվում են իր գլխավոր գործընկեր երկրների տվյալներից: Դա առաջանում է այն պատճառով, որ Չինաստանի առևտրի զգալի մասը (և՛ արտահանում, և՛ ներմուծում) անցնում է Հոնկոնգով, որը 1997 թ. հուլիսից մտնում է Չինաստանի կազմի մեջ, սակայն շատ երկրների կողմից (ներառյալ Չինաստանի և ԱՄՆ-ի) դիտարկվում է որպես առանձին մաքսային գոտի:

էլեկտրատեխնիկական ապրանքները, տեքստիլ արտադրանքը, կահույքը ու հեռահաղորդակցման միջոցները:

Ապրանքների ներմուծման ծավալով (2,715 մլրդ դոլար) Չինաստանը 2022 թ. աշխարհում զբաղեցրել է երկրորդ տեղը ԱՄՆ-ից (3,375 մլրդ դոլար) հետո, իսկ ծառայությունների ներմուծման ծավալով (465,0 մլրդ դոլար)՝ կրկին երկրորդ տեղը ԱՄՆ-ից (696,7 մլրդ դոլար) հետո: Վերջին տարիներին Չինաստանի տնտեսության մեջ նկատվել է ծառայությունների ներմուծման ծավալների զգալի աճ: Այստեղ համեմատության համար նշենք, որ, օրինակ 2007 թ. ծառայությունների ներմուծման ծավալով (129.1 մլրդ դոլար) Չինաստանը համաշխարհային տնտեսության մեջ գրավում էր վեցերորդ տեղը ԱՄՆ-ից (372.5 մլրդ դոլար), Գերմանիայից (259.4 մլրդ դոլար), Մեծ Բրիտանիայից (214.5 մլրդ դոլար), Ֆրանսիայից (169.4 մլրդ դոլար) ու Ճապոնիայից (158.5 մլրդ դոլար) հետո:

Չինաստանի ներմուծման գլխավոր գործընկեր երկրներն են Հարավային Կորեան (7.3 %), Ճապոնիան (6.7 %), ԱՄՆ (6.5 %), Ավստրալիան (5.2 %), ՌԴ-ն (4.2 %) և Բրազիլիան (4.1 %): Ինչպես և արտահանման դեպքում, այնպես էլ ներմուծման դեպքում, 2007 թվականի հետ համեմատած, Չինաստանի ներմուծման հիմնական գործընկեր երկրների կառուցվածքն ու տեսակարար կշիռները գրեթե չեն փոփոխվել, միայն նկատելիորեն ավելացել են ՌԴ և Բրազիլիայի տեսակարար կշիռները: Չինաստանի ներմուծման գլխավոր ապրանքախմբերն են մեքենաները ու սարքավորումները, վառելիքը, հեղուկ բյուրեղյա էկրանները, օպտիկական ու բժշկական սարքավորումները, քիմիական ապրանքները, պղինձը և պողպատը:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Տարածքով ու բնակչության թվաքանակով ո՞ր տեղն է զբաղեցնում Չինաստանն աշխարհում:
2. Չինաստանի տնտեսության զարգացումն ի՞նչ առանձնահատկություն ունի:
3. Քանի՞ մասից է կազմված Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը
4. ՀՆԱ-ի ծավալով Չինաստանն աշխարհում ո՞ր տեղն է զբաղեցնում:
5. Ինչպիսի՞ն է Չինաստանի առևտրային հաշվեկշիռը և զարգացման ինչպիսի՞ միտում ունի:
6. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ուներ Չինաստանի տնտեսությունը մինչև բարեփոխումները և ինչպիսի՞ն էր բարեփոխումներից հետո:
7. Ի՞նչ գործոններով է պայմանավորված Չինաստանի տնտեսության արագ աճը:
8. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի Չինաստանի տնտեսության զարգացման մոդելը:
9. Որո՞նք են Չինաստանի տնտեսության զարգացման գերակա ոլորտները:
10. Ո՞ր գործոններն են Չինաստանի տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները:
11. Ինչպիսի՞ն է Չինաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը:
12. Ապրանքների արտահանման ու ներմուծման ծավալներով Չինաստանն աշխարհում ինչպիսի՞ դիրք է զբաղեցնում:
13. Ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալներով Չինաստանն աշխարհում ինչպիսի՞ դիրք է զբաղեցնում:

Հավելված

Աղյուսակ 9.2.1. Չինաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2002-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Իրական ՀՆԱ (տրիլի-ոն դոլար)[178]	3.9	4.2	4.9	5.6	6.2	6.8	7.5	8.2	8.9	9.6	10.0	11.0	11.8	12.6	13.4	14.2	14.6	15.8	16.3
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	10.1	11.4	12.7	14.2	9.7	9.4	10.6	9.6	7.9	7.8	7.4	7.0	6.8	6.9	6.7	5.9	2.3	8.4	3
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազար դո-լար)	3.0	3.4	3.8	4.3	4.7	5.1	5.6	6.1	6.6	7.0	7.5	8.0	8.6	9.1	9.7	10.2	10.4	11.2	11.5
Գնաճի մակարդակ, (CPI), %	3.8	1.8	1.6	4.8	5.9	-0.7	3.2	5.6	2.6	2.6	1.9	1.4	2.0	1.6	2.1	2.9	2.4	1.0	2.0
Գործազր-կության մա-կարդակ[179], %	4.5	4.5	4.4	4.3	4.6	4.7	4.5	4.5	4.6	4.6	4.6	4.6	4.5	4.4	4.3	4.6	5	5.1	4.9

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[178] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

[179] Գործազրկության մակարդակը ներկայացված է քաղաքների համար և արտահայտում է քաղաքների գործազրկության միջին մակարդակ, իսկ գյուղական շրջաններում գործազրկության մակարդակը զգալի մեծ է (առանձին դեպքերում որոշակի տարածաշրջաններում այն գերազանցում է 20.0 %-ը):

Աղյուսակ 9.2.2. Չինաստանի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2002-2021 թթ.[180], %

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	49.1	46.9	44.8	42.6	40.8	39.6	38.1	36.7	34.8	33.6	31.4	29.5	28.6	27.7	27.0	26.1	25.3	24.9	24.4
Արդյունաբերություն	21.6	22.5	23.8	25.2	26.8	27.2	27.8	28.7	29.5	30.3	30.1	29.9	29.2	28.8	28.1	28.3	27.4	27.7	28.2
Ծառ. ոլորտ	29.3	30.6	31.4	32.2	32.4	33.2	34.1	34.6	35.7	36.1	38.5	40.6	42.2	43.5	44.9	45.6	47.3	47.4	47.4

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 9.2.3. Չինաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2002-2022թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղատնտեսություն	12.9	11.6	10.6	10.2	10.2	9.6	9.3	9.2	9.1	8.9	8.6	8.4	8.1	7.5	7.0	7.1	7.7	7.2	7.3
Արդյունաբերություն[181]	45.9	47.0	47.6	46.9	47.0	46.0	46.5	46.5	45.4	44.2	43.1	40.8	39.6	39.9	39.7	38.6	37.8	39.3	39.9
Ծառ. ոլորտ[182]	41.2	41.3	41.8	42.9	42.9	44.4	44.2	44.3	45.5	46.9	48.3	50.8	52.4	52.7	53.3	54.3	54.5	53.5	52.8

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[180] Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների Չինաստանի տնտեսության համար առկա է մինչև 2021 թվականը:

[181] Արդյունաբերությունը չի ներառում շինարարությունը:

[182] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

Աղյուսակ 9.2.4. Չինաստանի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահանում	762	969	1,220	1,431	1,202	1,578	1,898	2,049	2,209	2,342	2,273	2,097	2,271	2,494	2,498	2,590	3,361	3,593
Ներմուծում	659	791	956	1,132	1,005	1,396	1,743	1,818	1,949	1,959	1,679	1,587	1,840	2,134	2,068	2,055	2,675	2,715
Առևտրային հաշվ.	103	178	264	299	197	182	155	231	260	383	594	510	431	359	430	535	686	878

Աղբյուր՝ International Trade Centre:

Գլուխ 10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ

10.1. Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսության ընդհանուր բնութագիրը

Մերձավոր Արևելքի դերը համաշխարհային տնտեսության մեջ առանձնանում է նրանով, որ այս տարածաշրջանն աչքի է ընկնում ածխաջրածնային հարուստ ռեսուրսներով և աշխարհում ունի ռազմավարական նշանակություն ունեցող աշխարհագրական կարևոր դիրք: Այս տարածաշրջանի բոլոր երկրները, բացի Իսրայելից ու Կիպրոսից, ունեն զարգացող երկրի կարգավիճակ:

Արևմտյան Ասիան հարուստ է բնական հանածոներով, մասնավորապես նավթի ու գազի խոշոր պաշարներով: Տարածաշրջանի մի շարք երկրներ Նավթ արտահանող երկրների կազմակերպության (Organization for Petroleum Exporting Countries, OPEC) հիմնադիր անդամներ են[183]: 2022 թ. տվյալներով նավթի համաշխարհային պաշարներում (1,564 մլրդ բարել[184]) OPEC-ի անդամ երկրների բաժինը կազմում էր մոտ 79.5 % (1,243 մլրդ բարել), իսկ բնական գազի համաշխարհային պաշարներում՝ 35.8 % (75.1 տրիլիոն խորանարդ մետր): Տարածաշրջանն ապահովում է նավթի համաշխարհային արտահանման մոտ կեսը և նավթաքիմիական արտադրության ապրանքների 25 %-ը: *Գծապատկերներ 10.1.1 և 10.1.2*-ում ներկայացված են OPEC-ի անդամ երկրներին բաժին ընկնող նավթի համաշխարհային պաշարներն ու ար-

[183] Համաշխարհային շուկայում նավթի գների նվազմանը դիմակայելու նպատակով 1960 թ. Բաղդադում կայացած համաժողովի հիման վրա հիմնադրվեց OPEC-ը: Հիմնադիր երկրներն են Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան ու Վենեսուելան: Հետագայում անդամակցել են Քաթարը (1961-2019 թթ.), Ինդոնեզիան (1962-2009 թթ.), Լիբիան (1962 թ.), Արաբական Միացյալ Էմիրությունները (1962 թ.), Ալժիրը (1969 թ.), Նիգերիան (1971 թ.), Էկվադորը (1973-1992 թթ., 2007-2020 թթ.), Գաբոն (1975-1995 թթ., 2016 թ.), Անգոլան (2007 թ.), Գվինեան (2017 թ.) ու Կոնգոն (2018 թ.): Այսպիսով՝ 2022 թ. մարտի դրությամբ կազմակերպությանն անդամակցում էր 13 երկիր:

[184] Մեկ բարել նավթը հավասար է 159.6 լիտրի:

դյունահանման ծավալները 2022 թ.: Այստեղ հարկ է նշել, որ նավթի պաշարներով ինչպես OPEC-ի անդամ երկրներում, այնպես էլ աշխարհում առաջատար երեք երկրներն են Վենեսուելան (303.2 մլրդ բարել), Սաուդյան Արաբիան (267.2 մլրդ բարել) և Իրանը (208.6 մլրդ բարել), իսկ Կանադան (169.7 մլրդ բարել) Ռուսաստանն (80 մլրդ բարել) ու ԱՄՆ-ն (55.0 մլրդ բարել) զբաղեցրել են համապատասխանաբար չորրորդ, ութերորդ ու տասնմեկերորդ տեղերը:

Գծապատկեր 10.1.1. OPEC-ի անդամ երկրներին բաժին ընկնող նավթի պաշարները 2022 թ. (%)



Աղբյուր՝ Organization for Oil Exporting Countries, OPEC Database, 2022:

Գծապատկեր 10.1.2. OPEC-ի անդամ երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալները 2022 թ. (մլն բարել օրական)



Աղբյուր՝ EIA, Annual Energy Outlook 2022:

Նավթի արդյունահանման ծավալներով 2022 թ. տվյալներով աշխարհում առաջին տեղը զբաղեցրել է ԱՄՆ (11.8 մլն բարել օրական), երկրորդ տեղը՝ Սաուդյան Արաբիան (10.5 մլն բարել օրական), իսկ Ռուսաստանը (9.7 մլն բարել օրական) զբաղեցրել է երրորդ տեղը: 2014 թվականից ի վեր այս երեք երկրներն արդյունահանում են՝ օգտագործելով գրեթե իրենց ամբողջ արտադրական հզորությունը: Ավելին՝ նավթի արտահանման ծավալներով աշխարհում առաջին տեղը զբաղեցնում է Սաուդյան Արաբիան (7.3 մլն բարել օրական), երկրորդ տեղը՝ ՌԴ-ն (4.8 մլն բարել օրական), երրորդ տեղը՝ ԱՄՆ-ն (3.6 մլն բարել օրական):

Գծապատկեր 10.1.3. Գազի համաշխարհային պաշարներով առաջատար 10 երկրները 2022 թ. (տրիլիոն խորանարդ մետր)



Աղբյուր՝ EIA, Annual Energy Outlook 2022:

Տարածաշրջանը շատ կարևոր դեր է խաղում նաև բնական գազի համաշխարհային արդյունաբերության մեջ: Բնական գազի համաշխարհային պաշարների (210 տրիլիոն խորանարդ մետր) մոտ 35.8 %-ը (75.1 տրիլիոն խորանարդ մետր) բաժին է ընկնում OPEC անդամ երկրներին, մասնավորապես՝ Իրանին (34 տրիլիոն խորանարդ մետր), Քաթարին (24.5 տրիլիոն խորանարդ մետր), Սաուդյան Արաբիային (9.5 տրիլիոն խորանարդ մետր) ու ԱՄԷ-ին (8.2 տրիլիոն խորանարդ մետր) (*տե՛ս Գծապատկեր*

10.1.3)[185]: Գազի արդյունահանման ծավալներով 2022թ. աշխարհում առաջին տեղը զբաղեցրել է ԱՄՆ (1 մլրդ խորանարդ մետր), երկրորդ տեղը՝ ՌԴ-ն (630 մլն խորանարդ մետր), իսկ բնական գազի արտահանման ծավալով կրկին առաջին տեղում է ԱՄՆ (195.8 մլն խորանարդ մետր), իսկ երկրորդ տեղում՝ ՌԴ-ն (184 մլն խորանարդ մետր):

Այսպիսով՝ Արևմտյան Ասիա տարածաշրջանի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այստեղ գտնվում են նավթի ու գազի խոշոր պաշարներ: Այդ պատճառով տարածաշրջանի գրեթե բոլոր երկրները նավթ ու գազ արդյունահանող ու արտահանող երկրներ են կամ էլ ինչ-որ կերպ կապված են դրա հետ: Տարածաշրջանի համեմատաբար զարգացած երկրները կարողացել են արդյունավետորեն օգտագործել նավթի ու գազի արտահանումից ստացվող եկամուտները, իսկ մինչև օրս համեմատաբար աղքատ երկրները չեն կարողացել նավթի գործոնը արդյունավետ օգտագործել՝ հօգուտ իրենց տնտեսությունների զարգացման: Այսպես, 2022 թ. տվյալներով, օրինակ, Իրանում մեկ շնչին բաժին ընկնող, հաստատուն գներով արտահայտված ՀՆԱ-ն կազմել է 5,500 դոլար, իսկ Իրաքում՝ 4,335 դոլար[186]: Մյուս կողմից՝ տարածաշրջանի տնտեսական զարգացման գործընթացում ազդեցություն է ունեցել ոչ միայն տնտեսության կառավարման համակարգը, այլ նաև բնակչության թվաքանակը: Մերձավոր ու Միջին Արևելքի ամենահարուստ երկրների բնակչության թվաքանակը համեմատաբար փոքր է, և համապատասխանաբար ՀՆԱ-ի մեծ ցուցանիշի դեպքում դրանց բնութագրական է նաև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի բարձր ցուցանիշ: Այսպես, 2022 թ. տվյալներով, օրինակ, Քաթարի բնակչությունը կազմել է 2.8 մլն մարդ, իսկ մեկ

---

[185] Գազի համաշխարհային պաշարներով աշխարհում առաջատար է Ռուսաստանի Դաշնությունը (47.8 տրիլիոն խորհանարդ մետր կամ համաշխարհային պաշարների մոտ 26 %-ը):

[186] 2018 թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն (2015 թ. գներով արտահայտված) կազմել է համապատասխանաբար 5,203 և 4,792 դոլար:

շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 63,428 դոլար, Քուվեյթի բնակչությունը կազմել է 4.2 մլն մարդ, մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 26,917 դոլար):

Մինչև 1950-ական թվականները Արևմտյան Ասիան աշխարհի բավական հետամնաց տարածաշրջաններից մեկն էր: Մյուս կողմից՝ Արևմտյան Ասիայի երկրներից Իրանն ու Իրաքը աշխարհի ամենահին քաղաքակրթության կենտրոններից են: Այս երկրները, բացի էներգակիրներից, հարուստ են նաև երկաթի հանքաքարի, բրոնզի զգալի պաշարներով: Տարածաշրջանում կյանքը զգալի բարելավվեց նավթի հայտնաբերումից հետո: Ավելին՝ Մեծ Բրիտանիայից անկախություն ձեռք բերելուց հետո՝ սկսած 1960-ական թվականներից, Պարսից ծոցի երկրների տնտեսությունը սկսեց ծաղկել:

Արևմտյան Ասիայի երկրների տնտեսական զարգացման մյուս առանձնահատկությունն այն է, որ երկրի տնտեսական կյանքում համեմատաբար մեծ է պետության դերը: Հարցն այն է, որ անկախության հռչակումից հետո պետությունը իր վերահսկողության տակ վերցրեց նավթի ու գազի արդյունահանումը, ենթակառուցվածքը (նավահանգիստներ, գազամուղներ, կապ, հեռահաղորդակցություն), սոցիալական ենթակառուցվածքը (կրթություն, առողջապահություն), ֆինանսների ոլորտը և արտաքին առևտուրը:

1960 թ. տարածաշրջանի մի շարք երկրներ ստեղծեցին Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (Organization for Petroleum Exporting Countries), որպեսզի այդ ոլորտում մշակեն համատեղ քաղաքականություն և նավթի համաշխարհային շուկայում թելադրեն իրենց պայմանները զարգացած երկրներին:

Տարածաշրջանի երկրների տնտեսության կախվածությունը նավթից այնքան էլ բարենպաստ գործոն չէ զարգացման համար, քանի որ նավթ արտահանող երկրները միաժամանակ խիստ կախվածության մեջ են գտնվում նավթի համաշխարհային շու-

կայի զարգացումներից: Այդ պատճառով պատահական չէ, որ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները փորձում են տարբերակել իրենց արդյունաբերության կառուցվածքը և թուլացնել իրենց տնտեսությունների կախվածությունը նավթի գործոնից: Այդ նպատակով տարածաշրջանում սկսել է զարգանալ նավթաքիմիական ու մետաղագործական (էներգակիր ոլորտներ) արդյունաբերությունները: Ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում այնպիսի ոլորտները, ինչպիսիք են Էլեկտրոնիկայի արտադրությունն ու տեքստիլ արդյունաբերությունը: Զգալի տեմպերով զարգանում է ծառայությունների ոլորտը, մասնավորապես՝ զբոսաշրջությունը, վերաարտահանումը, ֆինանսական ու տրանսպորտային ծառայությունները: Տարածաշրջանի առավել զարգացած երկրները՝ ԱՄԷ-ն, Քուվեյթն ու Սաուդյան Արաբիան, ամենաառաջատար տեխնոլոգիաների հիման վրա աստիճանաբար անցում են կատարում գիտատար ոլորտների զարգացմանը:

Արևմտյան Ասիան համաշխարհային տնտեսության մեջ առանձնանում է նաև իր քաղաքական անկայունությամբ ու ռազմական կոնֆլիկտների առաջացման վտանգով: Այդ պատճառով տարածաշրջանի երկրների ՀՆԱ-ի զգալի մասը ծախսվում է ինքնապաշտպանության վրա:

Այսպիսով՝ կարելի նշել, որ Արևմտյան Ասիայի երկրների տնտեսական զարգացման հաջողությունը կախված է եղել և դեռ շարունակվում է կախված մնալ նավթից: Դրա հետ մեկտեղ, քանի որ համաշխարհային շուկայում բավական մեծ է նավթի պահանջարկից կախվածությունը, իսկ նավթ վաճառողների թիվը ավելանում է, ապա նավթի գներն ու նավթ արտահանողների եկամուտները աստիճանաբար նվազում են: Այդ պատճառով Արևմտյան Ասիայի երկրները գտնվում են տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորման գործընթացում. նավթի արտահանումից ստացված միջոցները փորձում են ուղղել ազգային տնտեսության նոր, ոչ ավանդական ոլորտներ:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ինչո՞վ են աչքի ընկնում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները համաշխարհային տնտեսության մեջ:
2. Ի՞նչ է OPEC-ը, ե՞րբ է հիմնադրվել և քանի՞ անդամ ունի:
3. Նավթի պաշարներով որո՞նք են աշխարհի երեք առաջատար երկրները:
4. Գազի պաշարներով որո՞նք են աշխարհի երեք առաջատար երկրները:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ինչպիսի՞ն է պետության դերը: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
6. Ի՞նչն է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների տնտեսության հիմնական խնդիրը:

10.2. Թուրքիայի տնտեսությունը

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Թուրքիայի գրաված տարածքի առանձնահատկությունը այն է, որ զբաղեցնում է թե՛ Ասիայի, և թե՛ Եվրոպայի մեծ ու փոքր հատվածները: Թուրքիայի տարածքը կազմում է 779 հազ կմ^2, իսկ բնակչությունը 2022 թ. տվյալներով կազմել է 84.9 մլն մարդ: Թուրքիայի եվրոպական մասն ասիականից բաժանվում է առևտրատնտեսական ու ռազմավարական միջազգային նշանակություն ունեցող ուղիով՝ Դարդանելի և Բոսֆորի նեղուցներով, Մարմարի ծովով:

Թուրքիան 1945 թ. անդամակցել է ՄԱԿ-ին, իսկ 1952 թ. դարձել է Հյուսիսատլանտյան կազմակերպության (North Atlantic Treaty Organization, NATO) անդամ[187]: 1964 թ. Թուրքիան Եվրոպայի խորհրդի պաշտոնական անդամ է: 1995 թ. Թուրքիան ԱՀԿ հիմնադիր անդամ է:

2005 թ. հոկտեմբերի 3-ին սկսվեց Թուրքիայի ֆորմալ անդամակցության գործընթացը ԵՄ-ին: Թուրքիան պետք է իրականացներ տնտեսական, ինստիտուցիոնալ ու քաղաքական բարեփոխումներ, որպեսզի բավարարեր ԵՄ անդամակցության պահանջները: Անդամակցության գործընթացը դանդաղ էր ընթանում, և հավանաբար բավականին երկար ժամանակ կպահանջվեր՝ այն ավարտին հասցնելու համար, քանի որ անդամակցության համար պահանջվող 35 գլուխներից բաղկացած պարտավորություններից 2016 թ. դրությամբ միայն 16 էր օրակարգում, և դրանցից միայն մեկն էր բավարարվել: Ավելին՝ 2016-2017 թթ. Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների պատճառով Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության բանակցությունները դադարեցվեցին: Այսպես,

[187] ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում Թուրքիան ակտիվ (355 000 մարդ) ու պահեստազորային (378 000 մարդ) զինծառայողների թվաքանակով Եվրոպայում գրավում է առաջին տեղը: ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում ակտիվ (1 369 000 մարդ) և պահեստազորային (850 000 մարդ) զինծառայողների թվաքանակով առաջին տեղը զբաղեցնում է ԱՄՆ-ն:

2016 թ. նոյեմբերի 26-ին Եվրոպական խորհրդարանը քվեարկությամբ որոշեց կասեցնել Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության գործընթացը՝ հիմք ընդունելով երկրում առկա մարդու իրավունքների և օրենքի գերակայության հիմնախնդիրները:

Գտնվելով երկու աշխարհամասերի՝ Եվրոպայի ու Ասիայի սահմանագծում, ինչպես նաև Աֆրիկայից ոչ մեծ հեռավորության վրա՝ Թուրքիան զբաղեցնում է բավական կարևոր և իր համար ձեռնտու տնտեսաաշխարհագրական դիրք, քանի որ իր տարածքով են անցնում ցամաքային, ջրային և օդային միջազգային շատ կարևոր ուղիներ:

Թուրքիայի բնակլիմայական պայմաններն ու ռեսուրսները բազմազան են, սակայն վերջինիս պաշարները համեմատաբար քիչ են: Թուրքիան աչքի է ընկնում քրոմի հանքավայրերով, որի պաշարներով աշխարհում գրավում է առաջնային տեղերից մեկը (համաշխարհային պաշարների 8 %-ը): Հիմնականում տեղական նշանակություն ունեն քարածխի, նավթի, երկաթաքարի, պղնձի, վոլֆրամի, ուրանի, մոլիբդենի, մանգանի, բոքսիտների և սնդիկի հանքավայրերը: Թուրքիան բավական հարուստ է հիդրոէներգետիկ ռեսուրսներով, սակայն ջրային պաշարների օգտագործմանը խոչընդոտում են կլիմայական գեոմորֆոլոգիական պայմանները, ինչպես նաև ազգային տնտեսության ոչ բավարար բարձր մակարդակը: Ջուրը՝ որպես բնական ռեսուրս, շատ կարևոր և անհրաժեշտ է ոչ միայն Թուրքիայի, այլև ամբողջ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի համար: Այս ենթատեքստում բավական մեծ նշանակություն է ստանում Տիգրիս-Եփրատ գետերի ջրավազանը, որը վերոհիշյալ տարածաշրջանի ջրային ռեսուրսների գլխավոր աղբյուրներից մեկն է: Ուստի պատահական չէ, որ այդ գետերի ավազանի շահագործումը լուրջ տարաձայնությունների ու առճակատումների պատճառ է դարձել Թուրքիայի և հարևան երկրներ Սիրիայի ու Իրաքի միջև: Չնավորված եռակողմ հանձնաժողովը պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում՝

ավազանը օգտագործելու հիմնական նախագծերը քննարկելու համար, սակայն այն դեռևս վերջնական լուծում չի ստացել:

Մյուս կողմից, օգտվելով իր աշխարհագրական նպաստավոր դիրքից և ստանալով Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ աջակցությունը՝ Թուրքիան հասավ նրան, որ իր անմիջական մասնակցությամբ սկսվեցին իրականացվել Թուրքիայի համար կարևոր երկու՝ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի և Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղի կառուցման նախագծերը[188]: Դրանց վերջնական շահագործմամբ Թուրքիան հույս ունի ոչ միայն ստանալու հսկայական ֆինանսական եկամուտներ, այլև ամրապնդելու իր աշխարհաքաղաքական ու տնտեսական դիրքերը ամբողջ տարածաշրջանում՝ նպատակ հետապնդելով հետագայում այն օգտագործել ԵՄ-ի հետ հարաբերություններում[189]:

2022 թ. տվյալներով Թուրքիայի անվանական ՀՆԱ-ն կազմել է 900 մլրդ դոլար, հաստատուն գներով արտահայտված իրական ՀՆԱ-ն կազմել է 1.19 տրիլիոն դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 14,055 դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 10.2.1*): 2021-2022 թթ. Թուրքիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է համապատասխանաբար 11.4 և 5.5 %: Թուրքիան իրականում դասվում է արագ տեմպերով զարգացող երկրների շարքին: 2009 թ. ՀՆԱ-ի աճի տեմպի բացասական ցուցանիշն արդյունք էր ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի: Ինչպես նկատում ենք, արդեն 2010 թ. Թուրքիային հաջողվեց վերականգնել և նույնիսկ գերազանցել ՀՆԱ-ի մինչճգնաժամային մակարդակը: Ավելին՝ COVID-19 համավարակով պայմանավոր-

---

[188] Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղն իր երկարությամբ (1,768 կմ) երկրորդն է ԱՊՀ երկրների շարքում՝ «Դրուժբա» նավթամուղից հետո: Շահագործման է հանձնվել 2005 թ. մայիսի 25-ին: Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղը շահագործման է հանձնվել 2007 թ. մարտի 25-ին:

[189] Թուրքիայի տնտեսության վերաբերյալ առավել մանրամասն պատկերացում կազմելու համար տե՛ս Թ. Թորոսյան, Գ. Հայրապետյան և ուրիշներ, Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2012:

ված՝ 2020 թ. Թուրքիայի տնտեսության մեջ տնտեսական անկում չի գրանցվել: 2022 թ. Թուրքիայի տնտեսության մեջ գնաճի մակարդակն աննախադեպ բարձր է եղել՝ կազմելով 72.3 %, իսկ գործազրկության մակարդակը կազմել է 10.4 %:

Թուրքիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը 2022 թ. կազմել է -110 մլրդ դոլար, իսկ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը՝ -48.7 մլրդ դոլար: 2022 թ. տվյալներով Թուրքիայի պետական պարտքը կազմել է 277 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 30.8 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր) կազմել է 460 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 51.1 %-ը: Այսպիսով՝ Թուրքիայի պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը բավականին փոքր է, և այս ցուցանիշով Թուրքիան աշխարհում զբաղեցնում է 169-րդ տեղը, իսկ արտաքին պարտքի (պետական և մասնավոր) ցուցանիշի բացարձակ մեծությամբ՝ 30-րդ տեղը:

Բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները: Թուրքիայի բնակչության ավելի քան 80 %-ը թուրքեր են, բնորոշ է բնական արագ աճը (1960 թվականի համեմատ Թուրքիայի բնակչությունը աճել է մոտ երեք անգամ), որի կարգավորումը մինչև այժմ մնում է երկրի կարևոր խնդիրներից մեկը: Թուրքիայի տարածքը խիտ է բնակեցված, հատկապես տարածքի արևմտյան մասը, համեմատաբար բարձր է ուրբանիզացման մակարդակը (2022 թ. տվյալներով ամբողջ բնակչության 77.0 %-ը): Երկրում ապրում են 25 ազգային փոքրամասնություններ, որոնցից մեծ թիվ են կազմում քրդերը, արաբները, հույները, հայերը, վրացիները և այլն: Թուրքիայի տնտեսության մեջ միշտ բարձր է եղել գործազրկության մակարդակը (2022 թ.՝ 10.4 %), ինչն էլ հանդիսացել է աշխատանքային արտագաղթի հիմնական պատճառներից մեկը (մոտ 25 մլն թուրք աշխատում է Գերմանիայում և ԵՄ այլ երկրներում, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում): Գործազրկության բարձր մակարդակի պատճառներից մեկն էլ կրթական ու մասնագիտական վերապատրաստման ոչ բարձր մակարդակն է: Այսպես, հա-

մաձայն Մարդկային զարգացման ինդեքսի (Human Development Index)՝ 2008-2018 թթ. Թուրքիայում չափահասների գրագիտության միջին մակարդակը կազմել է 95.6 %[190]:

2021 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 17.1 %-ը զբաղված էր գյուղատնտեսության ոլորտում, 26.5 %-ը՝ արդյունաբերության, իսկ 56.3 %-ը՝ ծառայությունների ոլորտում: Ինչպես նկատում ենք, Թուրքիայի տնտեսության մեջ բավականին մեծ տեսակարար կշիռ են կազմում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները: Այսպիսով՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների համեմատաբար մեծ տեսակարար կշռով Թուրքիան զգալի տարբերվում է մյուս զարգացած երկրներից: Այստեղ հարկ է նշել, որ 2000 թվականից ի վեր նկատվում է զբաղվածության կրճատման միտում գյուղատնտեսության ոլորտում, և հակառակ դրան՝ աճում է զբաղվածությունն արդյունաբերության ու ծառայությունների ոլորտներում: Այսպես, 2000 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 27.3 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 27.6 %-ը՝ արդյունաբերության, իսկ 45.0 %-ը՝ ծառայությունների ոլորտում:

Թուրքիայի տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունը: Թուրքիան հանրապետություն հռչակվելուց հետո կիրառել է սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք մոդելներ: 1920-ական թթ. իրականացվեց ազգային տնտեսության ազատականացման գործընթացը: Այնուհետև՝ 1930-1940-ական թթ., երկրի տնտեսական կյանքում մեծացավ կառավարության տնտեսական կարգավորման ու վերահսկման դերը: Սոցիալ-տնտեսական զարգացման հաջորդ փուլը, որը տևեց մոտ քսան տարի (1960-1970-ական թթ.), բնութագրվում է

[190] Այստեղ համեմատության համար նշենք, որ Հայաստանում այդ ցուցանիշը կազմել է 99.0 %: Ավելին՝ 2004 թ. Թուրքիայում չափահասների գրագիտության մակարդակը կազմել է 87.4 %, իսկ Հայաստանում՝ 99.4 %: Թուրքիային հաջողվել է վերջին տարիներին զգալիորեն ավելացնել չափահասների գրագիտության մակարդակը:

«խառը տնտեսության» առկայությամբ: Տնտեսական զարգացման մոդելների այս տարբերակները Թուրքիային հնարավորություն տվեցին ձեռք բերելու մեծ առաջընթաց սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում:

1970-1980-ական թթ. գնաճի մակարդակի և գործազրկության աճի հիմնական պատճառ հանդիսացան պետական ձեռնարկություններին տրվող ուղղակի և անուղղակի սուբսիդիաները: 1970-ական թթ. այս գործընթացները առաջ բերեցին սոցիալական դժգոհություններ: Կառավարությունը ի զորու չգտնվեց իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ տնտեսության մեջ և հաղթահարել քաղաքական անկայունությունը: 1980 թ. սեպտեմբերին բանակը իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Կարգ ու կանոն հաստատելուց և բարեփոխումների համար պայմաններ ստեղծելու հետո՝ 1983 թ., իշխանությունը ընտրություններով վերադարձվեց քաղաքացիական կառավարությանը: 1980-1990-ական թթ. Թուրքիայի տնտեսության զարգացման մոդելը ձեռք բերեց նոր, մասնավորապես ազատական բնութագրեր:

Թուրքիայի տնտեսության զարգացման նոր մոդելի հիմքում ընկած էր բազմաթիվ ոլորտներում պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման երկարաժամկետ ծրագիրը: Հետագայում այս գործընթացից դուրս մնացին միայն ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները, որոնք առաջին հերթին կապված էին ռազմարդյունաբերական համալիրի հետ: Տնտեսության մեջ զգալի կրճատվեց ոչ արդյունավետ աշխատող պետական ձեռնարկությունների թիվը, վերացվեցին նախկինում ոչ արդյունավետ գործող պետական ձեռնարկություններին տրվող սուբսիդիաները: Կառավարությունն իրականացնում էր քաղաքականություն, որն ուղղված էր արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերությունների խթանմանն ու զարգացմանը: Վերջինս հնարավորություն տվեց ավելացնելու Թուրքիայի արտահանման ծավալները 2.9 մլրդ դոլարից (1980 թ.) մինչև 32.1 մլրդ դոլար

(1996 թ): Տնտեսական ազատական մոդելին անցմամբ Թուրքիայի տնտեսությունը զգալի գրավիչ դարձավ օտարերկրյա ներդրողների համար: Այսպես, 1980-1990-ական թթ. վերջին Թուրքիայի տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների ամենամեծ ցուցանիշը կազմել է 940 մլն դոլար: Ավելին՝ 1973-2002 թթ. Թուրքիայի տնտեսության մեջ կատարված ՕՈՒՆ ծավալը կազմել է 15 մլրդ դոլար: Արդեն 2000-ական թթ. սկզբից սկսած՝ Թուրքիայի տնտեսության մեջ նկատվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների աննախադեպ աճ՝ 2007 թ. կազմելով 22.0 մլրդ դոլար, ինչը 2003-2022 թթ. ընկած ժամանակահատվածում ամենամեծ ցուցանիշն է եղել: 2003-2020 թթ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայի տնտեսության մեջ կատարված ՕՈՒՆ ծավալը կազմել է 240 մլրդ դոլար[191]: Ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի արդյունքում 2009 և 2010 թթ. զգալի կրճատվեց ՕՈՒՆ-ի ներհոսքը դեպի Թուրքիայի տնտեսություն՝ կազմելով համապատասխանաբար 8.5 և 9.1 մլրդ դոլար: Արդեն 2011 թվականից սկսած՝ Թուրքիայի տնտեսության մեջ նկատվում է ՕՈՒՆ-երի աճ՝ 2015 թ. կազմելով 19.3 մլրդ դոլար: 2016 թ. ՕՈՒՆ-ի ծավալը Թուրքիայի տնտեսության մեջ ձեռք է բերում նվազման միտում՝ 2022 թ. կազմելով 13 մլրդ դոլար:

Այսպիսով՝ Թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում կարելի է առանձնացնել երկու տարբեր ժամանակաշրջաններ: Առաջին ժամանակաշրջանը համապատասխանում է 1920-1970-ական թթ., որի ընթացքում տնտեսությունը բնութագրվել է որպես փակ տնտեսություն, և զարգացման բոլոր գործընթացներում գերակայել է պետական կարգավորումը: Երկրորդ ժամանակաշրջանը սկսվել է 1980-1984 թթ. իրականացված բարեփոխումներից հետո, որը բնութագրվել է տնտեսական կյանքի

[191] Presidency of the Republic of Turkey, Investment Office, https://www.invest.gov.tr/en/WhyTurkey/Pages/fdi-in-turkey.aspx (դիտումը՝ 20.05.2024 թ.):

ազատականացմամբ և արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների խթանմամբ:

Թուրքիայի տնտեսության զարգացման ժամանակակից առանձնահատկությունները: Վերջին երեք տասնամյակի ընթացքում Թուրքիայի տնտեսությունը ենթարկվել է արմատական վերափոխումների: Այս ժամանակահատվածում երեք ճգնաժամեր են տեղի ունեցել՝ առաջացնելով լուրջ խնդիրներ Թուրքիայի տնտեսության մեջ: Առաջինը տեղի ունեցավ 1994 թ., որի ընթացքում ՀՆԱ-ն կրճատվեց -4.6 %, իսկ երկրորդը՝ 2001 թ., որի ընթացքում ՀՆԱ-ն կրճատվեց -6.0 %: Պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին կրկնապատկվեց՝ 2001 թ. կազմելով 76.1 %, զգալի աճեցին գնաճի ու գործազրկության մակարդակները՝ 2001 թ. կազմելով համապատասխանաբար 54.4 % և 8.4 %: Վերջին ճգնաժամը տեղի ունեցավ 2018 թ. և շարունակվում է մինչև օրս, իսկ ճգնաժամի պատճառներն էին Թուրքիայի ազգային արժույթի կտրուկ արժեզրկումն ու պարտքային ճգնաժամը: Վերջին ճգնաժամի ժամանակ Թուրքիայի տնտեսության ՀՆԱ-ն բացասական ցուցանիշ չգրանցեց, սակայն 2018 թ. ՀՆԱ-ի աճի տեմպը, 2017 թվականի հետ համեմատած, ավելի քան երկու անգամ կրճատվեց՝ կազմելով 3 %, իսկ գնաճի մակարդակը 2018 թ. կազմեց 16.3 % (2022 թ. գնաճի մակարդակը Թուրքիայի տնտեսության մեջ կազմել է 72.3 %): 2017 թվականի հետ համեմատած՝ 2022 թ. Թուրքիայի ազգային արժույթը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է մոտ 3.7 անգամ, իսկ 2013 թվկանի հետ համեմատած՝ մոտ 7 անգամ:

Տնտեսությունը վերականգնելու համար Թուրքիան որդեգրեց տնտեսական բարեփոխումների նոր ծրագիր, որը ներկայացվեց 2001 թ. ապրիլին: Բարեփոխումների այս ծրագիրը հիմնականում կենտրոնացած էր բանկային ու ֆինանսական ոլորտների վրա: Ծրագրի գլխավոր նպատակն էր վերակառուցել բանկային ոլորտը, կայունացնել արժույթի ու արտարժույթի շուկաները և վերահաստատել մակրոտնտեսական հավասարակշռությունը՝ կայուն

տնտեսական աճ ապահովելու համար: Ծրագրի իրականացումը պահանջում էր համապարփակ տնտեսական բարեփոխումներ ու Թուրքիայի տնտեսության վերակառուցում:

Բարեփոխումները նախ կիրառվեցին ֆինանսական ոլորտում, և արագացվեց սեփականաշնորհման գործընթացը: Այնուհետև բարեփոխումներ իրականացվեցին նաև գյուղատնտեսության, սոցիալական ապահովածության, էներգետիկայի և հեռահաղորդակցման ոլորտներում: Բարեփոխումների ծրագրի ճիշտ կիրառումը ապահովեց մակրոտնտեսական ցուցանիշների դրական զարգացում, մասնավորապես գնաճի մակարդակի նվազեցում մինչև միանիշ թվի, և իրականացվեցին կառուցվածքային բարեփոխումներ:

Չնայած նրան, որ Թուրքիային հաջողեց հաղթահարել տնտեսական ճգնաժամերի պատճառով առաջացած հիմնախնդիրները, Թուրքիայի կառավարությունը որոշեց շարունակել տնտեսական բարեփոխումների ծրագիրը, որպեսզի բացառի այդ տնտեսական հիմնախնդիրների պատճառների հետագա առաջացումը: Այսպես, 1993-2002 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՆԱ-ի աճի միջին տեմպը կազմել է 2.8 %: Տնտեսական բարեփոխումների ծրագրի դրական արդյունքների շնորհիվ արդեն 2003 թ. տնտեսական աճի տեմպը կազմեց 5.6 %, իսկ 2004 թ.՝ 9.6 %: Այստեղ հարկ է նշել, որ Թուրքիայի տնտեսության նման տնտեսական աճի հիմնական պատճառը մասնավոր հատվածն էր: Մասնավոր արդյունաբերության ոլորտում վերջին երեք տարում արտադրողականության աճի միջին տեմպը կազմել է 10.0 %: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան ներկայումս փորձում է ապահովել համապատասխան միջոցներ ու հիմք կայուն տնտեսական զարգացման ու երկրի մրցունակությունը բարձրացնելու համար՝ արտադրողականության բարձրացման փաստը կարող է վերագրվել որպես ծրագրի դրական արդյունք:

Թուրքիայի տնտեսությունը վերջին երեք տասնամյակում տառապում էր երկնիշ գնաճի մակարդակի բացասական արդյունքներից: Գնաճի մակարդակը նպատակային մակարդակ նվազեցնելու համար Թուրքիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը համապատասխանեցվեց նպատակային գնաճի մակարդակին: Այստեղ հարկ է նշել, որ 2005 թ. սկզբին Թուրքիան հրաժարվեց իր ազգային արժույթի վեց զրոներից և թողարկեց ցածր միավորներ ունեցող թղթադրամներ ու մետաղադրամներ: 2006 թվականից ի վեր՝ մինչև 2018 թ. ճգնաժամը, Թուրքիայի տնտեսության մեջ գրանցվել է միանիշ գնաճի մակարդակ: Թուրքիայի կառավարության հիմնական նպատակն էր հետագայում էլ ավելի իջեցնել գնաճի մակարդակը, որպեսզի այն համապատասխանի եվրոպական երկրների ցուցանիշի միջին մակարդակին: Ինչպես նկատում ենք, սա չհաջողվեց Թուրքիայի կառավարությանը, քանի որ 2018 թ. ճգնաժամով պայմանավորված՝ Թուրքիայում կրկին գրանցվում է երկնիշ գնաճի մակարդակ, ինչը 2018 թ. կազմել է 16.3 %, իսկ 2022 թ.՝ 72.3 %):

2001 թ. բարեփոխումների ծրագրից երեք տարի հետո զգալի բարելավեց նաև Թուրքիայի կառավարության ֆիսկալ քաղաքականությունը: Այսպես, եթե Թուրքիայում 2001 թ. պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին կազմում էր 76.1 %, ապա արդեն 2004 թ. պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին նվազեց մինչև 57.5 %: Այստեղ հարկ է նշել, որ նույնիսկ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամի պայմաններում Թուրքիային հաջողվեց զգալի նվազեցնել այս ցուցանիշի մակարդակը: Այսպես, 2009 թ. Թուրքիայի պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 43.8 %-ը, իսկ 2022 թ.՝ 30.8 %-ը: Ավելին, եթե 2001 թ. բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 33 %-ը, ապա 2002 թվականից սկսած՝ այս ցուցանիշը կտրուկ սկսեց նվազել: 2001-2022 թթ. ընկած ժամանակաշրջանում Թուրքիայի բյուջեի պակասուրդը միջինում

կազմել է ՀՆԱ-ի -4.4 %-ը: 2022 թ. Թուրքիայի բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի -1.0 %-ը[192]:

Թուրքիայի արտարժույթի պաշարները բավականին երկար ժամանակ շարունակաբար աճել են: Արտարժույթի պաշարների ավելացումը հիմնականում պայմանավորված էր օտարերկրյա պորտֆելային և ուղղակի ներդրումների անընդհատ աճով: Այսպես, եթե 2005 թ. տվյալներով Թուրքիայի Կենտրոնական բանկի արտարժութային պաշտոնական ռեզերվները կազմել են 43 մլրդ դոլար, ապա արդեն 2015 թ. վերջին՝ մոտ 110.0 մլրդ դոլար[193]: 2015 թվականից արտարժութային պաշտոնական ռեզերվները ձեռք են բերել նվազման միտում՝ 2022 թ. կազմելով 83 մլրդ դոլար: Այստեղ հարկ է նշել, որ արտարժույթի ռեզերվների նման մակարդակը վկայում է այն մասին, որ Թուրքիայի տնտեսությունը կարող է դիմակայել տեղական ու միջազգային շուկայի անբարենպաստ տատանումներին: Որպես վերը ասվածի վառ ապացույց կարող է հանդիսանալ 2007 թ. ԱՄՆ-ում սկիզբ առած ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը, ինչը Թուրքիայի տնտեսությունը համեմատաբար հեշտ հաղթահարեց:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Ի տարբերություն Հարավարևմտյան Ասիայի շատ երկրների՝ Թուրքիան երբեք զրկված չի եղել իր ազգային ինքնավարությունից, սակայն կիսագաղութային կախվածության մեջ է գտնվել արևմտյան տերություններից: Հանրապետական կարգերի հաստատումից հետո Թուրքիայի տնտեսության կառուցվածքում ու արտադրության ծավալում կատարվել են զգալի տեղաշարժեր: Այսպես, ստեղծվել

---

[192] Համեմատության համար նշենք, որ 1995-2022 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ բյուջեի պակասուրդը միջինում կազմել է ՀՆԱ-ի -3.1 %-ը, իսկ այս ցուցանիշի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2009 թ.՝ կազմելով -7.5 %: 2022 թ. ՀՀ բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի -2.3 %-ը:

[193] Այստեղ համեմատության համար նշենք, որ ՀՀ պաշտոնական ռեզերվներն աճի միտում ունեն: Այսպես, 2003-2022 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ-ում արտարժույթի ռեզերվների միջին մակարդակը կազմել է 1.8 մլրդ դոլար, իսկ 2022 թ.՝ մոտ 4.1 մլրդ դոլար:

են արդյունահանող և վերամշակող արդյունաբերության նոր ճյուղեր, ընդարձակվել են մշակվող ցանքատարածությունները, զգալիորեն ավելացել է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

2022 թ. տվյալներով գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 6.5 %-ը, արդյունաբերությանը՝ 31.3 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 51.7 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 10.2.3*): Ինչպես նկատում ենք, Թուրքիայի տնտեսության մեջ համեմատաբար մեծ է գյուղատնտեսության բաժինը, սակայն հարկ է նշել, որ այն նվազման միտում ունի: Համեմատության համար նշենք, որ 1990-ական թթ. կեսերին Թուրքիայի տնտեսության մեջ գյուղատնտեսության բաժինը կազմում էր 16.0 %:

Գյուղատնտեսություն: Այս ոլորտին բնորոշ են հողագործական խոշոր և գյուղացիական մանր (մշակվող հողատարածքների 60 %-ը կազմում են մինչև 5 հա) տնտեսությունները: Ագրարային հարաբերություններում դեռևս մնացել են ֆեոդալական բատրակային մնացուկները:

Թուրքիայի գյուղատնտեսության մեջ մեծ է բուսաբուծության դերը (ամբողջ եկամտի 2/3-ը): Հիմնականում մշակվում են հացահատիկային կուլտուրաներ (ցորեն ու գարի): Չնայած բամբակի, ծխախոտի, ձիթապտղի և այլնի ցանքերին՝ դրանք համեմատաբար քիչ տարածք են գրավում, սակայն դրանց դերը շատ մեծ է, քանի որ վերջիններս ազգային արդյունաբերությանն ապահովում են ոչ միայն հումքով, այլև արտահանվում են: Գյուղատնտեսության մեջ կարևոր նշանակություն ունեն նաև խաղողագործությունն ու ցիտրուսների մշակումը, որոնց արտահանմամբ Թուրքիան Միջերկրական տարածաշրջանում գրավում է առաջատար տեղ:

Անասնապահությունը, որը ապահովում է ոլորտի եկամտի 34 %-ը, բացառապես զարգանում է էքստենսիվ ուղիով: Թուրքիայի գյուղատնտեսության առանձնահատկությունն այն է, որ

վերը նշված դրա երկու ենթաոլորտները երբեք չեն ներկայացել որպես միմյանց հետ սերտ կապերով միասնական տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ մասեր:

Արդյունաբերություն: Այս ոլորտում կառուցվածքային տեղաշարժերի հետևանքով արդյունահանող արդյունաբերությունն իր տեղը զիջել է վերամշակող արդյունաբերությանը: Չի նկատվում ռեսուրսների արդյունահանման և դրանց արտահանման ընդլայնում: Անգամ նվազել է նախկինում մեծ պահանջարկ ունեցող քրոմի արտահանումը: Առավել արագ տեմպերով զարգանում են վերամշակող արդյունաբերությունը, հատկապես սննդի և թեթև արդյունաբերության ոլորտները, որոնց բաժին է ընկնում ոլորտի արտադրանքի 35 %-ը: Զարգացման մեծ տեմպեր ունեն նաև շինարարությանը մատակարարող արդյունաբերության ոլորտները, սև և գունավոր մետաղագործությունը, քիմիական արդյունաբերությունն ու մեքենաշինությունը:

Թուրքիայի մեքենաշինության ոլորտում աչքի են ընկնում տրանսպորտային միջոցների արտադրությունն ու դրանց հավաքումը: Այդ ոլորտում համագործակցելով տեղական խոշոր ընկերությունների հետ՝ իրենց գործունեությունն են ծավալել արտասահմանյան վերազգային ընկերությունները («Ford Motor Company», «Fiat», «Renault», «Mercedes», «Chrysler» և այլն): 2022 թ. տվյալներով Թուրքիայում տարեկան արտադրվել է 1.3 մլն միավոր ավտոմեքենա, իսկ տարեկան թողարկվող ավտոմեքենաների թվով Թուրքիան 2022 թ. աշխարհում զբաղեցրել է տասներեքերորդ տեղը: Ստեղծվել են երկաթուղային միջոցների արտադրական հզորություններ («Սիդեմաշ», «Աղմաշ», «Էլմաշ» և այլն): Նախատեսվում է հզորությունները ընդլայնել և նորացնել նավաշինության ոլորտում: Վերջին տարիներին Թուրքիայում զարգանում է նաև սեփական աերոտիեզերական արդյունաբերությունը (F-16 մակնիշի ինքնաթիռներ և ուղղաթիռներ):

Էներգիայի կարևոր աղբյուր է ներմուծվող նավթը: Սեփական արդյունահանվող նավթը բավարարում է ներքին պահանջարկի միայն 13-14 %-ը: Նավթի վերամշակման ձեռնարկությունները պետական սեփականություն են: Այստեղ հարկ է նշել, որ Թուրքիան գազ ներմուծում էր դեռևս ԽՍՀՄ-ից, իսկ 1991 թ.՝ Ռուսաստանի Դաշնությունից, իսկ գազի ներմուծման այդ համաձայնագիրը գործեց մինչև 2012 թվականը: 2012 թ. ռուսական «Gazprom» ընկերության և թուրքական մասնավոր ընկերությունների հետ կնքվեց ռուսական գազի ներմուծման մեկ այլ երկարաժամկետ համաձայնագիր, որը գործելու է մինչև 2042 թվականը: Վերջին տարիներին Թուրքիան էլեկտրաէներգիա է արտահանում դեպի իր հարևան Արևելյան Եվրոպայի երկրներ (Բուլղարիա, Ռումինիա, Ալբանիա) ու Վրաստան:

Ծառայությունների ոլորտ: Այս ոլորտը Թուրքիայի տնտեսության համար զարգացման նոր ոլորտ է, որտեղ առանձնանում են ֆինանսական համակարգն ու զբոսաշրջությունը: Վերջինիս զարգացմանը նպաստում են պատմամշակութային հուշարձանները (հատկապես հայկական) և Միջերկրական ու Սև ծովի ափերին գտնվող առողջարաններն ու հանգստյան գոտիները: Այսպես, 2019 թ. տվյալներով Թուրքիա է այցելել ավելի քան 51.2 մլն զբոսաշրջիկ, և այս ցուցանիշով Թուրքիան զբոսաշրջության ոլորտում առաջատար 10 երկրների շարքում զբաղեցնում է վեցերորդ տեղը՝ Ֆրանսիայից (89.4 մլն մարդ), Իսպանիայից (83.5 մլն մարդ), ԱՄՆ-ից (79.3 մլն մարդ), Չինաստանից (65.7 մլն մարդ) և Իտալիայից (64.5 մլն մարդ) հետո: Այստեղ հարկ է նշել, որ 2006 թ. տվյալներով զբոսաշրջիկների թվով (18.9 մլն մարդ) Թուրքիան չէր դասվում այդ ոլորտում առաջատար տասը երկրների շարքին, իսկ 2007 թ. ի վեր առաջատար տասը երկրների շարքում բարելավում է իր դիրքերը: 2019 թ. տվյալներով զբոսաշրջությունը Թուրքիայի տնտեսության համար ապահովել է 42.3 մլրդ դոլար կամ ամբողջ արտահանման 17.3 %-ը:

Արտաքին տնտեսական կապերը: Ինչպես նկատեցինք, Թուրքիան բավականին ակտիվորեն ներառված է միջազգային կազմակերպություններում: Այսպես, Թուրքիան ոչ միայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development, OECD) անդամ է, այլ նաև 1995 թվականից՝ ԱՀԿ հիմնադիր երկիր: Նկատելի են նաև Թուրքիայի հաջողությունները տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն գործընթացներում: 1996 թ. Թուրքիան ԵՄ-ի հետ հաստատել է մաքսային միություն և ունի ազատ առևտրի համաձայնագրեր ավելի քան 16 երկրների (Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Չիլի, Եգիպտոս, Վրաստան, Իսրայել, Հորդանան, Մակեդոնիա, Մալազիա, Մոլդովա, Մոնտենեգրո, Մարոկկո, Պաղեստին, Սերբիա, Հարավային Կորեա, Թունիս) ու մեկ տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորման (EFTA) հետ: Բացի դրանից՝ Լիբանանի, Կոսովոյի և Սինգապուրի հետ կնքված ազատ առևտրի համաձայնագրերը գտնվում են հաստատման փուլում:

Թուրքիան միակ ոչ ԵՄ երկիրն է, որը հաստատել է մաքսային միություն ԵՄ-ի հետ: ԵՄ-ի հետ մաքսային միության հաստատմամբ Թուրքիան վերացրել է մաքսային արգելքները, որոնք նախատեսված էին տեղական արդյունաբերությունը հովանավորելու համար: ԵՄ-ի և Թուրքիայի միջև ներկայումս տեղի ունի արդյունաբերական ապրանքների ազատ տեղաշարժ: Թուրքիան երրորդ երկրներից արդյունաբերական ապրանքների ներմուծման վրա կիրառում է ԵՄ մեկ միասնական մաքսատուրք:

Մինչև ԵՄ անդամակցության կասեցումը Թուրքիան բավական լուրջ բարեփոխումներ էր կատարում իր տնտեսության մեջ: Թուրքիայի ընդհանուր ապրանքաշրջանառության հիմնական մասը բաժին էր ընկնում ԵՄ և OECD անդամ երկրներին: Թուրքիայի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների մեծ մասը բաժին էր ընկնում ԵՄ անդամ երկրներին: Թուրքիան բավական

զարգացած առևտրատնտեսական հարաբերություններ ունի Կենտրոնական Ասիայի, Սևծովյան տնտեսական համագործակցության (Black Sea Economic Cooperation, BSEC) և OECD երկրների հետ: Նախկինում մասնագիտական շրջանակում քննարկվում էր, որ Թուրքիայի ԵՄ անդամակցությունը հիմք կհանդիսանա կարգավորելու հայ-թուրքական հարաբերությունները, սակայն, ինչպես արդեն նշել ենք, 2016 թ. նոյեմբերից Թուրքիայի ԵՄ անդամակցության գործընթացը կասեցվեց[194]:

Վերջին երկու տասնամյակում Թուրքիան բավականին մեծ հաջողություններ է գրանցել ՕՈՒՆ-երի ներգրավման գործընթացում: Դրան հիմնականում նպաստեցին 2003 թ. հունիսի 5-ին Թուրքիայի կառավարության կողմից ընդունած «Օտարերկրյա ներդրումների մասին» նոր օրենքը, ինչպես նաև Թուրքիայի ԵՄ անդամակցության ֆորմալ գործընթացը, ինչը սկսվեց 2005 թ.: ՕՈՒՆ-երի մասին նոր օրենքի հիմնական առանձնահատկություններն էին.

- ապահովվեց հավասար իրավունքներ օտարերկրյա ներդրողների համար,
- վերացվեց օտարերկրյա ներդրումների կապիտալի նվազագույն չափը,
- օտարերկրացիներին թույլատրվեց գնել անշարժ գույք Թուրքիայում:

Ներկայումս Թուրքիայում ընկերություն հիմնելը պահանջում է մեկ օր: 1990-2003 թթ. ընկած ժամանակահատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների միջին մակարդակը կազմել է տարեկան մոտ 1 մլրդ դոլար: Օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենքի ընդունումից հետո՝ արդեն 2005 թ., ՕՈՒՆ ծավալը

---

[194] Հայաստանի ու Թուրքիայի միջև առկա արտաքին տնտեսական կապերին կարելի է ծանոթանալ հետևյալ աշխատանքում՝ Ա. Ղազինյան, Գ. Հայրապետյան և ուրիշներ, Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերներ և հնարավորություններ, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, ԵՊՀ հրատ., Երևան 2009 թ.:

կազմեց 10.0 մլրդ դոլար, իսկ 2007 թ.՝ 22.0 մլրդ դոլար, ինչը 2004-2022 թթ. ընկած ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի ամենամեծ ցուցանիշն է եղել: 2022 թ. տվյալներով ՕՈՒՆ-ը Թուրքիայի տնտեսության մեջ կազմել են 13 մլրդ դոլար:

2022 թ. տվյալներով Թուրքիայի արտաքին առևտրի ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 617.8 մլրդ դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 254.1, իսկ ներմուծումը՝ 363.7 մլրդ դոլար: Ինչպես նկատում ենք, Թուրքիայի արտաքին առևտրին բնորոշ է առևտրային հաշվեկշռի պակասուրդը, ինչը 2005-2013 թթ. ընկած ժամանակահատվածի սկզբնական շրջանում ունեցել է աճի միտում: Այսպես, առևտրային հաշվեկշռի ամենամեծ պակասուրդը գրանցվել է 2011 թ.՝ կազմելով -105.9 մլրդ դոլար, իսկ 2013 թվականից սկսած՝ ձեռք է բերել նվազման միտում՝ 2021 թ. կազմելով -46.1 մլրդ դոլար: 2022 թ. տվյալներով Թուրքիայի առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է -110 մլրդ դոլար:

2022 թ. տվյալներով Թուրքիայի արտահանման հիմնական գործընկեր երկրներն էին Գերմանիան (8.3 %), ԱՄՆ-ն (6.3 %), Իրաքը (6.1 %), Մեծ Բրիտանիան (6.0 %), Իտալիան (5.9 %), ՌԴ-ն (4.0 %), Ֆրանսիան (3.9 %) և Իսպանիան (3.9 %): Այստեղ հարկ է նշել, որ 2018 թվականից ի վեր զգալիորեն աճել է ԱՄՆ տեսակարար կշիռը Թուրքիայի ընդհանուր արտահանման մեջ, և որպես գլխավոր առևտրային գործընկեր երկրներ ավելացել է Իրաքը: Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ ներկայումս Թուրքիայի արտահանման գլխավոր գործընկեր երկրների շարքում գերակշռում են ԵՄ անդամ երկրները: Եթե 1990-ական թթ. Թուրքիայի արտահանման մեջ հիմնականում գերակշռում էին գյուղատնտեսական ապրանքները, ապա արդեն 2022 թ. տվյալներով արտահանման 90 %-ը կազմում էին արդյունաբերական ապրանքները: Թուրքիայի արտահանման մեջ գերակշռող հիմնական ապրանքախմբերն են պատրաստի սննդամթերքը, տեքս-

տիլ իրերը, տրանսպորտային սարքավորումները և վերամշակված մետաղները:

Թուրքիայի ներմուծման գլխավոր գործընկեր երկրներն են Ռուսաստանը (15.9 %), Չինաստանը (11.3 %), Գերմանիան (6.0 %), ԱՄՆ (5.9 %), Իտալիան (5.8 %) և Ֆրանսիան (3.8 %): 2007 թ. հետ համեմատած՝ զգալիորեն փոփոխվել են Թուրքիայի գլխավոր առևտրային գործընկեր երկրների տեսակարար կշիռները ընդհանուր ներմուծման մեջ: Այսպես, էականորեն նվազել են ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի տեսակարար կշիռները: Փոխարենը զգալիորեն աճել են Ռուսաստանի ու Չինաստանի տեսակարար կշիռները: Ավելին՝ ՌԴ-ն, առաջ անցելով Չինաստանին, ներկայումս Թուրքիայի ներմուծման գլխավոր առևտրային գործընկեր երկիրն է, իսկ 2016 թ. տվյալներով Ռուսաստանը Թուրքիայի ներմուծման երկրորդ գլխավոր գործընկեր երկիրն էր: Թուրքիայի ներմուծման մեջ գերակշռող հիմնական ապրանքախմբերն են մեքենաներն ու սարքավորումները, քիմիական ապրանքները, միջանկյալ ապրանքները, վառելիքը, տրանսպորտային սարքավորումները:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ո՞ր միջազգային կազմակերպություններին է անդամակցում Թուրքիան:
2. Ե՞րբ սկսվեց Թուրքիայի ԵՄ-ին անդամակցության գործընթացը: Ի՞նչ փուլում է այն գտնվում ներկայումս:
3. Ինչպիսի՞ն են Թուրքիայի տնտեսության մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները:
4. Ի՞նչ ճգնաժամեր են տեղի ունեցել Թուրքիայի տնտեսության մեջ վերջին երեք տասնամյակի ընթացքում:
5. Որո՞նք են Թուրքայի տնտեսության ներկայիս հիմնախնդիրները:

6. Ի՞նչ դեր են կատարում ՕՈՒՆ-ը Թուրքիայի տնտեսության մեջ: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
7. Ո՞ր թվականին է ՕՈՒՆ-ի ծավալը Թուրքիայի տնտեսության մեջ եղել առավելագույնը: Ի՞նչ գործոն/գործոններ է/են նպաստել դրան:
8. Ինչպիսի՞ն է Թուրքիայի առևտրային հաշվեկշիռը:

Հավելված

Աղյուսակ 10.2.1. Թուրքիայի մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (տրիլիոն դոլար)[195]	0.48	0.52	0.56	0.59	0.59	0.56	0.61	0.68	0.71	0.77	0.81	0.86	0.89	0.96	0.98	0.99	1.01	1.13	1.19
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	9.8	9.0	6.9	5.0	0.8	-4.8	8.4	11.2	4.8	8.5	4.9	6.1	3.3	7.5	3.0	0.9	1.8	11.4	5.5
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, հազար դոլար	7.1	7.7	8.1	8.4	8.5	7.9	8.4	9.3	9.6	10.2	10.5	11.0	11.2	11.8	12.0	11.9	12.0	13.4	14.0
Գնաճի մակարդակ, (CPI), %	8.6	8.2	9.6	8.8	10.4	6.3	8.6	6.5	8.9	7.5	8.9	7.7	7.8	11.1	16.3	15.2	12.3	19.6	72.3
Գործազրկության մակարդակ, %	10.8	10.6	8.7	8.9	9.7	12.6	10.7	8.8	8.2	8.7	9.9	10.2	10.8	10.8	10.9	13.7	13.1	12.0	10.4

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[195] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

Աղյուսակ 10.2.2. Թուրքիայի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2004-2021 թթ.[196], %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	25.5	24.8	24.1	23.5	23.1	23.0	23.7	24.2	23.6	22.9	21.1	20.4	19.5	19.4	18.4	18.1	17.6	17.1
Արդյունաբերություն	26.5	26.6	26.8	26.8	26.2	25.3	26.2	26.5	26.0	26.4	27.9	27.2	26.8	26.5	26.7	25.3	26.2	26.5
Ծառ. ոլորտ	48.0	48.6	49.2	49.8	50.7	51.8	50.1	49.4	50.4	50.7	51.1	52.4	53.7	54.1	54.9	56.6	56.2	56.3

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 10.2.3. Թուրքիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2004-2022թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղատնտեսություն	9.3	9.2	8.1	7.5	7.4	8.1	9.0	8.2	7.7	6.7	6.6	6.9	6.1	6.0	5.8	6.4	6.7	5.5	6.5
Արդյունաբերություն[197]	25.1	25.2	26.0	26.4	26.1	24.0	24.5	26.8	26.6	27.7	28.1	27.8	28.1	29.1	29.4	27.2	28.0	31.1	31.3
Ծառ. ոլորտ[198]	53.1	53.0	53.4	54.9	55.5	57.2	54.5	53.0	54.0	53.3	53.8	53.5	54.0	53.5	54.5	56.4	54.2	52.8	51.7

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 10.2.4. Թուրքիայի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահանում	73.4	85.5	107.2	132.0	102.1	113.9	134.9	152.5	151.8	157.7	143.8	142.5	156.9	167.9	180.8	169.6	225.2	254.1
Ներմուծում	116.7	139.5	170.0	201.9	140.8	185.5	240.8	236.5	251.6	242.2	207.2	198.6	233.7	223.0	210.3	219.5	271.4	363.7
Առևտրային հաշվ.	-43.2	-54.0	-62.7	-69.9	-38.7	-71.5	-106	-84.0	-99.8	-84.5	-63.3	-56.1	-76.8	-55.1	-29.5	-49.8	-46.1	-110

Աղբյուր՝ International Trade Centre:

---

[196] Տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածության տվյալները Թուրքիայի տնտեսության համար առկա են մինչև 2021 թվականը:

[197] Արդյունաբերության մեջ ներառված է շինարարությունը:

[198] Ծառայությունների ոլորտում ներառված չէ ֆինանսական միջնորդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքը:

10.3. Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսությունը

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Իրանի տարածքը կազմում է 1,648 հազ. կմ^2, իսկ բնակչությունը՝ 2022 թ. տվյալներով 88.9 մլն մարդ: Ասիայի քաղաքակրթության ամենահին պետություններից մեկն է: Արևմտյան Եվրոպայի երկրների գաղութային երկրից XIX դարում վերջերին դարձավ կիսագաղութային: Անգլիական կառավարությունը, ձգտելով ամբողջովին հսկել Իրանի հարստությունները և օգտագործել երկրի ռազմավարական կարևոր դիրքը, 1921 թ. հրահրեց պետական հեղաշրջում, և երկրում հաստատվեց շահի դիկտատուրան: 1959 թ. շահը ԱՄՆ-ի հետ հաստատեց ռազմական համաձայնագիր՝ ուժեղացնելով իր դիրքերն այդ տարածաշրջանում: Այնուհետև անցկացվեցին, այսպես կոչված, «սպիտակ հեղափոխություն» սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, որի նպատակն էր արագացնել զարգացման ընթացքը՝ նմանեցնելով այն Արևմուտքին: 1978-1979 թթ. հեղափոխությունից հետո շահի ռեժիմը տապալվեց, և հաստատվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Երկրում շատ բազմազան են բնական պայմաններն ու ռեսուրսները, սակայն Իրանն աչքի է ընկնում հատկապես նավթի և գազի հսկայական պաշարներով: Իրանին բաժին է ընկնում նավթի համաշխարհային պաշարների 13.1 %-ը: Հարկ է նշել, որ 2022 թ. տվյալներով Իրանի Իսլամական Հանրապետությունը, ինչպես OPEC անդամ երկրների շարքում, այնպես էլ աշխարհում նավթի պաշարներով (208.6 մլրդ բարել) զբաղեցնում էր երրորդ տեղը՝ Վենեսուելայից (303.2 մլրդ բարել) և Սաուդյան Արաբիայից (267.2 մլրդ բարել) հետո: Մյուս կողմից՝ նավթի արդյունահանման ծավալներով Իրանն աշխարհում 2022 թ. զբաղեցրել է վեցերորդ տեղը՝ ԱՄՆ-ից (11.8 մլն բարել), Սաուդյան Արաբիայից (10.5 մլն բարել), Ռուսաստանից (9.7 մլն բարել) Իրաքից (4.4 մլն բարել) և Չինաստանից (4.1 մլն բարել) հետո:

Բնական հանածոներից կան նաև քարածխի, երկաթաքարի, պղնձի, բազմամետաղների, բոքսիտների, ծծմբի հանքավայրեր: Ջրային ռեսուրսներով աղքատ է: Ոռոգման նպատակով կառուցվել են արհեստական ջրամբարներ, լայնորեն օգտագործվում են ստորերկրյա ջրերը: Անտառները զբաղեցնում են երկրի տարածքի մոտ 11 %-ը:

2022 թ. տվյալներով Իրանի անվանական ՀՆԱ-ն կազմել է 413 մլրդ դոլար, իրական ՀՆԱ-ն՝ հաստատուն գներով արտահայտված՝ 487 մլրդ դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ն՝ 5,507 դոլար (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 10.3.1*)[199]: Ինչպես նկատում ենք, 2008-2009 թթ. Իրանի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը զգալի նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 0.3 և 1.0 %, սակայն դրանք բացասական չեն եղել: Այսինքն՝ ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը էական բացասական ազդեցություն չի թողել Իրանի տնտեսության վրա[200]: Սա հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ Իրանը ինքնաբավ երկիր է («փակ կամ մեկուսացած»), սակայն ինքնաբավ լինելը ոչ թե Իրանի տնտեսության զարգացման արդյունք է, այլ միջազգային հանրության կողմից Իրանի հանդեպ կիրառվող սահմանափակումների/տնտեսական պատժամիջոցների: Ավելին, ինչպես և Թուրքիայի տնտեսության դեպքում, COVID-19 համավարակով պայմանավորված, Իրանի տնտեսության մեջ անկում չի գրանցվել: Հետագայում՝ 2012-2013 թթ., Իրանի տնտեսության մեջ տնտեսական աճի տեմպը կազմել է համապատասխանաբար -3.7 % և -1.5 %, ինչը հիմնականում պայմանավորված էր տնտե-

---

[199] Այստեղ հարկ է նշել, որ Իրանի տնտեսության մակրոտնտեսական որոշ ցուցանիշներ որոշակի տարիների համար հաճախ բացակայում են միջազգային տնտեսական կազմակերպությունների կողմից հրապարակվող վիճակագրական բազաներում:

[200] ՀՆԱ-ի աճի տեմպերի նվազումը հիմնականում արդյունք էր նավթի միջազգային շուկայում գների նվազման ու արտահանման ծավալների կրճատման: 2008-2009 թթ. ընթացքում նավթի միջազգային միջին տարեկան գինը 91.48 դոլարից նվազեց մինչև 53.48 դոլար մեկ բարելի դիմաց:

սական պատժամիջոցներով: ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից կիրառվող պատժամիջոցների պատճառով 2012-2015 թթ. Իրանը կորցրեց նավթային եկամուտների մեծ մասը (մոտ 150 մլրդ դոլար): Իրանի ազգային արժույթի զգալիորեն արժեզրկվեց, և աճեց գնաճի մակարդակը: 2015 թ. ՀՆԱ-ի բացասական աճը (-1.4 %) պատճառ էր նավթի միջազգային գնի նվազման: 2018-2019 թթ. Իրանի տնտեսական աճը կազմել է համապատասխանաբար -1.8 և -3.1 %: Տնտեսական աճի բացասական նման մեծ ցուցանիշները կրկին արդյունք էին ԱՄՆ-ի կողմից կիրառվող տնտեսական պատժամիջոցների: 2022 թ. Իրանի տնտեսության տնտեսական աճի տեմպը կազմել է 3.8 %, իսկ գնաճի մակարդակը՝ 43.5 %, չնայած ոչ պաշտոնական գնահատումներով վերջինս զգալիորեն գերազանցում է պաշտոնական մակարդակը: Ինչպես և Թուրքիայի դեպքում, Իրանի տնտեսության մեջ բավականին բարձր է գործազրկության մակարդակը: Այսպես, 2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակը կազմել է 9.1 %:

Իրանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը 2022 թ. կազմել է 22.1 մլրդ դոլար: Իրանի առևտրային հաշվեկշիռը 2004-2012 թթ. ընկած ժամանակահատվածում ունեցել է աճի միտում, իսկ 2013 թվականից սկսած՝ դրսևորել է անկման միտում: 2022 թ. տվյալներով Իրանի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ավելցուկը կազմել է 7.8 մլրդ դոլար: Իրանի պետական պարտքը 2022 թ. տվյալներով կազմել է 140.1 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 34.1 %-ը, իսկ արտաքին պարտքը (պետական և մասնավոր)՝ 9.9 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 2.3 %-ը):

Բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները: Իրանը բազմազգ երկիր է: Բացի պարսիկներից՝ ապրում են արաբներ, հայեր, ասորիներ, հրեաներ, վրացիներ և այլն: Բնակչության մոտ 78 %-ը պատկանում է իրանալեզու, իսկ ավելի քան 20 %-ը՝ թուրքալեզու խմբին: Իրանի բնակչությունը պատկանում է վերարտադրության երկրորդ տիպին: 1970-1990-ական թվականներն ըն-

կած ժամանակաշրջանում շատ բարձր էր բնակչության բնական աճի տեմպը (միջինում 3.4 %), ինչը հետագայում զգալիորեն նվազեց: Այսպես, 1991-2022 թթ. ընկած ժամանակահատվածում բնակչության բնական աճի տեմպը կազմել է միջինում 1.3 %: 2022 թ. տվյալներով գործազրկության մակարդակն Իրանի տնտեսության մեջ կազմել է 9.1 %: Հարկ է նշել, որ Իրանը մուսուլմանական երկրների շարքում առանձնանում է, քանի որ բնակչության գերակշիռ մասը (մոտ 95 %) կազմում են մուսուլման շիաներն այն դեպքում, երբ հարևան մուսուլմանական երկրներում ապրում են սունիները: Հենց այդ պատճառով Իրանն առ այսօր երբեք չի մասնակցել ոչ մի մուսուլմանական կոալիցիաների:

2021 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 16.3 %-ը զբաղված էր գյուղատնտեսության, 34.4 %-ը՝ արդյունաբերության, իսկ 49.4 %-ը՝ ծառայությունների ոլորտում: Ինչպես և Թուրքիայի դեպքում, Իրանի տնտեսության մեջ նույնպես համեմատաբար մեծ է տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավվածությունը գյուղատնտեսության ու արդյունաբերության մեջ: 2002-2021 թթ. ընկած ժամանակաշրջանում զգալիորեն նվազել է տնտեսապես ակտիվ բնակչության բաժինը գյուղատնտեսության ոլորտում՝ հիմնականում հօգուտ արդյունաբերության ու ծառայությունների ոլորտների:

Տնտեսության զարգացման մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները: 1950-1970-ական թթ. տնտեսական զարգացման վրա մեծ ազդեցություն թողեցին Արևմուտքի երկրները, հատկապես՝ Ֆրանսիան և ԱՄՆ: Երկրում ակտիվորեն կյանքի էին կոչվում արևմտյան ծրագրերը՝ ենթադրելով երկրի տնտեսական, սոցիալ-մշակութային զարգացումը նմանեցնել Արևմուտքին: Իրանի տնտեսության մեջ նկատվեց որոշակի առաջընթաց, հատկապես՝ քաղաքներում:

Իրանի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի այլ երկրներում, տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է նավթի գոր-

ծոնով: Սկզբնական շրջանում նավթն արդյունահանվում էր օտարերկրյա ընկերությունների կողմից, սակայն կառավարության հսկողությամբ: Այդ ժամանակահատվածում երկիրը ղեկավարում էր Մուհամեդ Ռեզա Պահլեվի շահը, որը կրթություն էր ստացել Արևմուտքում և ցանկանում էր իր երկիրը ծաղկեցնել ու զարգացնել: Սակայն իսլամական երկրի ու արևմտյան մոդելի միջև ակնառու դարձան մշակութային տարաձայնությունները: Իսլամական հեղափոխությամբ տապալվեց շահի ռեժիմը, և իշխանության գլուխ եկավ իսլամական ընդդիմությունը:

Շահի ռեժիմի անկումն անսպասելի էր ոչ միայն Արևմուտքի երկրների, այլև Իրանի նոր առաջնորդների համար, քանի որ իշխանության գլուխ եկած ընդդիմությունը չուներ իր սեփական տնտեսական զարգացման ծրագիրը: Այդպիսով ձևավորվեց «Իսլամական տնտեսությունը», որի հիմքում ընկած էր բոլոր մուսուլմանների հավասարության և սոցիալական արդարության հայեցակարգը: «Իսլամական տնտեսությանը» բնորոշ էր երեք հիմնական սկզբունք՝

- պետության առանձնահատուկ դեր,
- սեփական արդյունաբերության զարգացման նախապատվություն,
- տնտեսության մեջ հասարակական ոլորտի գլխավոր դեր:

Պետության առանձնահատուկ դերով պայմանավորված՝ ազգայնացվեցին արդյունաբերության հիմնական ոլորտներն ու ենթակառուցվածքները: Պետությունը պետք է բավարարեր բնակչության առաջնահերթ պահանջմունքները (բնակարանով ապահովում, կրթության և առողջապահական ծառայությունների մատուցում) և ապահովեր լրիվ զբաղվածություն: Պետությանն էր պատկանում նաև քաղաքական, մշակութային և հոգևոր զարգացման առաջատար դերը: Որպես ֆինանսական միջոցներ պետք է ծառայեին արտաքին շուկայում նավթի վաճառքից ստացված եկամուտները: Սակայն իրականությունը սպասվածից շատ հեռու

էր: Խնդիրն այն էր, որ Իրանի բնակչության թիվը շատ ավելի էր, քան հարևան երկրներում: Իրանի տնտեսության վրա բացասաբար ազդեց նաև Իրանի հետ առևտուր կատարելու դեպքում միջազգային պատժամիջոցների կիրառումը (Թեհրանում իսլամական ահաբեկիչների կողմից ամերիկյան դեսպանատունը գրավելուց հետո): Հետագայում, նավթի պահանջարկի նվազմամբ պայմանավորված, անկում ապրեցին նաև Իրանի ֆինանսական հնարավորությունները:

Իրանը ձգտում էր ամեն կերպ թուլացնել ազգային տնտեսության կախվածությունը նավթի արտահանումից և Արևմուտքից ներմուծվող ապրանքներից: Այս քաղաքականության շրջանակում կիրառվեցին հովանավորչական ու ներմուծումը փոխարինող առևտրային քաղաքականությունները: Նշված քաղաքականությունների հիմնական նպատակն էր տնտեսության անկախացման ձեռքբերումն արտաքին գործոններից և ազգային արդյունաբերության կառուցվածքի տարբերակումը: Արդյունաբերական նոր քաղաքականություն վարելով՝ երկիրը մի շարք ոլորտներում հասավ զգալի հաջողությունների: Սկսեց զարգանալ սննդի արդյունաբերությունը, որի արտադրանքի գերակշիռ մասն արտահանվում էր, մեծ համբավ ձեռք բերեցին արևելյան գորգերը, ստեղծվեցին ավտոմոբիլային ձեռնարկություններ (ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ կառուցվեցին «Reno» ու «Peugeot» ընկերությունների գործարանները), մետաղագործական գործարաններ (Իրանի ամենախոշոր մետաղագործական գործարանը կառուցվել է ԽՍՀՄ օգնությամբ), զարգանում էր նավթաքիմիական արտադրությունը: Արտաքին առևտուրը ազգայնացվեց, խթանվում էր արտահանումը, իսկ ներմուծվում էին հիմնականում ներդրումային ապրանքներ:

Իսլամական տնտեսության կառուցվածքում առանձնանում է երեք հիմնական ոլորտ.

- պետական ոլորտ, որին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 70 %-ը, և որտեղ զբաղված է մոտ 5 մլն մարդ: Պետության վերահսկողության տակ են գտնվում տնտեսության հիմնական ոլորտները՝ արտաքին առևտուր, բանկային համակարգ, ապահովագրություն, էներգետիկա, հեռահաղորդակցություն, կապ, հեռուստատեսություն, քաղաքացիական ավիացիա, ծովային, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտ,
- կոոպերատիվ ոլորտն ընդգրկում է գյուղատնտեսական արտադրանքը, արդյունաբերական որոշ արտադրություններ, առևտուրը,
- մասնավոր հատվածը ակտիվորեն գործում է տնտեսության տարբեր ոլորտներում, բայց որպես լրացում վերը նշված ոլորտներին:

Իրանը հեղափոխությունից հետո, ըստ էության, ընտրեց զարգացման էթատիկ մոդելը, որը պաշտոնապես հաստատվեց 1982 թվականից հետո, երբ մտցվեց մթերքների բաշխման քարտային համակարգը, հսկում սահմանվեց աշխատավարձի, գների մակարդակի, ինչպես նաև ներմուծման վրա: Այնուամենայնիվ, տնտեսության մեջ մնացին կոնսերվատիզմի տարրեր մասնավոր սեփականության ու ձեռնարկատիրական ազատ գործունեության տեսքով, որը ամրագրվել է սահմանադրության մեջ 1979 թ. դեկտեմբերի 2-ին:

Իրանի ներքին քաղաքականության փոփոխմանը զուգահեռ փոխվեցին նաև նախապատվությունները միջազգային հարաբերություններում. 1979 թ. խզվեցին կապերը ԱՄՆ-ի հետ, առաջին թշնամի հայտարարվեց Իսրայելը, երկրորդը՝ ԱՄՆ-ն, իսկ երրորդը՝ ԽՍՀՄ-ը: Մեկուսանալով Իրանն աստիճանաբար կարծես վտարվեց միջազգային ասպարեզից՝ ընդհարվելով ոչ միայն Արևմուտքի ու ԽՍՀՄ-ի, այլև հարևան երկրների հետ: 1980-1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում Իրանի ՀՆԱ-ն նվա-

զեց 1/4-ով: Պետական բյուջեի պակասուրդը (դեֆիցիտ) հասավ ՀՆԱ-ի 10 %-ը, իսկ գնաճի (ինֆլյացիա) մակարդակը կազմեց տարեկան 70 %:

Արտաքին մեկուսացումն ու իրանա-իրաքյան պատերազմի հետևանքները ծանր հարված հասցրին տնտեսությանը: Իրանը հայտնվեց մի այնպիսի իրավիճակում, որ չէր կարողանում ապահովել տնտեսական աճի ավելի բարձր տեմպ, քան բնակչության աճի տեմպն էր: Օրինակ՝ 1995 թ. Իրանի տնտեսության տնտեսական աճի տեմպը կազմել է 1 % այն դեպքում, երբ բնակչության աճի տեմպը կազմել է 2.1 %: 1990-ական թթ. կեսերին Իրանում գործազրկության մակարդակը կազմում էր արդեն 30 %: Տնտեսական այդպիսի բարդ պայմաններում ակնառու դարձավ բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Իրանի տնտեսությունում անցկացված բարեփոխումների հիմնական ուղղություններն էին.

1. տնտեսության մեջ նավթի դերի կրճատում,
2. վարչահրամայական տնտեսությունից անցում դեպի շուկայական տնտեսության,
3. բաց տնտեսության հաստատում:

Տնտեսական բարեփոխումները և տնտեսության վերակառուցումը: Ի տարբերություն ոչ նավթ արտահանող երկրների՝ նավթ արտահանող երկրի համար, որտեղ կառավարությունն ուղղակիորեն ստանում է ազգային եկամտի մեծ մասը, որպես նավթից ստացվող եկամուտներ՝ տնտեսության պլանային զարգացումը շատ կարևոր դեր է խաղում: Կառավարությունը պետք է տնտեսության մեջ վերաբաշխի նավթից ստացվող եկամուտները, իսկ դա պահանջում է տնտեսության պլանային զարգացում: Քանի որ նավթի գներն անկայուն են, ապա նավթի վրա հիմնված տնտեսության համար տնտեսական պլանավորման հիմնական նպատակը պետք է լինի բարելավել տնտեսության ընդհանուր կայունությունը:

Մինչև հեղափոխությունը Իրանի կառավարությունը որպես արտաքին առևտրային քաղաքականություն էր որդեգրել ներմուծման փոխարինման քաղաքականությունը (1963-1973 թթ.): Սակայն ներմուծման փոխարինման քաղաքականության կիրառումը արտասովոր արդյունք ունեցավ Իրանի տնտեսության համար՝ մեծացնելով տնտեսության կախվածությունը նավթից ստացվող եկամուտներից: Միևնույն ժամանակ արդյունաբերության ոլորտները, որոնք շատ արագորեն զարգանում էին բարձր հովանավորչության շնորհիվ, չունեին արտահանման ուղղվածություն:

1979 թ. հեղափոխությունից ի վեր Իրանի տնտեսության մեջ զգալի փոփոխություններ են կատարվել որպես ներքին ու արտաքին գործոնների արդյունք: Հեղափոխության ինստիտուցիոնալ կարևոր փոփոխություններից մեկն այն էր, որ արդյունաբերություն զգալի մասն ու ամբողջ բանկային համակարգը ազգայնացվեց: Առևտրային սանկցիաները ու իրանյան ակտիվների սառեցումը, ծախսատար ու երկարատև իննամյա պատերազմը Իրաքի հետ, նավթի շուկայում գների տատանումները իրենց ազդեցությունն են թողել Իրանի տնտեսության վրա:

Այսպիսով, քանի որ Իրանի ազգային եկամտի մեծ մասը առաջանում է նավթի արդյունահանումից ու արտահանումից, ապա տնտեսական պլանավորումը, համենայն դեպս մակրոմակարդակում, անհրաժեշտություն է: Տնտեսական պլանավորումը ամրագրված է նաև սահմանադրության մեջ: Ուստի անմիջապես պատերազմի ավարտից հետո (1989-1993 թթ.) հաստատվեց առաջին հնգամյա տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման պլանը: Առաջին հնգամյա պլանով, փաստորեն, առաջին անգամ համապարփակ փորձ արվեց բարելավելու երկրի տնտեսական, սոցիալական ու մշակութային հարցերը:

1993 թ. Իրանի կառավարությունը հաստատեց երեք ազատ առևտրի գոտիներ՝ Քեշմ, Կիշ և Քահբահար: Առաջին երկուսը

կղզիներ են Պարսից ծոցում, իսկ երրորդը նավահանգիստ է, որը գտնվում է հարավ-արևելքում՝ Օմանի ծովում: Այս գոտիների ստեղծման հիմնական նպատակն էր ներգրավել տեղական ու օտարերկրյա ուղղակի ներդրումներ արդյունաբերական արտահանման ծավալների մեծացման համար: Ստեղծված ազատ գոտիների առավելությունը ներդրումների համար հետևյալն էր.

1. բաց են ցանկացած ծավալով և ուղղությամբ տեղական ու օտարերկրյա ներդրումների համար,
2. 15 տարով ազատված են հարկերից,
3. կապիտալի ազատ մուտք ու փոխանցում,
4. էներգիայի տարբեր աղբյուրների ստացման հնարավորություն (գազ, նավթ ու որակավորված աշխատուժ),
5. օտարերկրացիների համար վիզա չի պահանջվում,
6. դեպի միջազգային շուկա դուրս գալու հնարավորություն Պարսից ծոցի, Օմանի ծովի և Հնդկական օվկիանոսի միջոցով:

Երկրորդ հնգամյա տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման պլանը (1995-1999 թթ.) Իրանի տնտեսության համար շատ կարևոր դեր խաղաց իր տնտեսական ու ադմինիստրատիվ բարեփոխումներով: Երկրորդ հնգամյա պլանի ժամանակ նախատեսված մակրոտնտեսական հիմնական նպատակներին հասնելու համար կատարվեցին հետևյալ բարեփոխումները՝

- արտադրողականության աճի խթանում,
- կայուն տնտեսական աճի և զարգացման ապահովում՝ կենտրոնանալով գյուղատնտեսության ոլորտի ընդլայնման վրա,
- տնտեսական երեք հիմնական ոլորտների հավասարակշռում (կորպորատիվ, մասնավոր և պետական),
- տնտեսության կախվածության կրճատում նավթից ստացվող եկամուտներից,

- տնտեսության մշտադիտարկման, ադմինիստրատիվ, գործադիր ու իրավական կառուցվածքների բարելավում:

Իրանի տնտեսության կախվածության կրճատումը նավթից ստացվող եկամուտներից առաջին պլան մղվեց: Այս հիմնախնդրի շուրջ երկրորդ հնգամյա պլանով նախատեսված կարգավորման շրջանակում հաստատվեցին Արտահանման զարգացման բանկ ու պետական գործակալություններ, որոնք պետք է խթանեին արտահանումը:

Երրորդ հնգամյա տնտեսական զարգացման պլանի շրջանակում (2000-2004 թթ.) նախապատվությունը տրվեց կառուցվածքային բարեփոխումներին, որը ներառում էր մասնավոր հատվածի խթանում, տեղական ու արտասահմանյան մասնավոր բանկերի և ապահովագրական ընկերությունների ստեղծում ու զարգացում: Օտարերկրյա ներդրումների արդյունավետ ներգրավման համար 2000 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց «Օտարերկրյա ներդրումների ներգրավման» մասին օրենքը:

Հետագայում չորրորդ (2005-2009 թթ.) ու հինգերորդ (2010-2014 թթ.) հնգամյա տնտեսական զարգացման պլանների կատարման ընթացքում Իրանի կառավարությունը կրկին շեշտադրումը կատարեց տնտեսության մեջ պետության ակտիվ դերի նվազեցման և մասնավոր հատվածի ավելացման ուղղված միջոցառումներին: Վեցերորդ (2015-2020 թթ.) հնգամյա տնտեսական զարգացման պլանի հիմքում հիմնական շեշտադրումները կատարվել են օտարերկրյա ներդրումների ներգրավման և այդ ներդրումների համար պետական մակարդակով երաշխիքների տրամադրման, բանկային ոլորտի զարգացման, զբոսաշրջության ու գործարար միջավայրի զարգացման վրա: Վերջապես յոթերորդ (2022-2026 թթ.) հնգամյա պլանի շրջանակում առաջ քաշվեցին 7 հիմնական ուղղություններ (տնտեսություն, ենթակառուցվածք, մշակույթ և սոցիալական ոլորտ, գիտություն ու տեխնոլոգիաներ, կրթություն, քաղաքականություն ու արտաքին քաղաքականու-

թյուն, պաշտպանություն ու անվտանգություն, գործադիր ու դատական իշխանություններ), որոնց վրա կենտրոնանալով՝ պետք է տեղի ունենա Իրանի հետագա զարգացումը: Տնտեսական հատվածով նախատեսվում է ապահովել տարեկան միջինում 7 % տնտեսական աճ՝ շեշտադրում կատարելով արտադրություն գործոնների արտադրողականության բարձրացման վրա, ինչպես նաև նվազեցնել գնաճի մակարդակը մինչև 10 % և իրականացնել հարկային համակարգի բարեփոխումներ:

Տնտեսության ներկայիս հիմնախնդիրները: Չնայած նրան, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը զգալի քայլեր է ձեռնարկել՝ նվազեցնելու տնտեսության կախվածությունը նավթի արտահանումից ստացվող միջոցներից, ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսությունը հիմնվում է նավթի արտահանումից ստացվող միջոցների վրա: Ինչպես արդեն նշել ենք, Իրանի Իսլամական Հանրապետությունը Նավթ արտահանող երկրների կազմակերպության (Organization for Petroleum Exporting Countries, OPEC) կազմում 2022 թ. երրորդ ամենախոշոր նավթ արդյունահանող երկիրն էր Սաուդյան Արաբիայից ու Իրաքից հետո (*տե՛ս Գծապատկեր 10.1.2*), իսկ աշխարհում զբաղեցրել է վեցերորդ տեղը՝ ԱՄՆ-ից, Սաուդյան Արաբիայից, Ռուսաստանից, Իրաքից ու Չինաստանից հետո: Նավթի արտահանումից ստացվող միջոցները կազմում են ամբողջ արտահանման 80-85 %-ը և կառավարության բյուջեի եկամուտների 40-45 %-ը: Մինչև ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը գրանցված նավթի բարձր գներն էլ ավելի մեծացրին նավթի արտահանումից ստացվող եկամուտները և զգալի բարելավեցին տնտեսության վիճակը: Այսպես, 2007 թ. տվյալներով նավթի արտահանումից ստացված եկամուտը կազմել է մոտ 65 մլրդ դոլար: Ըստ որոշ կանխատեսումների՝ Իրանի տնտեսության մեջ նավթի արտահանումից ստացվող եկամուտը 2015 թ. պետք է կազմեր ավելի քան 150 մլրդ դոլար, սակայն դրան խոչընդոտեցին 2012-2016 թթ. ընկած ժա-

մանակահատվածում Իրանի նկատմամբ կիրառված միջազգային տնտեսական պատժամիջոցներն ու նավթի միջազգային գնի նվազումը, ինչի արդյունքում նավթի արտահանումից ստացված եկամուտը 2016 թ. կազմեց մոտ 70 մլրդ դոլար: Մինչև 2025 թվականը Իրանի կառավարությունը մտադիր է ներդնել ավելի քան 500 մլրդ դոլար նավթարդյունաբերության ոլորտում:

Ունենալով բնական գազի վիթխարի պաշարներ՝ Իրանը փնտրում է ճանապարհներ գազի արտահանումը մեծացնելու համար: 2001 թվականից սկսած՝ Իրանը գազ է արտահանում դեպի Թուրքիա: Բացի Թուրքիայից՝ իրանական գազի պոտենցիալ գնորդներ կարող են հանդիսանալ Ուկրաինան, Եվրոպան, Հնդկաստանը, Պակիստանը, Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանն ու Չինաստանը: Ներկայումս Իրանը մեծ քանակությամբ գազ է արտահանում Թուրքիա (տարեկան միջինում մոտ 10 մլրդ խորանարդ մետր): Այսպես, 2022 թ. տվյալներով Իրանն արտահանում էր օրական մոտ 30 մլն խորանարդ մետր գազ դեպի Թուրքիա, ինչը կազմում էր Թուրքիայի ներքին պահանջարկի մոտ 30 %-ը: Գազի արտահանման ծավալների մեծացումը, մի կողմից, լավ է Իրանի տնտեսության համար, քանի որ կապահովի լրացուցիչ եկամուտների ստացում, իսկ մյուս կողմից էլ վատ կանդրադառնա տնտեսության վրա, քանի որ կարող է հանգեցնել էներգակիրների արտահանումից ստացվող եկամուտներից տնտեսության էլ ավելի մեծ կախվածության:

Բացի նավթի և գազի արտահանումից ստացվող խոշոր եկամուտների կախվածությունից՝ Իրանի տնտեսության համար մի այլ հիմնախնդիր է նաև Իրանի բյուջեի պակասուրդը: 2022 թ. տվյալներով բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 4.1 %-ը[201]: Իրանի բյուջեի պակասուրդի հիմական պատճառը պետության

[201] Այստեղ հարկ է նշել, որ 2000-2010 թթ. ընկած ժամանակահատվածում Իրանի պետական բյուջեն ավելցուկային է եղել: 2011 թվականից ի վեր Իրանի պետական բյուջեն պակուսարդային է և ունի աճի միտում:

կողմից տրամադրվող սուբսիդիաներն են սննդամթերքի ու բենզինի ներմուծման համար: Երկրի ազգային ժողովը 2005 թ. հունվարին որոշում ընդունեց սառեցնել բենզինի տեղական գինը 2003 թ. մակարդակի վրա: Հարկ է նշել, որ, օրինակ, 2005 թ. պետությունը բենզինի ներմուծման համար տրամադրել է մոտ 4 մլրդ դոլար սուբսիդիա: 2022 թ. տվյալներով Իրանում մեկ լիտր բենզինն արժեր մոտ 0.36 ցենտ, ինչը բավականին ցածր էր բենզինի միջազգային միջին գնի մակարդակից[202]: Իրանը ներմուծում է երկրում սպառվող բենզինի 1/3-ը և ներմուծվող բենզինի ծավալով երկրորդն է աշխարհում ԱՄՆ-ից հետո:

Իրանի տնտեսության երիտասարդ և արագ զարգացող բնակչության համար ի այլ կարևոր հիմնախնդիր է զբաղվածությունը: Գործազրկության մակարդակը Իրանում 2020 թ. կազմել է 9.1 %, սակայն այն բավական բարձր է երիտասարդների շրջանում: Իրանի տնտեսության համար մյուս հիմնախնդիրը շարունակում է մնալ գնաճի բարձր մակարդակը, ինչը 2022 թ. տվյալներով կազմել է 43.5 %: Ներկայումս Իրանը փորձում է տարբերակել իր տնտեսությունը՝ նավթի արտահանումից ստացվող եկամուտների մի մասը ներդնելով այլ ոլորտներ, ներառյալ նավթաքիմիականը: Իրանը նաև փորձում է ներգրավել օտարերկրյա ներդրումներ՝ ստեղծելով ավելի բարենպաստ ներդրումային միջավայր, ազատ առևտրի գոտիներ և նվազեցնելով ներմուծման մաքսատուրքերն ու սահմանափակումները: Սակայն վերջին շրջանում օտարերկրյա ներդրողները բավական զգուշություն են ցուցաբերում Իրանի տնտեսության նկատմամբ՝ պայմանավորված երկրի ատոմային ծրագրով:

1995 թ. ԱՄՆ նախագահ Քլինթոնի կողմից կիրառված սանկցիաները շարունակաբար նորացվում էին նախագահ Բուշի և շա-

[202] Բենզինի գինը 2022 թ. ամենաթանկը եղել է Նորվեգիայում՝ 2.71 դոլար, Ֆինլանդիայում՝ 2.67 դոլար և Դանիայում՝ 2.62 դոլար մեկ լիտրի համար, իսկ ամենաէժան բենզինը եղել է Ալժիրում՝ 0.31 դոլար, Քուվեյթում՝ 0.34 դոլար և Իրանում՝ 0.36 դոլար մեկ լիտր բենզինի համար:

ռունակվում են նորացվել ԱՄՆ մյուս նախագահների կողմից: 1995 թ. գործադիր մարմիններն արգելեցին ԱՄՆ ընկերություններին և դրանց օտարերկրյա մասնաճյուղերին գործարար կապեր ունենալ Իրանի հետ: Ավելին՝ 1996 թ. ԱՄՆ-ի կողմից կիրառված Իրան-Լիբիա սանկցիաների օրենքը (Iran-Libya Sanctions Act, ILSA) արգելում էր ամերիկյան և ոչ ամերիկյան ընկերություններին Իրանում ներդնել կամ Իրանի հետ առևտուր անել տարեկան ավելի քան 20 մլն դոլար[203]: 2000 թվականից ի վեր բացառություն արվեց դեղորայքի ու բժշկական սարքավորումների առևտրի համար:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Իրանն ագրարային երկիր էր: Գյուղատնտեսության ոլորտում տիրապետում էին ֆեոդալական ու կիսաֆեոդալական հարաբերությունները (որոշ տարածաշրջաններում դրանց մնացուկները պահպանվում են նաև մինչև օրերս): Արդյունահանվում էր միայն նավթ, որը տնօրինում էր օտարերկրյա կապիտալը: 1960-ական թթ. անցկացվեց հողային ռեֆորմ, վերացվեց խոշոր ֆեոդալական հողատիրությունը: Մշակված տնտեսական պլանների միջոցով տնտեսության զարգացումը ընթանում էր արդյունաբերացման (ինդուստրացման) ուղիով: Ստեղծվեց էներգետիկ միասնական համակարգ, սկսեց զարգանալ ծանր արդյունաբերությունը: Սակայն տնտեսության մեջ դեռևս մեծ է նավթարդյունաբերության դերը: Ներկայումս Իրանն արդեն դասվում է ագրարաարդյունաբերական երկրների շարքին: Ժամանակակից տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ տնտեսական ու տեխնիկական համագործակցությունը նախկին սոցիալիստական երկրների, հատկապես ԽՍՀՄ-ի հետ:

---

[203] Իրանի տնտեսության վերջին զարգացումների համար առավել մասնրամասն պատկերացում կազմելու համար տե՛ս Գ. Հայրապետյան և Վ. Հայրապետյան, Իրանի տնտեսության զարգացման մարտահրավերները, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2013, ԵՊՀ հրատ., Երևան 2014 թ., էջ 618-623:

Համաձայն վերջին տվյալների՝ 2022թ. Իրանի գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 12.8 %-ը, արդյունաբերությանը՝ 39.9 %-ը, իսկ ծառայությունների ոլորտին՝ 45.0 %-ը (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 10.3.3*): Ինչպես նկատում ենք Իրանի տնտեսության մեջ, ինչպես և Թուրքիայի դեպքում, համեմատաբար մեծ են գյուղատնտեսության ու արդյունաբերության տեսակարար բաժինները: Ավելին՝ ի տարբերություն Թուրքիայի՝ Իրանի տնտեսության մեջ նաև համեմատաբար շատ ավելի մեծ է արդյունաբերության տեսակարար կշիռը: Այսպիսով, ինչպես նկատում ենք, Իրանն իր տնտեսությամբ ագրարաարդյունաբերական երկիր է:

Գյուղատնտեսություն: Սա Իրանի տնտեսության կարևոր ոլորտներից մեկն է: Գյուղատնտեսության զարգացման համար պիտանի է տարածքի մոտ 25 %-ը: Երկրում ստեղծվել են ագրոարդյունաբերական համալիրներ, կոոպերատիվ տնտեսություններ, մեքենայացվել է գյուղատնտեսությունը: Դրա հիմնական ոլորտներն են ոռոգովի հողագործությունը (որի 60 %-ը ցորենի ցանքատարածություններն են, նաև մշակվում է բրինձ), քոչվոր անասնապահությունը, ձկնորսությունն ու մարգարիտի արդյունահանումը: Մշակվող հողերը կազմում են ամբողջ տարածքի 10 %-ը, որից ոռոգովի է մոտ 3 %-ը:

Արդյունաբերություն: Սրա առաջատար ոլորտներն են նավթի ու գազի արդյունահանումն ու նավթավերամշակումը: Սակայն դրանով չի բավարարվում ներքին պահանջարկը, տարեկան ներմուծվում է 7-8 մլն տոննա նավթամթերք (բենզին և այլ վառելիք): Արդյունաբերության այլ ոլորտների (մետաղագործություն, մեքենաշինություն, քիմիական) զարգացմանը խոչընդոտում են արտաքին տնտեսական անկայուն կապերը, չեն բավարարում ֆինանսական միջոցները, քանի որ այդ ոլորտների զարգացումը 60 %-ով կախված է հումքի, 90 %-ով՝ սարքավորումների ներմուծումից:

Արտաքին տնտեսական կապերը: Վերջին տարիներին Իրանի արտաքին առևտրային քաղաքականության մեջ զգալի բարեփոխումներ են կատարվել: Այսպես, երրորդ հնգամյա պլանի հաստատումից սկսած (2000-2004 թթ.) լուրջ փորձեր են արվել փոխարժեքի դրույքների միասնականացման համար: Կառավարությունը հաստատեց ու ընդունեց շուկայական փոխարժեքի դրույք և հրաժարվեց փոխարժեքի բազմակի դրույքների համակարգից: Հարկ է նշել, որ փոխարժեքի բազմակի դրույքների համակարգը գործում էր 1980 թվականից մինչև 2002 թվականի մարտ ամիսը: Իրաքի հետ պատերազմի տարիներին ներմուծվող ապրանքների համար գործում էին փոխարժեքի յոթ տարբեր դրույքներ, սակայն ԱՄՀ խորհրդատվությամբ 1993 թ. ներմուծման համար հաստատվեց փոխարժեքի երեք տարբեր դրույք: Ներմուծման համար փոխարժեքի տարբեր դրույքները կախված էին ներմուծվող ապրանքների տեսակից ու դրանց սպառողներից:

Արտաքին առևտրային քաղաքականությանը վերաբերող հաջորդ կարևոր բարեփոխումը արտաքին առևտրի ազատականացումն էր: Արտաքին առևտրի ոչ տարիֆային սահմանափակումները փոխարինվեցին տարիֆայինի: Հետագայում նվազեցվեցին նաև տարիֆների դրույքները, և շատ ապրանքախմբերի գծով տարիֆների ընդհանուր միջին մակարդակը չի գերազանցում 27 %-ը: Առևտրի ազատականացմամբ Իրանի կառավարությունը նպատակ էր հետապնդում կրճատելու տեղական արտադրողների հովանավորչության մակարդակը և ռեսուրսները տեղաբաշխելու ոչ արդյունավետ ոլորտներից դեպի ավելի արդյունավետ ոլորտներ: Ամեն դեպքում կարելի է փաստել, որ արտաքին առևտրի ազատականացման գործում Իրանը դեռ գտնվում է սկզբնական փուլում, իսկ շուկայական փոխարժեքի հաստատումն ու առևտրի ազատականացումը առաջին քայլերն են՝ ուղղված կառուցվածքային զարգացմանը:

Նավթի և գազի բնական հարուստ պաշարները հիմք են հանդիսացել այս ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելացմանը: Ներկայումս Իրանի նավթի ու գազի արդյունահանման գործընթացում ներգրավված են այնպիսի օտարերկրյա ընկերություններ, ինչպիսիք եք «Gazprom»-ը (Ռուսաստան), «Lukoil»-ը (Ռուսաստան), «Royal Dutch Shell»-ը (Նիդեռլանդներ), «Sinopek»-ը (Չինաստան), «Statoil»-ը (Նորվեգիա) և այլն:

2022 թ. տվյալներով Իրանի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 139.6 մլրդ դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 80.9 մլրդ, իսկ ներմուծումը՝ 58.7 մլրդ դոլար: Իրանի արտաքին առևտրային հաշվեկշիռի ավելցուկը կազմել է 22.2 մլրդ դոլար: Այստեղ հարկ է նշել, որ Իրանի առևտրային դրական հաշվեկշիռը պայմանավորված է նավթի արդյունահանման ու արտահանման գործոնով: Ինչպես նկատում ենք (*տե՛ս Հավելված, Աղյուսակ 10.3.4*) Իրանի առևտրային հաշվեկշռի ավելցուկը 2016 թվականից ի վեր ձեռք է բերել աճի միտում, ինչը, սակայն, կտրուկ նվազել է 2019 թ.՝ պայմանավորված արտահանման ծավալների կտրուկ նվազմամբ:

2022 թ. տվյալներով Իրանի արտահանման գլխավոր գործընկեր երկրներն են Չինաստանը (27.5 %), Իրաքը (8.6 %), ԱՄԷ-ն (7.5 %), Թուրքիան (6.0 %) ու Հնդկաստանը (4.5 %): Այստեղ հարկ է նշել, որ 2007 թվականի հետ համեմատած՝ զգալի փոփոխվել են Իրանի գլխավոր արտահանման գործընկեր երկրների կառուցվածքն ու դրանց տեսակարար կշիռները: Այսպես, Իրանի արտահանման գլխավոր գործընկեր երկրների շարքից դուրս են եկել եվրոպական գրեթե բոլոր երկրները (2007 թ. տվյալներով՝ Իտալիան (6.3 %), Ֆրանսիան (4.3 %) և Նիդեռլանդները (4.3 %)), իսկ Չինաստանն ու Հնդկաստանը առաջ են անցել Ճապոնիայից: Ավելին՝ 2012 թվականի հետ համեմատած՝ զգալիորեն աճել է Թուրքիայի տեսակարար կշիռը, և նվազել է Ճապոնիայի տեսակարար կշիռը:

Իրանի արտահանման կառուցվածքում գլխավոր ապրանքախմբերն են նավթը, որին բաժին է ընկնում ամբողջ արտահանման 80 %-ը, քիմիական ու նավթաքիմիական ապրանքները, մրգերն ու գորգերը:

Իրանի ներմուծման հիմնական գործընկեր երկրներն են ԱՄԷ-ն (31.0 %), Չինաստանը (25.8 %), Թուրքիան (12.6 %) և Հնդկաստանը (3.8 %):

Ներմուծման կառուցվածքում գլխավոր ապրանքախմբերն են արդյունաբերական հումքը, միջանկյալ ապրանքները, կապիտալ ապրանքները, սննդամթերքը, սպառողական ու ռազմական ապրանքները:

Գիտելիքների ստուգման հարցաշար

1. Ինչպիսի՞ն է Իրանի առևտրային հաշվեկշիռը: Փորձե՛ք հիմնավորել ձեր պատասխանը:
2. Թվարկե՛ք Իրանի տնտեսության մակրոտնտեսական մոդելի առանձնահատկությունները:
3. Որո՞նք են «Իսլամական տնտեսության» երեք հիմնական ոլորտները:
4. Ի՞նչ սկզբունքներ են ընկած «Իսլամական տնտեսության» հիմքում:
5. Նշե՛ք Իրանի տնտեսությունում անցկացված բարեփոխումների հիմնական ուղղությունները:
6. Որո՞նք են Իրանի տնտեսության ներկայիս հիմնախնդիրները:
7. Իրանի տնտեսության բարեփոխումներն ու վերակառուցումը ե՞րբ սկսվեցին, և ի՞նչը նպաստեց դրանց:

Հավելված

Աղյուսակ 10.3.1. Իրանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2004-2022 թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՆԱ (մլրդ դոլար)[204]	322	333	349	378	379	383	405	416	400	394	414	408	446	456	448	434	448	469	487
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	4.3	3.2	5.0	8.2	0.3	1.0	5.8	2.6	-3.7	-1.5	5.0	-1.4	8.8	2.8	-1.8	-3.1	3.3	4.7	3.8
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, հազար դոլար	4.6	4.7	4.9	5.2	5.2	5.2	5.4	5.5	5.2	5.0	5.2	4.9	5.3	5.4	5.2	5.0	4.8	5.3	5.5
Գնաճի (ինֆլյացիայի) մակարդակ (CPI), %	14.8	13.4	10.0	17.3	25.4	13.6	10.1	26.3	27.3	36.6	16.6	12.5	7.2	8.0	18.0	39.9	30.6	43.4	43.5
Գործազրկության մակարդակ, %	10.3	11.8	11.5	10.8	10.6	12.1	13.7	12.5	12.3	10.6	10.7	11.2	12.6	12.2	12.2	10.7	9.7	9.3	9.1

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

[204] ՀՆԱ-ն հաշվարկված է հաստատուն գներով, որպես բազիսային տարի ընտրված է 2015 թվականը:

Աղյուսակ 10.3.2. Իրանի տնտեսապես ակտիվ բնակչության բաշխվածությունն ըստ ոլորտների 2004-2021 թթ.[205], %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսություն	21.1	20.9	20.4	19.8	19.5	19.3	18.0	17.4	18.4	17.1	16.9	17.1	16.7	16.6	16.7	17.0	16.7	16.3
Արդյունաբերություն	32.0	32.0	32.3	32.8	32.9	32.9	33.2	33.4	32.7	34.7	34.1	32.8	32.3	32.4	32.4	32.3	33.6	34.4
Ծառ. ոլորտ	46.9	47.1	47.3	47.4	47.6	47.8	48.8	49.1	48.9	48.2	49.0	50.0	51.0	51.1	50.9	50.8	49.7	49.4

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2021:

Աղյուսակ 10.3.3. Իրանի տնտեսության ճյուղային կառուցվածքը 2002-2022 թթ., %

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Գյուղատնտես.	6.9	6.5	7.1	7.2	6.1	6.9	6.5	4.6	6.8	8.8	9.4	10.1	9.8	9.8	11.1	13.3	12.2	12.4	12.8
Արդյունաբերութ.	47.5	49.6	48.3	48.2	47.7	43.1	44.2	46.2	42.1	42.8	39.2	32.2	34.4	36.2	37.4	33.3	36.1	38.0	39.9
Ծառ. ոլորտ	47.9	48.0	49.1	47.6	48.6	51.5	51.1	48.7	50.4	47.6	49.4	55.2	52.5	50.7	48.3	50.1	49.2	47.3	45.0

Աղբյուր՝ World Bank, World Development Indicators 2023:

Աղյուսակ 10.3.4. Իրանի արտաքին առևտուրը 2005-2022 թթ., մլրդ դոլար

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Արտահանում	60.0	63.2	83.5	107.2	77.5	108.6	137.4	132.7	92.1	90.3	60.0	78.2	91.7	96.6	48.6	41.0	75.1	80.9
Ներմուծում	38.7	40.7	48.4	55.8	54.8	55.7	57.5	51.4	48.4	52.2	40.0	42.7	51.6	41.2	43.9	38.8	52.9	58.7
Առևտրային հաշվեկշիռ	21.3	22.5	35.1	51.4	22.7	52.9	79.9	81.2	43.7	38.1	19.9	35.5	40.1	55.3	4.6	2.2	22.2	22.2

Աղբյուր՝ International Trade Centre:

[205] Տնտեսապես ակտիվ բնակչության տվյալներն ըստ տնտեսության ոլորտների Իրանի տնտեսության համար առկա են մինչև 2021 թվականը:

РЕЗЮМЕ

Мировая экономика

Айрапетян Григор Рафаелович

Учебное пособие разработано и подготовлено в соответствии с учебной программой курса “Мировая экономика”, преподаваемого на факультете экономики и управления Ереванского государственного университета.

В пособии представлены особенности становления и развития мирового хозяйства, рассмотрены теории мировой экономики, охарактеризованы основные субъекты международных экономических отношений, раскрыты современное состояние и роль отдельных стран в глобальной экономике.

Учебное пособие может быть полезно для экономистов и специалистов смежных профессий, а также студентов, специализирующихся в различных областях экономики.

Summary

World economy

Grigor Hayrapetyan Rafayel

The study guide has been developed and prepared in accordance with the curriculum of the course “World Economy” taught at the Faculty of Economics and Management of Yerevan State University.

The guide presents the features of the formation and development of the world economy, examines the theories of the world economy, characterizes the main subjects of international economic relations, and as well describes the current situation and role of leading countries in the global economy.

The study guide can be useful for economists and specialists in related spheres, as well as students specializing in various fields of economics.

Օգտագործված գրականության ցանկ

Հիմնական գրականության ցանկ

1. Սարգսյան Ա., Եվրոպական միության ինստիտուտներ և ընթացակարգեր, Ուսումնական նյութերի ժողովածու, Երևան, 2009:
2. Մարգարյան Թ., Համաշխարհային տնտեսություն, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2012:
3. Погорлецкий А. И., Экономика зарубежных стран. Учебник. Изд-во Михайлова В. А., Санкт-Петербург, 2001.
4. Булатова А. С., Экономика зарубежных стран. Учебник. Москва: Изд-во «Юристъ», 2002.
5. Ломакин В. К., Мировая экономика, М., 2007.
6. Jens-Uwe Wunderlich, Regionalism, Globalisation and International Order, Ashgate Publishing Limited, 2007.
7. Tony Cleaver, Understanding the World Economy, 2ed, London, 2002.

Օժանդակ գրականության ցանկ

1. Абрамов В. А., Мировая экономика, М., 2005.
2. Видоевич, Глобализация, хаотизация и конфликты в современном мире, М., 2005.
3. Раджабова К. В., Мировая экономика, М., 2005.
4. Фукуяма, Фрэнсис. Конец истории и последний человек / Фрэнсис Фукуяма; пер. с англ. М. Б. Левина, М.: АСТ, 2007, 588 с.
5. Хантингтон С., Столкновение цивилизаций, М.: АСТ, 2003.
6. Хасбулатов Р. И., Мировая экономика, М., 1994.
7. Aaron Tornell and Gerardo Esquivel, The Political Economy of Mexico’s Entry into NAFTA, Regionalism versus Multilateral Trade Arrangements, NBER-EASE Vol. 6, 1997.
8. Alvin Toffler, “The Third Wave” Bantam Books, 1980.
9. Bainbridge T., The Penguin Companion to the European Union, 3rd edition, (Penguin: London), 2002.
10. Bell Daniel, The Coming of Post-Industrial Society. New York: Harper Colophon Books, 1974.

11. Burnham J., The Managerial Revolution, Harmondsworth: Penguin Books, 1945.
12. Christiansen T., European Integration and Regional Cooperation, in: Baylis, J. and Smith, S. (eds.), The Globalization of World Politics – An Introduction to International Relations, 3rd edition (Oxford University Press: Oxford), 2005.
13. Ellul Jacques, The Technological Society, N-Y. 1964.
14. Hirtis T., European Community Economics, 2nd Edition, St. Martin's Press, 1991.
15. John Galbraith, The New Industrial State (Firs published in 1967). Princeton University Press, 2007.
16. Kenen Peter B., Managing the World Economy: Fifty Years after Breton Woods, Washington DC, Institute for International Economics, 1994.
17. Kindlerberger Charles, The international Economic Order: Essays on Financial Crisis and International Public Goods, Hertford shire, England: Harvester-Wheat sheaf, 1998.
18. Lynge Nielsen, Classifications of Countries Based on Their Level of Development: How it is Done and How it Could be Done, IMF Working Paper WP/11/31.
19. Marks G., Hooghe L. and Blank K., European Integration from the 1980s: State-Centric v. Multi-level Governance, in: Journal of Common Market Studies, Vol. 34, No. 3, 1996.
20. Raymond Aron, Eighteen Lectures on Industrial Society, ondon: Weidenfeld & Nicolson, 1967.
21. Rosamond B., New Theories of European Integration, in: Cini, M. (ed.) European Union Politics, (Oxford University Press: Oxford), 2003.
22. Streby Jensen C., Neo-functionalism, in: Cini, M. (ed.), European Union Politics, (Oxford University Press: Oxford), 2003.
23. van Tulder R. and van der Zwart A., International Business–Society Management: Linking Corporate Responsibility and Globalization, London: Routledge, 2006.
24. W.W. Rostow, Politics and the Stages of Growth, Cambridge University Press, 1971.

25. Rostow W.W., The Stages of Economic Growth: A Non-Communist Manifesto (Cambridge: Cambridge University Press, 1960), Chapter 2, The Five Stages of Growth-A Summary.
26. Wallace W., Introduction: The Dynamics of European Integration, in: W. Wallace (ed.), The Dynamics of European Integration, (Pinter Publishers: London), 1992.

Միջազգային տնտեսական կազմակերպությունների համացանցային ռեսուրսներ

1. World Trade Report 2008, World Trade Organization, https://www.wto.org/ENGLISH/res_e/reser_e/wtr_e.htm.
2. World Development Indicators 2023, World Bank, https://databank.worldbank.org/source/world-development-indicators.
3. OECD Data, OECD, https://www.oecd.org/en/data.html.
4. UN World Economic Situation and Prospects (WESP) Report 2019. UN, https://www.un.org/development/desa/dpad/publication/world-economic-situation-and-prospects-2019.
5. United Nations World Investment Report 2023. UCTAD, https://unctad.org/publication/world-investment-report-2023.
6. World Economic Outlook 2023. IMF, https://www.imf.org/en/publications/weo.
7. OECD Economic Surveys. OECD, https://www.oecd.org/en/publications/reports.html?orderBy=mostRelevant&page=0.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ՌԱՖԱՅԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիտարկումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 28.03.2025:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 22.75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

publishing.ysu.am